



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material









JV 158


W 582 9.

2068

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

O U T E N S I L S

2213





ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՕՍՄԱՆԵՐԸ

ՊԵՏՈՒԹԵԱՆ

ՅՈՒԽՆԵԱՑ

Հ. ԳԱԲՐԻԵԼ Վ. ԱՅՎԱՋՈՎԱՐԻ

ՄԻՒԹԱՐԵԱՆՑ

ՀԱՏՈՐ Գ.



Ի ՎԵՆԵՑԻԿ

Ի ՍՈՒՐԵԱՆ ԴԱԶԱՐ

—  
1841



668



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵՐՆԵՑ

ԻԵ

ՍՈՒԼԴԱՆ ԱՊՏԻՎՀԱՄԻՏ Ա.

ԱՊՏԻՎՀԱՆԻՑ ՀԱՄԻՏ ԱՐՔԱՅ ՊՐԴԻ ԷՐ ԱՀ  
ԱՇԽԱՋ ԷՐՐՈՐԴԻ. և 'ի մեռանել հօր իւրոյ  
հնդեմեան գոլով քառասուն և ութ  
ամաց էր յորժամ թագաւորեաց : Եւ  
նախ ինքնագիծ հրովարտակաւ հաս  
տառեալ զվեզվին և զամենայն զաւա  
գանին յիւրաքանչիւը պաշտամունս ,  
յաւուրն վեցերորդի գնաց յիշուալ  
ըստ վաղբնջոց սովորուե ածել զառ  
սերն ընդ մէջ մեծաշուք հանդիսիւ :

Այս առաջին անգամ չըսաշնեցան  
'ի զօրականս սկարդելին սովորականկը , ու  
բովին դատարկացէալ իմն էր գանձն

արքունի ՚ի պատճառս վերահաս պատերազմին . Ըէպէտ և մահուամբ ականաւոր իշխանաց ոչ սակաւ գանձք մթերեցան ընդ նոյն ժամանակս յարքունիս : Քանզի Ապուղէհէպ առաքեաց յԵփիպտոսէ չորեքհազար քըսակս արծաթոյ յընչից Ավիպէյին . Մոլտովանձի Ավի փաշա գեռ ևս վախճանեալ՝ եթող քսակս հազար և հինգհարբուր . շեին Դահիր մատուցաներ արքայի ամի ամի քսակս եօթն հազար՝ պայմանաւ զի տիրեսցէ Աքեայ և Սայտայի ազգաւ , և որ այլն ևս :

Փոփոխեաց արքայ զոմանս յաւադորերոյն ըստ յաճախ սովորութեան . և յետ տասն աւուրց երթեալ՚ի քեադախանէ ՚ի զնին եկաց վարժից թնդանօթաձիգ զօրաց , և հաճեալ ընդ մարդոնցին՝ հրաման ետ պարգևել հրահանեգորին , որ էր պարոն թոթ , լիքսակաւ ոսկի :

Ապտիւլ համիտարպայ , որպէս և վեզիրն մէծ Միւհսինզատէ և աւագորէան ամենամենայն , կամէր խաղաղութիւն առնելընդ Ռուսս որպէս զիարդ և հնարինք . այլ քանզի գիտականայն դասք առ հասարակ սկնդէին՝ եթէ հակառակէ դենիս և մնասակար պէտութեանս

մասոնել՝ ի ձեռք Ռուսաց զկերչ և զենիդալէ, հրաման եղեւ սկիզբն առնել պատերազմին այս հինգերորդ անդամ։ Առուրբը յառաջ արձակեաց Ռումենի ցող՝ ի բանակն արքունի սպայ զոմն խնդակից ընել վէղիրին մեծի ընդ թագաւորել նորոյ արքային, և միանդամայն առաջի առնել նմա զհաշտութիւն խաղաղութեան ըստ պայմանացն հաստատեց ի Պուքրէշ նախ քան զուժանել ժողովոյն։ Զնոյն գրեալ էր և առ դեսպանն գերմանացւոց և Բրուսաց, և նորա զամենացն ձիգն ի վարարիկեալ ջանացին հնարս հաշտութեան գտանել ։ սակայն ի զուր։

Յամենան ապրիլ բէիս էֆենտին Ապտիւրիզագ առաքեցաւ յառութին Հըրովայ, և Կէյլի Ահմէտա աղա արձակեցաւ ։ Ապրիւնուուզօվս՝ վիխափանեաց յէ զանցս փախստականաց։ Այլ Ռուսք յարձակեցան միւս ևս անդամ՝ ի Պաղարձըդ. և յառաջապահ դունդ բանակին Ապտիւրրիզագայ դիմեաց յօժանդակութիւն քաղաքին։ Զօրավարքն Ռուսաց Քամենսկի և Սուվորով հարան բախսեցան ընդ Օսմաննեանս որոցքան և հինգ հազար էր թիւ համարոյ, և ցիր և ցան կացուցին զնոսա, և առ ին

՚ի նոցաննէ թնդամսօթս քսան և ինն , ընդ  
որս և զմի ՚ի մեծամեծ թնդանօթիցն  
զորս ածեալ էր Ռուսաց ՚ի պաշարել  
անդ զԱկալիստրէ : Մինչդեռ Ապտիւր-  
ըիզագ և եղբայր խանին Խրիմու-  
Պալսօթ քէրէց փութային հասանել ՚ի  
տեղի ճակատուն՝ աեսին զի ենիչէրիք  
համագունդ գարձ առնելն ՚ի բուն  
բանակն . ասէ ցնոսա Ապտիւրըիզագ .  
“ Զի՞ է զի թողէք , եղբայրք , զպատե-  
րադն սուրբ ՚ : Ասէն . ” Զվիրաւորան  
մեր գարձուցանեմք ՚ : — “ Եւ իցէ  
պիտոյ , ասէ , ընդ իւրաքանչիւր վե-  
րաւորսն յուղարկ էրթալ յիսուն  
արանց . և երկուք ոմանկք չիցէն շատ .  
հապա գարձցն այլք ՚ի պատերազմ . ես  
եղէց ձեզ առաջնորդ ՚ : — “ Ո՞ զի  
հանձարեկ ես ՚ի խօսել՝ ասէ մի ոմն ՚ի  
նոցաննէ . դու հեծեալ ես յերիվար , և  
մեք հետի գնամք . եթէ վտանգ ինչ  
մեզ հասցէ , դու նախ առաջնին վա-  
խուցեալ զէրծանիցիս ՚ : — “ Քաւ-  
լցի ինձ թողուլ երեկք և լքանելզձեզ  
գոչեաց Ապտիւրըիզագ . եթէ կամկք և  
ես ևս հետիւսու ընթացայց իբրև զձեզ ՚ :  
Եւ ահա թնդումն հրացանի միոյ եհատ  
զթէլ զըուցատրութեանն , և յարեաւ-  
ազմուկ մեծ ՚ի տեղւոյ անդ . յոլովք

յուղեկցացն Ապտիւրրիղագայ անկան  
անդէն, և ինքն և Պախթը քէրէլ միաձի  
Հողոսպեցան ՚ի փախուստ :

Յայնմ վայրի յառաջեցին Ռուսք և  
հասին մինչև յշնիպազար մերձ ՚ի Շուռշ  
նա, ուր ամրացեալ նստէր վէղին ութ  
հազար արսոմիք : Բէխան Ապտիւրրի  
զագ էֆէնտի փորձեաց վառել  
խրախուսական բանիւք զզօրս և զբնա-  
կիչո քաղաքին ՚ի ստաշտպանութիւնն ան-  
ձանց և կանանց և որդւոց իւրեանց :  
Ապա և հրաման խիստ ՚ի վերայ եղաւ  
ամենեցուն որ փախչել անտի կամիցին :  
Ատենադպիր փոխանորդի վէղիրին  
Կուղչէթ էֆէնտի կամեցեալ խոյս  
տալ ՚ի բաղաքէն՝ զզեցոյց կնոջ իւրում  
հանդէրձ առնացի զի և զնա փախուսցէ :  
Կասկած կառու զբարապան քաղաքին  
զիրացն, և ՚ի վեր ել գաւառանութիւնն .  
և զրականին մոլեգնեալ մերկացին  
զսուսերս իւրեանց և յարձակեալ խող-  
խողեցին զինն և զայրնորա : Կուղչէթ  
էֆէնտի մինչ չե մեռեալ էր աղաղա-  
կեաց և ասէ . «Ո' աբք, աղախին բէխսին  
է կինն իմ » : Ամին իրի ևս առաւել  
զզրուեալ զրականացն՝ ընթացան ՚ի  
խորանն Ապտիւրրիղագայ : Կորա իմա-  
ցեալ զաղմուկն, և աճապարեալ ան-

կեալէր՝ ի վրանն՝ յորում պահէր դրօշն  
նուիրական + անդը դիմեցին և աղջ  
մկեալքն + այլ հազար Առնաւուտք  
կարգեալք՝ ի վէզիրէն առ դուրս վրա-  
նին՝ հարին և ցրուեցին դնոսա + և Ապ-  
տիւրրիզագ գաղտագողի ելեալ՝ ի  
Պումայէ ասպեցաւ փախստեամբ ՚ի  
Կոստանդնուպօլիս, և հաղիւ զերծեալ  
՚ի մահուանէ աքսորեցաւ և բանտեցաւ  
՚ի Քիւթահեա :

Մինչդեռ Ապտիւրրիզագ փախու-  
ցեալ երթայր՝ ՚ի Կոստանդնուպօլիս,  
Քամենսքի եկն եհաս հանդէպ Պում-  
նայի, և ՚ի չորեքտասաներորդի աւուր  
ամնեանն՝ յուլիսի պաշարեաց սաստկա-  
պէս զլէզիրն յամենայն կողմանց: Տագ-  
նապեցաւ Միւհսինզակէ յոյժ յոյժ,  
և առաքեալ վաղվաղակի պատգամա-  
ւոր զոմն առ Շումեանցով ինդրէր  
դուլ առնել զինուց + այլ՝ ՚ի չառնուլ  
նորայանձն և ՚ի պահանջել զհաշտու-  
թիւն՝ արձակեաց պատգամաւորս հաշ-  
տութեան զմէսմի Ահմէտ փաշա և  
զՄիւնիպ Ահմէտ ՚ի Գայնարձըդ, զի  
անդ էր Շումեանցով, ՚ի տեղւոլ յո-  
րում՝ ՚ի Ճակատամարտի ուրեք Շու-  
սաց ընդ Օսմանեանս ՚ի հերուն հետէ՝  
անկեալ էր արի զօրավարն Աէջաման:

Միամնդամայն և Լալէլի Մուսդաֆա  
տարաւ ՚ի Կոստանդնուպօլիս զթուղթ  
վէզիրին ստորագրեալ յամենայն աւա-  
գանեոյն և ՚ի զօրավարաց զօրուն , յո-  
րում յետ առաջն առնելոյ համառօ-  
տիւ զաղետալի հանդամանս բանակին՝  
հայցեր զհաստատութիւն պայմանացն  
խաղաղութեան :

Ի քստաներորդի առաջներորդի ա-  
ռուր ամսեանն յուլիսի , այն օր Էրյո-  
րում հաստատեալ Էր երեկին դաշն  
ուխտին որ առ Փրութ գետով , Եղե-  
հաշտութիւնն խաղաղութեան ՚ի Գայշ-  
նարձըդ ըստ պայմանացն հաստատե-  
լոց ՚ի Պուքրէշ . միայն թէ պայմանե-  
ցաւ ևս զի Օսմանեանք յերից ամաց  
ժամանակի հաստուցեն Ռուսաց չորս  
միլիոն ըութիս , և Ռուսք մեկնեացին  
՚ի կղզեաց Յունաստանի և յամենայն  
տեղեաց զորս գրաւեալ էին յայնմար-  
շաւանին . բայց միայն զկերչ , զշնիդա-  
լէ և զԱզով և զկրկինն Կապարթա , և  
զօգու և զԳըլպուրուն կալցին յիւ-  
րեանս : Խակ զիրացն Լէհաց որ նախկին  
պատճառք էին պատերազմիս և բանք  
յիշատակի անդամոչ էղեն :

Միւհսինզատէ վաշա ընդ կնքել  
դաշնացն արկաւ յիշխանութենէ , և

մինչդեռ դառնայր՝ ի կոստանդնուպոլիս  
լիս՝ հիւանդացեալ մեռաւ զՃանապար  
հայն . Են որք ասեն Եթէ գեղամահ  
Եղե՝ ի հրամանէ աւագանւոյն Կոստանդնուպոլսոյ , որպէս զի ՚ի պահան  
ջեւ Օսմանեանց ՚ի նմանէ զհամար ան  
արդական հաշտութեանն՝ մի կարասցէ  
ամբաստան լինեւ զնոցանէ և անբասիր  
առնեւ զանձն իւր :

Եթիւ այսօրինակ վախճան եղե մեծի  
պատերազմին , Օսմանեանք միտ եղին  
այնուհետեւ ՚ի նուազեւ զմասնաւոր ա  
պլաստամբա իւրեանց աշխարհին , որ  
ձեռնտու լեւալ էին ՚ի թշնամիս , և որ  
պատճառս ՚ի պատերազմին առեալ  
խռովին զերկիրն : Խշանն Մոլտա  
ւիոյ չեքա գլխատեցաւ և կառափին նոր  
բա ածաւ ՚ի կոստանդնուպոլիս , փո  
խանակ զի ոչ գիտաց թագուցանէւ զոր  
՚ի ներքս ՚ի սրտին ունէր զհակամէտ  
բերումն առ Ռուսս . և ծովակալն չա  
սան պէյ զերծոցց զպետութիւնն յեւ  
ըռզակաց ոմանց որ ՚ի հերուն հետէ  
տագնապէին զընակիչս վերնագաւառ  
ռացն . կալաւ և գլխատեաց զԱյվազ  
աղա զբոնացեան ՚ի կողմանս Զմիւռ  
նիոյ , և զծերումի բոնակալն զԴահիր  
՚ի նեղ արկեալ յԱքեա ՚ի ծովէ

և 'ի յամաք կուսէ՝ խորտակեաց մինչև  
'ի սպառ. և 'ի փախչել ամոդ Դահնիրայ  
ընդ լեռնակողմն կոյս՝ տասպաստ արկին  
զնա Օսմանեանկ : Հասան պէշ կար  
գեաց 'ի տեղի նորին կուսակալ Ա-  
քեայի և Այստայ զԱհմէտ վաշա զմակ  
անուանեալն ձէզզար, այս ինկն է մնաց  
դործ, որյէտ սակաւուց ասկաստամբեաց  
և նա յազբայէ :

Իսկ Ասպահիւ Համլիտ արքայ գիտակ  
գոլով եթէ ոչ յոյժ յերկարեացի խա-  
ղաղութիւնն այն որ կուեցու ընդ  
Ռուսա վնասուք իւրոյ պետութեանն,  
և թէ քանի կարևոր պէտք իցեն կանո-  
նաւոր հրահանգաց զօրականին առ  
զգէմունելոյ Եւրոպացւոց, ինդքրեաց  
ընկալաւ 'ի Գաղղիւյ զօրավարս հմու-  
տղս իրաց զինուորութեան, և սկսաւ  
վարժել 'ի նմին և զիւրան, մանաւանդ  
զումբաձիդ զօրականս . և ծովակալն  
Հասան պէշ նովին նախանձաւորու-  
թեամբ իւրոյ արքային վառեալ բա-  
րեկարգեաց յոյժ յոյժ զիրս նաւահան-  
դիալն Օսմանեանց :

Ի հեռանալ Ռուսաց 'ի խրիմէ  
շվովթք անհնարինք ծագեցան 'ի կըլ-  
զուո՞ն յամին 1775. զի Տէվլէթ քերէ՛յ  
խան անհնատուր էր յօս Օսմանեանս, ուր

ժողովուրդ իւր ըստ մասին լաւ համար  
քեր՝ ի Ռուսս հասուածիլ, և զԸահին  
քերէյ կացուցանել իւրեանց առաջ-  
նորդ. ամին իրի գոնդք Ռուսաց միե-  
ցան դարձեալ 'ի Խրիմ' խաղաղու-  
թին առնելոյ աղադաւ, և Տէվլէթ-  
նեղեալ 'ի Ռուսաց և 'ի Թաթարաց  
միանդամայն՝ փախեաւ ահարեկ 'ի  
Կոստանդնուպօլիս + և աղքայ բնակե-  
ցոյց զնա 'ի Կողմանս Զաթալճայի, այն  
է Փարսաղիս : Յայնժամ Ռուսոք կար-  
գեցին խան փոխանակ Տէվլէթայ զԸա-  
հին . և 'ի բողոքել գրանն Օսմանեանց  
զայնմանէ՝ Ըահին ասլաւինեցաւ առ  
Ռուսս, և Օսմանեանք առ Ժամն ըն-  
տրեալ կացուցին այլ խան զՄէլիմքէ-  
րէյ :

Զայն տեսեալ Ռուսաց՝ յարձակե-  
ցան 'ի վերայ Թաթարաց կուսակցացն  
Ակիմայ, և Ակիմահաճապարեաց 'ի փա-  
խուստ : Ընդ այս գործ Ռուսաց ծան-  
րացասումն յոյժ եղեն Օսմանեանք, և  
կամէին միւս անդամ 'ի պատերազմ  
ձեռն արկանել . սակայն ըստ աղաչա-  
նաց գեսպանին Գաղղիոյ յանձն առին  
դարձեալ խօսել ընդ Ռուսս յիրաւա-  
խոհութիւնն , և նովսիք հաստատեցին  
զԸահին քերէյ յիշխանութեանն :

Յամին 1777 արքայն Պարսից Սա-  
տրդ խան Եղբայր Գէրիմ խանին ան-  
ազգ իմն պատերազմաւ յարձակեալ 'ի  
սահմանու Օսմանեանց Էտա զբաղաքն  
Պարսա + և կուսակալն Պաշտամայ  
քանդի անփոյթ Երալ Եր գիմելյօգնու-  
թիւն պաշտելոցն՝ ընկեցիկ Եղե յիշ-  
խանութենէ իւրմէ : Ի միւտւմ ամին  
տագնապեցաւ Թագաւորեալ քաղաքն  
և յահագին կոսորածէ ժանա ախտին՝  
որպիսի չեր պատահեալ անդանոր 'ի  
քաղում ժամանակաց հետէ + քանդի  
թէպէտ և սաստկութիւն նորին ոչ  
տեսաց աւելի քան զաւուրս քառա-  
սուն, սակայն թիւ մեռելոցն յանմ  
ժամանակի ոչինչ նուազհաշուեր քան  
զերս հարիւր հաղարս, թէպէտ և  
անհնարին տարածութիւն քաղաքին  
մեծի խափանէր յաշաց տեսանելեաց  
զամայութիւն պողոտայից նորուն :

Ի ժամանակս պատերազմին Ռու-  
սաց ոմնեք 'ի Յունաց և յԱռնաւու-  
տաց Պեղոսոննիդայ աւելի իմն հա-  
մարձակութիւն առեալ էին . սմին իրի  
արձակեցաւ անդր ծովակալն Շէղայ-  
իրի հասան պէշ, զի բնաջննջ բարձրէ  
'ի միջոց զաղգն ողջոյն + այլնա խոհա-  
կան խորհրդով շատ համարեցաւ ըստ

Քաղաքաց քաղաքաց գլուխատել զՅոյ-  
նըս՝ զորոց կասկածէր մատնառուս առ.  
Որուսս լինել, ոչ ինչ խնայելով ՚ի  
տիս և ՚ի հասակ և գիղանէր կուտէր  
զկառափունսն զբահանս զբահանս առ  
գուրս քաղաքաց :

Ընդ այս ժամանակս խանն Խրիմու  
Շահին կարի իմն ուժացեալ ՚ի հայրե-  
նի սովորութեանցն, և զակառատեալ  
զշետ բարուցն և գնացից Որուսաց՝  
մինչև զգենուլ և ըստ տարազու զօրա-  
գլսաց նոցին, ատելի եղե թաթարաց .  
Քանդի ոչ միայն ինքնին ասպետ լեալ  
Որուսաց և ըստ նոցին կարգացն վարէր,  
այլ և հրահանդս զօրացն Բրուսաց հնա-  
րէր մուժանել ՚ի թաթարս, և կանա-  
նուոյն իւրում գաղլիացի ագուցանէր  
տարազ, և զամենեսեան ՚ի սոյնպի-  
միս բռնադատէր յանօդուտ նորաձևու-  
թիւնս : Միաբանեցան ելն ՚ի վերայ  
նորա և երկոքին եղթարքն իւր, մինչև  
փախչել Շահինայ յամին 1782 ընդ-  
հիւսպատին Որուսաց ՚ի Կերչ քաղաք . և  
լցաւ այնուհետեւ Խրիմ անհնարին կո-  
տորածիւք և ապակսնութեամբ : Դեռ  
պանն Որուսաց Պուշկաքով յայտ ա-  
րար գրանն մեծի եթէ հարկ ՚ի վերայ  
կայ Օսմանեանց ձեռն միաբանու-

թեան կազմել ընդ Որուսս, և ցածռւցանել զաղմուկ շվոթի թաթարաց սակայն ընկալաւ պատասխանի՝ եթէ ըստ պայմաննել գաշմնցն հաստատելոց ՚ի Գայնարձըք ոչ է արժան Որուսաց այլ և ոչ Օսմանեանցս միելովս Խրիմու, բայց միայն Որուսացդ պարտք էն պաշտպան կալ խանին ընտրելոց ՚ի թաթարաց : Յայնժամ զօրավարն Սամուշիով մուռալ ՚ի Խրիմը քամն հազարաւ արանց՝ վանեաց զնուռովելուն, և զոմանս ձերբակալ արարեալ հեղձոց, և վերստին հաստատեաց իշխան երկրին զօնահին քերել : Առաջեցին և Օսմանեանք բգեաշն զոմն ՚ի թաման ըստ օրինակի Որուսաց, առ որ պատուէր յունաց Շահին զի գարձյի անդրէն յերկիր իւր իսկ բգեաշն գլսատեաց զգեսպան խանին : Յայնժամ ֆոթենքին յանուն դշեսյին իւրոյ նախատինս անձին վարկուցեալ զբոքն, եմուստ զօրօք իւրովք ՚ի Խրիմը, էառ զբէֆէ, և արդել ՚ի գիտահոջ զիսաննե :

Ի սկզբան միւսայ ամին տեսեալ Շահինայ զանէիմն հաստատութիւն իւրումն պետութեան և զկեղակարձն իւր զիշխանութիւն, յայտ յանդիմանութեամբ հրաժեշտ կալաւ յաթու

ուղին և 'ի տէրութենէն՝ զորս յանձն  
առնէք 'ի ձեռս Ռուսաց պայմանաւ,  
զի ինքն մեկնեալ երթիցէ նստիլ 'ի  
դաւառ ինչ ուրեք աշխարհն Ռուսաց,  
և առցէ իւր հաս 'ի նոցանէ ամ ըստ  
ամէ երեքհազար բուպղս : Զայսօրի՝  
նակ վախճան էառ աւասիկ իշխանու-  
թիւն Թամար խանից Խրիմուշը որում  
տիրապետէին նոքա 'ի հինդհարիւրոց  
ամաց հետէ :

Դշխոյն կատարինէ առեալ զաւե-  
տինն, և զերդումն հաւասարմութեանն  
ամենայն աւագանւոյ և գիտնականացն  
Խրիմու, արձակեաց անդք զավարա-  
պետ զօրաց իւրոց զժոթեմբին ժառան-  
դէլ զերկիրն . և նորա մտեալ 'ի Խրիմ  
վաթմուն հազարաւ արանց՝ կալաւ  
անհակառակ զամենացն զամուք ամուք  
տեղիս և զնաւահանդիսոս աշխարհին,  
ևս և զլուպան և զբերսոն և զնաւա-  
հանդիսոս Ազախու, և եդ 'ի նոսա  
պահանորդս :

Յայտ իսկ էր որ ինչ զհեան ունեք  
դաւ զեղելոյս . վասն որոյ Ռուսք մե-  
ծաւ պատրաստութեամբ կազմէին 'ի  
պատերազմ։ Թող զվաթսուն հազարս  
փոթեմբինայ, Ռեփինին գայր նմա 'ի  
նիզակակցութիւն քառասուն հազա-

բաւ, և բումեանցով այլով գնդաւ  
չէր հեռի 'ի խրիմ : Խռովեցաւ կոս  
տանդնուազօլս ընդ դոյժ առմանն  
խրիմու, և բողոք պատերազմի հնչէր 'ի  
բերանս մեծի և միոքու : Զօրաժողով է-  
զեն Օսմանեանք արանց բազմաց 'ի  
սահմանս Դանուբ գետոյ, և յաւելին  
բազմացուցին զթիւս նաւուց իւրեանց:  
Դեսպանն Գաղղիացւոց հնարեցաւ  
միջնորդ Խաղաղութեան կալ 'ի միջի,  
յորդորելով զիտուս զիշանել Օսմա-  
նեանց . և կայսրն Գերմանացւոց Յուլ-  
սէփ զնոյն առաջի առներ խաղաղու-  
թիւն, սակայն զՕսմանեանն ստիպէց  
մի յեսս պահանջել զլորիմ . և սպառ-  
նայր ևս նիզակակից լինել Ռուսաց՝ ե-  
թէ բանք իւր զինիցին լսելի : Տագնասղ  
էր Օսմանեանց ամենայն ուստիք, և  
առանին խռովութիւնք ևս ոչ պակա-  
սէին 'ի Բումելի, և 'ի Դամասկոս,  
յԵղիպտոս և 'ի Պալտաս + և սակայն  
վէզիրն մեծ ընդ պատերազմն կամէր  
մանաւանդքան հաշտել ընդ Ռուսս :  
Ուր ուրեմն յազթեաց խորհուրդ խա-  
ղաղասէր արքային և այլ աւագա-  
նոյն . որոց կանխատես խորհրդով  
զբուշացեալ յառաւելագոյն չարեաց՝  
յանձն առին սարդագրել 'ի նոր յետ-

կար ուխտի յամին 1784, ՚ի 14 աւուր  
ամսնեանն ապրիլի, որով և հրաժարե-  
ցին բնաւ յիշանութենէ երկրին խրի-  
մու : Խակ Շահին քերէյ իբրև ետես  
զանձն իւր թողեալ լքեալ յիւրոցն և  
՚ի Ռուսաց՝ Եդ՝ ՚ի մատի փախչել ՚ի Կոս-  
տանդնուպօլիս ։ այլ մինչև ժամանեալ  
անդր ձերբակալ եղեւ, և ածաւ ՚ի  
չոռողոս կղղի :

Թէպէտ այսպէս հանդարտեցին առ  
ժամը կողմանքն երկոքին, սակայն օր  
ըստ օրէ տարածել աճել պէտութեանն  
Ռուսաց զկողմասիք Պոնտոսի ՚ի գա-  
ւառմն որ ընդ մէջ կան Աւեաւ ծովու  
և Կասբիականին, Խէթ էր սրտին Օս-  
մանեանց : Քանիզ և չերակլ արքայ  
Վրաց ոչ ևս հանդուրժեալ բռնու-  
թեանցն Պարսից, ՚ի հերուն հետէ, այս-  
ինքն է յամին 1783, հրաժարեաց յիշ-  
անութենէն իւրմէ և երդուաւ Ռու-  
սաց զերդումն հաւատարմութեան :  
Զնորին ըոգան զէկտ և որ շուրջն կայ-  
ին իշխանք և պէտք գաւառաց, և  
զհովանաւորութիւն Ռուսաց խնդրե-  
ցին, ընդ որս և Եզերացիք և Օսք և  
Մնկրէլք : Խակ դշխայն Ռուսաց զայս  
սրայման խնդրեաց ՚ի նոցանէ, զի մի ևս  
մարդավաճառ լիցին ըստ յաճախ սո-

վորութեան իւրեանց : Եւ քանզի իսու  
վան մեծ էր այս շահու վաճառակա-  
նայն Օսմաննեանց, բոլոք կալան սոքա  
առ վէզիրն, և նա հրաման ետ բգեշիլն  
Ախլցիսայի ասպառակ սփոել՝ ի գա-  
ւառու Եգերացւոց և Ավիսազաց, և ժո-  
ղովէլ կուտել զմարդագերին : Մեծա-  
պէս սատար եղեւ այսմ արշաւանիս և  
նոր ոմն տաղանդապէտ Չելս Մանառը  
անուանեալ, որ զմարդարէի անուան  
թեկն ածեալ՝ մեծարոյ գտաւ յոյժ  
յաչս թաթարացն որ ՚ի Կուպան, և  
հմայս և յուսութուլունս բաշխեալ՝ ի  
նոսա խրախուսէր զնոսին ՚ի պատե-  
րազլը ընդգեմ Ռուսաց . և էր թիւ-  
հետեղաց նորա աւելի քան գքառա-  
սուն հազար, որք բախեալ ընդ զօրս  
Ռուսաց՝ հարան խորտակեցան ՚ի նո-  
ցանէ : Վնասի և Պուլհաքուլ բոլոք կա-  
լսուառ վէզիրն կարձել զասպառակու-  
թիւնս Լաղիկեցւոց ապա թէ ոչ ասէ,  
մերս պէտութիւնն հոդ յանձին կալչի-  
նիքնին առնուլ զիրէժ ապականու-  
թեանցն գործելոց առ ՚ի նոցանէ :

Յաւել՝ ՚ի բոլոքն և այլ ևս պահան-  
ջանս ինչ, որպէս և զայն՝ զի ասաս-  
ցեն Օսմաննեանք եթէ յինչ ակնարկի-  
ցեն հանդերձանք պատերազմի զոր առ-



նեն նոքա ընդ ծով և ընդ ցամաք . և զի  
գագարեսցեն 'ի խոշտանդելոյ զբնա-  
կիչս Մոլտաւիոյ և զվահան 'ի պատ-  
ճառս իշխանաց նոցին : Պատասխանի  
ետ դուռնն արքունի և ասէ . ա .  
« Ինքնագլուխ են Լազիկեցիք , և  
մեր չէ իշխանութիւն ստիպել զնոսա-  
զի թողցեն 'ի բաց զզէնս իւրեանց :  
՛՛ • Դուռնն արքունի ցանդ իննամունի  
անձին պաշտպանութեան , որպէս և ա-  
մենայն թագաւորք Եւրոպայ , առանց  
ինչ թշնամութեան տալոյ նշանակ :  
Ք . Անդորրութիւն բնակչայն Մոլ-  
տաւիոյ և Վլահաց յօդուա՞ Օսմա-  
նեանցս բերի մանաւանդ քան Որու-  
սաց , վասն որոյ մեր փոյթ միջի հսկել  
'ի պահպանութիւն նորին » :

Ապա 'ի գալ կատարինեայ գշխոյին  
ընդ Յովկեփայ կայսեր 'ի Խրիմյամին  
1787, թէպէտ և ոչ ինչ խորհուրդ պա-  
տերազմի էր 'ի միջի , այլ կասկած եր  
կիւղի կալաւ զյուրովս 'ի պէտութեանց  
Եւրոպայ՝ եթէ այն ուզեորութիւնն  
գշխոյին և կայսեր ոչ յայլինչ ակնար-  
կիցեն՝ բայց 'ի ծաւալել և ևս յառաջ  
վարել զերկրակալութիւնս Որուսաց .  
և դեսպանին Անդոլացւոց և Բրուսաց  
զամենայն հնարս հնարեցան առ . 'ի



յարուցանելոյ զօսմանեանսն ՚ի վերայ Որուաց :

Նկնայորդոր իսկ վառէին Օսմանեանք ՚ի մարտ, և ՚ի ստանալ անդրէն զընտիր ընտիր գաւառուս իւրեանց որ հետ դշետէ ելանէին ՚ի ձեռաց նոցասակայն ոչ փոքր ինչխափան լինէր Ճեպոյն առանին խոռվութեանցն յաճախութիւնք : Քանզի Մահմուտ փաշակուսակալն Ծքոսրաքաղաքի յաշխարհին Ազնաւորաց՝ ապստամբեալյարքայէ և գրամ ևս հատանէր յիւր անուն, որ և ՚ի բազում նուագս եհարպ վանեաց զգունդս զօրաց արքունիք արձակելոց հետ դշետէ ՚ի վերայ նորա :

Ոչ ինչ նուազ խոռվեալ էր յարաց հետէ և աշխարհն Եղիպտացւոց, և Ճէղայիրի Հասան փաշա երթեալ անդրքազմութեամբ նառուց՝ հալածեաց զբոնացեալ Եղիսանսն զՄուրաստ պէյ և զլավրահիմ պէյ . և պատրաստէր կաղմէր սպառապուռ յնիցելյաշխարհէ անտի զբոնակալութիւնն Մէմլուքաց, զորս և կիսով չափ առաքեաց ՚ի Կիպրոս և ՚ի կողմանս Կիլիկիոյ . ած ՚ի գանձն արքունի իբրու ութսուն հազար քսակս արծաթոյ, և բարեկարգեաց զսուրման զոր հարկէին Եղիպտացիք ամբըստ ամե

մեծի գրանն Օսմանեանց :

Յամին 1786 դվարապարտ եղեւ Ապու-  
չելսցին Փէթրաքի , որ լրւմայափոխ էր  
փողերանոցին արքունի : Աս իւրով խո-  
հական գնացիւք սիրելի լեալ մեծամե-  
ծաց՝ փարթամասցաւ յոյժ և զայլս ևս  
փարթամասցոյց . այլ ապա 'ի հպար-  
տութիւն ամբարտաւանութեան յե-  
ցեալ , ոչ ձեռնապահ եղեւ 'ի միսելց յիրա-  
տեսչութեան աւագանւոյն . որով և  
ատելի եղեւ յաջ վէղիրին մեծի Եռւսու-  
ֆայ և ծովակալին չասանայ : Քանզի  
'ի կամել սոցա իշխան կարգել երկրին  
Վլահաց զՄավրօ Եանի զոմն յոյն  
աննշան՝ Փէթրաքի հնարեցաւ խափան  
դնել առաջարկութեան գործոյն . վա-  
սն որոյ և յեղակարծուց ձերբակալ  
եղեւ , և յետ դառն տանջանաց՝ մինչ-  
դեռ Մավրօ Եանի պատուեալ իշխա-  
նութեամբն ելանէր 'ի գրանէ վէղիրին ,  
գլխատեցաւ Փէթրաքի առաջի աշաց  
նորա , և ամենայն ինչք նորա գրաւե-  
ցան յարգունիս :

Զհեա երկուց ամաց գլխատեցաւ և  
Քիացի յոյնն Աքանավի՝ գոգցես 'ի նոյն՝  
օրինակ պատճառս . զի լրւմայափոխ էր  
Եսմա սուլդան դշխոյին , և ընդ ձեռն  
նորա առնէր զոր ինչ և կամէր . վասն

որոյ բազումք յաւագանւոյն թշնամիացան ընդ նման և 'ի մեռանել կամա սուլ գանին յամի 1788 կալան և զԱքանավի, և 'ի մէջ բերեալ զամենայն զրկանս նորա և զհարստահարութիւնս՝ գլխատեցին զնա և զեղայլն նորա :

Ապտիւլ չամիտ աբքայ յակամայ կամա հաւանեալ 'ի յորդոր աւագանւոյն որ 'ի բանի լեւալ էին գեսպանին Անդղիացւոց, պատուէր հրամանի արար առ չասան փաշա թողուլ բքանել զիրս Եգիպտասի և արշաւել բովանդակ նաւասորման 'ի վերաց Ռուսաց ընդ Սէաւ ծով և ամրացոյց զբերդեանն որ յափունս Դանուբ և Տնեսդէր գետոց կան, զխութուն, զՊէստէր, զԵսոր Վիլի, զԽամայիլ, և մանաւանդ զանառն Օզու : Գեսպանի գալլիացւոց Ծուաղէօլ կուֆիէ անուն զամենայն Ճիգն 'ի վար արկեալ խալիանել կամէր զիսազին . բայց ոչ միայն չկարաց ինչ ազգել ընդդէմ թելագրութեանց անդղիականին, այլև մասն և տուր եղև 'ի նմանէ . քանզի մատենագրեալ էր սորա 'ի պատանեկութեան գոլովախս զուղեցնացութիւնս իւր ընդ Յունաստան աշխարհ, յորում տարապայման իմն հիացմանք ընդ նահատակութիւնս առաջնոցն Յունաց՝

ոչ ինչ զգուշացեալ էր խրախուսել և  
զարդի Յոյնս յընդվյշել յազբունի դրա-  
նէ : Արդ զբանս մատենին այնորիկ  
թարգմանեալ անդվիացւոյն մատոյց ՚ի  
դուռնն և ասէ . « Տեսէք զԳաղղիացին  
զոր մաերիմ ձեզ կարծէք . տեսէք զի՞նչ  
՚ի բերանոյ խօսի , և զի՞նչ ՚ի գիր գըոշ-  
մլոյէ » : Աճապարեաց Շուազէօլ ժո-  
ղովել յամենայն կողմանց զօրինակս իւ-  
րոյ մատենին ծանր ծանր հատուց-  
մամբք , այլյասջողեցաւ և ոչ ինչ :

Յերկոտասաներորդի աւուրք ամ-  
սեանն օգոստոսի խորհուրդ արարեալ  
աւագորերոյն՝ յերկարագոյն նուագօք  
զբանիւք անկանէին . և ապա ազդ ա-  
րարին առ գեսապանն Ուուսաց Պուլչա-  
քով Եռօրեայ ժամագրութեամբ՝ դալ  
հանդիսիւ . ՚ի դուռն արքունի : Կաս-  
կած կալաւ զմիսս Պուլչաքուլայ , և  
ծանոյց նախ գեսապանին գերմանացւոց  
որ էր պարոն չերպէրթ . և նորա ա-  
ռաքեալ զմարգման իւր առ վէզինն  
հարցանէր եթէ զի՞նչ պատճառք իցեն  
անակնկալ կոչոյն : Պատամիսանի ետ  
վէզիրն մեծ և ասէ . « Ինքնիշխան է և  
մերս պետութիւն հանգոյն Ուուսացն  
դարէ զամենայն , և ըստ կամն իւր յար-  
դարէ զամենայն , և չպարտի համար

ումեք տալ զիւրուրոյն տեսչութենէ .  
վասն որոյ անտեղի իմն է հարցաքննու-  
թին գեսպանիդ . « : Խելամուտ եղե  
չերպերթ բանիցն զօրութեան , և 'ի  
նմին գիշերի գարձեալ առաքեաց զեր-  
կոսին զատենատպիրս խը առ վէզիրն ե  
ասէ . « Եթէ կամք իցեն օսմաննեանդ  
պետութեան մարտ պատերազմի յար-  
գարել ընդգէմ Ռուսաց , յուշըցի ձեղ  
զի կայսրն մեր գաշնագիր է ընդ Ռուսս ,  
և ոչուեսցէ անշուշն յիս պատերազմիդ  
այդորիկ . « : Վէզիրն Կիւրճի Եռուսութ  
փաշաքանզի այն ինչ զարթուցեալ էր  
'ի քնոյ՝ խստագոյնս ետ պատախանի և  
ասէ . « Զդիսեմյորոյ իրաւանց խառ-  
նեսցի կայսրն 'ի պատերազմյորում չկը  
նմա մասն բաժնի . « : Ասեն արքն . « Այլ  
կարող է միջնորդ խաղաղութեան ընդ  
խոռվեալսդ լինել . « : « Ազաքէն նիւ  
զականից է Ռուսաց կայսրն ձեր , ասէ  
վէզիրն . և զիանդի հնար է նմա միջնորդ  
խաղաղութեան լինել . այլ խիթամք  
մեծապէս զի և նա պատճառի իմն մարտ  
յուզել 'ի մեր վերայ , որպէս ակնարկեն  
և զօրաժողովք նորս յերկրին Մաճա-  
ռաց . « : Խակ Պուլհաքով եղեալ նախ  
յանքոյթ տեղւոջ զիարեսոր թղթեանն  
խը՝ գնաց 'ի դուռն : Հարցին ցնա և

ասեն. « Ունիցի՞ս իշխանութիւն ձեռ-  
նադրել 'ի մուրհակ գաշնադրութեան՝  
որոյ պայմանք այն իցեն որ 'ի Գայնար-  
ճըդ հաստատեցան, 'ի մեղ այսրէն դար-  
ձուցանելով զյորիմ» : — « Ոչ է իմ իշ-  
խանութիւն այնպիսի, ասաց գեսպանն,  
և յարեաւ 'ի գնալ, այլ նոքա մինչցին  
'ի նա զձեռս իւրեանց և ածին յԵտիւ-  
գուլէն յութուտաներորդի աւուր  
ամնեանն օդոստոսի . թոյլ ետուն նմա-  
հոգալ և առնուլ ընդ իւր զամենայն  
զկարեոր պէտսն, և յընտանեաց իւրոց  
զո որ և կամեր, այլ զնաւս Ռուսաց որ  
'ի նաւահանգստի անդ էին՝ տարան 'ի  
կապսնս երկաթիս : Տրտունջ կալան  
զայտմանէ գետպանք այլոց եւրոպական  
պէտութեանց . և բէխս էֆէնտին ետ  
նոյա պատասխանի . « Վաղնջական  
օրէնք են առ մեղ՝ արգելուլ զգեսպանս  
յԵտիւգուլէն՝ ոչ 'ի վնաս ինչ նոյա,  
այլ զի անքոյթ լիցին 'ի ցամանէ ժո-  
ղովրդեան » :

Յետ այնորինկ հրովարտակ արարին  
Օսմաննեանք՝ յորում զայս օրինակ յայտ  
առնէին զպատճառս պատերազմին .  
ասեն . « Յամին 1774 հաշտեցաք մլք  
ընդ Ռուսս 'ի Գայնարճըդ, որպէս զի

ինամ՝ կացուք սովորմբ անդորրութեան  
մերոյս ժողովրդոց . սակայն Ռուսք  
ցանդ զհակաւակօքն բերեալ՝ առին  
յանկարծակի զխրիմ՝ որ ըստ գաշանցն  
պայմանի ազատ ունէր մնալ, և զիշ  
խանն Վրաց ասլատամբեցուցին յօսմա-  
նեան դրանէս : Բան եղեալ էաք զի  
զաղեհանսն որ ՚ի Գրլպուրուն՝ բնա-  
կիչքն Օզուի պեղեսցեն, և Ռուսք խա-  
փան արկին առաջարկութեան գոր-  
ծոյն : Հիւպատն նոցին որ ՚ի Մոլ-  
տաւիա կոյր՝ վախոյց խաբանօք զիշ  
խան երկրին զԱղեքսանդր Մաւրոքոր  
տաթ , և ՚ի պահանջել մերում չետ զնա  
՚ի դուրս . այսպէս ամենայն ուրեք  
հիւպատս կարգեալ Ռուսաց , գուն  
գործեն զհպատակսմերխաթելպատել  
և ՚ի պարտուպատշաճ հպատակութե-  
նէ նոցին արտաքս հանել: Այն չէ շատ,  
և ՚ի կարգս տեսչութեան մերոյ միսիլ  
սկսան , և պահանջեն զի պատուհաս ՚ի  
վերայ կապեսցուք մաքսապետայն մե-  
րոց և կուսակալց և կողմնապետաց :  
Ազատութիւն շնորհեալ մեր վաճառա-  
կանայն Ռուսաց՝ թափել զվաճառա  
խերեանց յո և պէտ կողմն աշխարհիս,  
նոքաքան զամենայն ազգմն զմերոյ ազգի  
վաճառականս նեղեն ՚ի քաղաքս իւ-

րեանց յորոց և զոմանս մինչև՝ ՚ի Սիսիլը  
ապսորեալ են և ՚ի մահ ևս տուեալ, որ  
պէս լսեմք . և յորժամ նաւք մերոցն  
նշանաւորաւ Օսմանեանց ՚ի նաւահան  
գիստ Ռուսաց մատչեն, նոքա թնդա-  
նօթս արձակեալ՝ ՚ի բաց դնաւմն վա-  
րէին : ՚ի վախճանի գեսպանն Ռուսաց  
պատճառք է պատերազմիս, քանզի նա  
ստիպէր առնուլ յօսմանեան դրանէս  
յետկար ուստի՝ որով հրաժարիցն իք  
մէք յիշնանութենէս զոր ունիմք ՚ի վե-  
րայ Վրաց աշխարհին . ապա թէ ոչ,  
ասէր, զօրավարն ֆոթեմքին պատուէր  
հրամանի ունի միսիլ ՚ի սահմանս Օսմա-  
նեանց հարիւր հազար զօրականօք, և  
բուռն զօրութեամբ առնուլ զետկարն,  
և որ այն ևս ՞ :

Անդէն հրապարակեցին և Ռուսք  
զիւրեանցն յայտարարութիւնն, որ ունէր  
զայս ձև օրինակի . « Թէպէտ մշտնջե-  
նաւոր էր խաղաղութեանն պայման զոր  
ընդ Ռուսս հաստատեցին Օսմանեանք,  
այլ այս երկրորդ անդամամբուծին նոքս  
զնոյն, և զպատգամաւորն մեր և զդես-  
պան և խորհրդական զՊուշչաքով ար-  
դելեալ փակեցին յամբոցն Ետիդուլէ.  
զուր վաստակեցին գեսպանիքն գեր-  
մանացւոց և Գաղղիացւոց զառաջ

ունել գործոյն : Արդ զի կարող լիցին  
ամենեքեան դատ առնել , ծանօթս  
տամբ աւասիկ ամենեցուն , զի յամին  
1768 Օսմանեանիք ինքնին մարտ պա-  
տերազմի յուզեցին . ապա յամին 1774  
՚ի հաշտութեան ժամանակին զգա-  
ւառսն զորս կալեալ էաք՝ մեծաւ մա-  
սամբ անդրէն դարձուցաք , լաւ հա-  
մարեալ զհաշտութիւն քան զերկըա-  
կալութիւն : Յամի 1783 լշխանն վրաց  
հանդերձ իւրովքն կամակար յօժա-  
րութեամբ ետ զանձն իւր ՚ի մերս  
հապատակութիւն և դաշնադիր եղեւ ընդ-  
մեղ , և հաւանելս մեր ընդ այս՝ ոչ ինչ  
հակառակ ելանիք ուխտի դաշանց մե-  
րոց որ ընդ Օսմանեանսն էր . սակայն  
նոքա ընդ ձեռն բդեշխին Ախլցիսայի  
գրգռուցին զլատիկեցիմն ասպատակել  
յաշխարհն վրաց , և զիշխան աշխարհին  
հրապուրեցին լուծանել զլոդ դաշանցն  
որ ընդ մեղ , և առ նոսա հատուածել:  
Հիւպատք մեր և վաճառականիք բազում  
նեղութիւնս կրկին յիշխանացն Օսմա-  
նեանց սակս տրոց և հարկաց յետա ընդ-  
դէմ դաշանցն մերոց , և այս շատ էր ՚ի  
մարտ զմեզ յարուցանել . բայց մեք ըստ  
մերոց խաղաղասէր բարոյից իբրև ե-  
կաք ՚ի խրիմ՝ անդր կոչեցաք զՊուլՇա-

քովեւ և պատուելու տուաքն մաս խաղաղութեամբ վճարել զիրմն ։ զնոյն և գերմանացւոյն և Գաղղիացւոց ծանուցեալ գովեցին զմերս խաղաղասիրութիւնն ։ Ի դառնալ Պուշչաքովի անդրէն ՚ի Կոստանդնուպօլիմ՝ ոչ ինչ խաղաղութեան ետես նշանակ, այլ և կոչեցաւ ՚ի դրանէն ՚ի 15 աւուր ամսեանն օգոստոսի, և ասէ ցնա ըեիս Եֆէնտին ։ ա. Թողհրաժեշտ կացին Ռուսաք ՚ի դաշտանց ուխտէն հաստատելոյ ընդ Վրաց իշխանին, և մի ևս խառնեցին յերս այլոց գաւառացն Ասիոյ ։ բ. Իշխանն Մոլոտիոյ Մաւրոքորտաթյանձնեսցի ՚ի ձեռու մեր ։ դ. Փոխանորդ հիւպատին Ռուսաց որ ՚ի քաղաքն Եաշ՝ ՚ի բաց կոչեսցի ։ քանզի զըպարտեալ էր այլն՝ որպէս թէ նա փախուցեալ իցէ զիշխանն և զայլս ՚ի բնակչաց երկրին ։ դ. Երեսուն և ինն աղեհանք որ ՚ի Գըլպուրուն՝ առ Օսմանեանքս դարձուսցին, զի մեր է Երկիրն ըստ դաշտանցն պայմանի ։ է. Հիւպատք Օսմանեանց կարգեսցին յամենայն նաւահանգիստս Ռուսաց ։ և որ ՚ի խրիմնստէին՝ վաղ ընդ փոյթյալրաբանչներ տեղին դարձուսցին ։ շ. Ամենայն նաւ Ռուսաց որ ընդ կիրճն Կոստանդնու

պոլսոյ անցանիցէ՝ յայսմ՝ հետէ զննես-  
ցի մանր, զի մի տաճիկ նաւավարք իցեն  
՚ի նմա, և ոչ խահվէ, ձէլթ և բըլինձ,  
թէպէտ և ՚ի դաշանցն թղթի ազա-  
տութիւն եր յալագս այսոցիկ : ՚ + Վա-  
ճառականք Օսմանեանց մի ինչ աւե-  
լի մաքս վՃարեսցեն քան զերիս առ հա-  
րիւր : Եւ զպառասխանի պահանջանացս  
սպառնալց բանիւրք խնդրեաց րէիս է-  
ֆէնտին ՚ի 20 աւուր օդոստոսի . թէ-  
պէտ և չիք բնաւ համեմատութիւն ընդ-  
այս միջոց ժամանակի և ընդ բացառ  
կոստանդնուպօլսոյ ՚ի Բեթրպուրկէ .  
Եյաւելս ասել՝ Եթէյոցնչ գրեն Օս-  
մանեանք զամենայն զդաշլնմն կուալս  
յետ հաշտութեանն որ ՚ի Գայնարձըգ :  
Զբավաստակ եղեն գեսապանքն Գեր-  
մանացւոց և Գաղղիացւոց ցածուցանել  
զաղմուկն . նա գարձեալ միւսանդամ՝  
կոչեցին Օսմանեանք զՊուլհաքով, և  
ստիպէին զնա յետս անդրէն տալ  
զլսրիմ ՚ի ձեռս Օսմանեանց . ընդ որ  
քանզի չկարէր հաւանել Պուլհաքով  
արգելմն զնա յԵտիգուլէն : Յաղագս  
այսորիկ և մեր հրաման է առ զօրա-  
գլուխմն մեր ֆոթեմքին և Շումեան-  
ցով՝ զի ելքեն ՚ի պատերազմ՝ ի վերայ  
Օսմանեանց » :

Յայնմշտամանակի զօրաժողով եղեն  
 Օսմաննեանք արանց իբրու հինգհա-  
 րիւր հաղարաց, թաղ զնաւամարափկան  
 որ լցան զեղան 'ի նաւասորիմն բազմա-  
 թիւ՝ որպիսի չէր երևեալ ցայնժամ' ի  
 Պոնտոս: Ձեռնատու եղեն սոցա և ձե-  
 զայիր և ֆէս նաւուք և դրամնվք:  
 Սասպահ քէրէյ որ երբեմն խան լւալ  
 էր թաթարաց՝ ընկալաւ դարձեալ  
 զսամուրենին և անուանեցաւ սպարա-  
 պէտ ամենայն զօրացն թաթարաց.  
 Խակ Շահին քէրէյ որ յաքասորս կայր 'ի  
 չոռդոս' յօշոտեցաւ յանկարծ 'ի տա-  
 ճիկ բնակչաց տեղուոյն: Կիւրճի Եռու-  
 սուք փաշա հրաման ետ թաթարացն  
 Օգուի յարձակել առնուլ զԴրլպու-  
 րուն, և 'ի սկզբան 1788 ամին կանգնե-  
 ցան ձարքն ձողաբարձք առ դրան վէ-  
 զիրին մեծի, և 'ի վեցերորդի աւուր  
 ամսեանն մարտի խաղաց գնաց բանակն  
 հանդերձ նուիրական դրօշաւն. բայց  
 զայս նուագ չեղեւ հանդէս արուես-  
 տագիտացն դասու: Մեծապէս խրա-  
 խուսեցան Օսմաննեանք և 'ի դիսկացն  
 յաջողութենէ որ պատահեցին ընդ-  
 նոյն աւուրս + քանդի մինչդեռ նաւա-  
 տորմն Որուսաց շուրջ յած էր ընդ Սեաւ-  
 ծով յաշնանային ժամանակին, քանի

ինչ՝ ի նաւաց անտի վարեալ մղեցան ՚ի  
բուռն մըրկաց ՚ի ծովեղերեսյս Ասիոյ,  
և նաւ մի մեծ որ տանէր թնդանոթս  
քառասուն և երկուս՝ մղեցաւ եմուտ  
՚ի կիրճ՝ կոստանդնուպօլսոյ : Կաւա-  
պեսն որ անդվիայի ոմն էր՝ կամեր  
հուր ՚ի վառօդանոցն հարկանել՝ քան  
անկանել՝ ի ձեռս Օսմանեանց, այլորք  
՚ի նաւին էին ոչ ետուն նմա թոյլ, և  
տիղեցին Օսմանեանք նաւին, և մտեալ  
անդր խոռոն բազմութեամբ ածին  
զառաջեաւ ապարանիցն արգունի, և  
անտի ՚ի նաւակայս քաղաքին + ուրա-  
նօր նորոգեալ վսաթարմունն եղին  
նմա զանուն խիւտավերտի՝ որ է աս-  
տուածատուր :

Յերիս առաջս բաժանեցան զօրք  
Ռուսաց + որոց միումն զօրավարեր  
սպարապեան գովեմբին, երկրորդին  
Ռումենանցով, և երրորդին միւս Փո-  
թեմբին . և ոչ ինչ միս եղեալ սաստ-  
կութեան ձմերայնոյն՝ ըռեցին համին  
մինչև ՚ի սահմանս Լեհաց : ԱՃապարե-  
ցին Օսմանեանք խրատել զլեհս զի մի  
տացեն Ռուսաց սնցաւ և կերակուր .  
այլ մինչ նոքա գանդաշէին՝ միւցան  
Ռուսք ՚ի Փոտոլիա և անցին յՈւքրա-  
նիա : Կախկին արշաւանք Օսմանեանց

յառնուշ զՊըլպուրուն ոչ յաջողեաց ,  
և հարեալ վանեցան ՚ի Ռուսաց ՚ի ցա-  
մաքէն և ՚ի ծովէ . Ծէպէտ և ոչ սակաւ  
նախճիլս և ՚ի Ռուսացն գործեցին , և  
զլօրավար նոցին զՍուվորով կարեվէր  
Խոցեցին : Հարաւ խորտակեցաւ և  
Ըես Մանսուր իւրովքն երկոտասան  
հաղար արամէք , և խոյս ետ ՚ի լերինս  
կովկասու . և գնդասկեան Ռուսաց  
Միմթով յամսեանն դեկտեմբերի ՚ի  
լոլ անցուցեալ զլօրս իւր ընդ գետն  
կուպան՝ նուաճեաց զթաթարսն բնա-  
կեալս յաշխարհին :

Իսկ գետպանն գերմանացւոց իրեւ  
ետես եթէ բանկ իւր չեղեն լսելի ,  
յայտ արար վէզիրին զկամս Յովսեփայ  
կայսեր ընդ պատերազմն . և հաղեւ  
զերծ մնացեալ յարգելանէն յշախդու-  
լէ՝ մեկնեցաւ յաշխարհ իւր . և յայնո՞  
հետէ հրաման ետ կայսրն իւրոցն աւե-  
լի քան հարիւր և յիսուն հաղարաց  
միեւ՝ ՚ի Պոսնիս և յերկիրն Վլահաց .  
այլ նոքա կէս մի վանեցան յօսմա-  
նեանց , և կէս մի ըմբռնեալք ՚ի տենդ և  
յայլ հիւանդութիւնս՝ նուազեցին  
յոյժ , և դուն ուրեք յաջողեաց արշա-  
սան նոցա : Այն ինչ կամէր կայսրն  
դադար տալ պատերազմին մինչեւ այլ

զօբք Աւստրիոյ և 'ի Պոհեմիոյ հասցեն  
լւրոյն յօդնականութիւն, Ժամանեցին  
Օսմանեանք Երկերիւր հազարաւ մին  
չև 'ի Պէլիրատ և 'ի Դմբշվար . և թէ  
սկէտ ախտ սրածութեան ճարակեալ  
'ի նոսա՝ բազում կոտրածս առնէր,  
սակայն և թշնամեաց խախան մեծ Եր  
Երկիւղ ժանտ ախտին առ ՚ի ըլանելոյ  
զնոսա : Ազգ Եղեւ կայսեր՝ Եթէ Եհաս  
վէզիրն մեծ բուն բանակաւու մինչեւ  
յափումս Դամնուբայ . Եթող 'ի ԶԵմլին  
արս քսան և հինգ հազար, և ինքն վալժ  
սուն հազար զօրք ընդ Լասցի սպազա  
պէտին դիմեաց յամուղն Լուղոշ՝ առ ՚ի  
չտալոյ Օսմանեանց միսել 'ի Թրանսիլ  
վանիա : Սակայն մեծապէս արիացան  
Օսմանեանք յայնուարշաւանին, և յամ  
սեանն սեպտեմբերի 'ի բազում տեղիս  
խորտակեցին զջօրս Գերմանացւոց, և  
զբանակետղն նոցայաւարի առին . յու<sup>րոց</sup> 'ի միումն քանզի գիշերախառն յար  
ձակեցան Օսմանեանք, աղմուկ շփոթի  
անկատ 'ի Գերմանացիա, և կայսրն ինքնին  
անկեալ յերիվարէն իւրմէ հարաւ զքա  
րի, և վուանգեցաւ յոյժ՝ մինչեւ արիւն  
թքանէր, և պատսպարեալ յայլ Երիւ  
փար՝ հազիւ զէրծաւ 'ի փախուստ :

ԱՅԼ.քանզի որածութիւնն Երթալով

երթայրև զայրանայր՝ ի բանակին Օսմանեանց, և մասն ինչ բանակին գերմանացւոց միացաւ ընդ Ռուսս յերկրին վլահաց, հրաման էտ վէղիրն՝ ի ձմերոց ժողովել իւրոցն ՚ի կողմանս Պելկրատու. և կայսրն դարձաւ ՚ի Զեմլին: Յայն միջոց Ժամանակի քաջահմուտ զօրավարն գերմանացւոց եօթանամնեմին Լաւտոն ՚ի ինդրոյ կայսեր իւրոյ անցեալ ՚ի դուխս բանակին՝ դիմեաց ՚ի Պոսնիա յամեանն հոկտեմբերի, և ասստիկ սլատերազմաւ և պաշարմամբ էտ զամուրն Կովի, և ասկ գնաց մեկնեցաւ ՚ի Զեմլին:

Կաւատորմն Օսմաննեանց յետ ընդ երկար կալոյ մերձ ՚ի Պիշիւքտէրէ՝ խաղաց գնաց ՚ի Սեաւ ծով. և էր թիւնաւուցն ութառուն ընդ մեծ և ընդ փոքր : Բաղում քաջութիւնս գործեաց ծովապետն Հասան յայնմ արշաւանին. այլ ՚ի վախճանի պարտեալ ՚ի նաւամարտի ուրեք առ Օզու քաղաքաւ իսյոս ետ ՚ի Վարնա: Պաշարեցին յայնժամ Ռուսք զամուրն Օզու ընդ ծով և ընդ ցամաք . և ոչ ինչ կասեալ ՚ի սաստկասառոյց բքաբերաց ձմերայնոյն՝ պնդեաց Փոթեմբին զպաշարումն, և յետ բաղում ճգանց և կոտու-

ըածի յերկաքանչիւր կողմանց՝ յեօթնեւ-  
տասներորդի աւուր ամսեանն գեկ-  
տեմբերի յարձակեցան Ռուսք սաստ-  
կապէս և առին զքաղաքն , զբիմակաց-  
ոլն կոտորեցին , և ժողովեցին աւար  
բազում յոյժ յոյժ , թէպէտ և ին-  
քեսնք ևս ոչ սակաւ զեան կրեցին . զի  
հինգ զօրավարս կորուսին 'ի խուան անդ  
մարտին և սպայս յիսուն և վեց , և արո-  
իքու վեց հազար ընդ մեռեալ և ընդ  
վիրաւոր : Եւ մեկնեցան երկուստեք  
'ի ձմերոց :

1 սկզբան միւաց ամին , այն ամ էր  
1789 , ահագին տարավք անձրեաց ե-  
ղեն 'ի կոստանդնուպօլիս զաւուրս եր-  
կուս . այլ բուն սաստկութիւն սահա-  
նացն ժամ մի և կէս տեռեալ՝ ծովացոյց  
առ հասարակ զիողոցս քաղնքին . բա-  
զում աւերմանն գործ եաց 'ի Գամլմ'  
փաշա , և զքարինն աղօրեացն թաւալ-  
գլոր խազացոյց 'ի ծով անդք . ողողեաց  
զտունն որ 'ի ձորամէջս կան 'ի գիւղօ-  
րէս վասփորի , և զկարսամն վարեաց  
թափեաց 'ի ծով . ած կուտեաց 'ի վա-  
ճառանոցին հող բազում 'ի լէրանցն  
կոստանդնուպօլույ , և զյաստակս փո-  
ղոցացն գրկաչափ թանձրութեամբ  
բարձրացուցին ուզիք քանի զկրպակա-

նին . և ահ սկատեաց առ հասարակ  
զբնակչոք քաղաքին : Յայնմատարակու-  
սանաց ժամանակի եհաս ՚ի վերայ և  
այլ տագնասպ քաղաքական . քանզի ել  
հրաման ՚ի դրանէն արքունի՝ զի առ ո-  
րումումք դտանիցի սպաս արծաթի  
շատ կամ սակաւ՝ ածցեն ՚ի փողերա-  
նոցն , և պետութիւնն վորզ տասն հա-  
տուցեալ առ մի մի տրամ՝ գնէր զար-  
ծաթն : Աւագորեալն ամենայն եր-  
կուս կամ երիս եեթ կազմածս երիվա-  
րաց արծաթիս առ իւրեանս պահեալ,  
զայլն տարան յարքունիս . իսկ ոսկեր-  
չացն խանութք առ հասարակ փակե-  
ցան զամիս բազումն , և ձայն ուռանն  
ոչ ևս եր լսելի . և հրեայք երկու յար-  
գելանս բանափ ածան՝ փոխանակ զի  
ցուցակս ինչ արծաթիս յօրինեալ եր  
նոցա : Ապա և հարկ ՚ի վերայ եդաւ  
ստրկաց ժողովել արծաթը բազում և  
յարքունիս տալ . և հատուցնն Յոյնք  
վեց հազար օդգա , հայք չորեքհազար ,  
և հրեայք երեքհազար :

Ի լրումն աղետիցս այսոցիկ եհաս  
վախճան կենաց խաղաղասէր արքային  
Ապտիւլ համիսայ յանակնկալս իմն ՚ի  
քաններորդի եօթներորդի աւուր ամ-  
սեանն մարտի յամին 1789 . և թաղե-

ցաւ 'ի շիրմին զոր իւր իսկ շինեալ էր  
 'ի Պահճէ գավուսու հանդէպ աղքա-  
 տանոյի մղկթին որ կոչ Վալստէ ճա-  
 միսի: Եւ եղբն ամբ թագաւորութեամ-  
 նորա հնգետասան, և ամիսը ութ:

Յաւուրս արքային չամփայյաճա-  
 լսեաց 'ի բնակիչս կոստանդնուպօլսոյ  
 սովորութիւն գիւղազքօս գիւղաքնակ  
 լինելոյ յամենայն ամարայնի. զի նա  
 զարդարեաց շնորութեամբք դժիւղն  
 Պէլէռպէյի և զայլ գիւղօրէս:

Առ նովաւ գարնեալ երևել էին 'ի  
 գրան արքունի Փէփէկի չասան էֆէն-  
 տի, Կազիփի էֆէնտի, և գաճաճն  
 Ապտուլս՝ աղա, և սոյին խօրհրդով  
 գործէր արքայ զամենայն. այլ մեծա-  
 րոյ ևս և խոհական քան զսոսա համա-  
 րէին բէիս էֆէնտին խմնցիլ ուէյ, և  
 ծովական ձէկայիրի չասան վիաշա,  
 որ բազում զգօնութեամբ բարեկար-  
 գութեան աշխարհին եղեն պատճառք:

Սլրող էր յոյժ չամիս արքայ և ա-  
 կանակապ և մարդարտազարդ անկուա-  
 ծոց, ամին իրի մեծապէս բարդաւա-  
 ճեաց առ նովաւ արուեստ ոսկերչու-  
 թեան, և յաւելաւ պայծառութիւն  
 արուեստաորայ մերոյ աղջիս, որոց  
 առաջն և մեծանուն ճարտարապէտ

էր աղնուատոհմն Միքայել չելէսկի  
Տիւզեան : Խակ 'ի վէզերս Համիտայ ար-  
քայի հոչակ մեծ կալաւ Ավելիհտադը  
Էսսէյտ Մէհէմմէտ փաշա յաղագս  
իւրոց խալաղասէր և աշխարհաշէն բա-  
րոյից՝ հանդերձ անկեղծաւոր մտօքն և  
արդարախօս գնացիւք : Առա տեսեալ  
զի որք ոչն կամէին ընդ աճելիշխանու-  
թեան իւրոյ՝ ստէպ ստէպ հրձգու-  
թեամբք յայտնէին զբէն ատելու-  
թեանիւրեանց, հնարեցաւ ճապաղել  
յենիչերիս ոսկի բազում իբրու երեքա-  
րիւր հազար քսակաց, և ապա 'ի մի-  
վայր ժողովեալ զգնդապետսն՝ պա-  
տուիրեաց նոցա և ասէ . « Գիտասաջլիք  
զի ուր և բորբոքեսցի յայտն հետէ  
հրդեհ մեծ կամ փոքր, զգնդապետ  
պահանորդաց տեղւոյն մահու զատե-  
ցայց » . և ոչ ևս պատահեաց հրդեհ  
'ի Կոստանդնուպօլիս յաւուրս իշխա-  
նութեան նորա :

Առ նովաւ երեւեցաւ 'ի թագաւո-  
րեալ քաղաքին և այլն անծանօթ Միւ-  
փիւրկէնի անուանեալ, զի աւել 'ի ձեւ-  
ովն մուտ և ելառնէր յասպարանս մե-  
ծամեծաց՝ սրբել զձանձախարիթ վա-  
ռարանաց, և զդրամն զորս առնոյր 'ի  
նոցանէ՝ յաղքատս բաշխէր, և ամե-

նայն կարօտելոց 'ի թիկունս հասանէր . այլ չէր յայտ եթէ զո՞ր հաւասառնիցի այրն : Կոչեցեալ 'ի վէղիրէն և հարցեալ եթէ զի՞նչ անուն իցէ նորամասէ . «Ծառայ եմ ես Աստուծոյ , և Ապտուլահ անուն է իմ» . և զհաւասան չկամէր յայտնել . բայց բոնադատեալ 'ի վէղիրէն՝ յանձն էառ , ամեն , նշան մահմէտականութեան դնել 'ի վերսյ հանգերձից իւրոց և 'ի մղկիթ ևս երթալ : Յետ աւուրց ինչ ել յատեան վէղիրին և գաւանեաց զքրիստոնէութիւնն իւր , և առ օրին գլխատեցաւ : Եւքանզի յերիկէ երթեալ յեկեղեցի Յիսուսէանց և հաղորդեալէր սուրբ խորհրդոց , աստի առին ոմանք ասել եթէ տոհմիկ ոք էր այրն եկեալ անդը յԵւրոպայ , և յապաշխարութեան սակա գործեալ զայնպիսիս :



Ի Բ

ՍՈՒԼԴԱՆ ՍԷԼԻՄ Գ

Վասն և ութից ամաց էր Սէլիմ  
արքայ Երբորդ՝ որդի Մուստաֆայի  
Երլորդի, և թագաւորեաց ՚ի տեղի  
հօրեղբօր իւրոյ Համիտայ ՚ի քաններոր-  
դի չորրորդի աւուր ամսեանն մարտի  
յամին 1789. և թէպէտ և յուրիք  
յաւադ որերոյն ՚ի բանակի անդ էին,  
սակայն ոչ ինչ նուռազ շքեղաշուք հան-  
դիսիւ Երթեալ Յիշյուպ՝ ած ընդ մէջ  
իւր զուռաերն արքայական : Այլ  
մինչև կասարեալ զհանդէմն Երկու  
ինչ գործեաց ըստ ոչ սովորութեան.  
առաջին զի չոդաւ շիջուցանել զհրդեհ.  
և Երկրորդ՝ զի Երթեալ ինքնին ՚ի նա-  
ւակայս քաղաքին՝ ետ գլխատել զու-  
սուչ նորին . որպէս և զորդի նորա  
զնազիքի էֆէնտի՝ կոչեցեալ ՚ի բանա-  
կէն : Խակ առաջին գործ բարեկարդու-  
թեան զայն արար, զի Եբարձ ՚ի թա-

գաւորեալքաղաքէն զսով հացի՝ որ 'ի  
վեցից ամսոց հետէ նեղէր զբնակիցն,  
ծախեալ յիւրոց դրամոց քսան հազար  
քսակս արծաթոյ:

Յառաջնում ամի թագաւորութեն  
Սէլիմայ արքայի դաշնս ուխտի նիւ  
զակակցութեան հաստատեցին Օսման  
նեանք ընդ Շուետու . և այն առաջն  
անդամ ինքնին արքայ ձեռնադրով իւ  
րով հաստատեալ վաւերացոյց զդաշն  
որն : Ասպա հրաման ետ Սէլիմ արքայ  
զօրաժողովինել, և վառեցան կազմե  
ցան հարիւր և վաթսուն և ինն հազար  
հետևակաց և երկերիւր և երկոտասան  
հազար հեծելոց, և ամրացոյց նոքօք  
զբերդաքաղաքս աշխարհին, մանա  
ւանդ զԱլիլսարէ և զՓելկրատ . զոմանս  
'ի բգեշխից սահմանածայր տեղեացն  
դլսատեաց սակս անհոգութեան նո  
ցին, և զայլոց ներեալ զյանցանս՝ մոտա  
դիւրագոյնս գործեաց զնոսա յառա  
ջիկայմն : Եհան և հրովարտակ յոր  
դորական առ ամենայն Օսմաննեանս՝  
զի քաջութեամբ մարտուցեալ վանես  
ցեն զմշնամիս . և իշխանն Վլահաց  
Մակրո Եանի ոչ դադարէր բանիւք  
շատիոսութեան մեծամեծս կոտորել  
առաջի արքայի, և խոստանայր վաղ ընդ

գոյթ հանել մերժել զի՞տւսս ՚ի սահ-  
մանաց աշխարհին :

Յայնմ ժամանակի բանակն Ուռւսաց  
զետղ առեալ դադարեալ կայր առ Ալ-  
ըէթ գետով. սպազապետն Փոթեմքին  
՚ի կողմանս Պէնտէրայ գեգերէր, և  
հուալ առ նմին զօրսապետն Քամենսքի,  
և Խազախիք առաստակ սփուեալ ընդ  
գաւռառմն յաւեր և յասպականութիւն  
գնէին զամենայն : Խակ Աւատրիականք  
նորանոր կազմութեամբ ՚ի հանդեր-  
ձանս պատերազմի պատրաստէին :

Ապա ՚ի սպառել աւուրց զի՞նուցն  
դադարման սկիզբն եղե մարտին ՚ի  
Պոսնա յամնեանն փետրուարի, և ՚ի  
տեղիս տեղիս բախեալ Գերմանացւոց  
ընդ Օսմանեանս՝ Էր զի հարին զնոսա, և  
բազում այն Էր զի հարան ՚ի նոցանէ,  
մինչե կայսրն Յովիսէի սպազապետ զօ-  
րացն կարգեաց զերևելին Լաւտոն . և  
նա եկեալ բազմութեամբ զօրօք Էառ  
սաստիկ սպատերազմաւ զկրատիչքա, և  
ասպա խազաց գնաց պաշարել զամուրն  
Պէլքրատ յամնեանն սեպտեմբերի .  
կանգնեաց զնովսւ պատնէշս և մարտ-  
կոցս զարմանալի ճարսարութեամբ և  
արագութեամբ, և ՚ի քսաներորդի ին-  
ներորդի աւուր նորին ամսոյ էառ զցա-

ծագոյն մասն քաղաքին . և յետ ութ  
աւուր էառ . և զբարձրագոյնն՝ խաղա-  
ղութեամբ . թոյլ Ետ Օսմանեանց՝ որ  
էին քան և չորք հաղարք՝ ելանել  
դնալ յո՞ւ և կամիցին , և զիուսակալն  
Պելլրատու զԱպտի փաշա հրաւիրեալ  
՚ի կոչունս իւր հանդերձ գլխաւոր զօ-  
րապետոքն՝ մեծապատիւ մեծարեաց .  
և նա յետ ընթրեացն ինսդրեալ ընկա-  
լսու՚ի լաւունէ գիր վկայութեան, եթէ  
որչափ գժուարին էր նմա տասն հաղար  
զրօք զդէմունել պաշարմանն . այլոչ  
զերծաւ այնու Ապտի ՚ի ցասմանէն  
արբայի , և գլխաւպարս եղեւ :

Իսկ վէզիրն մեծ Եռւսուֆ փաշա  
յամսեանն մայխի խաղաց գնաց ՚ի վե-  
րայ բանակին Ռուսաց ՚ի Մոլտակա  
հարիւր հաղար զօրօք , անց ըստ գետն  
Գաննուք , և բախեցաւ ընդ Ռուսս և  
ընդ գերմանացիս , որոց զօրասպետք  
էին Սուլդրով և Քոսպուրկ : Այլ երկ-  
չոստութիւնն ենիչերեացն գերևացոյց  
զջանս վէզիրին . և ՚ի փախչելնոցա առ  
հասարակ անդատին ՚ի սկզբանէ մար-  
տին , զնոյն և սպայքն արարին . ապա  
և վէզիրն ինքնին ակամայ կամօք խոյս  
սուեւալ մեկնեցաւ յիսպայիլ : Յետ  
այսր մեծի պատերազմիս որ եղեւ ՚ի 22

սեպտեմբերի՝ առաւ Մոլտաւիա ողջըն . և զի առ Ռիմնիք աւանաւ լեալ էր Ճակատամարտն , դշխայն Կատարինէ Ռիմնիցքի անունն եդ Սուլորովայ :

Գոյք առմանն Պելրատայ և խորտակման բանակին Օսմանեանց խոռովցոյց զկոտանդնուալօվիս . և Սէլլմարգայընիկեցեալզօռւառւֆ յիշխանութենէն՝ կարգեաց ՚ի տեղի նորավեզիր մեծ զութմնամենի ծովական զճէզայիրը հասան փաշա . այլ մինչ չեամանեալ սորա առնել ինչ գործ կարևոր՝ առին Ռուսք և զԳօճապէյ որէ Օտեսսա , և զԳաւշան , և զԱգքիրման և զՊէնտէր :

Ի սկզբան 1790 ամին արքայն Բրուսաց ուխտ նիզակակցութեան հաստատեալ ընդ Օսմանեանս՝ հաւանեցոյց և զկայան Լէոբոլտ զյաջորդն և զեղբայր Յովիկիայ կայսեր ՚ի հաշտութիւն խալազութեան : Ի նոյն և զՌուսսայորդորեաց , այլ նոքա ետուն պատասխանի . « Քանզի ոչ ՚ի մէնջ ինչ եղեւ սկիզբն պատերազմիս , հարկ ՚ի վերայ կայ զի յօդուա և ՚ի պարծանս մեր լիցի հաշտութիւնդ , և առանց ուրուք միջնորդելոյ » : Ապա ՚ի հանել Օսմանեանց զդեսպանն Ռու-

սայ յարգելանէն Ետիդուլէի՝ զիջա-  
դոյնս խօսեցան Ռուպք . սակայն մարտ  
սկառերազմին չեւ ևս դադարեաց ընդ  
ծով և ընդ ցամաք . և Գոթեմբին  
զսաստկութիւն ձմերայնոյն օդնական  
դաեալ՝ յարձակեցաւ էառ զամուլն  
Քիլի , և ասպա սաստիկ պաշարնամք և  
ահագին հրագութեամք և անթիւ հա-  
րուածովք էառ և զանառիկն խամայիլ :  
Եւ Սէլիմարքայ յայլմէ եղեալսակո  
տուգանացն մեծի՝ մահու պարտ արար  
զծերունին չասան փաշա : Ի միւսում  
ամի Գօճա Եունուժ փ փաշա վերսախն  
կացեալ վէզիր և սպարապետ բանակին՝  
զօրաժողով եղև դարձեալ հարիւր հա-  
զար արանց , և դիմեաց առնուլ ան-  
դրէն զիսմայիլ . այլ սպարապետն  
Ռուսաց Ռեփնին անցեալըսաԴանուք  
քառասուն և հինգ հազարաւ . խորսու-  
կեաց զըանակն Օսմանէանց : Անտի և  
զօրսվարն Կուտովիչ վանեաց զթա-  
թարս Կուտպանայ , և էառ զամուլն  
Անափա . և Քութուզով և այլ զօրա-  
պետք Ռուսաց առին զայլ ևս ամուլ  
ամուլ տեղիս առ Դանուքաւ : Զայս  
ամենայնտեսեալ մեծի վէզիրին՝ խընդ-  
րեաց ՚ի Ռեփնինսայ գուլ զինուց առ-  
նել . զի Սէլիմարքայ յօժարեալ էր

Խոսել՝ ի հաշտութիւն՝ յորդորեալ և  
՚ի ստէպ ստէպ բանագնացութենէ  
դեսպանաց այլը եւրոպական պետու-  
թեանց . և նախագուռն բանիցն խա-  
զաղութեան այն եղե , զի Օսմանեանք  
տացեն՝ ՚ի ձեռս Ռուսաց զօղու հան-  
գերձ ամենայն նահանգաւոն . և սահ-  
մանեցաւ զի տեղի հաշտութեանն լիցի  
Եաշքաղաք : Եւ յետ ոչ ինչ յերկար  
բանագնացութեանց՝ ՚ի մետասաներոր-  
դի աւուր ամսեանն յունուարի յամին  
1792 հաստատեցան պայմանք դա-  
շնն , որ ՚ի տամնեալ գլուխս բանից  
բովանդակելին + այս ինքն են ,

ա . Յայտմէնտէ և անգր սերտ և ան-  
նենդ բարեկամութիւն հաստատեցի  
ընդ մէջ Ռուսաց և Օսմանեանց :

Ե . Որպէս յառաջքան զպատերազմն՝  
նոյնպէս և յետ այսորիկ հաստատուն  
կացցեն դաշնիքն յառաջագոյն կը-  
ուեալք ՚ի միջի :

Ք . Գետն Տնեսպեր սահման լիցի  
ընդ մէջ երկուց պետութեանց :

՚ի Ռուսս Թողցի :

Ե . Բնակիչք Մոլտակիոյ և Երկրին  
Վլահաց ապահարկ լիցին զամն երկուս,  
և աղատութիւն լիցի նոցա գնալ յոր

վայր և կամք իցեն վաճառաշահութեան աղադաւ :

Է . Խնամ կալցին Օսմանեանք անդորրութեան աշխարհին Վրաց՝ պատուէր ՚ի վերայ եղեալ մերձակայք բուրեցից իւրեանց մի ևս նեղել բնաւզվերս :

Է . Կոյն խնամք ցուցցին և ՚ի վերայ բնակչաց կողմանցն Կովկասու :

Շ . Զամենայն հնարս հնարեացի արքայն Օսմանեանց առ ՚ի կարձելոյ զատատակակաց իւրոց՝ եթէ չպահեացին հինիցն Ճէզայիրայ և թունուզայ :

Ծ . Աբբայն Օսմանեանց պարս յանձին կալցի հատուցանել զտոյքս հպատակաց իւրոց՝ եթէ չպահեացին երեքեան պայմանքն յիշատակեալք ՚ի վերոյ :

Ժ . Արձակուրդ և աղատութիւն լիցի ամենայն գերելոցն և բանտարկելոց :

Ի վերայ այսոցիկ հաստատեցան և պայմանք երկու ՚ի ծածուկ . ա , Զի մի ևս խառնեսցին բնաւ Օսմանեանք յիրս աշխարհին Լեհաց . և բ , Զի հատուցեն Օսմանեանք Որուսաց դահեկանս երկոտասան միջնոն յերիսնուադս իբր ՚ի հատուցումն ընասուցն : ԱՅԼ

իրու երկուստեք ձեռնագրեցան պայմաններս , պատգամաւորն Ռուսաց Պեղալուուստիյայա արար Օսմանեանց՝ Եթէ դշխոյն իւր չնորհէ նոցա ըզդրամնեն տուգանս :

Յառաջագոյն քան զամիսս հինգհաստատեցաւ և դաշն մշտնջենաւոր խաղաղութեան ընդ Օսմանեանս և ընդգերմանացիս 'ի Սիսթով քաղաքի 'ի չորրորդում աւուր ամսեանն օդուստուսի . որով պայմանեցաւ զի ամենայն ինչկացցէ և մնասցէ որպէս յառաջագան զպատերազմն , բայց միայն զհինն հըրշովա հանդերձ փոքու գաւառաւն ետ Մէլիմ արքայ 'ի գերմանացիս . և այնուհետեւ դեսպանք նորանորք երկուստեք առաքեալք բազմապատիկ ընծայիւք՝ հաստատեցին զուխտ գաշանցն բարեկամութեան . և Եռուսուժի փաշա մեծահանդէս չքով դարձաւ եմուտ 'ի Կոստանդնուպոլիս : Այլսայետ ոչ բազում ինչ աւուրց արկաւ յիշսանութենէն , և կարգեցաւ 'ի տեղի նորածերունին Մէլէք Մէհմետ փաշա :

Ի լուր աւետեաց երկոցուն հաշտութեանցս գագարեցին յաշխարհէն Օսմանեանց և առանին խռովութիւննեք և ապստամբութիւննեք որ բազմացեալ էին

յԵգիպտոս և ՚ի փոքրն Ասիա և յԵրկրին Առնաւուտաց :

Յամն ժամանակացն այնոցիկ մինչ դեռ թագաւորք Նորոսկայ ելեւըս զմիւմեաբը առնեին, Խաղաղասէր և զքօսասէր արքայն Սէլիմ միտ եղեալ ոպարապէր ՚ի բարեկարդել զիրս իւրոյ աշխարհին, և հանդերձել կազմել զերայննկութիւնն հոգածակաց իւրոց : Յառաջ քանի զամենայն ուշ՝ ՚ի կուրծս արար կանոնաւորել զվենուորութիւնն աշխարհին, յորդորեալ՝ ՚ի սոյն առաւելապէս ՚ի Զէլէպի Մուստաֆայի ումեմնէ. սմին իրի գունդ մի նորյօրինեաց նիզամի ճէտախտ անուանեալ, ճմերոցս նորանորս կառոյց, և ճարտար գաղլիսացիս ժողովվալ հրաման եւս մարզել իւրոցն ՚ի հրացանութիւն և ՚ի ումբաձիգ լինել : Մահմանեաց և ընդարձակութիւնս տեղեաց ՚ի հրահանգս զինուուրացն ՚ի Դոփիսանէ, ՚ի քեւաղատիսանէ, յիւսկիւտար և յայլ վայրս, և բազում շնուռթեամբ զարդարեաց զնոսին: Կարդեաց և աւուրս և ժամն հրահանգս գոնդից զօրականին առաջի իւրաքանչյան միւրուր ճմերոցաց, յորս երեւլին էր որ ՚ի Նէլէնտ չլիլիքի, և հասս և ունակս ՚ի սոյն սակս հաստատեաց խոհա-

կան կարգաւորութեամբ՝ տուրս մասնունս և թեթևա արկեալ'ի վերայ հաղատակաց : Ծինեաց և մշերանոցս համը բարուց 'ի կոստանդնուպօլիս և յափունս Դանուր գետոյ . և 'ի գիւղն Ազատար վառօդանոց մեծ կառոց , զոր և պիտանի գործե օք զարդարեաց 'ի մերազնեայց Հաճիսաս Առաքել աղա . և յայնմ հետէ և վառօդ Օսմանեանց ոչ ինչ ընդհատ էր աղնուռութեամբն'ի վառօդոյ Անդվիացւոց և Հոլանտացւոց :

Զուգասլատիւ սմին հռչակեցաւ ընդայն ժամանակն 'ի մերազնեայս և քաջ մատենագիրն Մուրատձա , որոյ ընտիր մատենագրութիւնն 'ի բարբառ գաղղացի յազագս Օսմանեան կրօնից և պետութեան հաճոյ գտան և աղբայինն Սէլիմնյ , և առաջնկ 'ի տալ Եւրոպացւոց ստուգասլատում հմտութիւնը զջութանուանց :

Ցայս ամենայն բարեկարգութիւնս մեծասովէս նողաստ եղեն Սէլիմնյ արքայի աղք եօթն երևելը , այս ինքն են Զէլէսկի Մուրաֆաֆա էֆէնտի 'որ գլուխ էր նորակարդ զինուռորութեանն , իսկ բահիմ քեահեա՝ քեահեա՝ իսկամնորդ վէղիրին մեծի , Եռոսուֆ աղա՝ գործակալ մօրն աղբայի , Հաճի Խալիահիմէֆէն-

տի , ատենադպիլն Սուսդաֆա էֆէն-  
տի , Մարելյնձի Ահմէտ պէջ , և Գահ-  
վէճի պաշը Շիւսթէմ աղս : Սոցին  
խորհրդով ոչ միայն 'ի զինուորականս ,  
այլ և 'ի քաղաքական իրաց տեսչու-  
թիւնս ոչ սակաւ բարեկարգութիւնք  
գործեցան • յորոց սակի և այն էր , զի  
յայնժամ սկսան ատենակալք Օսմա-  
նեանց 'ի ծածուկ պահելզաղանիս պէ-  
տութեանն , և լրտեսս ունել ամենայն  
ուրեք . և ոչ միայն սամուրենիս ագու-  
ցանել 'ի պատիւ , այլ և ըստ Նւրսպա-  
ցոց օրինինշանս ոսկիս բաշխել մահիկ  
և աստղ ունելով 'ի վերայ • կառուցաւ  
և գործարան թղթոյ 'ի հիւնքեար  
Խրելէսի , և վերատին բացաւ յիւսկիւ-  
տար տպագրատուն տաճկական բարբա-  
ռոյ որ 'ի բազմաց հետէ 'ի խափանի  
կայր : Սակայն կարի իմն համարձա-  
կեալ եօթանեցունց արանցո՞ձեռն ար-  
կնն ինքնակամ ինքնադլուիս իշխանու-  
թեամբ գործել բաղում ինչ , և հակա-  
ռակ ևս կամաց Սէլիմայ արքայի , և կե-  
ղեքել զհմատակ նորա :

Մի միան այր արժանի աիրոյ և  
մուերմութեան այնպիսւոյ արքայի ցու-  
ցաւ Քիւզիւք հիւսէլյին փաշա , այր  
փոքր անձամբ , այլ եռանգուն և արի

և Ճարտար յոյժ յոյժ , և զգօնութեամբ  
մասց և սիրով օդախ պէտութեանն՝ ա  
մենեցուն վեհագոյն : Որոյ կարգեալ  
յարբայէ 'ի ծովակալութեան պատիւ,  
անթիւ բարեկարսութիւնս արար 'ի  
նաւատորմին Օսմանեանց • ոչ էր չափ  
առատաձեռնութեան նորա առ վաս-  
տակաւորա , և ոչ դարձեալ ահարկու  
ցասմանն ընդդէմ յանցուցելոց : Ընդ-  
որ մախայէալ եօթանց այլոցն բռնա-  
ցելոց՝ հնարիեցն և ուր ուրեմն յաջո-  
ղեցան արձակել զայրն քաջսպարապէ-  
տութեան պաշտամմիք 'ի վերայ Փա-  
զուան օղու ասպատամբին , և ասպա դե-  
զամահ սպանին անդանոր զայրն բա-  
րերար և բարեբարոյ :

Տադնասու մեծ եհաս և արքային Աէ-  
լիմայ յերեսաց խոռովութեանն Գաղ-  
ղիոյ՝ յորմէ վրդովեալ տատանէր Եւրո-  
պա ողջոյն : Քանիզի Գաղղիայիք յին-  
քեանս կամելին զՕսմանեանսն արկա-  
նել , իսկ Բրուսք և Գերմանացիք զնե-  
զակակցութիւն նոցին խնդրէին . սա-  
կայն Աէլիմ արքայ լաւ համարեցաւ և  
յերկոցունց կողմանց անտի ձեռնպահ  
ընել , և խնամնոց իւրոյ աշխարհին կալ  
մտադիր :

Ասպատամեեաց 'ի նմանէ յամին 1797

բդեաշնի Վիտինայ քազուան օղլու ՚ի  
գաղտ գրգռութենէ գաղղիացւոյ , և  
զօրու ծանու գիմեալ էառ զնիկոսոլիս,  
զԱլսթով , զֆաստրովիչ , զԱէմշնորիէ  
և զԱռջեա , և անտի խաղայր գայր  
յԱգրիանուալոլիս՝ խորտակեալ և հա-  
լածեալ զլուրով ՚ի կուսակալաց արձա-  
կելոց ՚ի վերայ նորա : Ապայարձակե-  
ցաւ ընդդէմ բոնակալին Քիւչնուք հիւ-  
սէյն փաշա , և հալածական տարեալ  
զֆազուան օղլուն փակեաց անդրէն ՚ի  
Վիտին : Ծանեաւ սս զի ՚ի նորա բանի  
լեալ էր և ձառագէմ բդեաշնի վիթ-  
խարի Քիւրա Ալօ փաշա անուանեալ ,  
զոր կանխաւ իսկ առաքեալ էր Օսմա-  
նեանց ընդդէմ ապաստամին վասն որոյ  
կամեր բառնաւալ զնա ՚ի կենաց , այլ չէր  
ոք որ իշխէր ձեռն ամբառնաւ ընդդէմ  
անձունի տառնն : Եղ ՚ի մոի ինքնին  
սպանանել զնա և ըստ սովորութեանն  
կոչեալ զնայաւուր միում ընդ վրանաւ  
իւրով եցոյց նմա և եւո ՚ի ձեռս նորա  
ճարտարագործ հրացանա երկուս ,  
և ապա առեալ արձակեաց հանդէս  
իւր ընդ լուսամուան իբրու փորձոյ ա-  
զագաւ : Զնոյն փորձ և ՚ի վաղիւ անդք  
արարեալ , և յաւուրն երրորդի այն  
ինչ գարձեալ կարկառէր Ալօ փաշա

զմեւն իւր առնուլ զշրացան գործիսն՝  
չիւսէլին արձակեաց զնոսա 'ի վերայ  
նորին . և հուժկուն Ալօ թէստէտե կա-  
րեվէր խոյեցաւ, սակայն կանգնեցաւ  
եկաց և մերկեաց զառաւեր իւր . յայն-  
ժամ հաղան 'ի վերայ նորա որ շուրջն  
կային, և տապալեալ զնա անդրէն յեր-  
կիր՝ գլխատեցին և արկին զկառափնն  
առաջի զօրաց նորա :

Ի նմին ամի աղմնուկ մեծ յուղեցաւ  
'ի քաղաքին Զմիւռնացւոց . զի յոյն  
ոմն սպան զայրագին 'ի սպահանորդ ե-  
նիչերեաց զոք . ընդ որ մոլեգնեալ առ-  
հասարակ զնուռորակցաց առնն դիմե-  
ցին առ հիւսպատս Եւրոպացւոց և սպա-  
հանջէին զի 'ի բուռն տայի նոյսա սպա-  
նողն . և իբրև ոչ հասին խնդրոյն իւ-  
րեանց, հուր հարեալ այրեցին տունս  
և կրտպակս եօմն հաղար, և զինչո նոյսա  
առին յաւարի : Բողոք կալան հիւսպատք  
ամենէքեան 'ի գուռնն արքունի . և  
գուռնդք զօրաց առաքեալ անտի 'ի  
Զմիւռնիսա ցածուցին զենիչերիսն . և  
ողք 'ի նաւս փախուցեալ էին Եւրո-  
պայիք՝ անդրէն դարձան, և սակաւ  
ինչ հազիւ թէ 'ի բուռն արկին յլնչից  
իւրաքանչիւր :

Ընդ այն ժամանակս ամբառնայր

յԵւրոպա Կավիոլէոն Պոնավառթէ  
սպարապէտ Գաղղիացւոց + և զապըս-  
տամբութիւնս իջևանացն Արաբացւոց  
յԵգիպտոսսպատճառս կալէալիւրումն  
անյագըլզձից տիեզերակալէուց յընդհա-  
նուրս , յամնեամնն մայիսիյամին 1798  
վարեաց զառոմիդ նաւուց իւրոց ՚ի  
Գաղղիոյ , և առեալ խաղաղութեամբ  
զՄելիաէ , որ է Մալթա , զինի երկար-  
սեայ աւուրց եկն եկաց առաջի Ազէք-  
սանդրիոյ Եգիպտացւոց , և տիրեաց  
քաղաքին : Ոչ է իմ պատերազմ , ա-  
ռէր , ընդ արքային Օսմաննեանց + այլ  
՚ի կարձել հասեալ կամ զբոնութիւնս  
Արաբացւոց , և զզրկանս՝ որովք նեղեն  
դոքա զլաճառականս Գաղղիացւոց ::

Այլ այս բանկը ոչ ինչ զօրեցին առա-  
ջի Օսմաննեանց , որոց անհաւատավի-  
իմն թուէր յարձակումն այնպիսի ՚ի  
վաղեմի բարեկամայն իւրեանց : Ար-  
գելին յԵտիգուէ զդեսպան նոցին ,  
զլաճառականս Գաղղիացւոց որ գտա-  
նէին ընդ սմենացն աշխարհն՝ արկանէին  
՚ի բանտ՝ յակշտակեալ զինչս նոցա , և  
զնաւատորմն իւրեանց խառնեցին ընդ  
տորմիզ Ռուսաց և Անդղիացւոց դաշ-  
նակցելոց ընդդէմհասարակաց թշնա-  
մեռյն :

Խակ Գաղղիացիք վանեալ սպատե-  
րազմաւ զԱսաբացիս՝ առին զԵցիպ-  
տոս , և 'ի սուղ ժամանակի կերպարա-  
նափոխ արարին 'ի նմա զամենայն :  
Գրեաց Նափոլէոն և թուղթ բարեկա-  
մութեան առ շերիֆն Մէքքէի և առ  
կուսակալն Աքեայի + և թէպէտ նա-  
ւասորին իւր խօրասակեցաւ յԱնգղիա-  
ցւոց , թէպէտ և Արաբացիք՝ որոց ա-  
ռաջնորդք էին Մուրաստ և Խողահիմ ,  
շատ ջանացան վտանգել զնա , այլ նա  
յաղթական եղե ամենեցուն , և արք  
դիսնականք որ էին ընդ նմա՝ յուղեցին  
քննեցին իմաստնապէս զամենայն եր-  
կիլն : Սակայն ոչ ընդ երկար վայելե-  
ցին Գաղղիացիք 'ի դիւրագին ժառան-  
գութեան անդ ականաւոր աշխարհին :  
Քանզի բգեաշն Աքեայի Ճէզզար  
Ահմէտ իմաշա ոչ միայն մերժեաց  
զթուղթ սպարապէտին Գաղղիացւոց ,  
այլ և հաշտեալ ընդ թագաւորին իւր  
սում Մէլիմայ՝ միաբանեաց ընդ իւր և  
զայլ կուսակալս կողմանցն և զգէմկա-  
լաւ թշնամեաց : Գաղղիացիք առին և  
զՅոսպպէ , և զամրականսն 'ի սուր սու-  
մերի կոտորեալ լցան լիացան աւարօք  
նոցին . այլ քանզի ժանտախան ճարա-  
կէր 'ի կողմանսն յայնոսիկ՝ ընդ սամու-

լինեացն աւարելոց զգեցան և զմահն  
տարաժամ, և օր ըստ օրէ ծախէր  
սպառէր բազմութիւն նոցա : Անտի  
դիմեաց Պանավառթէ յառումն Ա-  
քեայի, զոր ՚ի բազմաց հետէ ամրա-  
ցուցանեին Օսմանեանք և Անդղացիք,  
և սաստկապէս պաշարեաց զայն :  
Սաստկագոյնս ընդդիմացան նմա և  
պաշարեալքն, և հուսկ ուրեմն հարկե-  
ցուցին զնա մեկնել անտի յԵղիպատոս :

Ապա իբրև Էտես Պանավառթէ՝ զի  
Օսմանեանք բազմաթիւ նաւուք միա-  
բանեալընդ Ռուսա և ընդ Անդղացիս  
վանեցին զիւրան ՚ի Յոնիական կղզեաց,  
և խաղան գան ՚ի վերայ իւր, ել ընդ-  
դէմնոցա յիշանել նոցին ՚ի ծովագնն  
Ազէքսանդրիոյ յամուրն Ապուքիր, և  
Էտո զայն ՚ի ձեռաց նոցա :

Դարձ արար ինքն այնուհետեւ յամին  
Երկրորդի ՚ի Գաղղիս, թողեալ զտես-  
չութիւն բանակին և զաշխարհին ՚ի զօ-  
րավարն Քէպէր, որ իւրով ապատա-  
միտ գնացիւք սիրելի լեալ էր իւրոյն, և  
պատկառելի յաշա բնակչաց երկրին :  
Այլ Գաղղիացիք յոյժ նուազեալ էին  
՚ի սպառելազմաց և ՚ի տառապանաց,  
յօդոյ Երկրին և ՚ի նորանոր հիւանդու-  
թեանց, և Քէպէր ազգ արար ՚ի Գառլ

զիա զհանգամանաց իւրոյ բանակին։  
Անկաւ այն թուղթ՝ ի ձեռս Անդղիա-  
ցւոց, և առաւել ևս խրախուսեցին ընդ-  
դաշնակցաց իւրեամնց Օսմանեանց և  
Ռուսաց՝ աճապարել՝ ի բնաբարձ ջըն-  
ջումն Գաղղիացւոց Եղիպատոսէ։

Ի յամել պատամիանւոյն՝ ի Գաղ-  
ղիոյ՝ Քլէպէր Էդ՝ ի մոփ խաղաղու-  
թիւն առնելընդ Օսմանեանս՝ խոսսա-  
նալով Ելանել Եղիպատոսէ, և վէղին  
հաւանեաւլ իմն թուեր ի նոյն։ Այլ  
յընդդիմանիալ դեսպանին Անդղիա-  
ցւոց, և ի պահանջել զի Գաղղիացիք  
առ հասարակ՝ ի բաց Եդեալ զունս իւ-  
րեանց մասնեացին՝ ի գերութիւն, Քլէ-  
պէր պատրաստեցաւ՝ ի պատերազմ, և  
խորտակեաց զրանտիկն Օսմանեանց։  
Ապա պատուհասակոծ արար զբնա-  
կիչ Եղիպատոսի՝ որ սատարեալ էին  
թշնամեաց իւրոց, և կոտորեալ էին  
զբաղմութիւն Գաղղիացւոց Եղելոց՝ ի  
քաղաքին։ Յայնժամ և Մուրաստ պէս  
որ բաղում վիշտս հասուցեալ էր զօ-  
րացն Գաղղիացւոց՝ հաւանեցաւ ի  
հաշտութիւն ընդ Քլէպէրայ, և ընկա-  
լսաւ ի նմանէ զիշխանութիւն վերնոյն  
Եղիպատոսի։

Այսպէս ուր ուրեմն հանդարտեալ

Եղիսլուացւոց՝ Եղին ՚ի մոխ Եթէ արն առասութեան վլըին ինսամոցն էր գործ տիրանալ Գաղղիացւոցն յիւրեանց աշխարհին . և Քլէպէր այնուհետեւ ներումն չնորհեալ նոցա , և յամենայնի արդարութեամբ և հայրախնամ գթով վարեալ՝ սիրելի Եղի ամենեցուն : Ասպա մինչդեռ յաւուր միում Ճեմ առեալ շրջէր ընդ ճարտարապետի ուժմն յիւրօւմնորաշէն պալատան , այրոնն զգեստաւորեալ ըստ արևելքան տարագուշարձակեցաւ եմուտ մոլեգին սուսերամերկ ՚ի սրահն , և եհար ՚ի սիրտ Քլէպէրայ : Խըրե կամեր ճարտարապետն ունելզային՝ հարաւե ինքն ՚ի վեց հարուածմ՝ և փչեաց զոգին առ ոստ զօրավարին իւրոյ , հազիւ կարացեալ ազգ առնել առ որս ժամանեալ էին ՚ի տեղի անգր՝ զկերպարանս դաւաճանին : Գտաւ այրն , զի թաքուցեալ էր ՚ի մացառս ուրեք ՚ի պարտիզին , և ՚ի խոշտանեգանս դանից խոստովան եղե զոգին . յայնեաց և զդաւակիցս իւր , և նոքք հանդերձ չարատանջ մահուամբ Ելոյծ զվրէմն : Այլ Քլէպէր ոչ ևս էր կենդանի , և Մընու զօրավարն ուրացող անցեալ ՚ի տեղի նորա իւրուլ անմիտ գնացիւք ունայնացոյց զամե-

նայն Տիգն Ք. Լէպէրայ և զայլոց զօրադիսաց :

Քանդի Օսմանեանք և Անդղիացիք  
յերից կողմանց ընդ ծով և ընդ ցամաք  
մտին յԵղիպտոս, բաղում անդամհաւ  
րին վանեցին զակաւաձեռն դունդս  
Գաղղիացւոց, և 'ի նեղ արկին զնոսա.  
մինչև Պէլիառ ոմն 'ի զօրապէտաց նոցին  
խոստացաւ բանս եդ ընդ սպարապէ<sub>ւ</sub>  
տին Անդղիացւոց չուշինսոնայ և ընդ  
Եռւսուֆ փաշայի, և մեկնեցաւ իւրով  
քըն հանդերձ 'ի Գաղղիայիններորդի  
աւուր ամսեանն օդոստոսի : Մընու,  
որ 'ի ժամանակին յայնմիկ ամրացեալ  
կայր յԱղեքսանդրիս, վառեալ 'ի ցա  
սումն բարկութեան՝ անզօր և անօրէն  
կոչէր զգանն, և պնդէր մարտ դնել  
մինչև 'ի սպառ : Այլ 'ի պաշարէլ  
չուշինսոնայ սաստկապէս զքաղաքն,  
խնդրեցին Գաղղիացիք և ընկալան 'ի  
նմանէ զլսաղաղութիւն, սպայմանաւ՝  
զի զօրականք Գաղղիացւոց հանդերձ  
կահիւ և կարասեաւ և մետասան և թ  
թնդանօթիւք մեկնեսցին յԱղեքսան  
դրիոյ 'ի տասն տառւրս : Այսպէս  
զբաւեցաւ արշաւանն Գաղղիացւոց  
յԵղիպտոս՝ համբաւեալ յոյժ յանցա  
ութուտամներորդի դարուն :

Յայնմ ժամանակի ՚ի տիրապետել  
 Կավուլէռնի Պոնափառթեայ ՚ի Գաղը  
 զիա՝ Խաղաղութիւն արար ընդ նմա  
 Աէլիմ արքայ յիններորդի աւուր ամ-  
 սեանն հոկտեմբերի . որով Եգիպտոս  
 բոլորովմէ գարձուցաւ առնա , և Յո-  
 նիական կղզիք որոշեցան յառանձինն  
 հասարակապետութիւն . եղեն և գե-  
 րեդարձք երկուստեք , և նորոգեցաւ  
 նախկինն սեք բարեկամութեան ընդ  
 երկոսին պետութիւնս :

Ի բառնալ ապա խաղաղութեան  
 Եւրոպայ յերեսաց պատերազմացն  
 Կավուլէռնի , Աէլիմ արքայ ուշի ուշով  
 միտ գնէր չկորուսանէլ զիւրն . ամրա-  
 ցուցանէր զեերգորայս իւր ՚ի սահմա-  
 նագլուխս աշխարհին , և զօրս առձեռն  
 գումարէր հետ զհետէ ՚ի կողմանս Տնես-  
 գերայ և Դանուբայ : Բայց առաւել-  
 քան զամենայն գուն գործէր ՚ի հրա-  
 հանդս նորակարգ զինուրութեանն ,  
 որով ակն ունէր ըստ Եւրոպացւոց օ-  
 րինի զդէմ ունել նոյն յորժամ դէպին  
 սպահանջիցէ : Այլ ՚ի պատճառս մե-  
 ծամեծ անցիցն որ զհետ եկին այսր զի-  
 նուրութեան՝ լաւ իցէ ՚ի սկզբանէ ան-  
 տի առեալ վերսախն՝ սակաւուք զիրսն  
 պարզաբանել :

Ի ժամանակս ասպատամբութեան  
Փաղուան օլլու բդեշխին, գեսապան՝ ի  
Գաղղիոյ Եկեալ՚ի Կոստանդնուպոլիս  
Օպէո. Տիւուկչյէ անուն՝ Երեր՚ի պար  
գևս արքայի թնդանօթս պատերազմի  
Հանդերձ իւրեանց կազմածովք, և ընդ  
նոսին սպայս և զինուորս և զինա  
գործս, որպէս զի ուսուացեն զարուես  
տրս իւրեանց և Օսմաննեանց: Եւ ոչ  
գերեսցաւ խորհուրդն, զի վաղ ուսան  
սոքա զիրմն և հրահանդեցան, թէպէտ  
և ենիչըրիք չառին բնաւ յանձն մոտա  
նելընդ գաղղիական կրթութեամբ: Ա  
պա՝ ի մեռանել գեսապանին նուազե  
ցաւ և գունդն նորընտիր՝ յորում ոչ  
սակաւք էն, քրիստոնեայք ուրացեալք  
՚ի հաւասարոց, և բաղումք՝ ի մարզիչ զօ  
րագլւաց անտի մեկնեցան՝ ի Գաղղիա:  
Հիւուչյին փաշա առեալ զիշխանու  
թիւն ծովակալութեան՝ զոմանս՝ ի նու  
ցանէ և ՚ի գնդէ անտի ցրուելոյ յինքն  
ընկալաւ, և տայր նոցա առնել հրա  
հանդս մարտի առաջի իւրոյ ապարա  
նիցն՝ մանաւանդ յաւուրս ուրբա  
թուց, և ժողովրդն խուռն բազմու  
թեամբ անդք ընթացեալ լինէին՝ ի  
զնին: էին ևս որք ունչս առնեին, և  
այլք՝ որ բանս նախատանաց բարբա

ունին առ նոսա : Իբրև բացաւ դուռն  
պատերազմին Օսմանեանց ընդ Գաղ-  
ղացիս յամին 1798 , Հիւմէջին փաշա  
տարաւ զգունդն զայն ընդ իւր յԱսո-  
րիս և յԵղիպսոս , և նոքա արթաբար  
կուռեցանի պաշարման անդ Աքեայի .  
վասն որոյ և ՚ի դարձին իւրեանց ՚ի  
թագաւորեալ բաղադրն՝ մեծապէս պա-  
տուեալ դուլցան առ Հասարակ յա-  
մենեցունց :

Ի գովեւթեանց աստի ամբոխին քա-  
ջալերեցաւ Սէլիմ արքայ յաւելուլ  
զթիւնորմնտիր զօրականին , և կարուել  
նոցա ռոճիկ առանձինն . և ամենայն  
աւագանին ահ մեծ ունէր յիրայն ,  
բայց ծովականն Հիւմէջին աներկիւտղէր  
յամենայնէ , և գենապեան Վէլիզատէ  
էֆէնտիլ յանդորրու ունէր զդիխնա-  
կանս : Զօրապետն Էնիչէրեաց և այլք  
՚ի գլխաւորաց խոռովայշոյզ գնդին էին  
յայնէամընդ վէղիրին յԵղիպսոս + և  
վասն այնորիկ Հիւմէջին և գենապեան  
ոչինչ հարկ համարեցան որսաւզիրսս  
ենիչէրեացն մնացելոց ՚ի քաղաքին ,  
այլ շատ վարկան տալ հանել արքայի  
հրովարտակ հաստատեալ վճռովլք  
գենապետին :

Սկսան այնուհետեւ բանքն արդիւնք

լինել, և կուսակալք փոքուն Ասիոյ ձեռն 'ի գործ արկին զօրս ժողովել և մարդկել ըստ Եւրոպական օրինի, և զարդարիս ջանիցն վաղվաղակի տեսին ակներեւ : Քանզի բազմացեալ էին յաւուրմն յայնոսիկ աւաղակք և հուղկահարք 'ի Ռումելի . և ուրիշով գունդք Ենիչերեաց արձակեալք 'ի վերայ նոցա ոչ ինչ կարացին սանանել չորս գունդք 'ի նորընտիր զօրականէ և վաշտ մի հեծելոց հարին վանեցին զխուժան աւաղացն և փախուցին յանմատոյց լերինս Պոսնիոյ :

Զայն իբրև ետես թագաւորն՝ հրովարտակ արար յամին 1805, զի յամենայն գիւղս և 'ի քաղաքս պետութեան ընտրեսցին յենիչերեաց ազք կորովիք և յաղթանդամիք 'ի քսանևհինգեանս և յաւելցին 'ի նորակարգն զինուորութիւն : Ընդ այս հրաման թագաւորին դառնացեալ առ հասարակ խուով հարին Ենիչերեք ընդամենայն տեղիս աշխարհին, զմունեամիկն խոշանդեցին, զբատաւորս ու մանս չարամահ սպանին, և դենավետն անդամ հաղիւ թէ անդորրացոյց զաղմըկեալդիանականն . հարկ եղեւ աւագանւոյն լուել առ ժամն : Ապա 'ի լի-

նել պատերազմին Գաղղիացւոց ընդ  
Ռուսս և ընդ Բրուսս , առաքեցաւ  
Հրաման առ Գատը վիաշա կուսական  
Կիլիկիոյ՝ առաւելուլ զթիւ նորընտիր  
զօրաց և ածել զնոսա 'ի Կոստանդնու-  
պօլիս , և նա արար այնալէս :

Յայնժամ համբաւեցաւ 'ի քաղաքին  
և ընդ աշխարհն ամենայն՝ եթէ այն  
գալուստ նորոյ գնդին զմօտալուտ պա-  
տուհաս ենիչերեացն գուշակիցէ . վասն  
որոյ միաբանեցին սոքա ընդ աւազակս  
արևմտակողմանցն , և ամրացեալք յԱ-  
զրիանուալոլիս՝ աշա յէքեանց տասն  
հազար արձակեցին ունել զանցս իսքի-  
պապա լէրին : Գատը վիաշա ուր ու-  
րեմն եհաս իւրովքն 'ի տեղին , և ոչ  
կարացեալ անցանել յԱզրիանուալո-  
լիս՝ դարձաւ 'ի Պուրկազ , որպէս զի  
երթիցէ անտի 'ի Ռուսամուգ՝ ուր մնայր  
նմա Մուստաֆա Պայրագտար սպա-  
րապետ այնը ժամու բանակին :

Խակենիչերիք միաբանեալք ընդաւա-  
զակաց՝ կանխեցին կալան զճանապար-  
հըն , և ամրացան 'ի Չորլու , և անտի  
մարտ եղեալ հալածեցին զԳատը վիաշա  
'ի Սիլվլի :

Իբրև ազգ եղեւ 'ի Կոստանդնուալո-  
լիս այս պարտութիւն նորընտիր զօրա-

կանին, ոգի առլն Ենիչերիք որ մնացեալ էին 'իքաղաքի անդ, և վորքը միւս ևս՝ և ամենայն ժողովուրդն ապստամբէր յարքայէ . զի և գիտնականիք ոչ դադարէին 'ի ջրէլոյ զլմիուս գենալեաին : Յայնժամ դենավեան ինքնին բարեխօս հաշտութեան Եկաց ընդ թագաւորն և ընդ Ենիչերիս, և ողոքութեալարդեօք և փոփոխմամբ աւագորերոյն փրկեաց զթագաւորն և զգունդն նոր 'ի սրտմը տութենէ Ենիչերեաց, և ինքն կամումին աքսորեցաւ 'ի Պրուսա, և Եղեխաղաղութիւն : Գատը փաշա դարձ արար յերկիր իւր, և նորընտիր զօրականիքն մեկնեցան յիւրեանց ձմերոցս + այլ արքայ չեկաց յետո յառաջագրեալ խորհրդոյն, և Ենիչերիք ոչ երբէք 'ի բաց Եդին զկասկած Երկիւղին 'ի սրտից իւրեանց :

Ծնդ նոյն աւուրս Ժամանեաց 'ի Կոստանդնուպոլիս գեսպան 'ի Գաղղիոյ համբաւեան Սեսլամաթիանի, այր Եռանդուն և գործունեայ . և Եր նորապատուեր հրամանի 'ի Կափուլէսնէ՝ ջանահնար լինել 'ի գրդուութիւն մարտի Օսմաննեանց ընդ Ռուսա : յորում և յաջողեցաւ նա վաղ ընդ փոյթ : Քանզի իմացեալ զգաղանի բանագնաւ

ցութիւնս իշխանացն Մոլտաւիոյ և  
Վահագ ընդ Ռուսս՝ թելադիր եղե  
Օսմանեանց վոխել զնոսին յառաջ  
քան զսահմանեալ ժամանակն առանց  
ինչ աղդ առնելոյ Ռուսաց՝ որպէս  
պայմանեալ էր նոցա ՚ի վերջնում մուլր  
հակի անդ հաշտութեան :

Բողոք կալաւ դեսպանն Ռուսաց Ի-  
թալինսքի զեղելոցն , և պնդէր զի հաս-  
տատեսցին անդրէն առաջինքն յիւ-  
րաքանչիւր իշխանութիւնս : Զնոյն  
պահանջէր մեծաւ ուժգնութեամբ և  
Արալընոթ գեսազանն Անդղիացւոց  
գանակցաց Ռուսիոյ՝ հանդերձ սպառ-  
նալէօք , և Սէլիմ արքայ կատարեաց  
զկամն նոցա : Սակայն Ռուսք և այնու-  
ոչ ինչ հանդարտեալ ՚ի ցասմանէ՝ ար-  
շաւեցին ՚ի Մոլտաւիա և ՚ի Վահագ , և  
՚ի սակաւ աւուրս առին բացյայլոց ա-  
մուր ամուր տեղեաց և զշաշ և զՊուք-  
րէշ : Ել ընդդէմ նոցին Մուստա-  
ֆա Պայրագտար , և ընդ նմա Փաղուան  
օղուր , որ յետ յերկար ընդդիմանալոյ  
իւրումն թագաւորի՝ հաշտեալ և ան-  
մեկնելի սիրով կապեալ էր ընդ նմա .  
այլ սոքա վանեցան ՚ի Ռուսաց և մեկ-  
նեցան ՚ի Ռուսամուգ :

Յանակնեալ արշաւանէ անտի նորու-

գեցաւ՝ ի սիրսս Օսմանեանց վաղեմի  
ատելութիւն նոցին ընդդէմ' Ռուսաց,  
և այնպէս իմն խռովեցաւ առ հասա-  
րակ ժողովուրդն, զի Աէլիմ' արքայ առ  
անքոյթ սրահելոյ զիկանս Իթալնո-  
քեայ առաքեաց գունդ մի ենիչերեաց  
՚ի սրահստանութիւն ապարանից նորին։  
Ապա իբրև հարցաւ գեսալանն զսկատ-  
ձառաց յարձակման Ռուսաց ՚ի սահ-  
մանս Օսմանեանց՝ ետ սպատասիսանի  
թէ չեմ ես բնաւ հմուտ իրացն։ թէր  
ես ասէ, չե լոյէ ժամանեալ՝ ՚ի բեթը-  
սկուրկ երկրորդն իմ թուղթ՝ յորում  
ծանուցեալ էր իմ զանդքէն հասա-  
տութիւն իշխանացն ընկեցիկ եղելոց։  
Եւ մինչդեռ անագաներ սպատասիս-  
նի դրանն Ռուսաց, Օսմանեանք հրա-  
տարակեցին ընդդէմ' նոցա մարտ սա-  
տերազմի։ այլ ՚ի ինդրոյ գեսալանին  
Գաղղիացւոց և ՚ի հնարից Արարթնու-  
թայ չարգելաւ Խթալինսքի ՅԵտիկու-  
լէն՝ որպէս էր սովորութիւն։ քանզի  
հաւանեցաւ Աէլիմ' ի բանս Անպատ-  
թիանեայ՝ որ անվայելուչ ասէր լինել  
զգործն ազատամիտ թագաւորի հե-  
տամուտ եղելոյ եւրոպական բարե-  
կարդութեանց։

Մինչդեռ մեկներ Խթալինսքի ՚ի կու-

տանդնուազօլսոյ, ձայն եղև 'ի քաղաքին՝ Եթէ տորմիղնաւուց Անդղիացւոց գիմեալ դայ 'ի կիրճան Չանագ դաշըսի : Յորմէ խիթացեալ արքայի՝ հրամայեաց պիտագոյնս յաւաջ վարել զնորոգութիւն բերդորէից տեղւոյն, զոր և խորհրդովդեսպանին Գաղղիացւոց սկսեալ խիկ էր առնել : Ի նմին ժամանակինորոգ պատուերընկալեալ Արարթնոթայ յիւրմէ թագաւորէն՝ պահանջնջէր զի Օսմանեանք լուծցեն զբարեկամութիւնն իւրեանց ընդ Գաղղիացիս, արձակեսցեն 'ի բաց վաղվազակի զԱւալասթիանի, և տացեն յԱնդղիացիս զՋանագ դալէսի և զամենայն նաւատորմն իւրեանց, և 'ի Ռուսս զՄոլտաւիա և զերկիրն Վլահաց : Քաջ գիտէր դեսպանն զոր ինչ ունէր առնուլ 'ի պատասխանի տարագէպ սկահանջանացն . վասն որոյ եդ 'ի մոխ յառաջքան զգալուստ իւրոյ նաւատորմին գաղուագնաց ըլննել 'ի քաղաքէն հանդերձ ամենայն Անդղիացւովք որ գտանէին անդանօր : Ի սրյն պատճառ ուսն ետ այնպէս համբաւել՝ Եթէ իւր կամք են կոչունս իրախութեան առնել համօրէն ամենայն ազգակցաց իւրոցյայսնիշ նաւի . և իբրև եկին ժողո-

վեցան ամենեքեան՝ յայտնեաց նոցա  
զկամն իւր, և խոստացաւ ընուլյալ-  
քունուստ զամենայն զիորուստ և զւր-  
նաս զոր կրէին առ շտապ տագնապի  
փախստեանն : Եւ ՚ի նմին իսկ դիշերի  
առագաստ պարզեալ ել ընդ կիրճն  
արտաքս անվտանդ :

Իբրև եհաս ՚ի թենեառս՝ ուր եր  
նաւատորմն Անդղիացւոց, անտի սկսաւ  
պատգամաւորել ընդ ծովակալին և  
ընդ փոխանորդի նորուն՝ որ կոչէր  
Գէյզի էֆէնտի. և այնչափ յերկարեաց  
զբանագնացութիւնն և դեգերեցոց  
վայրապար զօմաննեանս, մինչե եհաս  
տորմիդն Անդղիացւոց ՚ի բերան կրճի-  
ցըն . և էին ՚ի նմաս ուլժ նաւք մեծա-  
մեծք, երկու միջակէք, երկու փոքրիկք,  
և երկուք ոմբաբերք, և ՚ի դուխնա-  
ւատորմին անցեալ կայր ծովակալն  
Տուքվորթ :

Իսկ ծովակալն Օսմաննեանց վստա-  
հացեալ՝ ՚ի չեւս աւարտումն բանագնա-  
ցութեանցն՝ համարեր Եթէ Անդղիա-  
ցիք ձեւմն առնուն անդանօր, և ոչ մա-  
տիցեն երբէք յառաջ : Այլ սոքայ-  
ջողակ հողմուլ միսեցան ՚ի կիրճն յա-  
ռուր յորում տօն էր Օսմաննեանց, և  
թնդանօթաձիգքն չէին յիւրեանց պա-

հըս , այլ ցրուեալք 'ի տունս և 'ի ժուղովարանս հասարակաց : Հազիւ ուրեմն հրամայեաց նոցա ծովակալն գիմել յիւրաքանչիւր տեղիս , և ահա նաւք Անդղիացւոց սրանային մխէին մի զմիոյ կնի ընդ ահագին ջրանցմն : Ծովակալն խռովեալ և այլ յայլլէ եղեալ գոչէր հառաջէր , և առ զայրոյթ սրտին հրաման անգամշալ ըստ կարգի անկարանայր : Ընթացան ենիչէրիք և այլքերդաւ կալեանն ինքնին 'ի բերդմն , որ կոչին Քիլիտ իւլ պահը և Սուլդանիէ գալէսի , և երկուստեք բուռն գօրութեամք արձակեալ զմնդանօթմն՝ ոչ սակաւ վտանգեցին վնաւ . ծովակալին Անդղիացւոց , որ յառաջընթաց լինէր քան զայրմն : Յայնժամկե նաւքն թշնամեաց արձակեալ աստի և անտի անդադար զիւրեանց թնդանօթմն՝ ծածկեցան 'ի թանձրամած ծուխն կուտակեալ և այն պէս խոյս տուեալ զերծան 'ի հըրձգութենէ բերդականացն : Գործ էր զգէմ ունել և նաւասորմին Օսմանեանց՝ որ 'ի բերան կրծիցն սպասեալ մնայր . այլ ծովակալն ինքնին չէր անդմօտ , և նաւաստին յանկարծ իմն ուատահեալ թշնամեայ՝ թէսպէտ և մարտ եղեալ կուռեցան մեծաւ քաջու-

թեամբ , սակայն 'ի վախճանի խորտակեցան , և մին ևեթ 'ի վեցից նաւուցն վախուցեալ դնաց 'ի Կոստանդնուպոլիս : Բայց յառաջ իսկքան զժամանել նաւուն հնչեաց գոյժն 'ի քաղաքին ընդ ձեռն արանց գեսպանին Գաղղիացւոց՝ որ էր 'ի ժամուն 'ի Զանադ գալէսի . և ամենայն մեզն անկաւ 'ի վերայ ծովակալին և փոխանորդի նորուն : Առաջինն քանզի սիրելի յոյժ էր արքայի և աւագանւոյն՝ յիշանութենէն ևեթ և յլնչեցն զրկեցաւ . իսկ երկրորդն կենօք չափ տուժեաց զանփութութեան զյանցանին :

Ի լուր գալստեան անդղիական նաւատորմին զառաջինն յաղմուկ անհնարին պաշարեցաւ Կոստանդնուպոլիս . և արքայ անդէն վաղվագակի զիջանելին կամեցեալ 'ի պահանջանս Անդղիացւոց՝ խորհեր 'ի բաց արձակելզրապլիս . գոյց գեսպանն զըեսպասթիանի + առժամն փութեացաւ անցուցանել զամենայն զկանանին 'ի հինն արքունիս : Այլ երբեք ևաես՝ զիժողովուրդն փոխանակ խուռվէլոյ՝ ի զայրոյթ սրտմութեան ըորբութեալք ընդ անիլաւ . և անազդ յարձակումն օտար պետութեանի՝ առ

հասարակ՝ ի զէն ընթանայիննե՛ի շինել  
կանգնել մարտկոցս մեծաւ արագու-  
թեամբ՝ ի ծովափնեայսքաղաքին, ոգի  
էառ, և սկսաւ քաջալերել զվաստակա-  
ւորմն՝ տալով նոցա զամենայն պէտս  
պաշտպանութեան առատապէս, և  
ինքնին անձամբն շուրջ գալով առ նո-  
քօք: Եմուտա առ ալքայ և Աեպասթիա-  
նի, և գովլեալ զարիութի ժողովրդեանն՝  
խրախուսեաց զնա, և ապա ընկալեալ  
հրաման օդնելոյ քաղաքին խորհրդու-  
և ձեռնոտութեամբ՝ ժողովեաց զա-  
մենայն զգաղղիացիս և բաշխեաց զնոսա  
՚ի պահ մարտկոցացն, և գրամն ուկւոյ  
ճամագեր վաստակաւորացն Օսմա-  
նեանց:

Ընդ երեկս աւուրն երկրորդի երե-  
ւեցաւ նաւատորմն Անդղիացւոց՝ ի հե-  
ռաստանէ, և առ հողմոյն հակառակու-  
թեան ոչ կարաց ըստ կամ յառաջա-  
դէմ լինել, այլ անդէն իբրու երիւք  
մղոնօք՝ ի բացեայ հարկեցաւ խարիսխ  
արկանել: Խորհուրդ կալաւ ծովական  
ընդ գեսպանին՝ և գրեաց ՚ի գուռն  
ալքունի թուղթ սիրալիր հրաւիրանաց՝  
զիջանել՝ ի պահանջանս Անդղիացւոց,  
այլ թղթաբերքն ՚ի տեսիլ դառն և  
ախուր և սոսկալի կերպարանաց ատե-

նին Օսմանեանց զարհուրեալք՝ ոչ հանդարտեցին առնուշղապատասխանի թըղը թոյն . և 'ի կոչիլիւրեանց յարքունիս՝ առաւել ևս ահաբեկեալ խոյս ետուն 'ի նաւահանդէս անդր : Ի յերկարել այսպէս իրացն՝ ռամիկն և զօրականկք առ հասարակ, Օսմանեանք և Եւրոպականք, Յոյնք և Հայք և Հրեայք անխոնջ վաստակէին 'ի շինութիւն մարտկոցաց՝ բերելով զքարինս և զփայտըս և ձգելով զթնդանօթս : Բազմութիւննաւուց 'ի կրկին կարդս տողեալ վակէր զերկոսին զմարտկոցսն մեծամեծըս, զծայր ապարանիցն արքունի և զԴոփիսանէին . և օթն նաւք լայնաստարածք հանդէպ Պէշկրդաշայ պահ ունէին Վռափորի, և 'ի Դոփիսանէ անհամար նաւահիք կային 'ի պատրաստի յորս լի էին դիւրավառ նիւթք արձակելիք 'ի թշնամիս . և յերկուս աւուրսն շարեցան 'ի վլրայ մարտկոցաց թնդանօթք ոչինչպակասքան զհազար և երկուհարիւր :

Դարձեալ նամականի արարին Անդ զիացիք յաւուրն երկրորդի 'ի գուռն՝ սաստկագոյնս առաջի առնելով զպահանն իւրեանց . և աւագանին յերկարաձգէին խորհրդով զպատգամաւու-

բութիւնն զաւուրս քանի մի : Ապա  
սկսան և ինքեանք յոխորտագոյնս տալ  
սոցա պատասխանի . և միանդամայն  
արձակեցին 'ի Զանսագ գալէսի զարի և  
զիսոհական բգեաշխն Խմայիլ փաշա ,  
և ընդնմա արս պատերազմի և թնդա  
նօթաձիդ զօրականս : Զայն իբրև զգաց  
Տուքվորթ՝ յերկրորդում աւուր ամ  
սեանն մարտի պարզեաց ընդ այդն զա  
ռագաստ իւր . և մինչդեռ քաղաքա  
ցիքն բովանդակ կազմեն պատրաստք առ  
մարտկոցքն կայեալ ակնուռնէին սկսա  
նելոյ հրձգութեանց և պատերազմին ,  
և ահա նաւատորմն Անդղիացւոյ դար  
ձուցեալ յանկարծակիզառաջնաւացն  
և հողմալից առագաստիւք սրբնթաց  
եղեալ ծածկեցաւ յաշաց ժողովը  
դեանն՝ որ'ի ձայն բարձր օրհնէին զԱս  
տուած , զի ապրեցան 'ի մեծէ վլուանդէն :

Ոչ այնպէս գիւրաւ ելս գտին Անդ  
ղիացեք 'ի կրծիցն որպէս զմուտն դաեալ  
էր . զի ահագին ուումբքն արձակեալք  
յերկուց կողմանց վտանդեցին զնաւս  
նոցայոյժ . և թէ մեծամեծ թնդամնօթք  
Օսմանեանց չէին հաստատեալք 'ի դետ  
նի և անշարժք՝ որպէս զի հնար լինէր  
դարձուցանել զիշուութիւնն նոցին ըստ  
կամն և ըստ պէտս , թերևս ընաւ իսկ

չկարէին՝ ասլրել յահճողոսլրելի որուց  
դայթէն։ Յառաջնուամանցան ըստ Անդ-  
զիացւոցն ասելոյ մեռան՝ ինոցանէ ոդիք  
երեսուն, և արք հարիւր վերաւորեց-  
ան։ Խակյերիլրոդումն թիւ մեռելոցն  
եղե հարիւր և խնառուն և եօթն, և  
վերաւորելոցն չորեքհարիւր և երկու-  
տասան։

Յայնմժամանսակի Արաբացիք վերըս-  
տին գլուխ ամբարձեալ բռնակալէին  
յԵգիպտոս։ և գունդ մի Առնաւուտայ  
արձակեալ յարբունի դրանէ ընդդէմ  
նոցա՝ թէպէտ և զառաջինն արիաբար  
՚ի վեր եկին ընդ Արաբացիս, այլ ՚ի  
վերջէ միաբանեցին ընդ նոսա։ Աակայն  
յետ սակաւուց դարձեալ Ճեղքեցան  
՚ի նոցանէ և եղեն ինքնագլուխիք։ Ի սո-  
սա երևելի եր յայնժամ այժմու կու-  
սակալն Եդիպտոսի Մէհէմմէտ Ալի  
վաշա սակս իւրոյ քաջակորով և մեծա-  
հանճար բարոյից + որոյ ընկալեալ ՚ի  
դրանէ զօրս և արծաթ բազում։ յի՞քն  
յանկոյց զազդակից իւր, և ելեալ  
ընդդէմ Արաբացւոց՝ զբազումնիշնա-  
նաց նոցին դաւուլ և մատնութեամբ  
սրոյ Ճարակ ետ, և ընդ մնացեալնե  
ճակատյարդարեալ խորտակեաց մինչեւ  
՚ի սպառ, և հալածեալ վախոյց զնոսա

՚ի վերինն Եղիպտոս, և ինքն էառ զկու-  
սակալութիւն Եղիպտոսի՝ խոստանաւ-  
լով տալ յարբունիս ամ ըստ ամէ-  
զհարկս երկու հաղար և հինգհարիւր  
քսակաց ոսկւոյ :

Արդ Անդղիացիք կամելով տիրել Ե-  
ղիպտոսի որպէս արարին նախանձորդ-  
քըն իւրեանց գաղղիացիք, յելանել  
իւրեանց ՚ի Կոստանդնուպոլսոյ՝ դէպ  
ուղիղ անդր ուշ արարին, և անհակա-  
ռակ տիրեցին Ազեքսանդրիոյ, զի Մէ-  
հէմմէտ Ալի յԵղիպտոս էր յայնժամ:  
Անտի մի ոմն ՚ի զօրավարացն Անդղիա-  
ցւոց հաղար և երկերիւր զօրականք  
խաղաց և եմուտ խառն ՚ի խուռն ՚ի  
Բաշխտ քաղաք + և քաղաքապետն իբրև  
ետես զի ամենեքեան մայն ՚ի ներքս՝  
ետ կոսորել զնոսա ՚ի սուր սուսերի  
յանձուլ և ՚ի մանուածոյ փողոց քա-  
ղաքին, և սակաւք ոմանք ևեթ փա-  
խլատեամբ ճողոսպեցան: Եհաս ապա  
՚ի վերայ Անդղիացւոց և ինքն Մէհէմմէտ  
Ալի փաշա բազմութեամբ զօրաց, և  
վանեաց և պաշարեաց զնոսին յԱզեք-  
սանդրիա: Այլ նոքա աճապարեցին,  
ուիստ խաղաղութեան հաստատեցին  
ընդ նմա, և առանց մեծադոյն վնա-  
սուց մեկնեցան անտի:

Զայս ամենայն տեսլալ արքայ Սէ<sup>ւ</sup>  
լիմհրատարակեաց զպատերազմը ընդ-  
գէմ Անդղիացւոց , և հաստատեաց  
զդաշն նիզակակցութեան ընդ Գաղ-  
ղիացիս . այլ Անդղիացիք փոխանակ  
պատասխանի տալոյ յայտարարու-  
թեանն յետս կոչեցին անդրէն զամե-  
նայն զնաւս իւրեանց , որով ցուցին  
զէկամութիւն իւրեանց ընդ նոր պա-  
տերազմ :

Ի մեկնել Անդղիացւոց 'ի Կոստան-  
դնուազօլսայ՝ ձեռն 'ի գործ արարին Օս-  
մանեանք ամրացուցանել զիկրան Զա-  
նադ դալէսի . և ծովական Սէլիս Ալի-  
ֆաշա մարզեալն առ ոտս ձէզայիրի  
Հասան փաշային՝ այլ հուժկու և սըր-  
տեայ՝ ել 'ի Հելլեսպոնտոս ինն մեծա-  
մեծ նաւուք , և պատահեալ նաւա-  
տորմին Ռուսաց՝ որով զօրապետն Սի-  
նեաւին գեգերէր 'ի Միջերկրական  
ծովուն , բախեցաւ ընդ նոսա ուժգին  
զօրութեամբ . այլ առ անհրահանդ-  
բարուց նաւազից իւրոց ցրուեցաւ տոր-  
միզն , և ինքն հարկեցաւ առ ժամն  
խոյս տալ 'ի տեղւողչն : Ապա ետ  
գլխատել զփոխանորդ իւր զԾէրէմէթ  
պէյ , և հանդերձէր կազմէր յարձակել  
վէրսալն ընդդէմ Ռուսաց . բայց նոքա

քանզի ոչ սակաւ տուգանս կրեալ էին  
՚ի նաւամարտին , մեկնեցան ՚ի Յոնիա-  
կանն կղղիս , և ոչ ևս դարձան այսրէն :

Եւ իբրև այսպէս անդորրացան Օս-  
մանեանիք ՚ի ծովական մաքառմանց ,  
խորհէին այնուհետեւ ընդ ցամաք լի-  
նել զօրաժողով , և վանել զ՛յուսս ՚ի  
Մոլտաւիոյ և յերկրէն Վլահաց . և  
ժամանակին իսկ ձեռնտու օքնական էր  
նոցա սակա յաղթանակութեանց Նա-  
փուշոնի յարևմտսկողմանս :

Պատուեր հրամանի եղև կուսակա-  
լին Պոմնիոյ խաղալ նախ ՚ի վերայ Սեր-  
վաց՝ որ պէսպէս պատճառամնօք միա-  
բանեալ էին ընդ Ռուսս : Եւ կողմա-  
պէտն եւրոպէան հանդերձ այլովք  
կուսակալօք կողմանցն արձակեցաւ  
՚ի Ծումնա , ուր ուներ լինել ժողո-  
վատեղի մեծի բանակին : Մուսդաֆա  
Պայրագտար , որ իւրով խիզախ և ան-  
վեհեր բարոյիւք անուանի եղեալ էր՝  
հրաման ընկալաւ յարքայէ մնալ ՚ի  
Ռուսճուգ , և ապա յարշաւել վե-  
ղիրին մեծի ՚ի Մոլտաւիա՝ դիմել ընդ  
նմա ՚ի Վլահս :

Յամնեանն ասպիլի ընկալան ենիչէ-  
րեք զուոճիկս իւրեանց և չուեցին ՚ի  
Ծումնա՝ ունելով իւրեանց զօրագլուխ

զայր ոմն սիրող եւրոպական հրահան  
գաց : Յետ սակաւուց ելն ՚ի կու-  
տանդնուալօլուց և վէղին և փոխա-  
նորդ նորա , և և համարական ար-  
քունի և բէխս էֆէնտին և այլ ամե-  
նայն աւագորեարն . և մնացին անդէն  
Մուսս վաշա տեղապահ , և այլք ո-  
մանք ՚ի մեծամեծաց . և նորակարգ  
զօրականացն գունդք ախուեցան ՚ի  
մարտկոցս Վափորի :

Ընդ այն ժամանակս վճարեցաւ  
՚ի կենցաղյս խոհական գենսկետն Վէ-  
լիզատէ . և Եէլոմ արքայ ՚ի դարման  
մեծի առւգանացն ընտրեաց ՚ի տեղի  
նորա զեւրոպեան զօրաց գատաւորն .  
զի կարծէր զնա այր լինել հանձարեղ  
յոյժ , ներհուն յամենայնի և սիրող  
օգտի հասարակաց . այլ խաթեցաւ . զի  
նա ոչ միայն ՚ի շահ և ՚ի փառս անձին  
կարգէր զամենայն զլսորհուրդս իւր ՚ի  
ծածուկ , այլև ոխերիմ թշնամութիւն  
բերէր յանձին հակառակ արքայի և  
խորհրդոց նորա : Վասն որոյ սկսաւ  
անդէն վաղվաղակի չարիս մեքենայէլ  
ընդդէմ տեառն իւրոյ և բարերարի :  
Եգիս իւր խորհրդակից և զտեղապահ  
վէղին զբէօսէ Մուսս վաշա զայր  
փառասէր և անագորոյն , որ ոխու-

թիւն մեծ տածէր՝ ի սրտի իւրումը ընդ-  
դէմ ամենայն խորհրդականաց սիր-  
եաց աբքայի :

Զհետ մեկնելոյ Անգղիացոցն ՚ի  
թագաւորեալ քաղաքէ անտի փոյթ  
կալաւ Սէլիմ աբքայ ոչ միայն զիրձան  
Մարմարայի ամրացուցանել, այլ և  
զնեղուց Սէաւ ծովուն՝ մարտկոցս երկ  
ուստեք Վոսփորի կառուցանելով և  
հրաղէնս և պահնակս ՚ի նորընտիր զօ-  
րականէն ՚ի նոսին կարգելով, այլ այս  
իսկ նիւթ եղև բորբոքելոյ խռովու-  
թեանն՝ որով և յաթոռոյ և յարևէ իսկ  
անկաւ տարաբախտիկ աբքայն Սէլիմ:

Քամնդի որ տեսուչքն էին շնուր  
թեան մարտկոցացն Վոսփորի՝ Մահ-  
մուտ էֆէնտի և Սէյիտ Մէհէմմէտ է-  
ֆէնտի՝ առ սակաւ սակաւ մուծին ՚ի  
պահանորդութիւնն նորաշըն մարտկո-  
ցացն գունդս գունդս ՚ի նորակարգ զօ-  
րականէն, որ և Շահանի կամ Արքունա-  
կան անուանէր զինուորութիւն։ Եւ զի  
մինչեւ ցայնժամ պահեկապանքն Վոս-  
փորի խառնամբով ոմանք էին ՚ի Արք,  
՚ի Պոսնացւոց, յԱռնաւուտաց, և առա-  
ւելապէս ՚ի Լաղից, որք և Եամադ կամ  
Օժանդակք կոչէին, սոքա դժկամա-  
կէին յոյժ յոյժ ՚ի վերայ նորաձեռւ-

թեանցն, մինչև 'ի վէդ ևս եկեալ ընդ  
աղքունական զօրուն՝ 'ի բաց վանեցին  
զնոսա 'ի մարտկոցաց անտի մի անդամ  
և երկիցս, և հաղիւ ցածեան առ սուղ  
ինչ ժամանակ յուղոց և 'ի սպառնա  
լեաց զօրապետի պարտիզապան զօրա  
կանցն, որ է պութանձի պաշի :

Յաւուր միուր կոչեաց Սէլիմ արքայ  
զպոսթանձի պաշին և ասէ ընա .  
« Կամիմ զի ամենայն զօրականք որ ընդ  
ձեռամբքով իցեն՝ փոխեսցեն զսարագ  
զգեստուց իւրեանց և մարզեսցին ըստ  
եւրոպեան օրինի ։ Եւ նա համարձա  
կագոյնս բան ետ և ասէ . « Հրաման է  
տեառն իմոյ արքայի . և թէ կամիցի  
տէրդ իմ՝ ոչ միայն զգեստուցն առնեմ  
ես փոփոխութիւն, այլ և խոյր եւրո-  
պական ագուցանեմ ես նոցա ։ Եւ  
ասէ արքայ . « Եթէ դու զայդ արաս-  
ցես, ահա և ես խոստանամքեզ, զի  
ցորչափ կեցցես դու՝ մի պակասեացէ  
'իքէն երրեակ ձարիցն իշխանութիւն .  
տէր ընդքեզ ։ և ագոյց նմա անդէն  
զվերարկուն նորաձե զգեստուց : Իսկ  
նորա կոչեցեալ զմի ոմն 'ի զօրագլաց  
բերդակալ զօրացն՝ որում անուն էր  
խասէքի խալիւ աղա՝ պատուիրեաց  
նմա ըստ հրամանին աղքունի տալ փո-

ինել զտարագ զգեստուց զօրականին :

Ի քսաներորդի հինգերորդի աւուր  
ամսեանն մայիսի յամին 1807 ՚ի խոր-  
հուրդ կոչեաց Խալիլ աղա զօժան-  
դակսն ՚ի մարտկոցս անդ , և յայտնեաց  
նոցա զհրամանն արքունի . այլ նոքա  
ըմբոստացեալ մերժեցին զհրամանն :  
Ասէ Խալիլ . « Գիտեմ զի սակաւք ո-  
մանք են ՚ի ձեզ անոպայք և անսասաք .  
և եթէ զնոստ բարձից ՚ի միջոյ , խոյր ևս  
եւրոպացի ագուցից ես ձեզ » . և նոքա  
ասեն . « Առա զոր գիտես » : Այն  
ինչ հրաման տայր Խալիլ զայս ոք և  
զայն ունել վաղվաղակի , ամենեքեան  
առ հասարակ յարձակեցան ՚ի վերայ  
նորա և ասեն . Հարէք : Տագնապեալ  
Խալիլայ ընկէց զանձն իւր ՚ի ծովլ զի ՚ի  
վել զերծցի , այլ նոքա ՚ի ջուրս անդ  
փողոտեցին զնա և զապասաւոր նորին  
ընդ նմա : Խակ Մահմուտ էֆէնտի որ  
յեւրոպեան մարտկոցսն էր՝ լուեալ  
զաղմուկ շփոթին զարհուրեցաւ յանձն  
իւր , և փութացեալ եմուտ ՚ի նաւակն  
որպէս թէ առ խոռովեալսն գնայցէ .  
այլ օժանդակքն դէտակն ՚ի վեր ա-  
ռեալ իբրև տէսին զի Մահմուտ գէմ  
վախստի առնէ , աճապարեցին խոնե-  
ցան ՚ի նաւակ մի , և սրացան կալան

զառաջս նորս : Եւ նորս անձարացեալել 'ի Պիշիւքտերէ , և անդ նստաւ շուարեալ . և օժանդակէքն հասեալ 'ի վերայ՝ սպանին զնա 'ի տեղւոցն և զպաշտօնեայ նորին առ նմա :

Զայս իբրև արարին՝ Եկին 'ի մի վայր ժողովեցան ամբն և ասեն . « Ոչ այս պէս վճարիցին իրքս . Եկայք լրումն տացուք առաջարկութեան խորհը դոյս » . և Եղեալ սուսեր 'ի միջավայրի՝ Երդմնի Եղեն և նզովեցին զանձինս նախ մի ճաշակել գինի մինչեւ 'ի գլուխ տարցին զնորհուրդն . Երկրորդ մի ինչ զեան դործել աղքատաց ժողովրդեանն . Երրորդ՝ մի բնաւ նեղել զբրիստոնեայն և զհրեայս . չորրորդ՝ զդբժոգն այսմ կանոնի անդէն յօշտել . և հինգերորդ՝ Երթալ համագունդ 'ի հրապարակն իմշմշյանի , և վճռով գենապետին իրաւացի զդործն համարել : Եւ հաւանեալ ամենեցուն՝ վազս առին զսուսերաւն որսկէս է սովորութիւն : Եւ Եկին գլխաւորք յապատամբն Օտունձի Սիւլէյման , Պէքիր , Ալի , Իպիշ , Մէմիշ , և Գապագանի Մուստաֆա :

Իբրև ազգ Եղեն իրքս 'ի քաղաքի անդ , խորհուրդ արարին վութանակի աւագորեարն և դիսնականիք առ հա-

սարսակ, և արձակեցին 'ի վասիրոր  
զպոսթանձի պաշին և զայլս ոմանս 'ի  
հին ենիչը եաց • պոսթանձի պաշին  
երկեաւ գնալ անդր, և 'ի կէս ճանա  
պարհին զկայ առեալ՝ գարձաւ ան-  
դրէն • իսկ այլք երժեալ առ ապրո-  
տամբսն՝ զառաջինն յորդոր եղեն նոցա  
ցրտութեամբ իմն 'ի խաղաղութիւն, և  
ապա 'ի նոսին իսկ յաւելան :

Սէլիմ արքայ մինչև ցայնժամոց ինչ  
ոչ գիտէր զեղելոցն, և 'ի գաւթի անդ-  
արքունեայն 'ի հրահանգս զօրականին  
պարապեր : Մի ոմն 'ի նեղբին պաշո-  
նէից անտի յայտնեաց նմա զաղմուկն  
և զլուանդ կենաց նորա • այլ անդէն 'ի  
նեղբս մուեալ առենադսլիրն հանգար-  
տեաց զարքայ և ասէ . « Յանկարծա-  
դէպէ ինչ երք տէր էին արքայ, և ադուա-  
ւուց ժողով • ահա արձակեալ զպոս-  
թանձի պաշին ցրուեցաք և նկուն ա-  
րարաք զլուբոսացեալմն » : Եմուտ և  
պոսթանձի պաշին, և նա ևս ըստ նմին  
բանից խօսեցաւ և յապահով արաք  
զարքայ :

Ի վաղիւ անդր ըաղմութիւն ժողո-  
վոյ ապատամբաց, որոց թիւ համարոյ  
էր հազար և ութհարիւր այլ, դրօս  
պարզեցին, և առաջնորդ զդապագձին

կալեալ խաղացին գնացին ընդ ցամաք  
 'ի Կոստանդնուպոլիս, և ընդ բաղում  
 դիւզօրէս անցեալ՝ 'ի մթան գիշերի ե  
 կին հասին մինչև 'ի Գապագաշ, և  
 անդ զկայ առեալ առաքեցին արս 'ի  
 ձմերոց ռմբաձիդ զօրացն և ասեն.  
 « Եթէ իցեն սիրաք ձեր իբրև զսիրաս  
 մեր՝ ազդ արասջնկ մեզ » . և նորա ա  
 սեն. « Բարեաւ իցէ գալուստ ձեր. և  
 մեք ընդ ձեզ եմք. եկայք 'ի ձմերոցս  
 մեր » : Յայնժամ չուեցին Եկին 'ի  
 Դոփիսանէ. այլ երկուցեալ մոանել 'ի  
 ձմերոց՝ 'ի հրասլարակի անդ ագան  
 զայն գիշեր : Եւ ընդ այգն ելեալ իսկն  
 դրեցին առին զկատասյս ռմբաձիդ զօ  
 րացն, և անցեալ ընդ Ղալագիս 'ի  
 Գալաֆաթ երի՝ մոին 'ի նտուակս նա  
 ւակուե անցին յայնկոյս յ՛ն գտփան,  
 և անտի յ՛ն զում չարշը. և ժողովապլա  
 տամբացն երթարով երթայր և աճէր 'ի  
 բազմութիւն. զի այս բարբառ ստէպ  
 ստէպ ընթանայր 'ի բերանս նոցա +  
 « Որ միանդամ տաճիկք իցեն՝ համա  
 ընդ դրօշաւս գիմեսցեն . սարուկք և  
 հապատակք աներկիւղ լիցին և զիրապակ  
 սըն մի փակեացեն » : Սակայն վաճառ  
 ռականին առ հասարակ իբրև յանհնա  
 րին մրգեկ հալածեալք 'ի փախուստ

աճապարեցին ահագին խուճապմամբ։  
վիակեցան շտապ տագնապաւ կրպակք  
ամենայն, հատան գոյնք երեսաց մե-  
ծի և փոքու, և գոչիւն աղաղակի խուռ-  
վելոցն և տագնապ վիախստի պակու-  
ցելոցն զաւուրն կատարածի բերէին  
զնմանութիւն։ Մալին ապստամբը՝ ՚ի  
Սիրահի պաղարը, և ոյր ոչ գոյնն  
զէնք՝ առին զէնս և ելին ՚ի Տիվան եօ-  
լու, և գնացեալ ժողովեցան յէլթմէյ-  
տամնին արք իբր ութառն հաղար։

Յայնմ ժամանակի Սէլիմ արքայ  
ձեմառեալ յարքունիմն հառաջէր և  
յոդւոց հանէր տագնապաւ, և զելս  
իրացն ոչ դտանէր։ և ատենադպիրն  
Ահմէտ էֆէնտի, և Մապէյնձի Ահ-  
մէտ պէյ խոյս ետուն յարքունեաց։  
Ասեն ցաըբայ մտերիմբն ՚ի պաշտօնեայս  
նորին։ « Զի՞ գործես տէր արքայ։  
Եթէ պաշտեսցին միանդամ արքու-  
նիքս, վճարեալ է այնուհետեւ վամն  
քո։ հապա փութա ՚ի նեցքս առնուլ  
զտեղապահն և զգիտնականս, որպէս  
զի խնդրել ապստամբայ զկառա-  
փունս նոցին՝ տացես նոցա, և զանձն  
քո ապրեցուսցես ։ Այլ արքայ եւս  
նոցա պատասխանի և ասէ։ « Լաւ է  
ինձ հրաժարել յաթոռոյս՝ քան պատ-

Ճառոք լինել մահուան տաճկադենից ,  
և անպարտ քրիստոնէից » :

Իսկ ապստամբացն ժողովք կոչեցին  
՚ի հրասպարակ անդր զգենպեան , զերկո-  
մին զգատաւորս զօրաց , և զգատաւորն  
կոստանդնուպօլսոյ և զայլ գիտա-  
կանս , և զգօրապետն բարակապան զօ-  
րաց՝ որ է Աէկպան պաշի : Առքայացնոր-  
պահու ՚ի դրան վէզվըրին կային ժողո-  
վեալ ՚ի խորհուրդ , և ոչ գիտէին թէ  
վինչ արաւցեն . բազումք բազում ինչ  
ասացին , այլ բազմագոյնք զգէմ ու-  
նէին բանից նոյա . և ՚ի վերջէ ասէ Զէ-  
լէսի էֆէնտի ոմն . « Լուարուք ինձ  
տեարք , մի միայն հնարք ապրանաց առ  
այժմ այս թուրի ինձ , զի այր իւրաքան-  
չիւր մեկնեալ աստի փախիցուք և թա-  
քիցուք յո՞ւ և պէտ կարող իցեմք . եթէ  
ասպիսցուք , բարի է . և թէ ՚ի վոանդ  
ինչ հասանիցէ անկանել՝ ահա վճա-  
րեալ է ամենայն . ողջ կացէք » . և ան-  
դէն ցիր և ցան ՚ի փախուստ աճապա-  
րեցին ամենեքեան : Զէլէսի էֆէնտին  
հեծեալ ՚ի ձի անսպիտան՝ փախնու . ՚ի  
տուն իւր , և կոչեցեալ զծառայսն և  
զընտանիա՝ հատուցանէ զլարձս նոյին ,  
և ինքն յայլակերպս երթայ թաքչել  
յապարանս խատիճէ սուլդանին , և

այլք յոյլ և այլ տեղիս :

Գիտնականացն դասքյակամայ կա.  
մըս ելեալ գնացին 'ի հրապարակն : Ա  
սեն ցնուսա ապատամբըն . « Ո՞ւր իցէ  
մատեան ձեր . բացէք զի տեսցուք ե-  
թէ ուրանօր դրեալ իցեն անիրաւու-  
թիւնքդ ձեր » . և 'ի դանդաղէլ գիտ-  
նականաց 'ի պատասխանին՝ ասէ Գա-  
պադքին ցդենպետն . « Զի՞ եկեալ հա-  
սեալ եմք մեք այսր , և զձեղ զի՞ կոչեցուք-  
ոչապաքէն զի դատաստան արդար դա-  
տեսնիք . և եթէ մեղապարտ իցեմք՝ տուր  
զդատակնիք մեր , և եթէ անպարտ  
տուր աղէ զվճիւդ » : Դենպետն ակն-  
կորեալ և զնորուսն 'ի ձեռս առեալ  
շուարէր և չտայր ինչ պատասխանի . և  
'ի ստիպէլ ապատամբացն ասէ . « Զինչ  
իցեն պահանջանք ձեր , ասացէք զի  
լուիցուք » : Եւ նոքա ասեն . « Վասն  
ոյր ստեղծ բարձրեալն զկորեալ » .  
ասէ . « Վասն թռչնոց » : — « Վասն  
ոյր զդարին » : — « Վասն անամնոց » :  
— « Եւ յոյր սակս զցորեանն արար » :  
Ասէ գենպետն . « Սակս մարդոյ » :  
Յայնժամ հանէ մի ոմն 'ի ծոցոյ իւրմէ  
պատառ մի հացի և ասէ . « Ազքամն  
տառապէալ ահա զայս հաց ուտէ , որ  
ոչ կորեակ է և ոչ գարի , և չար ևս է

քան զմոխիր և քան զգուղձ շաղախոյ :  
Թող զայս . ( հանէ 'ի ծոցոյ իւրմէ հաց  
գերմակ զոր աւագորեարն ուտէին և  
ասէ . ) մեծամեծաց այս իցէ կերա-  
կուք , և ժողովդեանն Մահմէտի միւ-  
սըն ճարակ . և դուք զիա՞րդ լուեալ  
կայք ։ Ասէ գենպետն . « Արդար են  
բանքդ ։ — « Երկրորդ անգամ , եթէ  
խարիցէ և սուստ խօսիցի արքայ , ար-  
ժա՞ն իցէ նմա հաստատուն կալ յաթո-  
ռին ։ Ասէ գենպետն . Ոչ : — « Եր-  
բորդ անգամ , եթէ զամն ութուտամն  
ոչ լինիցի արքայի զաւակ , օրէն իցէ  
նմա հաստատուն կալ յալօթս ուր-  
բաթուն գնալ ։ Դենպետն ասէ . « Զէ  
օրէն ։ Ասեն ապստամբն . « Ոչ այդ-  
պէս . առ դու գենպետդ զլթուղթ  
'ի ձեռին քում , և գրեա զանուանս ա-  
րանցն զորս մեք ասասցուք քեզ ։ Այն  
ինչ առնոյր գենպետն զքարտէնն ՚ի  
ձեռին , ճայնեաց մի ոմն յամբոխէ ան-  
տի և ասէ . « Են ստրուկք չորք որ ընդ-  
ձեռն աւագանւոյն գործէն զոր կամին .  
գրեցէք զի սպանցին և նոքա ։ Ասէ  
այլ ոմն յապստամբաց անտի . « Քաւ  
'ի ձէնջ եղբարք , մի շաղախիցէք զձեռս  
ձեր յարիւն անպարտ . զի ոչ ինչ է մեղ-  
մարդկանն որք 'ի պարտուց սլաշ-

տամանն իւրեանց սպասահարկու դտան  
նին աւագանւոյն , և հարկ ՚ի վերայ  
կայ նոյն հաւատարիմն լինել ” . և  
լուեցին . և էին արքն այնոքիկ Շապճի  
Մուսի , Զելէպի թոտորաքի , ’Նիղամ’  
ուստասը Էքմէքճի Յարութիւն , և քա-  
ջատոհմիկն Յովչաննէս չէլէպի Տիւ-  
զեան : Իսկ աւագանին զորոց գրեաց  
գենպետն մի առ մի զանուանս՝ այսո-  
քիկ էին . տեղապահ վեզիրին Վէկուէ  
Մուսա փաշա , փոխանորդ նորին  
Խալրահիմքեահեա , Հաճի Խալրահիմ-  
էֆէնտի , գործակալ մօրն ալբայի  
Երուսուֆ աղա , Զելէպի Էֆէնտին ,  
փոխանորդ վեզիրին Մէմիշ Էֆէնտի ,  
Համարակալն Ահմէտ պէյ , ըէիս Էֆէն-  
տին , Սաֆի Էֆէնտի , և այլ ևս ոդիք  
Երեքտասան :

Մինչդեռ այս իրք գործէին ՚ի հրա-  
պարակին՝ Սէլիմարքայ կոչեաց զպոս-  
թանճի սկաչին և սպատուիրեաց նմա զի  
ժողովեսցէ ածցէ յարքունիս զամե-  
նայն զպարտիզապան զօրականնն որ  
ընդ ձեռամբ նորա էին . այլ նոքա ոչ  
անսացին ընաւ զօրապետին իւրեանց .  
և նա եմուտ անդրէն առ ալբայ : “ Զի՞  
է զի ոչ երևին արքն ու ասէ Սէլիմ . և  
զօրավարն ասէ : “ Զկամին գալ տէր ” :

Յայնժամ՝ յանհնարինս զայրադնեալ  
ընդնա արքայի՝ հրամայեաց գլխատել  
զնա և զկառապինն տանել առ խոռ  
վեալն յիթմէյտանին :

Եռքա յայնմ պահու հանեալ զի  
պրահիմ քեահեա 'ի թաքստենէ իւր  
մէ՝ անթիւ նախատանօք և հայհոյու  
թեամբ և ձգձգմամբ ածին մինչե 'ի  
հրապարակն : Եւ տեսեալ նորա զնու-  
ժան մոլեգնելոցն՝ խնդրեաց ջուր ըմ-  
պելոյ, և նոքա եղին առաջի նորա լի  
դուլիւ մածնոյ զնուր, և սկսան տեղալ  
'ի վերայ նորա զհարուածս սուսերաց  
անդութ և անողորմ կատաղութեամբ:  
Գոռայր և գոչեր այրն ողորմագին, և  
յաղթէր գոգցես ալաղակի բազմաթիւ  
ամբոխին . այլ 'ի վերջէ յօշատեալ մե-  
ռաւ եղկելին : Առ նմա էր և մի ոմն 'ի  
հաւատարիմ սպասաւորաց նորա, որ  
աղէկէղ մորմնքմամբ կայր և ողբայր  
զգառնակտուտ մահ տեառն իւրոյ .  
բազում անգամ յետս մղեալ վարեցին  
զնա 'ի բաց, այլ նա սքանչելի առաքի-  
նութեամբ ոչ մեկնեցաւ անտի, և հա-  
րին սպանին անդէն և զնա :

Աէլիմ արքայ 'ի վարանս տարա-  
կուսանաց անկեալ առաքեաց թուղթ  
առ տեղապահն և սպասուիրէր, զի

հատցէ զդլուխս աւագորերոյն զորս  
ապստամբքն ինդրէին և տացէ նոցա  
առ ՚ի ցածուցանելոյ զնոսին : Իսկ նա  
քանդի ինքն իսկ էր պատճառք չարեացն  
և գլուխս ապստամբացն այնոցիկ, դէսկ  
ժամանակ վրէժինդրութեան գտեալ՝  
կոչեաց զիտիսանորդն և զրէիս է  
ֆէնտին, և խեղպամահ արարեալ զնու  
սա՝ զկառափունսն առաքեաց Ճիթմէյ  
տանին, և զդիսակունս նոցա արկ ՚ի  
գումը մշյտանի : Յղեաց կոչել և զտե  
սուչ փողերանոցին՝ զՊէքիր էֆէնտի .  
իսկ նա քանդի լուեալ էր զերս փոխա  
նորդին և զրէիսին՝ համարեցաւ եթէ  
կամի տեղապահն զնա ինքն կարգել  
փոխանորդ, և փութացաւ ՚ի կոչն՝  
զի մի այլ ոք կանուցու զբաժին իւր :  
Եւ ողջունեալ նախ զտեղապահն ըստ  
օրինիասէ . «Հատու արացէ Աստուած  
զսուսերդ ձեր . արդար ես գու տէր  
իմ . ահա այդպէս պարտ և պատ  
շաճ է հատուցանել անօրինաց ըստ  
գործոց նոցին, զի անդորրասցի աշ  
խարհս » : Հայեցաւ տեղապահն զար  
մացմամբ ընդ երեսս Պէքիրայ, և ապա  
ասէ . « Հրամայեա արտաքս ելանել,  
զի բանք ինչ են իմ ընդքեզ » : Յայն  
ժամ իմացեալ Պէքիրայ զաղմուկն յոր

ըմբռնեալէր ասէ . « Եւ զի՞նչ յանցանք  
իցեն իմ տէր . զի՞ արարի ես » : Եւ նա  
ասէ . « Համարեաց թէ վասն առաջ  
նոց գործոցդ պահանջիս . — առէք 'ի  
ներքս և զանօրէնդ » : Իբրև հանին  
զայրն՝ թալացեալ անկաւ . և խեղդեալ  
զնա հատին զկառափն նորս և առաքե-  
ցնն յէթմշտանին :

Ի վաղիւ անդր քանզի ուրբաթ էր՝  
եմուտ Սէկպան պաշին առ արքայ և  
ասէ . « Հրամայեա տէր արքայ յաղօ-  
թըս ուրբաթու ելանել , զի՞ քեզ սպա-  
սեալ մնայ ժողովուրդն ամենայն » :  
Ասէ ցնա արքայ . « Չելանեմ ես այսօր  
'ի մզկիթ , զի և չկը իմ պաշտօնեայ . և  
ծանեայ զի վասն իմ է կուխոդ » : և ան-  
դէն առաքեալ արս առ հօրեզքօրորդին  
իւր առ սուլդան Մուսդափա ասէ .  
« Հրամայեա դալ բազմել յաթուս ,  
զի ոչ ևս կամի զիս ժողովուրդն , և վճա-  
րեալ է այսուհետեւ վասն իմ . տէր տա-  
ցէ յաջողութիւն թագաւորութեան  
քում » : Յայնմ ժամանակի դրունք  
արքունեացն փակ էին , և միայն գուռ-  
նըն Սողուդ չէշմէ գագիուսու անուա-  
նեալ՝ ըստ ժամուն պիտոյից բանայր և  
փակէր . վասն որոյ և խուժան ապլս-  
տամբացն խոնիեալ մնային արտաքոյ 'ի

Փաշա գավիուսու դրանէ մինչև յայն  
դուռն : Արդ մի ոմն 'ի ողալատականաց  
բարբառեցաւ 'ի ներքուստ երիցս ան-  
դամ' և ասէ . « Կամիցիք զսուլդան  
Մուսդաֆա » . և նոքա երիցս ետուն  
պատասխանի . « Կամիւմք » : Յայնժամ'  
դենապետն և տեղապահն մտին լնդ  
դուռնն Տէմիր գավիու՝ ամբառնալ  
յաթու զՄուսդաֆա : Խակ նորա լը-  
ւեալ զհրաւերն սկսաւ լալ և ասել .  
« Ոչ էր ինձ կամք զայսօրինակ թագա-  
ւորել , և ոչ տեսանել զաղէտս հօրեղ-  
բօրորդւոյն իմոյ . լաւ էր ինձ մեռա-  
նել քան զայսպիսի կեանս իմ . չելա-  
նեմես աստի . թող արասցեն զոր կա-  
մին » : Մինչդեռ սուլդան Մուսդաֆա  
'ի ներքս անդ ողբայր , Սէլիմ արքայ  
արտաքոյ անէծս և նզովս արձակէր ար-  
տասուալից որոց պատճառք աղետիցն  
լինէին . և կոչեալ զամենայն զպաշտօ-  
նեայս իւր զառաջեաւ ասէ ցնո-  
սա հեկեկանօք . « Տեսէք տեալրք  
իմ , ներեցէք ինձ թէ յանցեայ ինչ  
կամ ընդունայնացայ , և սրտի մոռք  
ծառայեսջիք թագաւորին որ գալոցն  
է » . զայս ասէր և լայր բարեբարոյ  
արքայն . լային և նոքա անկեալք առ-  
ուսս նորա : Ուր ուրեմն երթեալ առ-

Մուսդաֆա պաշտօնեալքն Աէլիմայ՝  
հաւանեցուցին զնա եւանել՚ի վանդա-  
կէ անախ և յանձն առնուլ զմագաւո-  
րութիւնն . ապա թէ ոչ , ասէին ,  
վտանգ է անշուշտ կենացն Աէլիմայ  
արբայի :

Մինչդեռ Աէլիմ իջեալ յաթուոյն  
երթայր՚ի ներքա՝ Մուսդաֆա արքայ  
գայր բաղմել յաթոռ անդր . և պա-  
տահեալ միմանց գիրկ ընդ խառն ե-  
ղեն և լացին ժամն ձիգս . ապա առե  
Աէլիմ . « Երթ որդեակ իմ՞ե բաղմեաց  
յաթոռ քո , և տէր յաջողեացէ քեզ՚ի  
բարի . ինձ այսպէս սահմանեալ էր՚ի  
տեսչութենէն Աստուծոյ » . և համ-  
բուրեաց զջակատ նորին , և Մուսդա-  
ֆա համբուրեաց զտա նորա : Եւ ասէ  
ցնա Աէլիմ . « Լուր որդեակ և մի մո-  
ռանար զլսրատ հօրեղբօրդորդոյսքո .  
մի երեկ տացես համարձակութիւն  
քոց պաշտօնէից , և մի հաւատացես  
բանից նոցա . հայեաց յօրինակս իմ և  
զգոյշ լէր անձին քում . տես յո՞՛  
թշուառութիւն հասուցին զիս » :

Ի քսաներորդի իններորդի աւուր  
ամսեանն մայիսի յաւաւօտուն պահու  
թագաւորեաց Մուսդաֆա արքայ , և  
դէնապեան և աեզագահն հանդերձ ա-

մենայն գիտնականացն դասու ելեալ  
յարքունեաց եկին հանդիսիւ ՚ի դուռն  
վէզիրին . և քարողքն սիռեալք ընդ  
քաղաքն աւետաւորեցին զամբառալ  
նորոյ թագաւորի : Այն ինչ ուրախա-  
ցեալ ժողովունդեան ընդ աւետիսն խըն  
դակից միմեանց ընսէին և դառնային  
յիւրաքանչիւր տեղիս , և ահա դար-  
ձեալ աղմուկ մեծ շվութի յարեաւ ՚ի  
տեղւոջն , և ամեննեքեան առ հասարակ  
զահի զերկիւղի հարեալ խուճապէին ,  
և յոլովք զալատճառս անդամճեպոյն  
տագնապի անդիտանային : Քանզի  
խուժան աղստամբացն ՚ի բուռն ար-  
կեալ զՄապէյնձի Ահմէտ պէյ՝ ածէին  
աղաղակաւ ՚ի հրապարակ պատշգա-  
մին որ Ալայքէօզքիւ անուանի . և ա-  
հագին աղաղակաւ և մոլեգին յարձակ  
մամբ մերկացեալ զսուսերս իւրեանց ,  
և ոչինչ երեսս արարեալ զարհուրելի  
բառաշմանց առնն հսկայի՝ յօշ յօշ  
կտրատեցին զնա : Ըստ սմին օրինակի  
կալան ապա և զհաճի խպրահիմէքէն  
տի , և հարցանէին յարքայ եթէ զինչ  
արասցուք սմա : Եւ նա ասէ . « Տուք  
զգա կենդանւոյն ՚ի ձեռս աղստամ-  
բաց զի արասցեն զոր կամին » . և ա-  
ռեալ տանէին զայրն յիշմէյտանին .

այլ զՃանապարհայն տեսեալ զի անցանէր կաթսայ Ենիչէրե աց, անդէն յօշատեցին զՃապրահիմ և ասեն . « Թողդոհեսցի մերում կաթսայիս » : Ի վազիւ անդր տաենադպիրն Ահմէտ էֆէնտ տի Ելեալ 'ի թաքստենէ և կացեալ 'ի պէրայ տանեաց՝ ծափ զծափի Եհարձեռքն Երիցս, և վազս առեալ ոստնուլ կամէր 'ի միւտ տանիսն . իբրու զի մի ոմն 'ի գիտնականաց պատուիրեալ Երասեն՝ նմա , զի թէ վտանդ ինչ 'ի վերայ հասանիցէ՝ Ելջիր 'ի տանիս և ծափեալ և վերացիր ընդ օդս , և անդէն հասեալ օդային ոդիք տարցեն զքեզ յան Երևոյթս 'ի տեղի անդոյթ : ԱՅԼ յոստնուլ անդիւրումանկաւ չարաչար այրն Եղկելլ 'ի փողոցն . հասին 'ի վերայ նորա Ենիչէրիք և գլխատեցին , և ապա տուն զոտիւքն արկեալ գիշաքարշարարին ցհեռաւոր տեղիս :

Իսկ բազմութիւն ապստամբացն յերիկէ իսկ Երթեալ 'ի դուռն արքունեաց՝ տնկեցին Երկուատեք զդրօսս իւրեանց , և ինքեանք ստանձնեալ զիւրաքանչիւր հրացանս՝ կարգեցան կացին 'ի շարի մինչեւ ցմզկիթն սուլդան Ահմէտայ , և սպասէին Ելանելոյ արքայի յաղօթս ուրբաթուն : Եւ 'ի մեց

Ժամու ել արքայ ընդ գուռոնն մէծ , և  
ամենայն բաղմութիւնն զաղաղակ բար-  
ձեալ գոչեցին . « Կեցցէ արքայ » : Տե-  
սեալ արքայի զահագին ամբոխ խառ-  
նաղանձին այլայլեցաւ , և գոյնք երե-  
սաց նորա շրջեցան և գողայր առ ահի .  
իսկ նոքա խառն ՚ի խուռն երթալով  
յառաջոյ և զինի նորա գոչեցին . « Ո՞  
զի գեղեցիկ է թագաւորս մեր » :

Ապա յերկուշաբատթի աւուր որ օր  
երկրորդ էր ամսեանն յունիսի՝ ել-  
թեալ ապստամբաց յատեան աւագա-  
նոյն , և ընկալան գաշամբ ուխտի  
զնոսսումն արքայի և զմեծամեծաց՝ զի  
բարձցին ՚ի միջոյ ամենայն նորակարգ  
սահմանադրութիւնք , և ամենայն ինչ  
գարձեալ հաստատեսցի որսկէս առ չա-  
միտաւ : Եւ ապա մուեալ ՚ի նաւս և ՚ի  
նաւակս գտրձան ՚ի Վոսփոր՝ ուրախա-  
ցեալք ընդ գործս ձեռաց իւրեանց , և  
արձակելով հրազնս ՚ի նշան ցնծու-  
թեան գոչեցին . « Քաջալերեցարուք  
ովքաջք . յեօթն պետութիւնս հնչես-  
ցէ անուն մեր » :

Այսպէս վախճան եղե առաջնոյ  
խռովութեանս . յորում այս ինչ նշա-  
նաւոր է յոյժ , զի ոչ ինչ կաս գործե-  
ցաւ ամենափառ քրիստոնէից և Հրէից .

նա և պաշտպանս նոցա կոչելին զան  
ձինս ապատամբքն : Եւ էին սկզբնա  
պատճառոք աղմիս դենապետն Ագաուլ  
լսհ Մէհէմմէտ էֆէնտի , տեղապահն  
Քէօսէ Մուսա վաշա , և Սեկալան պա  
շն և այլք . և գործակից և առաջնորդ  
գործոյն Գապագնի Մուսդաֆա , որ  
և զկնի այսր ամենայնի իբրու ՚ի հա  
տուցումն քաջութեան իւրոյ տեսուչ  
կարգեցաւ ամենայն բերդորէլիցն Վու  
փորի :



## Ի Թ

### ՍՈՒԼԴԱՆ ՄՈՒՍԴԱՖԱ Դ

**Ը** ՈՐՐՈՌԴՍ այս Մուսդաֆա արքայ  
երիտասարդ էր գեղադիտակ և եռանց  
դուն, և ըստ խոհականութեան մա-  
սին ևս գովելի ։ սակայն աղետք պե-  
տութեանն որ 'ի ժամուն և որ զինի՝  
չետուն նմա թոյլ գործելինչ, և զբոյս  
բարուցն առնելոյս :

Քանզի 'ի ձեռս խռովայոյզ ապօ-  
տամբացն մատնեալ գոլովքաղաքին,  
ամենայն ինչ խառն 'ի խուռն էր 'ի  
նմա : Խորհուրդ կալան գիտնականք  
ընդ տեղապահին ելս իրացն գտանել,  
և հաստատեցին նուաճել հնարինք  
զավստամբան . իսկ նոցա զգացեալ  
զիրսն ժողովեցան յետ երկուց ամսոց  
'ի գաւիթ Սիւլյմանիյէ մզկթին, և  
զաղաղակ եղեալ գոչէին . « Զկամիսք  
զգենապեան, զտեղապահն, զՍեկապան  
պաշին » և զայլս ոմանս յաւագ որեւ-

րոյն՝ որ զերծեալ էին 'ի խողմողմանէ :  
Եւ փոխեցան տեղապահն և գենակետն,  
և այլք ունանիք . սակայն նոքա ոչ զի՞նան  
'ի մոլեգին բռնակալութենէ իւրեանց,  
և գարձեալ ետուն փոխել զտեղապահն  
և կարգել զԴայեար փաշա՝ զոր հակա-  
ռակ ճանաչէին նորաձեռութեանցն Աէ-  
լիմայ :

Լուր խոռովութեանն յուզելոյ 'ի  
Կոստանդնուպօլիս՝ իբրև ազգ եղե 'ի  
բանակն արքունի , համարձակեցաւ զօ-  
րավարն էնիչէրեաց սպահարակելյայտ  
նապէս զգնացս խոռվայուղիցն . սմին  
իրիյարեան ենիչէրիք 'ի վերայ նորա և  
անդէն խողմողեցին : Վէզիրն ինքնին  
դժկամակութիւնն իմն ցուցեալ ընդ ա-  
րարս տեղապահին իւրոյ՝ ընկեցիկ եղեւ  
յիշսանութենէ անտի իւրմէ , և կալաւ  
զտեղի նորին Զէլէպի աղա Մուստա-  
ֆա փաշա : Այլ այս փոփոխութիւնք  
որպէս միշտ՝ նոյն և այժմ խոչ մեծ ե-  
ղեն յաջողութեանց առաջիկայ սպատե-  
րազմին . քանզի և սպարապետն Ռու-  
սաց Միքելսոն այն ինչ սպատրաստէր  
մեկնել 'ի Մոլտակիոյ առ ՚ի գնալոյ  
ընդդէմ 'Սափոլէոնի 'ի լուր խոռովու-  
թեանն Կոստանդնուպօլայ ոչ ինչ  
իւրաքանչ ՚ի տեղուոջէն իւրմէ :

Խակ 'ի Կոստանդնուպօլիս տաճիկը և  
քրիստոնեայք առ հասարակ 'ի մեծ  
տուայտանս կային յերեսաց կեղեքա-  
նաց խոռվէլոցն, և չէր ոք որ իրաւունս  
առներ նոցա : Յաւուր միումիումը մի  
յապտամբաց եմուտյեկեղեցին Յու-  
նաց որ 'ի գիւղն Ֆէներ, և ըստ տաճ-  
կական օրինի սկսան ձայնելյազօթս .  
և ապա պնդէին թէ մզկիթ եղե եկե-  
ղեցիս . այլ գենապետն անստցեալ պա-  
ղատանացն Յունաց՝ զհակառակն ետ  
վճիռ : Դարձեալ և յայլումաւուր կիւ-  
րակէի զօրականք ծովակալին մտեալ  
յանկարծ յեկեղեցին Հայոց որ 'ի Գա-  
սլմիմ փաշա՝ կալան զերէցն 'ի ժամապա-  
տարադի, և զդեստուքն հանդերձ ա-  
ռեալ տարան զնա և զժողովուրդն 'ի  
ըսանտ . սակայն ծովակալն Աշխատ Ալի-  
քաշա արձակեաց ապա զարսն :

Այլ և տաճիկ կանայք գունդ կազ-  
մալ գիմեցին յամնեանն մայիսի յա-  
մին 1808 յապարանս դատաւորին Կոս-  
տանդնուպօլսոյ 'ի ժամձաշու, և 'ի բաց  
առեալ զիստիս պղնձեաց տան նորա և  
հետազօտեալզոր 'ի նոսայն կերակուրք  
էին, գոչեցին ընդդէմ նորա և ասեն .  
“Այ անօրէն, դու այսպէս 'ի գա-  
համունս խորտկաց պարարիս, և մեք

սատակիմք սպառիմք 'ի սովոյ , և զմի  
լեարդ ոջսարի ընդ քսան և հինգ փողոյ  
հաղիւ առեալ ուսեմք " : Եւ 'ի յար-  
ձակելնոցա 'ի վերայ դատաւորին՝ նա  
ահաբեկ խոյս ետ ՚ի սեղանոյ անափ և  
զերծաւ ՚ի կանանոցն իւր : Ասլա գիր  
բողը մատուցին կանայքն առ արքայ՝  
մինչդեռ ՚ի մզկիթ ելանէր , և բարձեալ  
տանէին յառաջոյ իւրեանց զճող մի  
բարձր՝ կապեալ 'ի ծագ ձողոյն լեարդ  
և մում , և բազում ինչ ևս համարձակ  
բարբառեցան առ արքայ . այլ շահե-  
ցան և ոչ ինչ . զի և ոչ իշխանութիւնն  
ինչ էր 'ի ձեռս արքայի :

Դասլագմի Մուսդաֆա որ 'ի բերդն  
ֆէնէր որջացեալ իր յանդորր խաղա-  
ղութեան գէտակն կալեալ սպասէր  
ելից թշնամութեան աւագանուցյն , լաւ  
համարեցաւ յանձին օգոււա՛ղի ենպետին  
բարեկամութեամք գալ . խորհուրդ  
կալաւ ընդ դենսպետին՝ ընկենութ զՊայք  
եար փաշա յիշխանութենէ տեղապա-  
հութեանն , և կարդել 'ի տեղի նորա  
զիամայիլ փաշա՝ որ 'ի ժամուն ոստի-  
կանն էր շինուածոց 'ի Զանագ գալէսի:  
Զայն իրեն զգաց Դայեար , աճապա-  
րեաց գեղ մահու արբոյց իսմայէլի և  
սպան զնա . սակայն և ոչ ինքն եհապ

իւրոցն ըղձից : Քբանզի գրապադքին միաբանեալընդ իւր բաց 'ի դենապետէն և զշաւուշ սպաշին՝ ետ առնուլ 'ի նմանէ զպատիւն , և տալ առն միում՝ որ յամենայնի ըստ կամն իւր և դենապետին վարեր : Եւ ահա դարձեալ սկիզբն եղեւ ահագին շփոթից 'ի թագաւորեալքաղաքին :

Ալէմտար (կամ Պայրագտար) Մուսդագալը մասն յայն ժամը իւրում առ կուսակալէրն յայն ժամը 'ի Ռուսածուդ , ոչ դադարեր յաւալ կարդալոյ ընդ անպարտ թշուառութիւնն բարերարին իւրոյ Աէլիմայ , և յեպերելոյ զդործադիրս իրացն եղելըց : Արդ Դայեար փաշա վառեալ յոդի վրէժինդը ութեան՝ դիմեաց առնա , և 'ի վեր հանեալ նմա զամենայն հանգամանս արքունեաց եցոյց և զհնարու կործանելոյ զգապադքին հանդերձ օժանդակօք նորա , և ամբառնալոյ անդրէն յաթու . թագաւորութեանն զլէլիմ :

Յայնժամ առաքեաց Մուսդագալը փաշա առ վէզիրն մեծ որ յԱդրիանուալովիս էր՝ զայր ոմն քաջահմուտ զինուրական իրաց , հաւասարիմ յոյժ առ Աէլիմ արքայ , և թշնամի ենիշէրեաց , որում անուն էր Պէհիձ էֆենտի , որ

ալէս զի որսասցէ զսիրտս վէզիրին և զա-  
ւագաննւոյն առանց ինչ յիշատակելց  
զԱէլիմ, և ապա անցցէ 'ի կոստանդ-  
նուապօլիս և խօսեսցի ընդ բարեկամու-  
սէլիմայ, թէ ո՞րպէս կարասցեն հանել  
'ի գլուխ զառաջադրեալ վնորհուրդու-  
իւրեանց : Արար զայն Պէհիճ և յաջո-  
ղցաւ յամենայնի 'ի վեր քան զակն-  
կալութիւն Մուսդաֆային : Սմին իրի  
արս չորս հազար յիւրոց անտի առեալ  
նորա դիմեաց 'ի թագաւորեալ քա-  
ղաքն 'ի բարձումն օժանդակաց . բայց  
և այլոց զօրացն իւրոց , որ էին երկո-  
տասանն հազար՝ հրաման ետ գալ զկնի  
իւր բացագոյն . և ապա ցրուեալ զնո-  
սին ևս ընդ աւանս և ընդ դիւղ՝ ինքն  
սակաւուք ոմամբք եմուտյ Ադրիանու-  
պօլիս : Անդանօր ատեան խորհրդոյ  
կազմեալ աւագաննւոյն՝ հաստատեցին ,  
զի վէզիրն մեծ նուիրական դրօշիւն հան-  
գերձ մտցէ 'ի կոստանդնուապօլիս , և  
Մուսդաֆա ժամանեսցէ զինի՝ սասա-  
րել խորհրդոց նորին : Աւլ բամիզ է-  
ֆէնտի իրատ ետ արձակել նախ 'ի  
դիւղն Ֆէնէր գումարտակ մի հեծե-  
լոյ՝ զի բարձցեն 'ի միջոյ զԳապագձին :  
Յանձն եղեւ կատարումն խորհրդոյս 'ի  
Հաճի Ավե ոմն այլ Զարտար յայսպի-

սիս . որոյ ունելով ընդ իւր զհրովար-  
տակ 'ի վէղիրէն մեծէ առ 'ի բառնա-  
լոյ զթշնամին պետութեան և զարքայի՝  
և տիրելոյ բերդորէից և մարտկոցացն  
Վոսփորի , յերկրորդում գիշերին որ  
օր երեքտասան էր ամսեանն յուլիսի՝  
եհաս 'ի Ֆէնէր և պաշարեաց յան-  
կարծուստ զտուն Գապադճի Մուս-  
դաֆայի . ապա առ ընդ իւր արս չորս  
քաջասիրտա զինեալս ընդ հանդեր-  
ձիւք , և 'ի ձեռին իւրում հրովարտակ  
վէղիրին , և բախեալ զդուռնն ասէր  
ունել թուղթ 'ի տեղապահէն առ տա-  
նուտէր տանն : Իբրև բացաւ գուռն ,  
սոքա անոդէն կապեալ կաշկանդեցին  
զդուռնապահնն և զորա ընդ նմայն վա-  
զեալ էին արտաքս . և իմացեալ եթէ  
Գապադճին 'ի կանանցի անդ է , ե-  
մուտ չաճի Ալի անվեհեր 'ի ներքս .  
այլոչեդիտ զնա , զինա վաղ զդացեալ  
զաղմուկն , և ընդ պատուհան տանն  
ոստուցեալ զերծեալէր 'ի տունն մօտա-  
կայ : Հարցանէ Ալի ցկին նորա՝ եթէ  
ուր իցէ այրնքո . և նորա զահի զդողա-  
նի հարեալ մատնցոյց լինի և յայտ առ-  
նէ եթէ 'ի մերձակայ տանն է : Հասա-  
նէ անոդը Ալի սակաւուք , և ստէպ  
բախէ զդուռն . և Գապադճին կար-

ծիս ՚ի մոխ եղեալ եթէ սպասաւորք  
իւր իցեն առ գրանն՝ հարցանէ ցնոսա  
՚ի վերուստ և ասէ . « Միթէ դնացին  
՚ի բաց » . և սոքա ասեն . « Գնացին  
և մեկնեցան » : Յայնժամ փութացաւ  
էջ Գասպարձին որովէս էրն՝ շապիկ և թթ  
զգեցեալ . և սոքա անդէն բուռն հա-  
րեալ կալան զնա անդապէս : Այն  
ինչ զարհուրեալ Գասպարձին աղաղա-  
կէր առ նոսա , « Ողորմեցարուք ալք  
եղբարք , թոյլ առուք ինձ գոնեա զօրի-  
նական լուացումնս առնել » , Հաճի  
Ալի տասպալեցոյց զնա ՚ի գետին , և  
ընդ քարշ ածեալ մինչեւ ՚ի սեամա  
գրանն արտաքնոյ , եհար զկառափինն և  
վաղլաղակի առաքեաց առ Մուսդա-  
ֆա վաշտ :

Ան ունէր Հաճի Ալի՝ եթէ ՚ի  
տեսիլ հրովարտակի վէզիրին հանդար-  
տեսցեն օժանդակէքն . սակայն նոքա  
լուեալ զկանցն աղաղակի կանանոյ  
Գասպարձի Մուսդաֆային՝ առ հասա-  
րակ ՚ի զէնս և ՚ի թնդանօթս ընթա-  
ցան : Յայնչափ աղմկէ խռովութեանն  
եղելոյ յայնմ գիշերի բազմատափկէ  
լուրք խառնաձայնք հնչէին ընդ քա-  
զաքն . և աւագանին ինքնին գլխովին  
ոչ ինչ խելամուտ գոլով իրացն , գիտէին

և եթ՝ զի վէզլեն և Մուսդաֆա փաշա դիմեալ դան՝ ի Կոստանդնուպոլիս։ և ոչ բնաւ ձեռն արկին՝ ի գործ ինչ։ Եւ օժանդակացն տեսեալ զի չկը որ օդնական լինիցի նոցա, բարձին զպաշարումն աշտարակին՝ ուր ամրացեալ էր Հաճի Ալի իւրովքն հանդերձ։

Միօրեայ Ճանապարհաւ հեռի էր Ալեմարն՝ ի Կոստանդնուպոլսոյ՝ յորժամեհաս առ նա Հաճի Ալի։ Ապա արձակեաց վէզլեն զըէիս էֆենտին առ արքայ՝ և ասէ։ « Խորհուրդք իմ և Մուսդաֆա փաշային այս է, աղատել զթագաւորդ մեր և զժողովուրդքաղաքիդ յանօրէնութեանց օժանդակացն, որ անցուցին զանցուցին զքափ յանդգնութեան իւրեանց այս հնդետասան ամիս։ և թէ՝ ի ծածուկ պահեալ թաքուցաք ցարդ զայս մեր խորհուրդ, այլ և այն առ անքոյթ և անշը փոթ բառնալոյ էր զառաջնորդ չարագործացն։ Արդ եթէ անակնկալս ինչ տեառնդ մերում գործեցաք, ինդըեմք աւասիկ զներումն, և աղաչեմք սանձել զըմբոստ և զվատատոհմիկ զօրականն, և փոխել զգենսպետն՝ որ յամենայնի ՚ի յագուրդ և թէ իւրոյ ժլատագահութեանն միտ դնէ ։ Մուս-

դաֆա արքայ, որ խիթայր հանել 'ի  
ձեռաց զթագն և թերես զկեանսն իսկ,  
խրախ եղեւ ընդ թէթեռութիւն պա-  
հանջանաց վէզերին և Ալէմտարայ,  
և առ ժամայն կատարեաց զնոսին :  
Կա և յաւուրն երկրորդի պատճառա-  
նօք տեսանելց զդրօչն նուիրական  
գնաց մեծահանդէս շքով 'ի բանակն  
Ալէմտարայ և պատուամիրեաց զնա  
յոյժ . և նա հաւատարմացոյց արքայի  
զմիամիտ և զմուերիմ ծառայութիւնս  
իւր . և ամենեցուն որ յայց ելանէին  
առ նա՝ ասէր քաղցրութեամբ . « Գո-  
հասցուք զուառնէ , զի այսպէս դիւ-  
րավճար եղեւ մեզ գործս այս մեծ , և  
մհա դառնամ ես անդրէն զօրօք խմուք  
զկողմամբ Դանուբայ » : Եւ քանզի  
զօրք նորա կանոնաւոր հրահանգօք  
մարգեալք յամենայն օրէնս զինուորու-  
թեան՝ ոչ ինչ նեղէին բնաւ զժողո-  
վուրդն , անդորր և անկասկած խաղա-  
ղութիւն եղեւ 'ի քաղաքին :

Ի քսաներորդի ութերորդի աւուր-  
ամսէանն յուլիսի վաղ քաջ ընդ առա-  
ւուն էառ . Մուսդաֆա փաշա զայրն-  
տիր զօրս իւր հինգ կամ վեց հազար՝  
առ հասարակ հրացանաւորս , և եր-  
թեալ նախ յապարանս վէզերին մե-

ծի՝ եմուտ 'ի նելքս և բազմեցաւ առնմա : Եւ յետ բազում զրուցատրութեանց իբրև ետես զի չէ սիրտ առնն իբրւ զսիրտ իւր 'ի կատարումն առաջ արկեալ խորհրդոցն իւրոց , էառ իշխանաբար 'ի ձեռանէնորա զկնիքն արքունի , և ետ 'ի չաւուշ պաշին , և զԶէլէպի աղա առաքեաց 'ի բանակն իւր : Դակ ինքն պահապանս յիւրոց զօրաց շուրջ զքաղաքաւն կացուցեալ , խաղաց գնաց վեցհազար սպառազինօք , և եմուտ 'ի միջին հրապարակ ապարանիցն արքունի , և փակեցան դրունքն , որպէս զի չէր հնար այլ ևս ումեք մտանել կամ ելանել : Անդ ընդ նմանին և աւագորեարն ամենայն և գիտնականիք և գնդապետք ենիչէրեաց . որովք մտեալ ընդ գուռնն Սողուդ չէշմէ գափուսու՝ և ընդ միջնադուռն , և երթեալ նստաւ հանդէպ դրան ներքինապետին սպիտակ ներքինեաց , այն է Ագ աղա գափուսու : Ետ կոչել զզենակիրն արքայի և ետ 'ի նա զկնիքն արքունի . և յետ սուղինչ սպահու գարձեալ եկն զինակիրն , և ընդ նմա գենպետն և ներքինապետն , և ասեն յՍուս գաֆա փաշա . « Աւետիս տեառնդ մերում , զի տէր մէր արքայ քեզ

տայ աւասիկ զինիքս ։ Ասէ յնոսաս  
Մուսդաֆա ։ « Ես ոչ վասն այդո-  
րիկ եկեալ կամ ։ շպակասէ ոք որ զիը-  
նիքդ առնուցու ։ ես եկի զի տեսից  
զարբայն Աէլիմ ։ և համբուրեցից զոսա  
նորա ։ զի զհաց և զաղնորա կերեալ  
է իմ ։ հսալա ածէք զնա արտաքս ։ զի  
բանք ինչ են իմ ընդ նմա ։ Զայս  
իբրև լուսան արքն՝ խոռովեցան յոյժ և  
գարձան ՚ի ներքս ։ և Մուսդաֆա կա-  
ցեալ մնացեալ ՚ի տեղւոջն ժամն ձիդս ։  
իբրև ոչ ոք երեկը՝ զայրացաւ յոդի  
իւր ։ և զայլ ոմն արձակեալ կոչեաց  
զնեընապետն ։ Կա իբրև եկն՝ գո-  
չեաց Մուսդաֆա ընդդէմնորա և ա-  
սէ ։ « Զի՞ է զի այսակի յասպարէք զիա-  
տարումն բանիս ։ և ընդէք ոչ հանէք  
առ իս զԱէլիմ արքայ ։ կամթէ չկմա-  
ցար զբանս իմ ։ Ասէ ներընապետն ։  
« Գիտասցէ տէրդ իմ զի նա չելանեմ  
ասէ ։ Յայնժամ յայտնեաց Մուսդա-  
ֆա զիսորհուրդ իւր և տսէ ։ և Երթասա  
ց Մուսդաֆա արքայ ։ զի իջեալ յալթո-  
ռոյն և երթեալ ՚ի ներքս հանդիցէ ՚ի  
հոդոց ։ քանզի ոչ է նա թագաւոր մեր  
առ այժմ ։ թերես եկեացէ ժամանակ  
զի ըստ կարգի թագաւորեսցէ և նա ։  
բայց այժմիկ Աէլիմ արքայ է թագա-

ւոր մեր , և նմա կարօտ է աշխարհս ,  
և ես վասն նորա եկեալ հասեալ կամ  
՚ի տեղւոջս ։ և ասէ ցիշխանսն որ  
շուրջ զիւրեն կային . « Կամիցիք իշ-  
խանքդ զԱէլիմ արքայ ։ և աղաղակե-  
ցին նոքա իբրև ընդ մի բերան . « Այս  
տէր , զարքայն Աէլիմ կամիմք մեղ ՚ի  
թագաւոր ։ — « Երթ ասկա , ասէ  
Մուսդաֆա ցնելըինապետն , և ած  
այսր զԱէլիմ ։ :

Իբրև եմուտ նելըինապետն անդ-  
րէն ՚ի ներքս , փակեցաւ գուռնն . և  
Մուսդաֆա փաշա ցասուցեալ ընդ-  
դործն աղաղակեաց և ասէ . « Զի՞ փա-  
կեք զդրունադ ։ : Եւ իբրև չէր ոք որ  
տայր նմա պատասխանի , սկսաւ բա-  
զում սպառնալից բանիւք կշտամբել  
զգնացս աւագանւոյն , զի յանձն ա-  
ռին ընկենոււլյաթուոյ զԱէլիմ։ :

Մինչդեռ Մուսդաֆա փաշա առ-  
դրան անդ ահագինս ատենախօս լի-  
նէր առ ժողովականսն , ՚ի ներքս յար-  
քունիսն ահագնադոյն աղետք գոր-  
ծէին : Եւ նախ ՚ի պատմել նելըինա-  
պետին առաջի արքային Մուսդաֆայի  
զբանս Ալմտարայ՝ ասէ արքայ լի  
ցասմամբ . « Ես ոչիշանեմ յաթոռոյ  
աստի . և զի՞նչ յանցանկ իցեն իմ . մի-

թէ դամուրս ինչ աշխարհիս մասնեցի  
թշնամեաց, կամ զո՞ր վնաս գործեցի.  
ահ ոչ, լու է ինձ աստէն իսկ մեռանել,  
քան իջանել աստի և ծաղը և ծանակ  
կալ: Ո՞չ ապաքէն դուք էիք որ բուռն  
ինձ արարէք ելանել յանդորր բնա-  
կութենէս և գալ այսր • արդ զի՞ է զի  
իջանել հրամայէք • այլ գիտեմ ես զինչ  
արարից ... ”

Իսկ անոպարս արքայն Սէլիմոր ոչ  
ինչ ոչ գիտէր զեղելոցն, յայնմժամու-  
բազմեալ ’ի վերայ ակմբին ընթեռնոյր  
մատեան ինչ, կամ որպէս այլք ամեն՝  
յաղօթս կայր • և ներքինապեսն մը-  
տեալ առ նա յեղսկարծում՝ ամէ •  
և յողովորդն եկեալ է տէր, և ինդոքէ  
տեսանել զքեղ • հրամայեա ելանել”:  
Ասէ ցնա Սէլիմ • “ Ո՞չ, և զի՞նչ խըն-  
դրիցեն յինէն • ապաքէն է նոցա թա-  
գաւոր, և չեն ումեք կարօտեալք, զի  
ոչ թողուն զիսյանդորր հանգստեան ”:  
Զայս և զայսպիսիս բազումն բարբա-  
ռեալ, իբրև ետես զի սնդեալ յամա-  
ռեալ է այրն ’ի բանս իւր՝ ել արտաքս  
'ի սենեկէն : Անդ առ դրանն կային ’ի  
դարանի արք երկոտասան ’ի մեծամե-  
ծաց արքունեացն, ոքք նոյնհետայն  
յարձակեցան մոլեգին ’ի վերայ Սէլի-

մայ : « Նորա զարհուրեալ 'ի դիստացն՝  
աղաղակեաց և ասէ . « Ահ ահ , խնայ-  
եցէք յիս , զի ոչինչ ոչ գիտեմ ես » .  
այլ փոխանորդ գանձապետին էած-  
նմա ասպառկ մի ուժդին , նեղըննա-  
պետն եհար զդաշոյն իւր 'ի լանջո նո-  
րա , և այլք ընդ երկոսին խափշիկ  
պահապանո Սէլիսմայ մարտուցեալք  
սպանին զնոսա , և յարձակեցան 'ի վե-  
րայ անմեղ արքային : Էր որ զմորուան  
փետէր , էր որ զդլուխ նորին կռիա-  
հարէր , և էր որ շատապ տաղնապաւ-  
յառաջոյ և 'ի թիկանց թրածեծ առ-  
նէր , մինչև տապալեցին զարի արքայն  
'ի գետին , որ գոչէր և ասէր . « Ահ ,  
անխայեցէք յիս , չգիտեմ զի՞նչ ինչ  
չար արարի ձեզ . ահ , անխայեցէք » .  
և մինչդեռ գաղանացեալ գահիճքն  
հարեալ 'ի վերայ նորա խեղդ ընդ պա-  
րանոցն արկանէին՝ ասէր . « Աւաղ ինձ  
և եղուկ եմեօ . զի բարիս արարեալ  
ժողովրդեան իմում՝ չարիս 'ի նոցանէ  
կրեցի . աւաղ » . . . . : Եւ մինչդեռ անէծս  
յաւագինս կարդայր 'ի վերայ չարագոր-  
ծացն՝ նորա պնդեցին զիսեղդանն ն երկ-  
ուստեք ձգտեալ ուժդնակի հեղձամիզ-  
ձուկ արարին զանմեղ արքայն զՍէլիմ ,  
զհայրն հասարակաց , զբարերարն աշ-

խարհի , զդրուատեալն յօտարաց և  
զմիրեցեալն յլւրոց հաւատարիմ ծա-  
ռայից . որք և ցարդ ևս ոչ առանց ար-  
տասուաց յիշատակեն զաղէտս աղ-  
նուասիլրտ արքային :

Ուր ուրեմն յետ երկուց ժամուց ան-  
ցանելոյ ել անդգամն ելքինավետն առ-  
Մուսդաֆա փաշա և ասէ 'ինելքուատ  
։ Ասացաք տէր , և չկամի ելանել , զի  
հիւանդ ևս է ։

Յայնժամը լի եղեւ Մուսդաֆա սըլտ-  
մառութեամբ և բարկութեամբ , և աղա-  
ղակեալ որոտաճայն սպաւնալէօք ասէ .  
։ Անօրէն խափշիկ , Եթէ չարիք ինչ  
սպատահեսցեն Սէլիմայ արքայի , օն և օն  
արասցեն ինձ երկինք , զամենեսին զձեղ  
բայց 'ի սուլդան Մահմուտայ 'ի սուլ-  
սուսերի կոտորեցից ։ Յայնմ սպահու-  
թելի եղեւ 'ի նելքուատ 'ի կանանցէն  
արքունի ահագին վայիւն և կանըլմա .  
զոր իբրև լուաւ Մուսդաֆա , վառեցաւ  
բորբոքեցաւ 'ի հուր բարկութեան . և  
հրաման ետ խորտակել զդրունսն , և  
կոփիւն սոսկալի դրանն հնչել մինչեւ 'ի  
հեռաւոր տեղիս : Զարհուրեցան պա-  
լատականիքն առհասարակ և ընթացեալ  
բայցին ինքնին զդրունս . եմուտ Մուս-  
դաֆա փաշա իբրև զկայծակն 'ի նելքս ,

և ընթացեալ նստաւ ՚ի գետնի առաջի մեծի ապարանիցն որ կոչի Արդօստասը : Աճասլարեաց զինակիրն արկանել վիաշային օթոց ազնիւ ՚ի բազմել . այլ նա փոքր միւս ևս և անդէն առ տեղեաւ ւըն սաստակեր զայրն . սակայն իւլիքն որ խուժեալ էին ընդ նմա ՚ի ներքու խափանեցին զնա : Այն ինչ սպասեալ մնայր Մուսդաֆա գալստեանն Աէլիմոյ , և ահա բերեալ ընկեցին առաջի նորա զցուրա գիտին տարաբախտ արքային սպասեալ ՚ի կապերտի : Զայն իբրև ետես Աէլմատըն իսւութեցաւյուգի իւր և շուշարեցաւ , և այլ յայլմէ եղեալ սկսաւ կոծել զանձն իւր , և մուըն չել սոսկալի ձայնիւ աւաղանաց . և առ սաստիկ ցաւոցն հրաման ետ կոտորել սպառել զամենեսեան որ յարքունիս անդ էին բաց ՚ի սուլդան Մահմուտայ : Այն ինչ իւլոտէին իւլիքն , և շփոթեալք ՚ի յանկարծադէպի իրացն անդիտանային թէ զինչ գործեսցեն , և ահա սրբնթաց վազիւք վիախչէր սուլդանն Մահմուտ կողմանէ ՚ի կողմն ընդ դաստիարակին իւրում՝ որում անուն էր Ամպէր աղա . քանիզի յետ Աէլմայ մեռանելոյն և զՄահմուտ կամէին սպանանել արիւն ըստուշտ սպաստականքն : Տեսեալ Մահ-

մուտայ զՄուսդաֆա վիաշա վառեալ' ի  
զէն և 'ի զարդ՝ երկեաւ յոյժ, զի ոչ  
ճանաչէր ընա • խկ նորա ընթացեալ  
փարեցաւ զոտիւք նորա և ասէ. « Ծա-  
ռայքո եմես տէր իմ արքայ» . և արքն  
որ ընդ նմա էին՝ գոչեցին իբրև ընդ մի  
բերան և ասեն. « Կեցցէ Մահմուտ ար-  
քայ » : Անտի դարձաւ Մուսդաֆա  
փաշա կոծել զմահն Սէլիմայ, և լու-  
ծեալ նստեալ յողը ցաւադինս՝ դգեր-  
արտօմին ուղիսօրէն իջուցանէր յաշացն  
այրն քաջ և յաղթանդամ, որպէս ա-  
ռիւծ մատակ որ զկորիւն իւր զդիակ-  
նացեալ կորզեալ իցէ 'ի ձեռաց ան-  
դութ որսողաց, և նստեալ մռնցիցէ  
յանտառին և զմայրս առհասարակ  
դողացուցանիցէ :

Խակ սուլդան Մուսդաֆա կարծիս  
'ի մտի եգեալ եթէ և կորսեր եղբայրն  
իւր Մահմուտ բարձեալ է 'ի կենաց,  
հրաման արար 'ի զէն ընթանալ ամե-  
նեցուն որ յաբքունիս անդ էին, զի զի-  
նու զօրութեամբ մարտ զնիցէ ընդ  
Մուսդաֆա վիաշային : Եմուտ առ նա-  
դենակեան և սոսէ. « Հրամայեա 'ի վան-  
դակն, զի թագաւորեաց Մահմուտ  
արքայ » : Գումարեցաւ յանձն իւր  
Մուսդաֆա և ասէ. « Զի՞նչ խօսիս »

աւաղլ իմոյ բախտիս ՞՞ + և առեալ ասցան զնա 'ի տօսախուան որ Զիմշերլիկն անուանի :

Ի վաղիւ անդր ուրբաթուն եկին ժողովեցան յարքունիս աւագորեարն և գիտնականք ամենայն, և Մուսդաֆա վահաշա հանդերձ ամենայն զօրքը իւրովը որք առհասարակ հրացանաւորք էին. և բարձեալ զդիսակն Սէլիմայ մեծաշուք հանդիսիւ տարան ՚ի Լալէլի ճամփաի և թաղեցին առ հօրն իւրում: Այս վախաննեան եղե խոհական և արի արքային Սէլիմայ, որ թագաւորեաց ամս ութուտան, և մեռաւ ամաց քառասուն և եօթանց :

Ի նմին աւուր չոդաւ Մահմուտ արքայ 'ի մզկիթ Այա սոֆիային. ապա զՍէմսար Մուսդաֆա վահաշա կարգեաց վէզիք մեծ, և ետ նմա հրաման և իշխանութիւն մաքրելոյ զաշխարհն 'ի չարասէր մարդկանէ: Եւ նա անդէն 'ի նմին իսկ աւուր ձեռն 'ի գործ արարեալկալու մի առ մի զամենայն զաւագորեարն, ոչ միայն զսպանողս Սէլիմայ, այլև զորոց կասկած ինչ դժկամակութեան աւսանէր՝ արտ աւելի քան զերեաւն և հինգ, և ետ գլխատել 'ի հըրասպարակի. և լուեաց աշխարհն առ

Ողբացին Օսմաննեանք զկորուստ մեծի փառացն իւրեանց ՚ի Սէլիմ, և յիրաւի, այլոչ անդիւտ էր կորուստն . և տեսչութիւնն Աստուծոյ սփոփեաց զնոսա տալով նոցին թագաւոր զո՞մ, որ ոչ միայն զառաքինութիւնն և զառութիւնն Սէլիմայ յանձին երեր, այլ և զոր ինչ ոչն արդեօք ուներ նաև զանվլանդ հասաւատութիւն ՚ի խորհուրդս, զմոհական ընտրութիւն իւրոց պաշտօնեից, զանակնառու արդարութիւնն առ յանցաւորս, և զմարդասեր զիջումն առ տկարս, սա ստացեալ կալաւ, և զարդիւնն ահա այս երեսուն և երկու ամ մեծամեծ գործովք յայտ յանդիման Եցոյց՝ սիրեցեալ յիւրոցն, և դրուատեալ յօտարաց . և զարտասուս ժողովրդոցն որ լացին զմահնորա՝ սըրբեաց . հօրամոյն նորին որդի Ապահւը Մէջիտ արքայ : Ճամ՛ է արդ խմբագրել աստանօր առ ժամայս կարճ ՚ի կարճոյ զգլսաւորագոյնս յաշխարհալուր գործոց արքային Մահմուտայ ըստ ստուգագոյն պատմութեանց ականատես պատմագրաց, և յարել ՚ի նոյն մասն ինչ կարեւոր զթագաւորելոյն Մէջիտայ արքայի :

Ողբացին Օսմանեանք զկորուստ մեծի վառացն իւրեանց ՚ի Սէլիմ, և յիրաւի, այլոչ անգիւտ էր կորուստն . և տեսչութիւնն Աստուծոյ սիովիեաց զնոսա տալով նոցին թագաւոր զոմն, որ ոչ միայն զառաքինութիւնս և զաւութիւնս Սէլիմայ յանձին երեր, այլև զոր ինչ ոչն արդեօք ունէր նա՝ զանվկանդ հաստատութիւն ՚ի խորհուրդս, զևոհական ընտրութիւն իւրոց պաշտօնէից, զանակնառու արդարութիւն առ յանցաւորս, և զմարդասէր զիջումն առ տկարս, սա ստացեալ կալաւ, և զարդիւնն ահա այս երեսուն և երկուամի՞ մեծամեծ գործովք յայտ յանդիման եցոյց՝ սիրեցեալ յիւրոցն, և դրուամեալ յօսարաց . և զարտասուս ժողովրդոցն որ լացին զմահ նորա՝ սրբեաց . հօրամոյն նորին որդի Ապտիւլ Մէջիտ ալբայ : Ճամ՛ է արդ խմբագրել աստանօր առ ժամայս կարճ՝ ՚ի կարճոյ զգլխաւորագոյնս յաշխարհալուր գործոց ալբային Մահմուտայ ըստ ստուգագոյն ալատմութեանց ականատես պատմագրաց, և յարել ՚ի նոյն մասն ինչ կարեւոր զթագաւորելոյն Մէջիտայ ալբայի :

՚ի բարձումն խավանարարացս , բայց  
թագաւոր ոք խմաստուն , յստակամիտ ,  
և անվլէհեր ձեռնարկու ՚ի մեծամեծս . . .  
թող բազմեսցի յայն աթոռ . Մէհէմմէտ  
ոմն , Բ , Աէլիմ ոմն Ա , Ալոլյման ոմն  
Ա . թող սատարեսցէ նմա խոհական  
խրատուք ոմն Խայրէտախն փաշա , ոմն  
Ախնան փաշա , ոմն Վէօվիրիւլիւ փաշա  
և նմանիք նոցին , և ահա տեսցին Օս  
մաննեանք կենցաղելանխտիր ընդ Եւրո-  
պացիս , նոցին վարել օրինօք զինուու-  
րութեան , բարգաւաճել զարուեստս  
և զգիտութիւնս , և համառօտ՝ այլա-  
փոխել բնաւ խակ զկերպարանս թա-  
գաւորութեանն ;

Ամբարձաւ Մահմուտ արքայ՝ ոչ  
զմից , այլ զբազմաց յանուանի թագա-  
ւորաց անտի կրելով յանձին զհանդա-  
մանս , և աանէր արդեօք ՚ի գլուխ զայն  
ամենայն փոփոխութիւն ցանկալի , եւ  
թէ էր նմա և ժամանակին յաջողու-  
թեափն լեալ ձեռնոտու :

Այլուր մատեանս երկարասկատումն  
արժան էր արձանադրել աստանօր , սա-  
կայն ՚ի ժամանակին կարի հուսկ լինե-  
լոյ , և ՚ի պատմաբանութեան արաւես-  
տին յանցելլի օրինաց բունադախիմք  
առ ժամաւոտել և թէթ զերևելլ

Երևելի արարուածո թագաւորիս մեծի,  
զմանումբըն հարևանցիկ արարեալ:

Պատմագրեացուք և զոր 'ի ժամանաւ  
կին վրդովմունս օսմանեան աշխարհին,  
որովք նախ սարսեալ և ապա կայկայ-  
եալ ամիացաւ հոյակաստ թագաւո-  
րութիւնն արքայիս Մահմուտայ. և յետ  
այնորիկ տեսցուք զմիջօրեայ պայծա-  
ռութիւնն աիրասպետութեան նորա և  
արժանաժառանգ որդւոյ նորին՝ յոր  
վայելեմքս զուարթամիտ և Երախտա-  
պարտ սրտիւ:

Քսան և Երից ամաց էր Մահմուտ  
արքայ 'ի թագաւորել իւրում. և յամ-  
սեանն օգոստոսի յաւուր մետասա-  
ներորդի յամին 1808 ածաւ ընդ մէջ  
զառասերն Երկասյրի: Կորատեսիլ իմն  
դէպք պատահէցին յայնժամ. զի մեծ  
վէզիրն Մուլսդաֆա Պայրագտար՝ տե-  
սաւ 'ի հանդիսի անդ շուրջ պատեալ  
յերեքարիւր Առնաւուտ զօրականաց  
վառելոց 'ի հրացան, 'ի սուսեր և 'ի  
գաշոյն, և ինքն 'ի ձեռին իւրում ունե-  
լով հրացան փոքր. և այս ամենայն հա-  
կառակ իմն էր օրինաց աշխարհին, որ  
'ի հասարակաց հանդէսս պատուիրեն  
անդէնս լինելամենեցուն, և ենիչերեաց  
անդամ գաւաղանս սպիտակս ևեթ ու-

*նել՚ի ձեռվն :*

Քաջ իւշամնւտ էր այրն Մուսդա-  
ֆա կարևոր պիտոյից կանոնաւոր զօ-  
րաց, զորոյ զիորձն ևս տեսեալ էր ՚ի  
վերջնում պատերազմին ընդ Ռուսս և  
զայն կարի գէսլ ժամանակ վարկանէր՚ի  
կատարումն խորհրդոց : Վասն  
որոյնախ առաջին զորոյ միանդամկաս-  
կած ՚ի մտի ունէր թէ հակառակէս-  
ցին ելց իւրացն, զնոսին հոդացաւ բառ-  
նալ՚ի միջոյ, զԴայեար փաշա ետ գլսա-  
տէլ և զՍէյիտ Ալի յաքսորս առաքել  
և զայլս ընկեց յիւրաքանչիւր պատուոյ,  
կարգեալ՚ի աեղիս նոցին զբամիզ փա-  
շա, զՊէհիճ էքինախ և զայլս ՚ի մուեր-  
մաց իւրոց :

Արդ խորհուրդ կալաւ Մուսդաֆա  
ընդ համախոհս իւր և տեսեալ զի յո-  
լովք ՚ի քաղաքականացն և ՚ի զմնուո-  
րական աւագաց մեծամեծո շահելով  
՚ի վաղեմի կարգաց զինուորութեանն՝  
չկարէին դիւրաւ հաւանել ընդ նորո-  
դութիւն այնպիսի, եդ ՚ի մտի հրաւի-  
րել ՚ի Կոստանդնուպոլիս զամենացն  
աւագ որեար պետութեանն, և յայտ-  
նելնոցա զիսորհուրդս իւր այս ինքն էր  
նորոգել զնախնի կարգս ենիչէրեաց,  
բաւնալ զզեղծմունս սպրդեալս ՚ի նո-

սա 'ի ժամանակին յերկարութենէ և  
'ի մեղկիչ ճոխութեանց, մուծանել 'ի  
նոսա զեւրոպացւոցն զինուորութեան  
զմարզս, և հաստատել անդէն վաղվա-  
ղակի օրինակի աղաքաւ գունդ մի զօ-  
րաց կանոնաւոր Աշյաբն անուանեալ.  
Քանզի վատահամբաւ եղեալ էր այնու-  
հետեւ անունս Կիղմամի Ճէտիտ :

Ի սկզբան ամսեանն հոկտեմբերի  
կոչեցան ամենայն բգեաշխիք և կուսա-  
կալք պետութեանն 'ի թագաւորեալ  
քաղաք անդր առ 'ի խորհուրդ 'ի մէջ  
առնուլ, որպէս ասէր Մուսդաֆա, .  
զիարեսոր ինչ իրաց . և որ չկարիցէ ոք  
ինքնին գլխովն գալ 'ի կոչն՝ արձակեսցէ  
զայր ոք իւր գործակալ և փոխանորդ :

Գային հասանէին այնուհետեւ 'ի կո-  
տանդնուալովս կողմնապետքն Եւրո-  
պիոյ և ասխակողման, կուսակալք և գա-  
ւառապետք մօտաւոր վայրաց քաղա-  
քին, կուսակալն Գարամանայ, և իշ-  
խանք և ցեղապետք հզօր տոհմիցն Զա-  
փան օղոււ և Գարա Օսման օղոււ ա-  
նուանելոց, ևս և Գատը փաշա արամեք  
մարտկօք իրու երեք հաղարաւ :

Խորամնեկ բգեաշխն Եանեայի Տէ-  
փէտէլէնիլ Ալի փաշա արձակեաց 'ի  
տեղի իւր նոուիրակ զոմն՝ հանդերձ սա-

կաւածեռն գնդաւ, որում և սկասուելը  
ետք քաջ զննել զամանայն, սակառած  
խօս լինել, և զբաղմայն կարծիս հաս-  
տատել: Բազումը ՚ի կուսակալացն  
Բուլղարաց նախանձաբեկը ընդ փառս  
Պայրագտարին՝ ոչ միայն չեկին ՚ի հրա-  
ւելըն, այլ և ոչ փոխանորդս առաքե-  
ցնեն: Բգեաշեգն կարուց, կարնոյ,  
Մուսուլայ, Պաղտատայ, և միջագե-  
տաց կարի բացականք էին. և կուսա-  
կալն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի փա-  
շա, քանզի չուներ Ենիչէրի դոք ՚ի գուն-  
դըս իւր, ոչ ինչ հարկ համարեցաւ դաշ-  
՚ի ժողովանդը:

Արդ իւրեւ ժողովեցան հրաւիրա-  
կանքն ՚ի մեծի սրահի անդ յասլարանս  
վէզիրին, նա շուրջ պատեալ յաւագա-  
նւոյն և ՚ի խորհրդական ատենակալաց  
պետութեան և ՚ի գլխաւոր օրէնսդի-  
տաց, կալաւ ատենաբանել անդանոր  
ահեղ ձայնիւն և խիզախ կերպարանօք,  
և առաջի արար նոցա իւրեւ ՚ի դիմաց  
ազբայի ութ գլուխս բանից որ յայս  
բովանդակէին, զի մի ևս լիցի զօրագրը-  
խաց Ենիչէրեացն կաշառովք ժամանել  
յայն պատիւ. զի ամենայն Ենիչէրիք  
անամուսին ՚ի ձմերոցս բնակեսցեն, և  
նոքա ևելթ ընկալցին զոռճիկս. զի մի

վճարեսցին ոռջիկքն տարածամբ։ զի  
շափ դիցի ոռջիկի և պարենի և զգես-  
տուց ենիչէրեացն ըստ վաղեմի կանո-  
նադրութեանց արքային Սիւլէյմանաց,  
և զի վարժեսցին նոքա ՚ի հրահանգո-  
վնուց կարևորաց ըստ օրինի այլոց  
Եւրոպականաց։ Եւ քանզի դժուա-  
րին իմն է, ասէ, բառնալ՝ ՚ի միջոյ վաղ-  
ընդ փոյթ զապականութիւնս զայսո-  
սիկ, կամք այս են մերոյ արքայի՝ զի  
աստատին առցին ընտրանաւ արուորա-  
գոյնք յենիչէրեաց և յամբոխէն ըստ իւ-  
րաքանչիւր կամացն ազատութեան, և  
մարզեսցին ՚ի վարժս Եւրոպական հրա-  
հանգաց, և յաւելցին սոքա ՚ի համար  
Սէյմէն անուանելոցն զօրականաց։ Ժո-  
ղովականիքն ամենեքեան իրեւ ընդ մի  
բերան գովելցին վասրհուրդն, զի ոչ ոք  
էր որ անդիտանայր զապառում բարս  
ենիչէրեաց։ վասն որոյ և առ հասարակ  
ձեռնագրեալ հաստատեցին զհրովար-  
տակն արքունի, և դենապետն ինքնին  
առանձին վճռաւ կնքեաց զիրաւունս  
դործոյն։

Սինէց ցայս վայր բազում խոհական  
զգօնութեամբ վարէր Մուստաֆա փա-  
շա, օժանդակեալ և յիւրոյին հանձա-  
րոյ և յօտարին խորհրդոց, և չէր ինչ

անյուռսալի հանելնմա'ի դլուխ զբործն  
զայն զմեծ: Այլ նա բարձրամտեաց  
յոյժ ընդ յաջողուածմն, և անփոյթ  
արար այնուհետեւ զկարեսոր խնամովք  
զգուշութեան, և վիոխանսակ ձեռնար  
կելց տակաւ ՚ի նորոգութիւն կարգաց  
ենիչերեացն՝ յինքն յանկուցանելով  
զջօրավարս նոցին հանդերձ օրէնքս  
դիտացն դատուք, վաղվազեաց մեծաւ  
խատութեամբ խլելև քակելզնացեալ  
ասկականութիւնն արմատացեալս ՚ի  
ժամանակացն յերկարութենէ: Եւ  
քանզի դրամոց պէտք էին ՚ի շուտա  
փոյժ կատարումն գործոյն, հարկ ՚ի  
վերայ եդ իշխանաց և զօրագլխաց շա  
տանալ երիր մասամբ առաջնոյ ռոճկին  
իւրեանց, և զնորդնակիր զօրականն ևս  
ոչ որպէս կարծելի էր նոցա վարձա  
տրեաց: և որ առաւելընդհարաւ յաշս  
ամբոխին՝ զի զնոր զայն գունդ ոչ էնի  
չերեացն ձմերոցս բնակեցոյց, այլ ՚ի  
ձմերոցս նորակարգ զօրականացն Աէլլ  
մայ բարձելոց ՚ի միջոյ, այն որ յիւս  
կիւտար:

Այսոցիկ աղագաւ թշնամացան ընդ  
Պայրագտարայ և բարեկամիք անդամ  
նորին, ևս առաւել երկոքին դատա  
ւորքն զօրաց, և պալատականքն առ-

հասարակ : Եւ ինքն իսկ արի աղքայն  
Մահմուտ չկարեր հաւան լինել ընդ-  
այնչափ խրոխտանս իւրոյ փոխանոր-  
դին :

Մուսոդաֆա փաշայեցեալ 'ի զօրու-  
թիւն վեշտասան հազար խուժանին իւ-  
րոյ՝ և յերիս հազարս Գատը փաշային,  
յընչացքերեր զամենայն բանս ամբո-  
խին և զաւագանւոյն : Եւ արդարեւ ա-  
հագինք իսկ էին արքն արիւնը ու ուշոք  
եկեալք 'ի տար աշխարհէ . սակայն թըշ-  
նամիք նորա հնարեցան խորտակել զզօ-  
րութիւնս նոցին, և գրգռեալշարժե-  
ցին զումանս 'ի բգեշնից եւրոպակող-  
ման, ընդ որս և զհամբաւեալքեաշինն  
Փիլիպակէի զՄոլլա աղա, ասպատա-  
կել 'ի սահմանս Վլահաց մօտ 'ի Ռուս-  
Շուդ : Աճապարեաց Ալէմտարն արձա-  
կել անդր արս վեց հազար յիւրոց ան-  
տի . նոքա իբրեւ հարան 'ի Մոլլայէն՝  
արձակեաց և զայլս հետ զհետէ մինչեւ  
չմնալոյ առ իւր աւելի քան զարս վեց-  
հազար :

Անզգուշութեան էր գործն . այլ  
անզգուշագոյն ևս գտաւ 'ի չպահել  
զարսն մնացեալս համախումք 'ի մի  
վայր, այլ թողուլ զնոսս վայրավատինս  
ընդ փողոցս քաղաքին :

Եկին հասին աւուրբք ծոմապահու  
թեան Շամաղանին. և 'ի ժողովել Տաճ  
կաց յամենայն գիշերս 'ի հասարակաց  
ժողովարանս քաղաքին, ոչ այլինչէ էր  
լմել յամենեցուն բերանոյ՝ եթէ ոչ  
բանս քըթմնջանաց և բամբասանաց և  
նզովից ընդդէմ Մուսդաֆայի. մինչեւ  
թղթեան անգամ հաստատել աստ և  
անդ. 'ի քաղաքին, յորս յայտնապէս  
սպառնային բառնալ ընդ հուպ 'ի միջոյ  
զՄուսդաֆա հանդերձ իւրովքն աւաշ  
զակուտ արամբք : Քանզի հարկ իսկ էր  
վաղ ընդ փոյթ զկնի տօնին թողուլ  
լքանել ենիչերեաց զկարդն վաղեմի և  
զանուն, և նորանորս 'ի տեղի նոցին  
յանձն առնուլ, և կամ վարատական  
գնալ ցրուել յիւրաքանչիւր երկիր  
հայրենի :

Ազդ առնելն Ալէմտարայ բարե-  
կամքն իւր և խրատ տային գնալ յԱր-  
բիանուպօլիս, ընդ իւր ածելով և զար-  
քայ և զեղբայր նորին զՄուսդաֆա +  
թողուլլքանել զՌուսաճուդ, և զարն  
իւր գարձեալ զանձամբ գումարել :  
Այլ նա խրոխատայեալ յանհոգս և  
մեղկեալ 'ի ժիր և 'ի գործունեայ ա-  
չալըթութենէ, ոչ ինչ անսաց նոցա :

Ասլա 'ի հնդետասաներորդի աւուր

ամսեանն նոյեմբերի, յուսոյ ՚ի վաղլւն  
տօն էր Տաճկաց՝ Գատըր կէճէսի ա-  
նուանեալ, վէղիրն ըստ վաղեմի սովո-  
րութեան չոգաւ ընդ երեկոյաց գեն-  
պէտին՝ ունելով ընդ իւր թիկնապահո  
ոչ ինչ աւելի քան զերկու հարիւր : Եւ  
իրեւ ելանէր անտի, տեսեալ զի հրա-  
պարակն ամենայն խռնեալ էր մարդ-  
կամք, հրամայեաց իւրոցն կազմ ու-  
նել զզէնս իւրեանց, և շախտիւք և մա-  
հակօք վանել յառաջոյ զարբոխն: Ժո-  
զովուրդն որ ՚ի տեսիլ ևեթ հանդի-  
սին թուէր հասեալ անդր՝ զարհուրե-  
ցաւ ՚ի սպառնալեաց անտի և ՚ի մահա-  
կէ պատուիրակայն, և վաղ ընդ փոյթ  
զերկիւզն ՚ի զայրոյթ վոխեալ գումա-  
րեցան գարձեալ ՚ի ժողովատեղի իւ-  
րեանց և ՚ի ձայն բարձր բողոք ունէին  
այնուհետև զարարուածոցն Մուստա-  
ֆայի :

Ընդ այն բարբառ աղաղակի գղոդե-  
ցաւ բաղաքն ամենայն խռուն բաղմու-  
թիւնք սպառազինաց գիմեցին առ զօ-  
րավարն ենիչերեաց անդր ընթացան և  
ոմանք յօրինագիտաց + և խորհուրդ ՚ի  
մէջ առեալ հաստատեցին խորակել  
նախ զպահանորդս Ալեմոտարայ, և մի-  
անդամայն յարձակել ՚ի վերայ նորին,

որ յայնմ պահու յանհոգս իմն կայք  
լիւրումն կանանցի : Ի յեղակարծ  
շփոթից անտի յահի լեալ արանցն Ա  
լէմոտարայ , ոչ յայլ ինչ ուշ կալան՝  
բայց 'ի զերծուցանել զանձինս իւ-  
րեանց փախստեամբ : Ի նմին ժամանա-  
կի մինչ չև հասեալ սպառազինաց յա-  
պարանս վեզիրին , ոմանք յենիչերեաց  
հուր հարին 'ի մերձակայ տունմ ըստ  
շնչելոյ հողմոյն սաստկութեան , որով  
ընդ հուրպ բորբոքեցաւ և պալատն մեծ :

Այն ինչ շտապէին պահանորդքն Ա  
լէմոտարայ 'ի շիջուցանել զ՛րդեհն , հա-  
սին 'ի վերայ նոցա ենիչերիք սպառա-  
զէնք վեց հազար , և խորտակեցին զնո-  
սա . և ապա շուրջ բոլորեալ զասպարա-  
նիւքն՝ չետուն բնաւ թոյլ ջրհանսածել  
կամ օդնականութիւնն ինչ հրդեհելոյ  
պալատանն հասուցանել : Այրէր տո-  
չորէր շինուածն ահագին իբրև զկա-  
տարս հրաբուղին լերանց . սոսկալի էր  
ճարճատիւն յարկացն և կործանումն  
պարսպաց , անպատմելի աղմուկ շիոթի  
պաշարելոցն , և աղետալի աղաղակ և  
կառաչ պահանորդաց և սպասաւորաց .  
որ 'ի դիմել իւրեանց կիսայրեացս 'ի  
փախուստ՝ խողլսողէին անդրէն 'ի տէ-  
ղուջն 'ի սրոյ ենիչերեաց : Անագան

դդացեալ էր զիրան Մուսդաֆա փաշա,  
և ոչ ևս էր հնար ապրանաց + ըուծաւ  
ըբաւ այնուհետեւ յընդաբոյս արութե-  
նին, և 'ի բուռն արկեալ զարկղ մի ա-  
կանց պատուականաց և քսակս ինչ ոս-  
կոյ, խոյս ետ ընդ երկուց ոմանց յըն-  
տանեաց իւրոց և թագեաւ յաղիւ-  
սակերտ աշտարակ մի փոքրիկ՝ զորիբրե-  
անկրոյթ պատսպարան պատրաստեալ  
էր յառաջագոյն 'ի պարտիզի անդ ապա-  
րանիցն, և ընդ աշտարակաւն ական հա-  
տեալ էր, և անցս գողուզի ճանապար-  
հի, և վառօդ և լուցկիս բազում հան-  
դերձեալ յականին :

Ի վաղիւ անդր 'ի շիջանել հրդեհին  
համարէին ենիչէրիք եթէ և Մուսդա-  
ֆա փաշա հրկեզ լեալ իցէ + այլ իւրե-  
տեսին զաշտարակն տակաւին ևս կան-  
դուն մնացեալ, յարձակեցան 'ի վերայ  
նորա, և սկան հրացանս ընդ լուսա-  
մուտան 'ի ներքս արձակել. և որք ընդ  
Ալէմտարայ 'ի ներքս անդ էին՝ մեծաւ  
քաջութեամբ զդէմկալան նոցա, այլ  
'ի վախճանի անկան մեռեալք, և ոմանիք  
ևս ընդ պատուհանն փախուցեալ զեր-  
ծան : Իբրև ետես Մուսդաֆա փաշա  
զի Ենիչէրիք ածին և թնդանօթ մեծ 'ի  
բախել զաշտարակն, և բազմութիւն

յոյժ՝ ի նոցանել խունեալ կայր՝ ի վերայ  
ականին զոր իւր խոկ հատեալ էր, հուր  
եհար ինքնին իւրով ձեռամբ յականն,  
և աշտարակն և սպաշտիչք առ հասա  
րակ ահագին ճայթմամբ ընդ օդու ի  
վեր ոստուցան ։ Խակ ինքն անդէն ընդ  
փլաստակաւն անկաւ մեռեալ:

Յանհաւրին խուռվութեան ժաման  
նակին սիւն հաստատութեան պետու  
թեանն եկաց բամիզ վիաշա՝ որ ծովա  
կալ էր յայնժամ: Խրբե աղդ եղեն նմա  
իրքն՝ գումարեաց վաղվաղակի զամեն  
նայն սպայս իւր և զզօրականս, և երդ  
մնեցոյց զնոսա՝ զսել այլ ումեք բայց  
արքային հրամանի ։ Միաբանեաց ընդ  
իւր զզօրագլուխ թնդանօթաձիգ զօ  
րացն, և զնորընտիր գունդսն կոչեաց  
՚ի ձմերոցաց նոցին, և հրամայեաց նաւս  
երկուս մեծամեծս ածել կացուցանել  
հանդէս ապարանից զօրավարին ենիչէ  
րեաց, և հարկանել զնոյն արձակմասմբ  
ումբայ անդադար: Կոչեաց ՚ի թիկունս  
զգաստը վիաշա՝ որ իւրովք հազարքն  
կայր յիւսկիւտար ։ արձակեաց ընդ ա  
մենայն Ճանապարհս որ հանեն ՚ի թա  
գաւորեալ քաղաքէ անտի յԱզրիս  
նուազօլիս և ՚ի Սիլիվրի արս, զի զորս  
միանդամ գտանիցեն յեն: իչերեաց՝ ընդ

առւր անցուսցեն : Ետ ևս համբաւել՝ ե-  
թէ Պայրագտարն փախառեամբ դեր-  
ծեալ՝ ի հանդերձ կանացի, և զգօրմն իւր  
վերատին զիւրեա ածեալ հանդերձ բաղ-  
մութեամբ այլ ևս զօրացն գլամէ գայ ՚ի  
կոստանդնուպոլիս այլոչ ինչ զարհու-  
րեցան Ենիչերիք • քանզի թիւ համօրէն  
Սէյմէն անուանելոցն զօրաց ոչ ինչ ա-  
ւելի էր քան զտամն հազար :

Մահմուտ արքայ չկարէր գորովել  
՚ի Պայրագտարն՝ որ իւր իսկ ընդդէմ  
իշխեաց բռնանալ • սակայն խոհական  
խորհրդով հարկ համարեցաւ զնորա  
կողմն ունել առ ժամն, զի և անդէտ  
էր անցիցն անցելոց ընդ նա : Հրաման  
ետ պալատականաց ամենեցուն՝ ի ղէն  
ընթամանալ • կոչեաց ՚ի ներքս զնորընակո  
գունդսն, և կարգեալ զնոսա ՚ի վերայ  
պարսպաց ՚ի ցամաքակողմն կոյս՝ հրա-  
մայեաց վարել հրացանօք զամենեսին  
որ անդը մերձենացեն • և Գատը փաշա  
իւրով գնդաւն եկն եմուտ յառաջին  
գաւիթ անդը ապարանիցն աղքունի :

Ի վաղիւ անդը որ օր վեշտասան էր  
նոյեմբերի, յայգուէ մինչև ցընդերեկս  
հրձիդ եղեալ նորընասիր գնդացն յենի-  
չերիս անդը, վանեցին զնոսա • և երկո-  
քին նաւքն ոչ դադարէին ՚ի հարկա-

նելս զտուն զօրավարին Ենիչերեաց և  
զամենայն ամբոխն որ ընդ այն տեղիս  
յածէին։ Միայն աւանք քաղաքին յան-  
դորրու կային, և թնդանոթաձիգ զօրա-  
կանքն 'ի պատմէշս և 'ի ձմերոցս իւ-  
րեանց զկայ առեալ մնային իրայն կա-  
տարածի։

Սկսան այնուհետեւ և Ենիչերիք զան-  
գիտել և սարջանալ՝ զի վաղ յայտնեցին  
զիսորհուրդս իւրեանց։ Զայն իբրև գի-  
տաց Բամիզ փաշա, քարոզ կարդաց  
թողութեան ամենայն Ենիչերեաց՝ բայց  
'ի զօրավարէ նոցին։ Այլ Գատը փա-  
շա ոխերիմ թշնամի Ենիչերեաց՝ խոր-  
հուրդ ետ յարձակել 'ի խռովիցն, և  
հարկանել կոտորել զնոսա 'ի սուր սու-  
սերի, 'ի խրատ զգուշութեան ամենայն  
ժողովսդեանն մի ևս այլ յայնալիսի ո-  
ճիրս մտաբերել։ Աբբայ հաւանեալ  
եր ընդ խորհուրդ ծովակալին։ իսկ  
Գատը փաշային թոյլ ետ ցածուցանել  
և թ զաղմուկն առանց ինչ մեծի հա-  
րուածոց և հրկիվութեանց։

Ել Գատը փաշա ընդ այգն չորեքհա-  
զար արամբք և չորիւք թնդանոթօք յա-  
պարանից արքունի։ և յերիս առաջա-  
բաժանեալ զօրսն՝ անհնարիննախճիրս  
դործեաց յենիչերիս, և լցան վողոցք

քաղաքին առ հասարակ դիմակամբք կո-  
տորելոց ։ զի զաղաղակ բարձեալ գո-  
չին Սէյմէնքն ։ «Ո՞ւր իցեն ենիշերիք ։  
Եկեսցեն կացցեն ՚ի միջի, զի մարտ դի-  
ցուք ։ և զորս միանդամ ընդ առաջ  
սպատահէին՝ անդէն ՚ի աեղւոջն դիա-  
թաւալ կացուցանէին ։

Եհաս Գաար վաշա մինչև ՚ի ձիար-  
ձակարանն և վանեաց զամբոխն որ շըր-  
ջափակեալ կայր տակաւին զսողարա-  
նիւք վէզրին ։ և թողեալ անդ հա-  
տուած մի ՚ի զօրացն իւրոց, զմնացեալմն  
եռյերիս գունդս բաժանեաց ։ զմին ար-  
ձակեաց յԵտիգուլէ, զմիւսն ՚ի մզկիթն  
Սիւլէյմանլիէ, և զերրորդն ինքնին ա-  
ռեալ գիմեաց ՚ի տուն զօրավարին ենի-  
չէրեաց ։ սպատուեր տուեալ և այլոց՝  
անյասպաղ վճարել զգործն յոր եր-  
թային, և գալ ժողովել առ իւր ։

Այլնոքա զակատեալք զհետյակիրշ  
տակութեանց, մոտանէին ՚ի տունս  
տունս և սուր՚ի վերայ եգեալ կոտորէին  
յանինսայ զամենեսեան զարս և զկա-  
նայս, զծերս և զմանկունս ։ Իբրև տէ-  
սին ենիշերիք զգործս նոցա և զցումն՝  
քաջալերեցան, դունդ կազմեցին եյար-  
ձակեալ կոտորեցին զաւարառուսն զայ-  
նոսիկ ։ յորոց վերայ և քաղաքացիքն ՚ի

վերուստ 'ի պատուհանից խրեանց հո-  
սէին զամենայն որ լինչ 'ի ձեռս անկա-  
նէր նոցա, ոմն վիրգս, ոմն մահակս, և  
ոմն խղ և ձէթ եռացեալ. որով բոր-  
բոքեցան 'ի տեղիս տեղիս և հրդեհք  
բազումք :

Խակ երբեակ դունդք Գաատը փաշային  
դարձան յետս, և զերծան նախ 'ի ձի-  
արձակարանն, և ասկա յարտաքին հրա-  
պարակ ասպարանիցն արքունի. ուրանօր  
մեծաւ քաջութեամբ մաքարեալ ընդ  
ենիչերիս՝ վանեցին զնոսա առ տե-  
ղեաւն. այլնոքա երթալով երթային և  
աճէին 'ի բազմութիւն, ոլք և հրձիդ  
արարին զձմերոցն Այա սոֆիայի, և ընդ  
նմին զամենայն զփողոցն զայն՝ որ մի էր  
'ի մեծամեծ թաղից քաղաքին : Մահ-  
մուտ արքայ որ յարքունեաց անտի  
դէտակն ամբարձեալ 'ի զնին կայր աղե-  
տալի անցից հրդեհին՝ պատուէր հրա-  
մանի արար առ Գաատը փաշա դադա-  
րել 'ի կռուոյն, և առ զօրավարն ենիչե-  
րեաց հրովարտակս արձակէր՝ զամենայն  
փոյթ 'ի մէջ առնուէ առ. 'ի զառաջս  
ունելց զհրդեհին, ապա թէ ոչ մա-  
հու մեռանիցիս ասէր : Կ նմին ժամու-  
դադարեցին հրձդութիւնք պալատա-  
կանայն յենիչերիս, և զօրավար նոցա

վութոյ սկզբութեամբ հասուցեալջըր  
հանս և շիջուցիչս՝ ճգներ խափուցա-  
նելզբոնութիւն հրդեհին. և եթէ չէին  
հրապարակըն և մղկիթք, քաղաքն ա-  
մենայն 'ի մեծի վտանգի կայր հանդերձ  
պալատամբն :

Այնչափ խնամք թագաւորին և ևս  
զայրացուցին զիսառնամբովս խուժան  
ապատամբացն. որոց դիմեալ 'ի մեծ  
դուռն ապարանից արքունի՛ սոլառնա-  
լից գոչմամբ լուտային ընդդեմ պալա-  
տականաց և արքայի խել գլխովին. և  
ոմանք ևս զաղաղակ բարձին՝ որպէս թէ  
կամիցին զթագաւորել Մուսդաֆայի :  
Յայնժամ որ շուրջն կային զարքայիւ-  
տուաւել ևս բռնադատէին զնա 'ի կա-  
տարել զիսորհուրդ իւրեանց՝ զոր յա-  
ւուրց հետէ անդադար տային նմա,  
բառնաւ 'ի միջոյ զեղբայրն իւր զՄուս-  
դաֆա՝ յոյր սակս մարտնչէին ենիչէ-  
րիք : Եւ յայտ ևս եղե, զի սուլդան  
Մուսդաֆա ընդ ձեռն չէյպէթուլ-  
լահ գշնոյին թուղթս երիս ինքնագիրս  
առաքեալ էր ցայնժամ առ ենիչէրիս,  
սադրելով նոցա սպանանել զՄուսդա-  
ֆա փաշա, ընկենուլ յաթուոյ զար-  
քայն Մահմուտ, և զանձն իւր ամ-  
բառնաւ վերստին . և խոստանայր նոցա

դրամն երկու հաղարքսակաց : Զայս  
թուղթ իրեն ընթերցան 'ի պաշտան  
անդ , 'ի հրամանէ արքային յարձա-  
կեցան 'ի վանդակ անդը և սպանին  
զՄուսդաֆա :

Յայնմ պահու մինչդեռ ամբոխն  
զհետ էր յուղելյաւերակս ապարանից  
վեղիրին զուկի և զարծալթ , առ ոտակը  
աշտարակին փոքրու գտաւ դուռն մի եր-  
կաթի . զոր իրեն բացին՝ տեսաւ սենեակ  
մի , և 'ի նմա դիսակունք երեք . յորոց  
մի էր նա ինքն Մուսդաֆա փաշա , և  
առ նոքօք դնէին քսակը ոսկւոյ և ար-  
կեղք ականցն պատուականաց : Ազգ-  
եղւ գիւտն վաղվաղակի առ զօրավարն  
ենիչըեաց , որ իւրովքն հանդերձ ակն-  
կալեալ մնայր ցայնժամ արշաւանին  
Ալէմտարայ 'ի քաղաքն արտաքուստ .  
վասն որոյ իննդացին առ հասարակ , և  
տոռն զոտից գիսականն արկեալ քարշէ-  
ցին մինչև 'ի հրապարակն Ելթմշտանի ,  
և ժամն հինգ կախեալ զոտիցն՝ առա  
իջուցին զնա և տարեալ ընկեցին 'ի փոս  
մի արտաքոյ Ետիգուլէին :

Յայնժամ լքան պարտասեցան բա-  
րեկամք և կուսակիցք Ալէմտարայ . և  
Ալյմէնքն անուանեալք և զօրականիք  
գատար փաշային առ հասարակ արկին 'ի

բաց զգելնս իւրեանց՝ Եղբարս իւրեանց  
կոչելով զենիչերին, և սպառնացան  
ևս 'ի կորուստ մատնել զԳատը փաշա և  
զծովակալն Ռամիզ, որ վաղու ևս աճա-  
պարեալ էին 'ի փախուստ : Քանդի  
Մահմուտ արքայ ինքնին ինայեալ  
յարմն՝ ասաց նոցա մտանել 'ի նաւն  
սպատրաստական և խուսել 'ի քաղա-  
քէն : Սակայն ենիչերիք ընթացեալք  
յասկարանս նոցա, հուր հարին, և  
դինչն առին յաւարի :

Ուրբաթ էր օրն, և հարկ 'ի վերայ  
կայր 'ի մղկիթ ելաննել արքայի : Մին  
իրի եմուտ զօրավարն ենիչերեաց առ-  
արքայ + և մինչ չե նորա բարբառեալ  
ինչ էր գոչեաց արի արքայն զայրագին  
ընդդէմ նորա և ասէ . « Մինչև ցեղք  
ոչ դադարիցէ յանդուգն անդպամու-  
թիւն և ասկերասան խժդժութիւն ե-  
նիչերեացդ . և յորոց իրաւանց այսչափ  
մահունիք գործեցան և արիւն անսպարտ  
հեղաւ 'ի գետին : Միթէ ես ինչ հնարեցի  
զԱկմինացն գունդս, կամ թէ վեղիքն  
յանձնէ ինչ հանձնարեաց զնորաձեռւ-  
թիւնս զայս . ո՞չ ապաքէն համօքէն ա-  
մենայն իշխաննք և պետք աշխարհիս, և  
ենիչերիքդ իսկ գլխովին հաւանեալ  
հաճեցայք և բան ետուք, և երդուայք

ևս 'ի գլուխս ձեր ։ և ցուցեալ նման  
զթուղթ դաշինն ասէ։ «Ո՞չ ահա ձեր  
Ենիչըեացդ է կնիքս։ Այլքաջ իսկ 'ի  
վերայ հասեալ ծանեայ ես զիտրհուր  
դրս անզգամութեան ձերոյ զի զԱԷ  
լիմարքայ սպանիք, և զՄուսդաֆաար  
քայ ետուք սպանանել։ և արդ ես մի  
այն մնացի։ ոչ այդպէս, այլ ահա և ես  
ինքնին իսկ գեղամահ ելանեմ'ի կեն  
ցաղոյս, և գուք արարէք զոր ինչ և կա  
միք ։ Զայս ասացեալ բուռն Եհար 'ի  
բաժակ օշարակին։ այլզօրավարն աղա-  
ղակեաց անդէն, և ընթացեալ յափը-  
տակեաց 'ի ձեռանէ նորա զբաժակն և  
Եհար զգետնի ասելով։ և Զի՞ գործես  
տէր արքայ, մի տէր ։ և անիկեալ համ-  
բուրեաց զոտս նորա, և յաւել խօսել  
առ նա բաղումբանս ողոքանաց։

Յայնժամ ասէ ցնա արքայ։ «Ելից  
ես 'ի մզկիթն։ այլ թէ տեսից յուղով  
անդ զինեալ զոք, մեռանիմ 'ի տե-  
ղողն ։ Ել վաղվաղակի զօրավարն ար-  
տաքս, և ետքարող կարդալ ընդ ամե-  
նայն փողոցս քաղաքին, եթէ և Ահա  
կալաք զԳատը փաշա և զԲամիզ փաշա  
և տարաք յիշմէյտանի, և 'ի ցից ունիք  
հանել զերկուին միանդամայն։ հապա  
որ ենիչըի ոք իցէ՝ անդը դումա-

ըեսցի՞՞ : Եւ 'ի սուտ համբաւոյն պատրեալք ընթացան 'ի տեղին ոչ միայն ենիչերիք, այլև 'ի քաղաքացեաց անտի անհամար մարդիկ : Յայնմ սկահու եւ արքայ 'ի մզկիթն, և գարձաւ անդրէն, և ետես և ոչ զոք :

Յետ այնորիկ քարիձին ենիչերիք ըդդիակն սուլդան Մուսդաֆայի, և տարեալթաղեցին առ հօրն խրում: և չես ևս զիջեալ 'ի յախուռն լըբութենէ իւրեանց՝ գարձան յարքունիս, և սկահանչչին տալ 'ի բուռն զայս ոք և զայն 'ի պալատականաց + սակայն ոչ ինչ դըրդուեցուցին զարքայ յարիական հաստատութենէն + զի ընկալան 'ի նմանէն պատասխանի + « Չտամ ես ձեզ և ոչ զոք + և թէ մեղ ինչ իցէ ուրուք յիմոց պաշտօնէից, կարող իսկ եմ ես ինքնին պատուհասել զնա՞ : Եւ նոքա պապանձեալ գարձան յիւրաքանչիւր տեղիս :

Իսկ ապա խորհուրդ 'ի մէջ առեալդ լսաւորացն 'ի զօրագլուխս ենիչերեաց՝ խնդրեցին զներումն յարքայէ, և երդուան նմա զհաւատարմութիւն անդրժելի, և դենավետն հանդերձ համօքէն օրինականացն դասու խնդակից եղև արքայի վասն խաղաղութեան

պետութեանն։ Զնոյն և ամենայն  
բգեաշխք և կուսակացք արարին։ և թէ  
ալէտ ոմանկը՝ ի նոցանէ փորձեցին դար-  
ձեալ ձեռնառու լինել՝ ի ծածռել կու-  
սակացն Ալէմոտարայ, այլուչինչոչկա-  
րացին վճարել, և հզօրագոյնքն՝ ի նո-  
ցանէ յետ սակաւուց բարձան՝ ի միջոյ։  
Քանզի Շամիզ փաշա՝ որ բնիկ էր՝ ի  
Խրիմէ, փախուցեալ անկաւ՝ ի Ռու-  
սաստան։ Գատը փաշա յայլակերպու-  
թեղեալ փախեաւ յիկոնիոն, և խորհեր  
դարձեալ զօրաժողով լինել՝ ի ջնջումն  
Ենիչերեաց, այլանկաւ՝ ի բուռն և նա  
և չարամահ եղեւ։ Ալի Էֆէնաի և Պէհիճ  
Էֆէնաի ամիսս ինչ ճողոսդեալ զան-  
ձինս՝ ի ձեռաց թշնամեաց իւրեանց,  
ի լուր թողութեան Եղելց յանցա-  
նացն՝ ի վեր երևեցան, և խեղդամահ  
Եղեն։ Եւ ահա զայսօրինակ վախճան  
Եղեւ մեծի խուռվութեանն՝ որպիսի չեր  
երբէք երևեալ՝ ի կոստանդնուպօլիս։  
Յետ այնորիկ հաստատեաց Մահ-  
մուտ արքայ զաւագորեարն յիւրաքան-  
չեւը իշխանութիւնս ։ զինիքն արքունի  
ետ առ ժամն ցԱհէհէմմէտ փաշա, և  
զԱհէիս Ալի փաշա կարդեաց վերստին  
՝ ի ծովակալութեան իւրում։ և հրա-  
ման ետ վաղլաղակի ձեռն՝ ի գործ առ-

նել՝ի շինուած ապարանից վէղիրին և  
այլոց հրդեհակէզ աեղեաց։ Հրաւի-  
րեալ ապա'ի կայսերէն Ռուսաց'ի հաշ-  
տութիւն խաղաղութեան, արձակեաց  
'ի քաղաքն Եաշ պատգամաւորս 'ի գի-  
մաց իւրոց զբէիս էֆէնտին Ղալիպ փա-  
շա և զՄուրատ Մոլլա, և ընդ նոսա  
թարդման մեծ զԾիմիթրացքօ Մուրուզ։  
Այլ պատ 'ի պատ հնարք գեսպանացն  
Անդղիացւոց և Աւստրիոյ յապաղեցին  
զիրսն քանզի ուշ եգեալ ջանային սո-  
քա 'ի թշնամութիւն գրգռել զՕսմա-  
նեանս ընդդէմ գաղղիացւոց և Ռու-  
սաց՝ այն ինչ տակաւին հաշտելոց ընդ  
միմեանս։ Իսկ իրքն 'ի մի վայր Եկին  
պատգամաւորք Ռուսաց և Օսմա-  
նեանց, կոմմն գրողուովաքի հիմն սպայ-  
մանաց հաշտութեանն զայս եդ, զի ա-  
մենայն երկիրն որ յայնկոյս Դանուբայ՝  
'ի ձեռու Ռուսաց մնացէ։ Եւ 'ի պնդել  
Օսմանեանց՝ եթէ կարի իմն է պահան-  
ջումնդ և հակառակ կամաց մերոյ ար-  
քայիս, լուծաւ ժողովն, և Մահմուտ  
արքայ ակամայ կամք հրաման ետ անդ-  
րէն զէն առնուլ և վանել զՌուսս 'ի  
սահմանաց աշխարհին։

Յայնմ ժամանակի գժտութիւն մեծ  
կայր ընդ կուսակալս ափանցն Դանու-

բայ և ընդ կուսական Ռուսանուգայ՝ ու  
ըում Քէօսէ Քետհեա անուն էր։  
Քանզի սա համախոհ և տեղակալդու-  
լով Ալէմտարայ՝ բազում պատուասի-  
րութեամբ ընդունէր զկուսակիցս նո-  
րին զիախուցեալս՝ ի Կոստանդնուպօլ-  
սոյ որոյ վասն ատելի Եղեալքէշից  
կողմանցն մարտ ևս եղ ընդ նոսա և ՚ի  
վախճանի յանհնարս մուեալ հատուա-  
ծեցաւ կուսակցօքն իւրովք առ Ռուսս  
՚ի Պուքրէշ, և անտի անց ՚ի Ռուսիա:  
Յայնժամ զօրաժողով Եղեալ կուսա-  
կալաց կողմանցն մարտեան ընդ Ռուսս,  
այլ վանեցան ՚ի նոցանէ, և զի ենիչէ-  
րիք զմէզիրաւն արկանէին զմեղն, էառ  
արքայ ՚ի նմանէ զկնիքն և ետ ցեօթա-  
նասնէմին Եռուսուֆ փաշա : Որոյ հա-  
սեալ յաշխարհէն բարձր Հայոց ՚ի Կոս-  
տանդնուպօլիս՝ զօրաժողով Եղե դար-  
ձեալ զօրաց բազմաց, և դիմեաց ընդ-  
դէմ Ռուսաց :

Մինչդեռ Եռուսուֆ փաշա բանակ  
հարեալ կայր առ Ալիլսատրաւ, զօրա-  
վալք Ռուսաց՝ որ էին Բագրատիոն իշ-  
խան, Լանժքուոն, Մալքով, Փլաթով և  
Միլուստովիչ, առին զբազում ամրոցս  
որ առ Դանուբաւ և ՚ի ծովեղերին,  
զիսագճա, զՌուլցա, զՄաչոն, զհըւ-

շովա , զիսմայիլ և զիսպայիլ : Այլ ՚ի  
յարձակիլ բագրատինի ՚ի վերայ բա-  
նակին Օսմանեանց՝ հարաւ խորտակե-  
ցաւ ՚ի նոցանե չարաչարյոյժ և ՚ի փա-  
խուստ դարձաւ , և անկան ՚ի Ռուսաց  
յայնմարախ ողիք տասն հազար :

Եռւսուժ փաշա աւետաւորս յաղ-  
թութեանն արձակեալ ՚ի Կոստանդ-  
նուսպօլիս՝ մեկնեցաւ ՚ի ձմերոց յամնուրն  
Ըստմա . ուր և հիւանդացաւ , և յոլովք  
՚ի զօրաց նորին դասսալիք եղեալ դար-  
ձան յիւրաքանչիւր տեղիս , և մնացին  
առ նմա արք ոչ ինչ աւելի քան զքա-  
ռասուն հազար :

Յայնմ ձմերայնի առեալ Գաղղիա-  
ցւոց զվեննաս , և խաղաղութիւն արա-  
բեալընդ Գերմանացիս , յորդոր եղեն  
և Օսմանեանց հաշտելընդ Ռուսս : Աա-  
կայն Մահմուտ արքայ իրազեկ եղեալ՝  
եթէ ոչ դադարեն Ռուսոք զօր դու-  
մարել ՚ի սահմանածայրս աշխարհին ,  
պարտ անձին վարկաւ հանդերձել կազ-  
մել վերստին ՚ի մարտ պատերազմի .  
ստուարացոյց զբանակ վէզիրին , և բազ-  
մացոյց զտորմիդ նաւուց իւրոց , և  
զՍէյխտ Ալի փաշա ընկեցիկ արարեալ  
ամեարձ փոխանակ նորին զԴայեար  
փաշա :

Ընդ այն ժամանակս Սերվացիք և  
Պոսնացիք պատեհ առեալ զպատե-  
րազմն Ուուսաց՝ վտարաննջեցին յօսմա-  
նեանց, և սկսան մարտ դնելընդնոսա.  
այլշահէցան գողցես և ոչ ինչ, և կը ե-  
ցին զեան բազում, և զաշխարհն իւ-  
րեանց կոխան եղին ոտից զօրացն Օս-  
մանեանց որոյ վասն և յոլովք ինոցանէ  
պարտասեալք յանօդուտ արարուա-  
ծոցն ցածէան յըմբոստութիւնէ իւ-  
րեանց մանաւանդ զի և Ուուսք ոչ որ-  
պէս խոստացէալն էին՝ սատարեցին  
նոցա զօրօք և դրամովք Բայց միայն իշ-  
խանն Սերվաց Զէոնի Եօուկի անուտ-  
նեալնիզակակից երբանակին Ուուսաց  
արամբք երեքհազարօք:

Ի դալ միւսոյ ամին մինչդէռ երկուս-  
տեք մեծամեծ պատրաստութիւնք պա-  
տերազմի գործէին, կարօտութիւնն մեծ  
էր 'ի Կոստանդնուպոլիս ցորենոյ և  
այլոց պարենից, պատահէցաւ և հրդեհ  
մեծ յամնեանն ասպիլի 'ի Պէյօզու, և  
այրեցան տունք աւելիքան զերկու հա-  
զար ։ և ենիշերիք որ անշուշտ պատ-  
ճառք էին բորբոքելոյ հրդեհին՝ բա-  
զում վիշտ և կեղեքանս հասուցանէին  
բնակչացքաղաքին, մինչև հրաման տալ  
արքայի՝ զի ամենայն ումեք համարձակ

լիցիբոննութեամբ վանելզրոննութիւն։  
Զհետ ամսոյ երկուց դուժեաց և ձա-  
խողել իրաց պատերազմին, և առնուլ  
Ռուսաց զԱլիցատրէ և զայլքազումտե-  
ղիս, և գերելնոցա զՓէհլիվան վաշտ,  
և պաշարել զբանակ վէզիրին մերձ՝ ի  
Չումնա. և անկան ամենեքեան՝ ի վա-  
րանս տարակուսի։ Միայն անընկՃելին  
՚ի վտանգաց արի տրքայն Մահմուտ ոչ  
ինչ կասեալ յաներկմիտ հաստատու-  
թենէ մոտացն, զամենայն փոյթ՝ ի մէջ  
էառ. կուտել գարձեալ զօր բազում,  
ժողովել արծաթյոյժ, և խրախուսել  
զազդնքաջալերհրուտակօք՝ ի պաշտ-  
ապանութիւն օրինաց և աշխարհինյերե-  
սաց թշնամեաց. և խոստանայր ինքնին  
անձամբ առաջնորդել նոցա ՚ի գլուխ  
բանակին։ Մակայն գենապետն և այլք  
յաւագորերոյն խիթացեալ՝ ՚ի չարա-  
միտ ենիչքրեաց՝ խսկանեցին զարքայ  
՚ի խորհրդոյ անտի։ Առ նոցին երկիւ-  
ղի և Զափան օղլու և Գարա Օսման օղ-  
լու քսան հազարօք իւրեանց ոչ ընդ  
կոստանդնուպօլիս՝ այլ ընդ այլ անցին  
՚ի բուն բանակին։

Մահմուտ արքայ ոչ ինչ թուլա-  
ցեալ՝ ՚ի հանդերձանաց պատերազմին՝  
որ յԵւրոպա, իմոյթ մէծ կալաւ ՚ի նմին

ամի նկուն առնել և զվահապիս՝ որ  
բռնացեալ էին յԱրաբիա, և տիրապե-  
տեալ երկոցուն քաղաքացն Մէքքէի և  
Մէտինէի:

Ոչ անտեղի թուի ցուցանել աստա-  
նօր սակաւուք զծածուկ զօրութիւնն  
որ ընդ ամսյուլովս շարժէր զամենայն  
անիւս տէրութեանն և ածէր 'ի գլուխ  
նորա զամենայն եղեռն: Մահմուտ ար-  
քայ 'ի դահակալեն իւրում զամենայն  
ինչ դասնէր վեր 'ի վայր առ մեղկու-  
թեան Սէլմայ աւագանին ասլակա-  
նեալ, զօրականն ըմբոստ, սաստ իշխա-  
նութեանն յոցնէ, կուսակալք և պետք  
կողմանց կողմանց ապստամբք, ենիչէ-  
րեք յետ ընկենլոց զՍէլիմ և ամբառնա-  
լս զՄուսդաֆա՝ տիրացեալք պետու-  
թեանն: Սէլիմբազմահմուտ լեալ յու-  
թուտամնամեայ թագաւորութեանն  
վկալակաց և 'ի թշուառութենէն, մինչ-  
դեռ նա և Մահմուտ տակաւին ար-  
քայորդի՝ 'ի ներքս անդ արդէլեալ կայ-  
ին, իրատ տայր նման, թէ և կայ քեղ  
թագաւորել, որդէակ, զիամնամութիւնն  
եղբօրքոյ ոչ ժառանդէ զաթուն: այլ  
դու իբրև առցես զգահնի, մի հաւասար  
սկաշտօնէիցդ՝ անձամբ տես և քննեա  
զամենայն: օրինակ առ յինէն, զի մի անկ

ցիս 'ի վորձանս որպէս եսս չարաչար  
խաբեցայ ։ Մահմուտ արքայ զ'ի բնե  
կասկածոտութիւնն ծայրացոյց իրա-  
տուքս՝ զամենայն ինչ քննել տեսանել  
իմանալ. որ թէպէտ և փափաքելին եր  
ժողովրդեան, բայց տադնապեցոյց դա-  
ւադանին և զամենայն գործակալս.  
անյողդողդ եր, արդարակորով, անխոնջ  
աշխատասէր և միայն հեշտութիւն իւր  
զվաստակելն վարկուցեալ. զբօսանք  
իւր եր յանձանօթս շրջել տեսանել  
զիկանս ժողովրդեանն ՚ի քաղաքին և  
հաւաստել զվաստարումն հրամանաց  
իւրոց ։ Գնացք էին նորա և հրամանք  
իմաստուն. թէրես փոքր մի խիստ ՚ի  
պատուհամն զմանունս անդամ, բայց  
և այն հարկաւոր արդեօք ՚ի բարեկար-  
դութիւն ժամանակին՝ յորում արհա-  
մարհեալ եր իշխանութիւնն ։ Հռչակ  
երթայր զնմաննէ և յոււսադրեր տեսա-  
նել զտէրութիւնն ՚ի նախնի պայծա-  
ռութեանն. և ոչ ՚ի գերեւ ելանէր այս  
ակնկալութիւն, եթէ արքայի անխա-  
փան նովին ոճավին եր գնացեալ. Այլ  
քանի դժուարին է մարդոյ չնաբիլ,  
մանաւանդ առն թագաւորի ։ Ճողո-  
սրել կամեցեալ ՚ի պատրանաց դրանն,  
չարաչար ևս պատրեցաւ յառնէ միոջէ:

Զիալրահիմ՝ ոմն անուն է ֆէնտի  
զէհեր էմինին կարգեալ էր իւր աղդա-  
բար հաւատարիմ ամենայն անցից, այլ  
սա այր տգէտ և մոլենախանձ ոչունէր  
տալզոյց արքայի՝ բայց զորի ժողովա-  
բանս և յայլ երախանս շըջէր ժողովէր.  
սակայն իբրև արդարախօս ոք հաճոյ  
էղեալ էր նմա. և 'ի սկակասելն հարե  
էր զայլ ոք կացուցանել'ի տեղի նորա.  
և վիճակեցաւ յայն չալէթ է ֆէնտի:  
Այս այս աննշան, վաճառականի ու-  
րումն դպիր, ընդ բազում գործս ար-  
քունի և ընդ իշխանութիւնս անցեալ  
հմուտ էղեալ էր ամենայնի: Դեսպան  
կացեալ առ Նախոլէնիւ՝ ուսեալ էր  
զլեղու գաղղիացի և հմտացեալ կարգի  
տեսչութեան այլոց տէրութեանց. և  
գարձ արարեալ այսրէն կարգեցաւ  
քեահեա ալէյ առ թագաւորութեամբ  
Մուսդաֆայի և աքսորեցաւ: Գործա-  
կալութիւն նորա առ առաջնով թա-  
գաւորութեամբն բաւական էր խոչ  
ընդ ոտն լինել յառաջադիմութեան  
նորա, եթէ որ քան զկամս և զիմաստ  
մարդկային զօրաւորն է բախտն՝ չէր  
այլազդ ինչ անօրինեալ:

Աիւլէյման փաշա կուսակալ Պաղ-  
տատայ ստամբակութեամբ իւրով և

կուսակցութեամբ ընդ Վահապիս  
ալարտաւոր դտանէր առաջի դրանն .  
դատակնքեցաւ 'ի մահ : Այլուս այն  
աւուրբ էին՝ յորս Գավիուձի ալաշին  
հրովարտակ 'ի ձեռին գնայր անաշխատ  
առնոյր զգլուխս . բռնութեամբ զօրօք  
վճարել անհնար էր . հարկ էր նենդ  
ինչ խմանալ , և 'ի յաջողութիւն իրին  
ընտրել այր մի խորամանկ , և կարգաւ  
'ի վերքան զԳափուձի սպաշի առ 'ի  
կեղծել և կարծեցուցանել զնա դոր  
ծով ինչ կարևորաւ Եկեալ : Դուռն  
յանհնարիցն համարէր զելս իրացն ,  
այլզայս սպատեհ 'ի ձեռն առ 'կորու  
սանելզալէթ՝ յորոյ խորամանկ հնար  
խմացութեանցն նեղեալ էր : Մասու  
ցաւ առ արքայ իբրև միայն բաւական  
'ի դործն խիթալի . ընտրեցաւ կարգե  
ցաւ : Իբրև 'ի Պաղտատ հասանէր , ոչ  
տայր նմա թոյլ կուսական գալ առ  
ինքն . այլ չալէթ առաքեալ առ նա  
զնամականին և զկեղծուսպատիր հրո  
վարտակն , այնակէս գիտաց ձևանալ և  
ընդ միտ մտանել առնն , մինչև հրաման  
Եղե նմա 'ի քաղաքն մտանել : Անդ ա  
պա 'ի դործ առեալ զամենայն մէքենայ  
եալ խորամանկութիւն խորհրդոցն ,  
արկանէր Երկսլառակութիւն 'ի քաղա-

քին, զիւրեա ածէր դբաղումն, մանաւանդ զլումափոխ կուսակալին դիսխէլ հրեայ բնիկ, որ մատնիչ և դաւաճան լինէր կենաց երախտաւորի տեառն իւրոյ, մինչև հատաւ դլուխ նորա և բերաւ առ չալէթ : Որոյ անդրէն դարձ արարեալ յաղթանակաւ 'ի կոստանդնուպոլիս՝ սասանեցոյց զամենայն թշնամիս իւր, որ օր յօրէ գէտակն կալեալ մնային համբաւոյ սատակման նորա 'ի կուսակալէ անտի :

Յետ սակաւ միոյ մեռանէր վերոյիշեալ շէհիր էմինի խպուհիմ էֆէնտին, զըր որսացեալ էր չալէթ իւրուլ ճարտարմառութեամբ, և սպակառելի և մեծարոյ ևս զանձն երևեցուցեալ յաչս նորայիմաստութեան և 'ի յաջողակութեան մամին, որ և 'ի մեռանելն ընծայեցոյց զնա արքայի իրեւ զմիայն կարող 'ի գործ ծառայութեան նորա : Եւ յիրաւի իսկ առ ժամայն ցուցանէր նա դհանդէս ճարտարութեան և խորագիտառութեան իւրոյ 'ի գործս վտանգ դաւորս, և մանաւանդ ընդ ենիչէրիմն՝ յորոց արքայ 'ի տագնապի կայր : Այն չափ իմն շնորհս գտանէր առ Մահմուտ արքայի, մինչև 'ի սուլ ժամանակի զամենայն երասանակս աերութեանն 'ի

բուռն ածել։ չէր ինչ որ գործէր աւ  
ուանց նորա և կամ գաղտ ՚ի նմանէ։  
Զառաջնան այնպէս դողացաւ յաշաց  
ամենեցուն զգործ մեծի պաշտամանն,  
մինչև չէր ու ումէք՝ թէ խորհրդական  
կարգեալ իցէ արքայի։ բայց ասկա ՚ի  
վէր ել բանն, և անուն չալէթի հնչէր ՚ի  
քերանս ամենեցուն։ և այնուհետև ան  
պատեհ իմն էր ծածկել արքայի զհրաւ  
պարակագոյժ իրսն։ ասկա առ ամրարձ  
զնա ՚ի պատիւ Նիշանձի անուան։  
Իբրև զգես մի արձակեալ ՚ի կապանաց՝  
հանձար նորա չարարուեստ ոչ դիտաց  
ասել շատ։ վատթար խրատուքն դար-  
ձոյց ՚ի չար զամենայն բարի բարի խոր-  
հուրդս արքայի, զորոյ զմիտսն դերեալ  
էր ՚ի վերքան զըսան։ և դիտամոլութիւն  
նորա այնուհետև ելանէր զեղոյր ընդ-  
չափ և ընդ սահման։ Ոչ զոք հանդուր-  
ժէր ունելիւր բարձակից։ քարզնդու-  
նեաց դրդուեցոյց տապալեաց զամե-  
նեսեան և արար իւր նորանոր ձեռաւ  
սունս։ հարկ էր այնուհետև կամ ընդ  
դրօշիւ նորա մտանել, կամ կորնչել։  
Բարձնկեցութիւնք, աքսորանք, աւ-  
ւարառութիւնք ստացուածոց և կա-  
ռավնատութիւնք լինէին ընդ ամենայն  
աէլութիւնն առանց ինչ այլոյ հարցաւ

փորձի, բայց միայն 'ի հաճոյից կամաց  
իւրոց, կամ'ի բանսարկութենէ, իւրոցն,  
ևս առաւել հրեին խմխէլայ, զոր ընդ  
իւր ածեալ 'ի Պաղտատայ՝ 'ի վոխա-  
րէնս մասնութեան նորա սեղանաւոր  
իւր արարեալ էր զնա և մաերիմ։ Զէր  
ոք այլ դիմակաց նմա զօրութիւն՝ բաց  
յենիչը բեաց, որ երբէք երբէք սաս-  
տէր 'ի նա։ բայց առատաձեռն պար-  
գեօք դիտաց ոչ միայն լուցուցանել և  
զնոսա, այլ և 'ի դործ իւր արկանել։  
Այսպէս այրս այս փոխանակ 'ի վերա-  
ծնութիւն լինելոյ տէրութեանն կորո-  
վամութեամբ իւրով և խորադիտու-  
թեամբ, պատճառ եղեւ ընդ հակա-  
ռակն գլորելոց 'ի խորիորատ չարեաց՝  
յորմէ ոչ ևս կարաց ելանել։

Այլ զայսու ժամանակաւ կուսա-  
կալն Եգիպտասի Մէհէմմէտ Ալի վաշա-  
յետ խորտակելոյ զբոնութիւն Քէօ-  
լէմէնաց, Եհար վանեաց և զԱ ահապիս։

Այլ հարկ է համառօտել աստանօր  
և զարարուածս այսր մէծի կուսակալն  
որ 'ի մէծամեծ մարդկանէ մէրոյ ժա-  
մանակիս վկայեալ է և յարդեանց և  
'ի համբաւոյ։

Մէհէմմէտ Ալի վաշա ծնեալ յա-  
մին 1769 'ի գավալա աւանի աշխարհին

Առնաւուտաց, անդստին 'ի մանկու-  
թենէ հանձար և արութիւն բազում  
ցուցաներ. այլ առաւել սլայծառա-  
ցաւյարշաւանին Օսմանեանց ընդդէմ  
Գաղղիացւոց շԵգիպտոս, և սիրելի ա-  
մենեցուն դտեալմէծի և փոքուամբար-  
ձաւ մինչև 'ի կուտակալութիւն աշխար-  
հին: Բազում անդամ ամբաստանեալ  
յոստիաց իւրոց առ. Մահմուտ արքայ,  
հրովարտակ ևս ընկալաւ 'ի նմանէ Եր-  
կիցս՝ մեկնել 'ի կուտակալութենէն Ե-  
գիպտոսի. և 'ի վերին Երեսս հակատա-  
կութիւն ցուցեալ հրամանաց արքունի՝  
ջան 'ի դործ արար և յաջողեցաւ հառ-  
տատուն կալ մնալ 'ի բարձին, զի յինքն  
յանկուցեալ էր զսիրտս իւրոց սպայից,  
ևս և զաւագանւոյն կոստանդնուպոլ-  
սոյ. և Գաղղիացիք անդստին յայնմ՝  
ժամանակէ զսորա զկողմն ունեին հա-  
կառակ Անդդիացւոց:

Ընդ այն ժամանակս բունացեալ յոյժ  
էին 'ի կողմանս Եգիպտոսի Մէմլուք  
կամ Քէօլէմէն անուանեալ իշխանիք  
Արաբացւոց <sup>1</sup>, և ձեռնտուութեամբ  
Անդդիացւոց յաւելուին օր քան զօր  
յըմբստութիւն: Արդ կամեցեալ Մէ-

հեմմէտ Ալի նկուն առնել զնոսին՝  
փոյթ յանձին կալաւ որսալ զնոսա  
քաղցրութեամբ ։ և յաւուր միում  
հրաւիրեալ ՚ի կոչունս խրախճանի՝  
ընդ սուր անցոյց զամենայն զգլսաւորա  
նոցին արս չորեքհարիւր և եօթանա  
սուն, և դմնացեալմն հալածեաց ապա  
անձամբ և ՚ի ձեռն որդւոց իւրոց մինչեւ  
՚ի Կուպիա ՚ի վերնակողմանս Եղիսպ  
տոսի :

Յետ այնորիկ լսատ հրամանին արքուն  
նի հետամուտ եղե Վահապեաց, և ընդ  
ձեռն որդւոյ իւրոյ Դոստունայ էառ  
սաստիկ պատերազմօք զՄէտինէ և  
զՄէքքէ, և զիմականս նոցին առաքեաց  
՚ի Կոստանդնուպօլիս յուրախութիւնն  
մեծ արքայի և ամենայն ժողովրդեան։  
Եւ զամն տամն մարտ եգեալ ընդ Վա  
հապիա Դոստուն և Խալրահիմ և Խամայիլ  
որդիք կուսակալին, բազում քաջութիւն  
գործեցին։ և ՚ի վերջէ նկուն արարեալ  
՚ի սալառ զբոնաւորսն, զգլսաւորն ՚ի  
նոսս զԱպտուլահ որդի Սիւուտայ և  
զայլումանս առաքեցին ՚ի Կոստանդնուռ  
սոլիս, և անդ գլսաւեցան։ Յայնմ ՚ի  
տասնամեսայ արշաւանի կորոյս Մէհէմ  
մէտ Ալի վերկուս յորդւոց իւրոց զԴու  
սուն և զիմայիլ։ այլ ինքն զօրացաւ

յոյժ յոյժ և ահարկու դտաւ ամենայն  
Արաբացւոց, և պատկառելի յաչս Օսմա-  
նեանց . և Եւրոպացւոցն աղդք անդամ՝  
զարմացան և գեռ ևս զարմանան ընդ-  
ձարտարութիւն և ընդ անյողդողդ ա-  
րիութիւն կուսակալիս : Մէծապէտ  
սիրող է Մէհմէմէտ Ալի փաշա Եւրո-  
պական հրահանգաց , և քաջահմուտ  
ամենայն օդակաց որ 'ի բարեկիրթ քաղա-  
քականութենէ յառաջ դան . սմին իրի  
մի անդամ և երկիցս փորձ փորձեաց 'ի  
նորոգել զհրահանգս զօրաց իւրոց . և ոչ  
յաջողեալ , պապ ուն առ ուն յառաջ  
մատեաւ և փոխակերպեաց բնաւ իսկ  
զերեսս աշխարհին : Բազում մարդա-  
սիրութեամբ ընկալաւ զիախսատեայս  
Գրալլիացւոց և զայլոց աղդաց՝ որոց  
անթիւ էր բազմութիւն 'ի ժամանակին  
'ի պատճառս պատերազմաց Եւրոպայ,  
և ընդ նոցին ձեռս բարդաւաճեաց յԵ-  
դիալտոս և յԱղեքսանդրիա զարուեստս  
և զդիտութիւնս : Եւ թէպէտ կարի իմն  
ինքնօրէն ազատութեամբ վարէր նա  
յայնմ ամենայնի , սակայն 'ի հատու-  
ցումն տարեսոր հարկին և պարտուպատ-  
շաճ ընծայից ոչ ինչ զառաջինն թէրա-  
ցեալ՝ ոչ ետ աւագանւոյն Օսմանեանց  
յայտնի ինչ դժկամակութեան պատ-

Ճառս : Այլ մէք դարձուք ուշ ունել  
և այլոց ինչ անցից օսմաննեան պետու-  
թեանն :

Յամին 1808 'ի բառնալ արքայի 'ի  
կենաց զՄիւլէյման փաշա զկուսակալն  
Պաղտաստայ՝ կալաւ զտեղի նորին Աս-  
տուլսահ փաշս : Սորա տեսեալ՝ զի չէ  
բաւական միայնակ զդէմունել արշա-  
ւանացն Քրդաց և Արաբացւոց , կո-  
չեաց իւր 'ի թիկունս օգնականութե-  
զՄէհէմմէտ Ալի միրզա՝ զմի յորդւոց  
արքային Պարսից որ նստէր 'ի կրման-  
շահան . և Երկոտասանն հաղարաւ մը-  
խեալ 'ի սահմանս աշխարհին Օսմա-  
նեանց փոխանակ օգնելոյ նոցին յար-  
ձակեցաւ 'ի վերայ Պաղտատայ , և նե-  
ղէր զքաղաքն : Բողոք կալան Օսմա-  
նեանք առ Ծաղաւորն Պարսից , և ըն-  
կալան պատասխանի Եթէ անհրաման  
'ի հօրէն գործէ զիրսն արքայորդին .  
վասն որոյ աղատութիւն է , ասէր , Օս-  
մաննեանցդ վանել զնա 'ի սահմանաց  
ձերոց : Յաւել տուարէլ արքայն Պարսից  
և գեսպան զոք 'ի Կոստանդնուպոլիս  
հանդերձ բաղմալթիւ մարդկամբ և  
բաղմապատիկ պատարագօք . և ոչ  
միայն փակեցաւ գուռն պատերազմի ,  
այլ և սերտ բարեկամութիւն Եղե ընդ-

Աղջ Երկոցուն պետութեանցս :

Եհաս և յաշնարհէն Վրաց այլ գես-  
ուան առ Մահմուտ արքայ, և բողոք  
հարկանէր զյարձակմանէ Ռուսաց՝ ի  
սահմանս Երկրին, և հայցէր զօդնու-  
թիւն : Սակայն Ռուսաք վաղու ևս տի-  
րեցին Վրաստանի, և միոյ մասին Եղե-  
րացւոցն աշխարհի :

Խոկ՝ ի ձմերայնի 1810 ամին բազում  
բանագնացութիւնը Եղեն յանօդուտս  
՚ի մէջ Ռուսաց և Օսմանեանց, և ՚ի գար-  
նայնի միւսոյ ամին Ահմէտ փաշա կա-  
ցեալ վէզիր մեծ փոխանակ Եռուսուֆայ՝  
խաղաց գնաց ՚ի բանակն ՚ի Ծումնա :  
Սորա տեսեալ զի նոր սպարասվեան  
Ռուսաց Քութուզով ոչինչ փոյթ ու-  
նի յամին պահել ՚ի ձեռին զբերդեանն  
որ յայսմկողմանէ Դանուբայ, և հնա-  
րի ամփոփել զջօրս իւր յերկիրն Վլա-  
հաց և ՚ի Մոլտակիա, համարձակեցաւ  
յարձակել յառումն Ռուսանուդ քա-  
ղաքի, և վանեցաւ մի անդամ և Երկիցս :  
Սակայն չեւ իրաւուցած հարուածովքն,  
իբրև ետես՝ Եթէ հուր հարեալ այրե-  
ցին Ռուսաք զիՌուսանուդ, և զամբու-  
թիւնս նորին քակեալ կործանեցին,  
առաւել ևս ձեռն յանձին եհար, և  
զեւան մեծ հասոյց օսմանեան բանա-

կին : «Քանոզի Ռուսք զառաջինն կեղծեալ զվախուստ և զսակաւութիւն զօրաց՝ ձգեցին զՕամանեանս դհետ իւրեանց մինչեւ յայնկոյս Դանուքայ, և յամենայն կողմանց սպաշարեալ զնոսին՝ զբագումս կոտորեցին, և զմնացեալնեն յանել արգելանի փակեցին : Յայնժամ աղտէնաց վէզիրն դուլ առնել զինուց, և սկսան բանագնաց լինելերկուստեք յաղագս հաշտութեանն ՚ի Պուքրէշ : Ցորչափ ոչ զիջանեին Ռուսք ՚ի պահանջանաց իւրեանց, այս ինքն է զի մնասցեն ՚ի ձեռս իւրեանց Վլահք և Մոլտաւիա, և Երկիրն Աերվաց ազատ լիցի և ինքնիշխան, Օսմանեանք ևս ոչ առնուին յանձն զհաշտութեանն պայմանս, և վճռեցաւ իսկ յատենի աւագանոյն ՚ի կոստանդնուպոլիս՝ դարձեալ վէրստին զօրաժողով լինելընդ ծովելնդ ցամաք : Այլքանզի ահագնագոյն պատերազմ էհաս ՚ի վէրայ Ռուսաց յերեսաց Կափուլէոնի Պօնափառթեայ, և հարկ էր ակամայ կամօք ՚ի ներքս անդաշխարհին ամփոփել զոյժ զօրութեան իւրեանց, կոմսն Խթալինսկի փոխեաց յանկարծ զբարբառ իւր ՚ի ժողովի պատգամաւորացն ՚ի Պուքրէշ յամին 1812, և ՚ի բաց կացեալ յառաջնոց

անոտի սլահանջանաց իւրոց՝ շատ համարեցաւ զի 'ի ձեռս Ռուսաց մնասցէ այն մասն միայն Երկրին որ յայնկոյս Փրութք եւառ կայ . և վէզիրն հաւանեցաւ անդէն 'ի հաշտութիւն խաղաղութեան :

Մահմատ արքայ բնաւ իսկ դժկամակ էր ընդ հաշտութիւնն և ընդ սլայ մասն նորին . վասն որոյ թէպէտ և առժամայն զիջաւ հաստատել զնոյն , սակայն ընկեցիկ արարեալ զԱհմէտ փաշա յիշխանութենէն տքսորեաց 'ի Պլուսա , և ամբարձ փոխանակ նորին զխուրչիտ Ահմէտ փաշա որ կուսակալ էլրն 'ի Նիշ : Ա.քսորեցան ապա և գործակալք հաշտութեանն Ղալիպ էֆէնտի և Խպլոտհիմալա , և թարգմանն արքունի Տիմիթրաշքօ Մուրուղյօշատեցաւ 'ի հրամանէն արքունի՝ Հալէթիթելադրութեամբն . և Եղբայր նորին Փանայոթ դլսասլարտ եղեւ 'ի Կոստանդնուպոլիս :

Ի մեկնել ապա Ռուսաց շտապ տագ նապաւ 'ի Մոլտաւիոյ և յաշխարհէն Վլահաց , Օսմանեանէք կալան անդրէն զբերգորայմն , յորոց զոմանս քանդեալ էին Ռուսք . և Սերվացիք անօդնական մնացեալք հպատակեցին դարձեալ Օսմանեանց , և առաջնորդ նոցա Զէոնի

Եօռկի խոյս եւս 'ի Որուսս, որպէս և  
այլք ոմանք յլշխանսացն Մոլտաւիոյ և  
Վլահաց :

'ի նոյն աւուրս եհաս 'ի Կոստան-  
դինուազօլս գեսալան 'ի Նախոլէոնէ զօ-  
րավարն Անտրէոսսի, և մեծապէս պա-  
տուասիրեալ յարբայէ՝ հաստատեաց  
զդաշինս բարեկամութեանն որ էին 'ի  
միջի ընդ Օսմանեանս և ընդ Գաղղիա-  
ցիս :

Չայնմամի կոստրած մեծ գործեաց  
ժանան 'ի Կոստանդինուազօլս և 'ի  
Զմիւռնիս և 'ի Թեսազոնիկ, և մեռան  
ոդիք աւելի քան զյիսուն հազար, և ան-  
հնարին սաստկութիւն ձմերայնոյ տա-  
րւոյն հազիւ կարճեաց զահագին կո-  
տորածմն . թէպէտ և ոչ սակաւ նախ-  
ճիրս գործեաց և 'ի բանակէ վէղիրին  
որ գառնայր գայր 'ի Շումմայէ յԱղ-  
թիանուազօլս : Ոչ ինչ յերկարեաց և  
խնդութիւնն արբայի և ամենայն ժո-  
ղովրդեան ընդ ծնունդ Երկոցուն որ-  
դւոց Ասպիտւլ Համլիտոյ և Պայէղիսայ,  
որ և մեռան 'ի մասաղ հասակի + սա-  
կայն ոչ անագանեցին Երկինք պար-  
դեւլ նմին և այլ ևս որդիս 'ի սիփիանս  
հասարակաց :

Անդորրայեալ այնուհետև արբային

Մահմուտայ յերեսաց պատերազմին  
Ռուսաց, մինչդեռ Սէհէմմէտ Ալի փա-  
շա վաներ յարևելք աշխարհին զբէօլէ-  
մէնս և զվահասկլա, ինքն փոյթ յանձնն  
կալաւ նուաճել զոմանս 'ի կուսակա-  
լաց եւրոպակողման զավստասմբեալս  
յիւրմէ + զոր և վճարեաց ամենայն յա-  
ջողութեամբ + և էին ըմբոստացեալքն  
Մոլլա փաշա Վիտինու, և Հաֆըզ Ալի  
փաշա Կիրովուսոյ՝ որդի Փազուանս  
օլլու բռնակալին :

Ի վերջ կոյս այնր ամի գերեգարձ  
եղեալ Օսմանեանցն գերելոց 'ի Ռու-  
սաց, Փէհլիվան փաշա անցեալ եկն  
ընդ Ռուսաճուկ, և հասեալ 'ի կոս-  
տանդնուպոլիս՝ մեծարեցաւ յարքայի  
կուսակալութեան պաշտամամբ։ Կայր  
առ Ռուսս Շամիլ փաշա + զոր յաղգե-  
խանից գիտելով արքայի, և կասկած  
վանդի համարեալ զկալն նորա ան-  
դէն, երգումն ուխտի յղեալ առ նա  
հաւանեցոյց գառնալ դալ այսրէն + և  
դազտ հրաման առաքեալ առ իշխանն  
Վահաց՝ ետ դլսատել զնա 'ի հա-  
սանել նորա յիւր աշխարհն + և բերաւ  
կառավին նորա 'ի կոստանդնուպոլիս :

Յամին 1813 բազում ինսամով միտ  
եդ վշգիրն նկուն առնել զԱլերվացիս,

և ԸԵՃԵսկ վիաշա կուսակալն Ախտմայ  
յամիսս երիս կալաւ զամենայն զամուլը  
ամուլ տեղիս նոցա , ևս և զՊԵԼՎՐԱՄ ,  
և զընդդիմակացսն 'ի սուր սուսերի կո-  
տորեաց : Եւ ԶԵՌՆԻ Եօռկի դարձ ա-  
րարեալ 'ի նոյն ժամանակս 'ի հայրե-  
նիսն իւր՝ ձերբակալ եղել յանկարծ յիշ-  
խանէն ՍԵՐՎԼԱՋ՝ որ էր Միլոշ Օպրե-  
նովիչ , և չարաչար մահուամբ ելոյն  
զլուէժ ապիրատութեանց իւրոց՝ որովք  
եզրայրասապան և հայրասապան ևս ե-  
ղեալ էր : Առաւել ևս ճգանց և ժա-  
մանակի պէտք եղեն առ 'ի նուաճելոյ  
զիշխանն Թէքքէի և Ատալիոյ . յորոյ  
վերայ առաքեալ ծովակալն խորուլ  
Մէհէմմէտ վիաշա՝ բաղմօք աշխատ եղեւ,  
և նեղեալ զԱտալիա սկաշարմամբ և  
սովու զամ մի՛ էառ զայն , և զասլա-  
տամբ իշխանն ձերբակալ արար և դըլ-  
խատեաց :

Նոյնօրինակ յաջողութեամբ ցածոյց  
և Զափանզատէ ՇԵԼԱԼԷտաին վիաշա  
զըմբոստութիւն ենիչէրեացն Բերիոյ ,  
և զգլսաւորս նոցին ընդ սուր անցու-  
ցեալ խաղաղացոյց զաշխարհն :

Յետ այնորիկ յամին 1814 յորում  
Գաղղիացիք'ի պարտութիւն մատնեցան  
'ի Գերմանիա , և մէկնեալ 'ի բաց գնա-

ցին 'ի Յոնիական կղզեաց, Անդղիացիք  
առին զկղզին ընդ հովանաւորութե  
իւրեանց ըստ պայմանի դաշնակից պէւ  
տութեանցն Եւրոպայ. և Մահմուտ  
արքայ ոչ ինչ հակառակեցաւնոցա, այլ  
մանաւանդ ուշ 'ի կուրծս արարեալ  
հնարէր բարեկարգել զնեբքին տեսչու-  
թիւն աշխարհին իւրոյ : Գիտակ իսկ էր  
կարեսոր պիտոյից բարեկիրթ զինուորու-  
թեան, այլ քաջ 'ի մտիունէր և զաղէտա  
հօրեղբօրորդւոյն իւրոյ Սէլիմայ. սմին  
իրի շատ գրեաց առ ժամայն զհնարա-  
ւորն կատարել : Հրովարտակ արար  
յամնեանն յուլիսի առ զօրագլուխս ա-  
մենայն զօրաց աշխարհին՝ արս յիսուն  
զատուցանել ընտրանաւ. յամենայն  
գնդից, զի յամենայն ժամ կազմ և  
պատրաստ լինիցին նոքա 'ի մարտ պա-  
տերազմի, և խոստանայր յաւելուած  
ևս տռնել 'ի ոռձիկս զօրականայն այ-  
նոցիկ և զօրագլիսաց նոցա : Բազում  
խնդութեամբ ընկալան ենիչէրիք ըզ-  
հրտմանն, և բազումք ինքնակամ գրե-  
ցան 'ի ցուցակին. և յոյս մեծ էր այսպէս  
առ փոքր փոքր քաղցրացուցանելնոցա  
զեւրոպական մարզիցն զևստութիւն :

Զանդորր խաղաղութիւնն որտիրեաց  
այնուհետեւ 'ի թագաւորեալքաղաքին՝

չեր ինչ որ խռովիք , բայց կոտորած  
ժանտախտին որ զերիս ամս ամ՝ զամփ  
զկնի անթիւ մահունս գործեաց ընդ  
ամենայն իսկ աշխարհն : Ոչ ինչ նուազ  
յոդիս արար ապաստան զբնակիչս կու-  
տանդնուազօլոյց և յաճախութիւն հըր-  
կիղութեանց . քանզի յերկոսին յամն  
եեթ 'ի 1816 և 'ի 1817 հարիւրիւ չափ  
հրդեհք հաշութին պատահեալք 'ի քա-  
ղաքին և յարուարձանեայսն և 'ի գիւ-  
ղօրէո :

Ի միում 'ի հրդեհից անտի վէզիլն  
մեծ Շառւֆ Մէհէմիտ վաշա և ծո-  
վական ինքնին ելին և կացին 'ի տանիս  
ուրեք որ մերձ եր 'ի բուն տեղի հրդե-  
հին . և ահա ձեզունն գոդ առեալ տեղի  
ետ ընդ ոտիւք նոցա , և հոսեցան 'ի  
վայր , այլ մեասեցան և ոչ ինչ : Յայլում  
նուազի հրդեհեցաւ ապարանիք թա-  
գաւորին որ 'ի Պէշիքթաշ . և զի անդ  
եր կանանին աբքայի՝ երկամեայ գուսար  
նորին դայեկաւն հանդերձ ճարակ եղե  
անողորմ բոցոյն : Դարձեալ և յայլ նը-  
ւադ հրդեհեալ կիզան ապարանիք դես-  
պանին Ըուետաց :

Յայնժամ սաստիկ պատուիրանաւ  
արդել վէզիլն մի ումեք շրջելգիշերայն  
ընդ քաղաքն և արտաքոյ անլոյս . և ու-

մանք 'ի զօրագլխաց Ենիչերեացն յաք-  
սորս առաքեցան , և բաղումք ևսյան-  
հանդարտ զօրականէն 'ի մահ մատնե-  
ցան , քանզի յայտնապէս իմն նոքա  
էին պատճառք յաճախելոյ հրկիզու-  
թեանց : Սակայն և յայլս յաւագորե-  
րոյն ստէպ ստէպ փոփոխութիւնք դոր-  
ծեցան յամնն յայնոսիկ , զորոց չէ տե-  
ղոյս յերկարել : Այսր ամենայնի  
սկզբնապատճառ և արարող հալէթ  
էֆէնտի-որ օրքան զօր հզօրացեալ մե-  
ծացեալ էր , և կարգեալ իսկ յարքայէ  
Տեսուչ տէրութեան . յորմէ զարհու-  
րեալ և Եանիքօ Խարաճա իշխան Վլա-  
հաց , թէ դուցէ յաւուր միում և  
զնա ինքն կորուսանիցէ , գաղտապնաց  
եղե զայսու աւուրբք և զերծաւ առ-  
գերմանացինն : Այլ հալէթ համար-  
ձակեցաւ և կարօղ եղե կարգել 'ի տե-  
ղի փախատէին զվեսայացեալն նորա  
զՄիխալ Սուցցօ , զհազարապետ դրան  
նորա , որ առանձինն սիրելի իւր ե-  
ղեալ էր :

Յամին 1818 հրաման եղե յարքայէ  
առ կուսակալն Եանեայի որ էր Տէփէ-  
տէլէնլի Ալի փաշա՝ երթալ և առնուլ  
զծովեզերեայ տեղիս ինչ Եպիոսի և  
Դաղմատիոյ , որը յառաջ Ժամանակաւ-

՚ի ձեռս ՎԵՆԵակեցւոց էին, և յամին  
1815 դաշնակից պետութիւնք Եւրո-  
պայ ՚ի ժողովին իւրեանց որ ՚ի ՎԵՆՆա՝  
սահմանեալ էին տալ ՚ի ձեռս Օսմա-  
նեանց, և փոխանակ նոցին զեօթն կղզիս  
Յոնիական ծովուն արկանել ընդ ձե-  
ռամբ Անդղիացւոց այլ բնակիցք Փար-  
կա քաղաքի գլուխ ամբարձեալ, (քանզի  
և անուն իւրեանց ոչ էր ընդ յիշատա-  
կեալսն ՚ի ժողովի անդ թագաւորաց,)  
ոչ կամեցան մասնել ընդ իշխանու-  
թեամբ Օսմաննեանց, և ՚ի խաղալ ՚ի վե-  
րայ նոցա Ալի փաշայի նոքա այրեցին ՚ի  
խարուկի զուկերս նախնեաց իւրեանց,  
և ապա մտեալ ՚ի նաւս և ՚ի նաւակս  
մեկնեցան ՚ի Կորկիւրա, որ է Քոր Քու-  
յամին 1819 :

Զհետ Երկուց ամսց ընկալաւ զար-  
ժանին պատուհաս իւրոց անլուր անօ-  
րէնութեանց և այս Ալի փաշա Եա-  
նեայի : Սա էր ՚ի Տէփէտէլէն աւանէ  
Երկրին Առնաւուտաց, առն Ճոխի՝ այլ  
աննշանի որդի . և բնածին անզդամու-  
թիւն նորա միեալ և աճեցեալ օր քան  
զօր օրինակաւ աւազակաբարոյ հօրն, և  
լրբենի և անագորոյն մօր Խամքօ կոչե-  
ցելց, հասուցին զնա ՚ի ծագ չարու-  
թեան, և սկսաւ յելուզակել ընդ Էր-

կիրն՝ ի գլուխ սրիկայից ոմանց։ Զովողք  
նորա ձերբակալ էզեն միանդամե եր  
կիցս, այլ նա զերծաւ հնարիւք, և փե  
սայացաւ ևս Գավլան փաշային Տէլ-  
վինէ քաղաքի, և յետ սակաւուց ամ-  
բաստանեալ զաներն իւր իբրև զմանիչ  
իրաց պետութեանն՝ ետ խողխողել  
զնա, և զինչն առնուլ յարքունիս։  
Կարծիք՝ ի մտի էին Ալեայ՝ եթէ ինքն  
կարգեսցի յարքայէ ժառանդ իշխանու-  
թեան և ընչիցն Գավլանայ։ և իբրև  
ետես թէ խարեցաւ՝ ի յուսոյն՝ գոռո-  
զացաւ ընդդէմ պետութեան, և նախ  
գիմեալ՝ ի Տէփէտէլէն՝ ի սուր սուսերի  
կոտորեաց զամենայն զդլիսաւորս տե-  
ղւոյն, և զարարս նոցին յափշտակեաց,  
ասկա անկեալ՝ ի վերայ Քորմովօ աւա-  
նի, յորոյ՝ ի բնակչացն ոմն նախատինս  
արարեալ էր մօրն իւրում խամքոյի,  
կալաւ զայրն և շամփորեալ խորովեաց՝ ի  
վերայ մեղմ կայծականց։ և զարս քա-  
ղաքին առ հասարակ կոտորեալ զկա-  
նայս և զմանկտին վաճառեաց՝ ի գերու-  
թիւն։ զնոյն արար և ընդ բնակիչն Առւ-  
լու քաղաքի, և ընդ այլ աւանս և գիւղս,  
և փարթամացաւ և մեծացաւ յոյժյոյժ,  
և բերդ ամուր կառուցեալ՝ ի Եանեա  
քաղաքի՝ անդր կուտեաց զամենայն

զմեծութիւնս իւր : Ասպա դեսպանս  
առաքեաց և առ Նախոլէնն Պոնա-  
փառթէ յամին 1812, և առ Մնդղիա-  
ցւոցն պետութիւն, յորոց և հրազէնս  
բազումն ընկալաւ ընդ արծաթոյ : Վա-  
զու ևս իսէթ էր այլին անագորոյն՝ աչաց  
և սրտի մեծի դրանն + սակայն հան-  
դարանեաց ալբայ, և յամեցոյ զարտիժ-  
պատուհասի եղևոնագործին այլ ևս  
ամս քանի մի :

Այս ամ 1819 նշանաւոր եղև աղե-  
տալի անցիւք տանն Տիւղեանց գործա-  
կալաց արքունի փողերանոցին և ու-  
կերչաց արքայի . նենդ և ապաշնորհ  
դաւաճանութիւն միաբանեցին նիւ-  
թէլ զեղործանումն նորա, որ անդր.քան  
զպարագայս ամաց հարիւրոց կացեալ  
անվլանդ յերեսաց բիւրուց վտանգից՝  
անցեալ էր ընդյեղակիոխութիւնս միա-  
հեծան թագաւորութեան՝ յորում ան-  
պակաս են անճողոպրելի ոստիսութիք:  
Յեցեալ՝ ի մեծ անուն և՝ ի համբաւ բա-  
րի և՝ ի չնորհս զոր ունէր առաջի ժո-  
ղովրդեանն, անսասան կայրյարկածից  
թշնամեաց՝ յորոց ցանդ պաշարեալն  
էր, որոց ևս մին իսկ զայն նուագ զա-  
մենայն փոյթ՝ ի մէջ առեալ էր թաքու-  
ցանել զմեքենայեալ դաւն խրեանց :

Ամայնեւ այնպէս դժուարին էր գործն.  
 զի արքայ սիրէր զԾիւղեանս և ճանաչէր  
 զարդար վաստակս նոցա վկայեալ 'ի  
 նախնեաց անտի իւրոց , և զմիամառ  
 թիւն նոցա առ ինքեան . և գեռ այն  
 ինչ 'ի մօտ աւուրս 'ի նշան մեծարանաց  
 զգեցուցեալ էր Գրիգորի Տիւղեան զսա-  
 մոյրսն սպատուոյ : Ապա հարկ էր ոչ  
 միայն ցուցանել արքայի զանհաւատար-  
 մութիւն նոցա , այլ և չթողացուցանել  
 նմա ինքնին 'ի քնին մատչել քառ-  
 թեանցն . ապա թէ ոչ նոցին չարախօ-  
 սայն անշուշտ առաջի կայր կորուստ :  
 Սովոր խորհրդովք որսացան զՊէրալէր-  
 պաշի , այր հզօր առաջի արքայի . և թէ  
 պէտ բարեկամ Տիւղեանց , այլ անհան-  
 դարտբարուք , դիւրաւաձեռներէց և վու-  
 թով ստրջացօղ , և ոչ խակ բաւական 'ի  
 տեսանել զբուն պատճառս գաղտնորո-  
 դայթ քսութեանցն : Զամենայն զոր  
 միանդամ ըուաւ՝ շնչեաց գաղտյունին  
 արքայի . որ քանզի բերանոյ չալէթի  
 անսայր , որպէս յայտ է , 'ի նա ապաս-  
 տան արար զբննութիւն իրացն : չա-  
 լէթ՝ որ 'ի դաւակցացն էր և մնայր  
 այսմհրամանի , հաստատեալ զամենայն  
 զուեալսն արքայի , զգուշացոյց չտալ  
 ինչ կարծիս Տիւղեանց . ապա թէ ոչ ,

ոչ միայն զգահճն որ ՚ի նոցա ձեռս է  
կորուսանեմք, զոր և ՚ի պատրաստի խել  
կան՝ ասէ՝ առնուլ դաղթել յԵւրոպ,  
այլ և այնչափ սիրելի են ենիչերեաց  
և զօրաւորք, մինչև կարող լինելոյիա-  
բուցանել զնոսա և փոխել զտէրութին:  
Ատելի անուն ենիչերեաց, և միաբա-  
նութիւն իւրոց մատերմացն ընդ նոսա  
ընդ ոխերիմ թշնամիս իւր, ինքնին ՚ի  
բարկութիւն մեծ բրդէր զարքայ երդ-  
նուլ զկորուստ նոցին + սակայն խրատ  
տայր չալէթ ծածկել առժամն զըրբտ-  
մատութիւն իւր և դարձուցանել զմիստ  
նոցա ՚ի կարծեացն կասկածանաց, զոր  
ոչ յապազեաց առնել արքայ, ցուցա-  
նելով առ նոսա սէր բազում ևս և ա-  
ռուրբը ինչ յառաջքան զյանկարծակի  
բանստարդելութիւն նոցա + որ նախ ՚ի  
փողերանոցի եգան ՚ի դիպահոջ, և  
ապա ՚ի զնդան պատժաւորաց արդե-  
լեալ՝ ամենայն ինչք նոցա առանց յար-  
քունիս, կանայք և մանկաի նոցա բան-  
տեցան ՚ի պատրիարդարանն չայոց ՚ի  
բազում վիշտս տառապանաց անպա-  
տեհս չնորհապարտութեան աղդին  
առ մեծամեծ երախտիս տանն Տիւ-  
ղեան: Դեռ են անցեալ իրքս և աշ-  
խարհածանիթ, ուստի և անկարօս

մանրասպատում առնելոյ , նա և համա-  
ռօտութեանս ոչ ՚ի դէու : Երեքին եղ-  
բարք և մի հօրեղբօրորդի ՚ի մահ դատե-  
ցան ՚ի 15 հոկտեմբերի . միւս եղբարքն  
և ամենայն ազգակիցք և գործաւորք  
անդամ վողերանոցին աքսորեցան յայլ  
և այլ կողմանս Ասիոյ և ՚ի կղզիս Յու-  
նաց : — Անկումն ազգատոհմիս հնչեաց  
ոչ միայն յօսմանեան տէրութեան , այլ  
և ընդ ամենայն Եւրոպա : Ընդ բառ-  
նալնորա և ամենայն գործք աշխարհին  
կաղացան . վաճառականութիւն և ճար-  
տարութիւնք արուեստից լուծան ան-  
կան անյարիր : Արքայ ինքնին վոյթ  
ստրջացաւ ընդ կորուսան և խոստովան  
ևս եղեւ մեծանձնութեամբ , որովհս ա-  
սեն . և բազում մարդասէր խնամքն և  
պատիւ մեծարանաց՝ յոր բարձրացոյց  
տպա զմնացորդս տանն առաւելքան  
զառաջինն , արդարացուցանեն զհամ-  
բաւդ զայդ : Ըստ հասարակաց կար-  
ծեաց և նոցին իսկ Տաճկաց ասելոյ ,  
պահանդ էր տէրութեանն այս ազգա-  
տոհմ . և զհետ անկման նորա եկին ան-  
բաւ աղետք տարակուսի . պատերազմ  
ընդ Ալի փաշա Եանեայի , ապստամ-  
բութիւն Յունաց և ազգատութիւն , Խոր-  
տակումն նաւառառմին ՚ի Կաւարին ,

Ճախողակ պատերազմն ընդ Ռուսս, կո-  
րուստ Ճէղայիրայ, հալածումն ուղղա-  
փառ Հայոց, պատերազմը ընդ Ճէմ Մէ-  
հէմմէտ Ալի կուսակալին Եղիպառի,  
դաշնագրութիւնն ՚ի Հիւնքեար Խակէ-  
լէսի, պարտութիւն Կէղիպայ, վտա-  
բանջութիւն ծովակալին և մատնու-  
թիւն նաւահանգիսին, և հուսկ ապա-  
մահ արքային Մահմուտայ • այս ամե-  
նայն անցք նշանաւորք անհետ ՚ի վերայ  
Եկեալք չետուն և ոչ վայրիկ մի ոգի  
առնուլ օսմանեան տէրութեանն, որ  
ոլէս տեսցի յառաջիկայսդ :

Մինչդեռ ՚ի Կոստանդնուպօլիս վո-  
փոխութիւնք աւագանւոյն գործէին,  
Ալի փաշայայտնապէս ասպատամբեաց  
յարքայէ • և հրաման առեալ գնալ ՚ի  
թագաւորական քաղաքն և պատաս-  
խանի առնել վասն անձին խրոյ՝ ըմ-  
բոստացաւ ամենեին • վասն որոյ և  
արքայ հրաման ետ զօրաժողով լինել  
մէծաւ սպատրաստութեամբ ՚ի վերայ  
առնն : Գիտաց Ալի փաշա եթէ տագ-  
նապ է նմա յերեսաց բուռն զօրու-  
թեան նորոյ բանակին, թէպէտ և ինքն  
հզօր էր զօրութեամբ և փարթամու-  
թեամբ և հանձարով պատերազմի • և  
զի կանխածանօթ էր խլոտելոյ տակաւ-

ազգին Յունաց յապստամբութիւնընդ-  
դէմդրանն մեծի, ձայն Ետ նոցայայտ-  
նապէս 'ի վտարանջութիւն, և պատ-  
դամաւորս սփուեալընդ ամենայն Յու-  
նաստան և 'ի Վլահս և 'ի Մոլտաւիա,  
զարթոյց զոգիս ամենեցուն 'ի ձայն ա-  
զատութեան : Հրապուրեալք 'ի սէր  
արծաթոյ և 'ի ցանկութիւն աւարա-  
ռութեան՝ Եկին ժողովեցան ընդ դրօ-  
շուք Ալի վաշային գունդք գունդք  
սրիկայից և աւազակաբարոյ մարդկան:  
Եին նորա որդիք Երեք, Մուխտար,  
Վէլի և Սալիհ, և Մուխտար իշխան Էր  
'ի Պէրաթ, Վէլի 'ի Փրեվեզա, և Սալիհ  
յէյնէպախթի: Արդ Ալի վաշա առա-  
քեաց առ նոսա խրատս և օգնութիւն  
բազում. սակայն նոքա վաղ խորտակե-  
ցան առաջի զօրացն Օսմաննեանց և լքանն  
և ինքն ևս վանեալ 'ի սպարապետաց  
զօրուն արքունի՝ որ էին Փէհլիվան վա-  
շա և Խսմայիլ վաշա, Խոյս Ետ յամրոցն  
իւր արամբք Եօթն կամ ութհարիւրովք  
և Երկերիւր թնդաննօթովք, և որմեալ  
զդուրս ամրոցին՝ պատրաստեցաւ Ճրդ-  
նել ընդդէմ զօրացն արքունի մինչև  
'ի սպառ: Եւ արդարեն չկարային սոքա  
ազդել ինչ ամրականացն զամիսս բա-  
զումն, մինչև Եկին վիոլսանակ Փէհլիվա-

Նին Խոռըշխտ փաշա . սակայն և նա ոչ  
ինչ յաջողութեան պատահեալ , իբրև  
ետես և զբազմութիւն դասալիք փա-  
խատէից իւրոյ բանակին , մեկնեցաւ  
յԱրթա , և անդ սպասէր հասանելոյ  
ձեռնառութեան բազմաձեռն գնդաց :  
Զայն պատեհ կալեալ Ավի փաշա՝ միա-  
բանեաց ընդ իւր արս վեցհազար 'ի քա-  
ջամարտիկ բնակչաց Սուլու քաղաքի ,  
և յաւել ևս յաճախել զալմուկին 'ի վե-  
րայ զօրացն արքունի գրդիու տալով  
անդադար աղքին Յունաց :

Յայնժամսկան իշխաննք Մոլոտաւիոյ  
և Վլահաց , Աղեքսանդր Խվիսիլանթի ,  
Միխալ Սուցցո և Թէոդոր Վլատիմի-  
րէշքո յորդորել զՅոյնս յապատամբու-  
թիւն . և յամեանն մարտի յամին 1821  
յոտն կացին յանկարծակի և գլուխ  
ամբարձին ընդդէմ Օսմանեանց բա-  
զում գաւառք Պեղոպոննիդայ . և ոմանք  
'ի կղզեաց անտի աշխարհին հանդեր-  
ձեցին կազմեցին անդէն տորմիդնաւաց  
հարիւր և ութմնից : Սոցա հինաբար աս-  
սլատակեալ 'ի Միջերկրական ծովուն  
կալան և զնաւ մի զՕսմանեանց յորում  
էր մի ոմն յառաջնորդաց Մէքքէի հան-  
դերձ կանամքք իւրովք , զի դայր 'ի  
Կոստանդնուպոլիս . խողլառուցին զնաւ

և զկանայս նորա, և զնաւազսն 'ի գեռութեան վարեցին :

Երբեւ ազդեզեւ այս ամենայն յականջա  
Մահմուտայ արքայի՝ յառաջքան զա-  
մենայն փոխեաց զվեզերն մեծ, և կայր-  
գեաց 'ի տեղի նորա զՊէնտէրլի Ալլի  
փաշա : Ասքանդի յԱսիա Էրյայնժամ,  
անագան ուրեմն ժամանեաց 'ի կոս-  
տանդնուռազօլիս 'ի 21 աւուր ամսեանն  
ապրիլի :

ԱՅԼ.Քանդի գլուխ ապստամբութեն  
Յունաց 'ի Վլսհաց մարզէն կայր ամ-  
բարձեալ Սիիսալ Սուցցօ 'ի Հալէթէ-  
կարգեալն, առ 'ի չքմեզս անձին կամե-  
ցեալ Հալէթի ազդովին մեզապարտս  
զՅոյնս ցուցանել և արգեամբ իսկ  
զայրացուցանել զոդիս նոցա և գրգռել  
'ի միարան միախումբ վտարանջութիւն,  
զամենայն հնարս հնարեցաւ 'ի դրանն,  
և յակամայ կամս վէզերին այն ինչ հա-  
մելոյ 'ի վաղիւ անդր որ օր տօն Էր զատ-  
կի ետ հանել 'ի կախաղան զպատրիարքն  
Յունաց զԳրիգորիոս որպէս զհամա-  
խոհ և զկամակից ապստամբելոցն Հել-  
լենացւոց, Թէպէտ և նորա ամսօրեայ  
ժամանակաւ յառաջագոյն նզովս բա-  
նադրանաց արձակեալ Էր ընդգէմապ-  
ստամբիցն . ընդ նմա կախեցին և զմե-

տրապօլիսն Եփեսոսի , և այլ Երկուս  
Եպիսկոպոս . և ոչ սակաւք յերևելքաց  
ազգին Յունաց սպանան , որպէս և մե-  
տրապօլիսն Աղբիանուալուսոյ Կիւրեղ .  
և ոչ էր չափ արիւնհեղութեանց և ա-  
մենայն ազգի ազգի աւերածից՝ որ գոր-  
ծեցան յայնքամ 'ի Յուսկիա , 'ի Մա-  
կեդոնիա և 'ի Փոքրն Ասիա : Գոխեցաւ  
յետ տասն աւուրց և վէղիրն , և կար-  
գեցաւ Փէփէյի Սալիհ վիաշա . իսկ Պէն-  
տէրլին աքսորեալ 'ի Կիալրոս և անդ-  
գլխատեցաւ . և պատճառք այսպիսի  
յանկարծ 'ի մահ յափշտակելոյ նորա  
'ի տասնօրեայ պաշտամանէն , թշնամա-  
նալ նորին ընդ Հալէթ էֆէնտի , ընդ  
որում դժկամակն էր 'ի սկզբանէ և  
խորհէր բառնալ զգլուխ նորա :

Դեսպանն Ոտուսաց Աթբոկոնուլ թէ-  
պէտ և չկամէր համարձակ պաշտամ  
կալ վտարանջաւթեան չելքնացւոց ,  
սակայն պարտ անձին վարկաւ բողոք  
ունել 'ի դուռն արքունի՝ զի մի վայրա-  
պար խոշտանդեսցին Յոյնք , այլ քաջ  
քննեսցին նախ և ապա դատեսցին որ-  
պէս պարտն է : Ընդ այս դժկամակեալ  
մեծի դրանն՝ ետ պատասխանի դես-  
պանին եթէ իշխան է ապաքէն թագա-  
ւորս մեր պատուհասակոծ առնելզիը .

պատակս իւր որպէս և զիարդ հաճոյ  
իցէ նմա . այլ Աթրոկոնով և ևս զայ-  
րագնեալ՝ Ել սպառնալեօք յապարանից  
իւրոց որ 'ի Պէյօղու , և մեկնեցաւ իւ-  
րովքն հանդերձ 'ի Պիւյիւքտէրէ :

Յամնեանն մայիսի միսեցան Օսմա-  
նեանք'ի Մոլտաւիա և 'ի Վլահս, և հարին  
խորտակեցին 'ի զանազան տեղիս զզօրս  
ապստամբաց . զի և զօրավարք սոցա չէին  
ինչ միաբանք ընդ իրեարս : Ականաւորքն  
'ի սոսս Տիմիթը Իսմիլանիթի , Կան-  
տակուղենոս , Քոլոքոթրոնի , Մաւրօ-  
Միսալի , Մաւրոքորտալծո և այլք ո-  
մանք զօրացան արդարեւ 'ի տեղիս տե-  
ղիս , 'ի չիդրա՝ որ է Զամլընա , 'ի Կէ-  
ապօղիս , 'ի Մալվաղիա , 'ի Կաւարին ,  
'ի Թերմապիլէ , և 'ի Թրիփոլիցա . սա-  
կայն և յոլով ուրեք ընդ ծով և ընդ  
ցամաք զեան բազում կրեցին չել-  
լնիք , և անհամար անմեղ մարդիկ կո-  
տորեցան 'ի Կիպրոս , 'ի Զմիւռնիա և  
'ի Թեսալոնիկէ :

Խափանեցաւ առ գոյզն ինչ ժամա-  
նակ բուռն սաստկութիւն օսմանեան  
բանակին 'ի միսել անդ Պարսից յամ-  
սեանն նոյեմբերի 'ի սահմանս իւրեանց  
մինչեւ յառնուլ և զկարս և զթոփրագ-  
դալէ . սակայն 'ի մեռանել արքայոր-

դւոյն Պարսից՝ որ կոչեր Մէհէմմէտ  
Ալի միրզա՝ 'ի քոլերա ախտէն, մեկ  
նեցան զօրք նորա անդրէն յաշխարհն  
իւրեանց:

Խուրշիտ փաշա մեծապէս նեղէր  
յայնժամ զԵանեացին Ալի փաշա՝ պա-  
տեալ պաշարեալ զնա յամրոցի նորուն  
որ 'ի ծովակի ուրեք. և յետ երից ամսոց  
յաջողեցաւ նմա խրամատէլ և խար-  
խարէլ զկողմանս ինչ ամրոցին անդա-  
դար հրձգութեամբ և ականահառու-  
թեամբ: Յայնժամ զօրականք Ալի փա-  
շային յոդիս ասլասաան եղեալստիպէին  
զնա անձնատուր լինել. և Ալի փաշա  
յայնժամ ևեթ յանձնն կայաւ ունկն  
մատուցանել բանիցն խուրշիտայ: Եւ  
յոլոքելզնա խուրշիտայ յուսադիր բա-  
նիւք քաջալերութեան և միրոյ, Ալի  
փաշա աւանդեաց 'ի ձեռս նորա զա-  
մուրն և ինքն մեկնեցաւ 'ի կողեակ ինչ  
մօտադոյն, և անդ սպասեալ մնայր  
թողութիւն ընդունել յարքայէ որպէս  
խոստանայրն խուրշիտ: Անցին աւուրք  
երեք, և ահա եկն եհաս յարքայէ դա-  
տակնիք մահու նորա: Յայն իբրև ետես  
գոռողն Ալի բուռն եհար անդէն 'ի  
հրացանս իւր և դոցեաց զայրագին.  
Ալք վատշուելը, միթէ այդչափ կնա:

մարդի՞ ոք համարիցիք դուք զԱլի՞ ։  
զայս ասացեալ հուր հարկանէ, և զմին  
՚ի սպայից անտի տապաստ արկեալ և  
զմիւսն կարեվէր խոցեալ՝ անկանի ապա  
և ինքն՝ ՚ի տեղալ՝ ի վերայ նորա կատա-  
րեայ գնդակաց, ՚ի հինգերորդի աւուր  
ամսեանն փետրուարի յամի 1822 :

Յայնմհետէ առաւելագոյն ևս սպա-  
րապով միտ եղ Մահմուտ ազբայ ՚ի  
նուաճել զՅոյնս : Յամսեանն ասզինի  
առին Օսմանեանք զՔիոս կղզի, որ է  
Սագըզ, և ՚ի հարիւր հազար բնակչաց  
նորին քսան հազարք ևելթ մնացեալ,  
այլք մատնեցան ՚ի հուր և ՚ի սուր և ՚ի  
գերութիւն անդարձ : Խուրշիւտ փաշա-  
դիմեաց քսան հազարաւ ՚ի Սուլու, Տրա-  
մա Ալի փաշա ՚ի Մոռա երեսուն հա-  
զարաւ, և նաւատորին Օսմանեանց ՚ի  
Սամսս և յիփսարա և ՚ի ծովափնեայս  
Մոռային : Սակաւ ուրիք հարին զսոսա  
Մաւրոքորտաժօ և Ոդիսւս և Վոլոքո-  
թրոնի զօրավարք Յունաց, և յոլովա-  
գոյն հարան ՚ի սոցանէ . սակայն Խուր-  
շիտ փաշա փոխանակ զի վանեցաւ ա-  
ռաջի Ոդիսեայ ընկեցաւ յիշխանութէ  
իւլմէ, և յետ աւուրց ինչ մեռաւ ևս առ  
վատին և առ բազում աշխատութեան . և  
կալաւ զսովարասկետութիւնն ութանա-

մենին Ճէլալ փաշա, որ և նա մեռաւ  
զինի երկուց ամսոց։ Ի կրետէ անպար-  
տէլի իմն էր մարտն և խռովութիւնյէր  
կաքանչիւր կողմանց, թէտէտ և Օսմա-  
նեանք բազմաթիւ էին անդանօր, և  
օժանդակեալք ևս 'ի զօրաց կուսակալն  
Եգիպտոսի : Խակ 'ի ծովույաջողութե  
'ի գէտ էկեալ Յունայ՝ նաւապետք  
նոցին Միոլիս կամ Մնիաւլիս և Քա-  
նարիս բախեցան ընդ նաւատորմին Օս-  
մանեանց, որում առաջնորդէր ծո-  
վակալն Գարա Մէհմետ փաշա, հըր-  
դէհեցին զնաւ ծովակալին և զայլն  
ցիր և ցան կացուցին :

Լուր այսոցիկ ամենայնի պէտէս  
հնչէալ 'ի թագաւորեալքաղաքն, ոչ  
սակաւ ամբոխեաց զբնակիչս նորին, և  
մանաւանդ զենիչէրիս՝ որ փոքր միւս  
ևս և յուղէին աղմուկ անհնարին ընդ-  
դէմաւագանւոյն և արքայի խակ գլուռ  
պին։ Յաւուրմն յայնոսիկ և լոմայափոխ  
չալէթի խախէլ թիկունս և գործի իւ-  
րոցն անոցամութեանց արարեալ զնա՝  
բազում չարիս մեքենայեաց 'ի վերայ  
քրիստոնէից, և զեան մեծ հասոյց օամա-  
նեան պէտութեան։ Եւ նոյն ինքն խակ  
չալէթ կարի իմն հետամուտ լեալ 'ի  
կորսւսանել զերևելի երևելի Յոյնս

կոստանդնուպօլսոյ, որպէս կանխեցաք  
ասացաք, զայրացոյց և ևս զարտաքոյ  
եղեալսն, կամ գէթ այնպէս թուեցաւ  
յառա յոլովից : Արդ ենիչը իք սկսա-  
նէին վերաստին ամբառնալ զձայն բողո-  
քոյ իւրեանց զաղետից աշխարհին և  
զտեսչութենէ իրաց պետութեանն .  
վասն որոյ փոփոխեցան բազումք յա-  
ւագորերոյն, զոր օրինակ վէղին և  
զենավեանն, և ևս Պէրպէտր սլաշին . և ըն-  
կալաւ զինիքն արքունական Տէլի Առ-  
տուլլահ փաշա . որ տեղեակ գոլով  
ամենայն նենդագործութեանցն չա-  
լէթի, իսկ և իսկ զգացոյց արքայի և  
առ հրամանն աքսորել զնա յիկոնիոն 'ի  
մենաստան Ծէլէվլ տէրվլշաց, զի 'ի  
նոցանէ իսկ էր այրն . ապա և խեղգա-  
մահ առնել զնա անդէն . թէսկէտե-  
ռւնէր նա 'ի ձեռին յարքայէ գիր ազա-  
տութեան յամենայն պատուհասէ : Պա-  
տուհասեցաւ ընդ նմա մահու չարաւ-  
և խիսէլ հրեայ, և յետ ամաց ինչ  
Շապճի հրեայն, և ինչք նոցին գրաւե-  
ցան յարքումիս :

Յետ այնորինկ հրամանն ետ արքայ զէն  
առնուլ ամենայն առն օսմաննցւոյ 'ի հըն-  
գետասաննամենից մինչեւ յիսնեմեանս,  
և տորմիդ մեծ կազմեալ թէթելն թաց

նաւուց՝ ետ ՚ի ձեռս խոսրով վիա  
շայի ՚ի սկզբան 1823 ամին և արձակեաց  
՚ի Յունաստան : Զօրավարք Յունաց  
Քոլոքոթրոնի և Նեքիթաս և Մարքո  
Պոծարիս և այլք՝ ոչ սակաւ արխացան  
դոյզն դնդաւ ընդդէմ բիւրաւորացն  
Օսմանեանց ընդ ծով և ընդ ցամաք և  
յայսմ ևս արշաւանի . սակայն դար  
ձեալ վանեցան և ամրացան ՚ի դղեակս  
աշխարհին , և ՚ի վերջէ յամուրն Միսո  
լունկի , և անտի աշխատ առնելին զօս  
մանեանս առ ժամանակ մի : Եին և եկք  
ումանիք և օտարազգիք յԵւրոպակա  
նաց , որ բանիւք և դրամովք օժանդա  
կէին ապստամբացն չելլենացւոց յորոց  
մի էր և համբաւեալն ՚իքերթողս այսր  
դարու անդղիացին Լորտ Պայրն կամ  
Պիրօն . և սա տեսեալ զանկումն Մի  
սոլունկեայ ՚ի ձեռս Օսմանեանց ՚ի  
մատնութենէ նոցին իսկ չելլենացւոց՝  
հիւանդացաւ հիւանդութիւն մեծ , ո  
րովէ մեռաւ իսկ յետ աւուրցինչ յառ  
ըիլ 19 յամին 1824 . և սուդ մեծ  
առին Յոյնիք ՚ի վերայ նորա , զի և դրա  
մոց և պարենից կարօտութիւն էր յոյժ  
յաշխարհին . և որ մեծն է՝ ցանդ ընդ ի  
րեարս խուռակալ հակառակէին զօրա  
վարք իւրեանց , և անդստին ելեւ

զիմեամբք առնէին 'ի փոյթ իշխանսիւրութեան :

Ի սկզբան 1824 ամին Տէրովը փաշա՝  
որ կուսակալէրն 'ի Վետին՝ կարգեցաւ  
Վալի կամ փոխարքայ և կուսակալ Մու-  
ռայի . և ծովական խոսրով փաշա եւ  
վերստին բազմութեամբնաւուց 'ի Միջ-  
երկրականն : Եհաս յիշխարա կղզի , և  
բաղում քաղցրութեամբ յորդորեալ  
զբնակիչն 'ի հապատակութիւն՝ իրեն  
եղիտ զնուսա անսաստս և ընդդիմակացս,  
բախեցաւ ընդ նոսա և խորտակեաց 'ի  
սպառ , և կառափունս հինդ հարիւր և  
ականջս երկերիւր առաքեաց 'ի Կոս-  
տանդնուսպօլիս : Այլ այս խնդութիւն  
Օսմաննեանց կարձեցաւ առ ժամն . զի  
զօրավարք Յունաց Միոլիս և Քանա-  
րիս առին դարձեալ զիշխարա , և զնա-  
ւատորմն Օսմաննեանց ոչ սակաւ տագ-  
նապեցուցին :

Յամնեանն յուլիսի Եհաս յօդնութիւն  
ծովակալին խոսրովայ և խպրահիմ փա-  
շա որդի Մէհէմմէտ Ալեայ կուսակալին  
Եղիպտոսի բազմութեամբ նաւուց .  
սակայն և նա հարաւ ուրիք ուրիք 'ի  
չեղենացւոց . և ծովակալն դարձարա  
ըեալ 'ի Կոստանդնուսպօլիս՝ պատուե-  
ցաւ սամուրենեզք 'ի վէղիրէն մեծէ՝ որ

Եր Մէհէմմէտ Սէլիմփաշա, վասն ողջ  
անիւսաս ածելոյ հասուցանելոյ զնաւա-  
տորմն՝ ի կոստանդնուպոլիս:

Ի սկզբան ամին 1825 ի վեր երևե-  
ցաւ աղմուկ ինչ ապստամբութեան յե-  
նիչէրեացն դասս . սակայն զգօնամիտ  
արքայն Մահմուտ վաղ իմացեալ ըղ-  
դաւն՝ կալաւ ՚ի նոցանէ արս յիսուն, և  
՚ի խոշտանդանս մատնեալ նախ՝ ապա  
խեղդամահ հրամայեաց առնել : Ի  
նմին ժամանակի և ՚ի Սերվիայուղեցաւ  
ինչ խոռովութիւն . այլ իշխանն Միլոշ  
ահագին խստութեամբ պատուհա-  
սեալ զիստովիչն և զաղմուկն ցածու-  
ցեալ ընկալաւ յարդարակորովարքայ-  
էն զտէրութիւն աշխարհին Սերվաց :

Իսկ Մահմուտ արքայ ոչ ինչ վհա-  
տեալ բնաւ ՚ի ներքին յուղմանց աստի՝  
մեծապէս միտ գնէր ՚ի հանդերձանս  
պատերազմին : Իպրահիմփաշա կալաւ  
զնաւարին յամսեանն մայիսի, և մեծաւ  
զիմանք վարեալ ընդ բնակիչն՝ հրաման  
ետ նոցա ելանել և գնալ յո՛ և կամք  
իցեն աղևսիւքն իւրեանց հանդերձ, բայց  
միայն զի զկահս պատերազմի մի տար-  
ցին : Յետ այնորիկ յերիս առաջս արու-  
հեալ զգօրս իւր՝ արձակեաց ընդ Յու-  
նաստան . և առին նոքա զԱրկադիա և

զբալամաթա և զթրիփոլիցա : Եւ զօրագլուխք և իշխանիք Յունաց թէպէտ և 'ի բաց եղեալ զընդ միմեանս թշնամութիւն միաբանիք էին 'ի վաստակս իւրեանց, սակայն 'ի բազմութենէ անտիձախող արշաւանաց լուծան լքսն 'ի դորութենէ, և հայցեցին օդնութիւն յԱնդղիացւոց, բայց ընկալան և ոչինչ : Միայն ամրացեալքն 'ի Միսոլունկի դդէմկալան պաշարման եյարձակմանցն Օսմանեանց որոց զօրավարէր Մէհէմմէտ Ռէշիտ փաշա՝ զամիս երիս անընդհատ, մինչև մեկնիլ նմա 'ի ձմերոց յերեսաց յորդահոսան անձրևաց աշնայնոյն : Ընդ այս ծանրացասումն եղեալ արքայի՝ հրաման ետ խպրահիմփաշյի ելանել 'ի թրիփոլիցայէ և դնալ յառումն Միսոլունկեայ նիղակակցութե՛ք Ռէշիտ փաշայի և ծովակալն Խոսրովայ : Եւ սաստկացուցեալ զօրավարաց երեցուն զպաշարումն 'ի վերայ Յունաց, ոչինչ նուազ սաստկութեամբ վանեցան 'ի նոցանէ բազում անդամ այլ ևս ամիսս հինգ. սակայն ուրուրեմն 'ի 22 աւուր ամսեանն ասլրիլ յամին 1826 առին զամուքն. զի և սուլան հնարին յոդիս ասպաստան արարեալ էր զամրականսն, մինչև յանձն առնուլ

նոցա ինքնին ելանել գնալ՚ի բաց , հեր  
ձեալ զբաղմութիւն պաշարողացն . և  
մնացին յամրի անդ ծերք ոմանք և կա-  
նայք և մանկտի : Հաղար և ութ հա-  
րիւր Սուլուցիք ևեթ անցեալընդ ան-  
չափ վտանգս և աշխատութիւնս՝ հա-  
սին՚ի Սալոնա . իսկ այլք յամրականտց  
մեկնեալ՚ի մարտկոցն Պոծարեայ ընդ  
որով ական հաստեալ էին՝ հուր հարին  
յականն և թաղեցան յաւերակս մարտ-  
կոցին , թէպէտ և յօսմանեանց ևս  
վտանգեցան՚ի փլածին արք աւելիքան  
զերկու հաղար :

Աւետիք առմանն Սիսոլունկեսյ  
հնչեալ՚ի կոստանդնուպոլիս՝ ցնծու-  
թեամբ լցին առ հասարակ զբաղաքն :  
Սակայն Մահմուտ արքայ ոչ ինչ կարի  
սփոփեցաւ ընդ յաղթութիւնն , զի չե-  
ևս մեծադունին ժամանեալ էր յաղ-  
թութեան՝ որում՚ի հնգետասան ամաց  
հեաէ ըլձանայր . այն իսկ էր հրահան-  
գելզօրս աշխարհին իւրոյ ըստ Եւրո-  
պացւոցն օրինի . յորմէ ոչ միայն երկրա-  
կալութեանց և յաղթութեանց բազ-  
մաց էր ակնկալութիւնն , այլ և մեծի  
անդորրութեան իւրոց հպատակաց :

Եւ արդ ժամ է կարդագրել ոճով  
ըստ տանելոյ մատենիս որչափ ինչ ա-

լար և կատարեաց արի արքայն Մահմուտ՝ ի հանդէս իւրումն անվեհեր և մեծագործ բարոյից : Եւ առաջնորդ հաւատարիմ կացուք և յայսմղաքունական պատմագիրն զիսատ էֆէնտի :

Անյաջողել պիտանի խորհրդոցն Ահմայ արքայի ՚ի նորոգութիւն կարգաց զինուորութեանն Օսմանեանց , Թէպէտ և տարաժամ շտապոյ նորին էր գրելի , սակայն ևս առաւել խստերախ ենիչերեացն ըմբոստութեան վընաս էր այն . յորոց ՚ի բառնալն ՚ի միջոյ՝ դիւրացաւ ամենայն ինչ :

Արդ յամին 1826 խորհուրդ արարեալ ընդ մեծաց ատենակալացն արի արքայն Մահմուտ՝ հաստատեաց զատուցանել՝ ՚ի դասուէ անտի ենիչերեաց գունդ մի առանձինն , և կշքինձի կամ գործօն անուն եդեալ նոցա՝ մարզել ՚ի հրահանգս զինուորութեան : Ապա ՚ի խորհուրդ կոչեցաւ և վէզիրն չիւսէլին փաշա որ կուսակալ էր խիւսավէնտիկեար և գոճա իլի գաւառաց , և ունէր յայնժամ զտեսչութիւն բերդորէիցն Վոսփորի , այր քաջահմուտ ամենայն իրաց և բարուց ենիչերեացն . և նա պատասխանի տուեալ ասէ ցարքայ . « Թուրի ինձ տէր , եթէ ոչ յան-

հնարից իմն իցէ հաւանեցուցանելը ըդ-  
գլխաւորս 'ի զօրապետաց և զօրակա-  
նացն դասս 'ի հնազանդութիւնն նորա-  
նոր կարգաց . այլ 'ի կրտսերագոյնս 'ի  
զօրագլխաց անտի բունեալ են չարեք ,  
այս ինքն է 'ի նոսա որ կոչին Միւթէ-  
վելի , Աշճի ուսմթասը , Խասէքի օ-  
թուրաղը , և որքըստնոցանէ արք վատք  
և դատարկանձունք և ընչափաղցք . և  
զի ոչ կարի բազմաթիւք են սոքա ,  
նախ առաջին հարկ 'ի վերայ կայ ըդ-  
սոսին բառնաւլ 'ի միջոյ ։ — «Այլ  
իմ կամք են , ասէ արքայ , քաղցրու-  
թեամբ վճարել զիրս զայս . և թէ այն  
ոչ յաջողեսցէ՝ ապա 'ի խսոսութիւնն  
բուռն հարկանել ։

Հարկ էր այնուհետև որսալ մի առ-  
մի զօրավարս ենիչերեաց , մանաւանդ-  
զայնոսիկ որ երեւելիքն էին 'ի նոսա ,  
որպէս բուն զօրավարն Ճելալէտալին  
Վէհէմմէտ աղա , փոխանորդ . նորին  
(գութքեահեասը) Հասան փաշա , եր-  
կրորդ փոխանորդ . նորին (սէյմէն պաշը)  
Իսլրահիմ աղա և այլք . և սոքա մը-  
տադիւրութեամբ յանձին կալեալ զա-  
ռաջարկութիւնն 'ի նոյն հաւանեցու-  
ցին և զամենայն սպայս և զօրագլուխս  
զօրացն , էր զոր բանիւ և էր զոր արծա-

Ըստ կ խոստաբանութեամբ :

Եւ 'ի պահանջել աղքայի՝ զի և գըրով տացեն նմա զհաւանութիւն իւրեանց, ժողովեցան յապարանս դեն պետին 'ի քսաներորդի հինգերորդի աւուր ամնեանն մայիսի վէղիրն Մէհէմմէտ Աէլիմ փաշա, դենպեան Մէհէմմէտ Դահիր էֆէնտի, որ երբեմն դատաւորն էր Եւրոպեան՝ Արիֆ պէյ էֆէնտի, բժշկապետն արքունի Մուսդաֆա Պէհանէթ էֆէնտի, դատաւորն Կոստանդնուպօլսոյ Էլճաճ Սատրպ էֆէնտի, համարակալն Դայեար էֆէնտի, և այլ աւագանին, և 'ի վերջէ զօրավարն ենիչերեաց . և հաստատեցին 'ի դրի հարկանել զառաջարկութիւնն կարևոր, և յետ երից աւուրց դարձեալ ատեան մեծ կարգել, և հաստատել զիրմն :

Խակ 'ի 28 աւուր ամնեանն մայիսի 'ի ժողովել միւսանդամ ամենայն աւագանւոյն և օրինականաց և զօրավարացն ենիչերեաց՝ խօսել կալաւ վէղիրն և ասէ . «Անդստին 'ի ժամանակաց նախնի թագաւորաց Օսմանեան զարմիս՝ պետութիւնս մեր հովանաւորեալ յերկնից, ճոխացեալ քաջամարտիկ արամբը և բազմութեամբ դանձուց՝

ահադին իմն էր յաց եօթն պետութեանց<sup>1</sup> որպէս վիշապ եօթնադլուխ յարբաց ունելովը դիմիումմիում 'ի նոցանէ զմի մի յահարկու իւրոց բերանոց : Այլ փոխեցան ժամանակը . և զօրականքս մեր ոչ ևս փոյթ յանձնն կալեալ արդ 'ի կատարումն պարտեաց իւրեանց՝ առ 'ի լինելոյ արժանի խնամոց արքայից արքայիս , և 'ի մուացօնս ևս դարձուցեալ զաստուած եղէն օրէնս , անդադար եղէն յապստամբութենէ . տկարացան անկաննոքա յառաջնոյ իւրեանցն արութենէ , և առաջնորդեալք 'ի վատ և կամ յանհմուտ զօրավարաց՝ թիկնադարձոյցք զէնընկէցք եղէն բազում անդամ առաջի թշնամեաց , և ազգս մեր ողջոյն 'ի սուդ և յապաշաւնստեալ ովքայ զամօթ պարտութեանց մերոց , և զկորուստ անթիւ դանձուց և ստացուածոց : Քանի՞ դառն է մեզ

1 Սովորութեան է Օսմաննանց Ետի գըրալ իամ Եօթն պէնստ անուանն էլ պամենայն Եագաւորս Եարոպայ Մանգամայն + այլ պէտի սուբէս իայսորն Գևըմանասուոյ և Ետի գըրալ պաշը , ասպէ համարեցան ոմանդ , որպէս և Ս' Ենինսին , Եօթն պէնստ պէտի ընպիրս Գևըմանիոյ նշանակիւալ :

յուշ անդամ ածել զՅունացն իրա, որ  
մինչդեռ ստրուկքն անուանեալ՝ Եղե-  
գունքը ջախջախք էին առաջի ահագ-  
նասաստ ուղիւցից հոսանաց օսմանեան  
ոլետութեանս, զդէմ կալան ահա մե-  
րոցս ճպանց, և մեզ չե ևս յաջողեցաւ  
շիջուցանել զհուր ապստամբութեան  
նոցա : Ա կայեն դիրք պատմութեանց  
աղդիս, եթէ զիարդ մարտիկքն մեր ա-  
ռաջինք նուիրէին 'ի սէր հաւատոց  
զինչս և զանձինս իւրեանց, և որպէս  
անքակ և անյոդողոդ պնդեալ խարրա-  
խէին 'ի ճակատուն տեղւոջ, և մանա-  
ւանդ հետեակազօրն արի ենիչէրեաց .  
այլ արդ ոչ ևս է այնպէս : Եւ ընդէլլ  
այս : Քանզի արք դատարկապորտք  
սպրդեալ մտեալ 'ի նոսա՝ խարխարե-  
ցին առ սակաւ սակաւ զհիմունս բա-  
րեկարգութեան նոցա . մատեանք ցու-  
ցակաց նոցին լցան զեղան անուամբք  
ենիչէրեաց, և մարտիկ ոք ենիչէրի չիք  
ոք չիք ուրեք . իսկ արք վատք և ան-  
դործք և լրտեսք օտարոտի պետու-  
թեանց լի են 'ի նոսա : Ի կերպս կեր-  
պս սողոսկեալ մտանեն 'ի նոսա յոյն  
մարդիկ . և ենիչէրիքն տգէտք և զա-  
չացուք անլընտրողք ճշմարտին և ստոյ՝  
տեղի աման ամենայն հրապուրանաց նո-

շին չարաց , և այլ ընդ այլոյ բանիւք  
յլմբոստութիւն և ՚ի խռովութիւնս  
կրթին օրքան զօր , և ժահրալից բանիք  
նոցավաղլաղակի ճարակ գտեալսկուն  
ընդ ամենայն զօրականսն , և զքաջացն  
ևս ջլատեն զզօրութիւն : Խակ պատ  
ճառք զայս օրինակ նուազելոյ զօրու  
թեան զինուց մերոց այն է առաջին ,  
զի հովացեալ են զօրականիք մեր ՚ի պահ  
պանութենէ օրինաց , և բնաւ խակ մո  
ռացեալ եթէ որպիսի վարձք բարեաց  
պատրաստեալ կան արխացելոցն ՚ի մար  
տըս հաւատոյ՝ հպատակութեամբ ա  
ւագաց : Ազէ ածէք զմտաւ զաւուրս  
բարեյիշատակ արքային Սիւլէյմանայ  
առաջնոյ , և ասացէք եթէ իցէ ինչ  
նմանութիւն ընդ կարգս զինուորութե  
այնը ժամանակի և ընդ զեղծմունս  
մերոցս ժամանակաց : Եւ ուստի մը  
տեալ իցէ այս փոփոխութիւն . միթէ  
պակասեաց ինչ թոշակ զօրականացն  
և սպայից մերոց , և կամսական իցէ զոր  
ունինն . ազէ ասասցեն համարձակ .  
ապաքէն , գոհութիւն երկնից , բաց է  
հանապաղ դանձ մերոյ արքայիս ՚ի  
պէտս իւրոց զօրականաց . զեղուն շուե  
մարանիք պարենիւ , և չիք չափ մթերից  
կարևորաց : Վախճան բանիս , դիտակ

խակ էք դուք զօրութեան ուժոյ և  
խորհրդոյ թշնամեաց մերոյ կրօնիս, և  
անկարգութեանց որ զօրացեալ են յե-  
նիչերիսն մեր, զորս և 'ի համար ար-  
կանել ծանր է լաւլեաց և դժոխըմբեր՝  
որոց զմտաւ անդամ ածել կամիցին.  
ձեզ արդ արժան է հաստատել կար-  
դել, եթէ յոր ինչ խորհուրդս ձեռն  
արկանել պարտ իցէ առ 'ի խնամունել  
օսմանեանս փառաց + վիճրդ ցածու-  
ցանել զդոռոզութիւն մերոց թշնա-  
մեաց, և վրէժխնդիր լինել մերոցս  
աղեաից : Հապա խօսեցարուք + ցու-  
ցէք մեզ զՃանապարհն՝ ընդ որ անկ  
իցէ գնալ, և մէք միով միաբանու-  
թեամբ հետեւեսցուք ընդ այն 'ի փառս  
և 'ի յաջողութիւն պետութեանս մե-  
րոյ » : Եւ 'ի վկայել ժողովականացն  
ամենեցուն բանից ճշմարտութեան  
վեղիրին, յաւել ասել բժշկապեան  
Պէհանձեթ էֆենտի, « Զամենայն փոյթ  
'ի մէջ առնուլ արժան է յապաքի-  
նումն ժանտ ախտիս որ ճարակեալ  
է 'ի պետութեանս մերում, և զան-  
կարգութեանն շարաւ զապականիչն  
հասարակաց ազգիս՝ նշարակաւ իմաս-  
տութեան հարկ է 'ի բաց թափել:  
Եւ արդ օն առեալ յայտ արասցէ

մեղքէիս էֆէնտին դշանդամանս իրաց  
պետութեան մերոյ որ ընդ արտաքին  
ոլն իցեն , որպէս զի քաջիկ 'ի վերայ  
հասեալ համօրէն աղդեցութեանց չա-  
րաչար ախտիս՝ կարասցուք զպարտու-  
պատշաճգեղոցն ածել'ի վերայ զդար-  
մանս ։ Իսկ բէիս էֆէնտին մի առ մի  
առաջն եղեալ զիրացն պայմանս՝ ա-  
ռաւելևս զայնմանէ երկարաբան եղե ,  
եթէ զիսարդ 'ի մնաս պետութեանս մե-  
րոյ մտաբերեն Եւրոպացւոցն տէրու-  
թիւնք , և քանի անսարդար պահանջան  
արդ իսկ յուղեն'ի Յունացն ապատամ-  
բութեան : Յայնժամ օրինականացն  
դասք ասեն ընդ մի բերան + և Քանզի  
արդար և իրաւացի են բանիքդ , պարտ  
և պատշաճ է ամենայն մահմէտակա-  
նաց հրահանդել'ի վարժս զինուորու-  
թեան . և նախկին պարտք նոցա՝ հնա-  
զանդել հրամանացն արքայի ։ Զնոյն  
և զօրավարք ենիչէրեացն ասացին , և  
վէզիրն դրուատեալ զնախանձ նոցա՝  
հրամայեաց ատենադպրին ընթեռնուլ  
զինքնագիր հրովարտակն արքայի , և  
ասպա զօրինագրութիւնն նորոյ կարդա-  
ւորութեանն , որ 'ի քառասուն և վեց  
դլուիս բանից բովանդակեր զամենացն  
զկարևոր և զպիտանի սահմանադրու-

թիւնս ենիչքեաց , և մահաւանդ-  
զշշթինչի անուանելոց : Յետ այնորիկ  
գենպետն օրինական վճռով հաստա-  
տեաց զառաջարկութեանն արդարու-  
թիւն , և զորս ոչն անսացին այնմհրա-  
մանաց՝ արժանիս պատժոց պատուհա-  
մից գատեցաւ զնոսա : Ապա ակնար-  
կեաց առ քարողն մզկթի սուլդան  
Պայէղիստայ՝ որ կոչէր Ահմէտ էֆէն-  
տի , և նա մաղթանս ինչ արար յաղա-  
գլս իրացն յաջողութեան , և ինքն զա-  
ռաջին գլուխս կուրանին զկոչեցեան  
Ֆաթիհա՛ զհետ կցեաց : Յայնժամա-  
պա նշանապահն եդ 'ի հրովարտակի  
անդ զանուն և զկնիք վլշղլրին և զդէն-  
պետին , և զշիւսէյին փաշայի , և զՄէ-  
հէմմէտ իղլէթ փաշայի . և ապա այլք  
մի ըստ միոջէ ձեռնադրեալ հաստա-  
տեցին զբանս հրովարտակին : Յետ այ-  
նորիկ սկսեալ զսուցատրել ընդ մի-  
մեանս զկարեսոր պիտանութենէ կար-  
գացն կանոննելոց՝ զօրավարք զօրուն  
ձառ արկեալ խօսէին զբազմասպատիկ  
պարտութեանց իւրեանց 'ի պատճառս  
անկարգութեան զօրականին , և նմին  
հակառակ բարեսլաշտադոյնքն 'ինոսա  
սսէ կաստ էֆէնտի՝ պատմէին իրե-  
րաց զհրաշալի յաղթութեանցն Մահ-

մէտի ընդդէմ այլադենից՝ զթշնամեացն  
զէնս նոցունց հակառակ վարելով :

Իսկ վէջիրն ետ ՚ի ձեռս ատենա  
դպրին զվաճիռ դենպետին, և զհրովար-  
տակն արքունի ՚ի ձեռս զօրավարին  
ենիչքեաց, և ՚ի ձեռս պատմագրիս  
Էսատայ զձեւ երդմանն որ սմին իրի  
յօրինեալ եր բովանդակելով զամե-  
նայն զկարեսոր պայմանս, և հրաման ա-  
րար նոցա և դատաւորին կոստանդնու-  
պօսոյ և օրինականացն ամենեցուն  
Երթալառ ժամայն յապարանս զօրա-  
վարին ենիչքեաց, և անդք ժողովեալ  
զամենայն սպայս և զգնդապետս զօ-  
րուն՝ ընթեռնուուլ յականջս նոցա զնա-  
մականին, և ապա տալ նոցա ձեռնա-  
դրել և կնքել զթուղթ երդմանն . և  
պատուիրեաց զօրավարին ազդ առ-  
նել ինքեան զելս իրացն սակաւատող  
դրուածով, և օրինականացն դառնալ  
անդրէն առ իւր ՚ի տուն դենպետին :

Ելեալ մեր յապարանիցն, ասէ Է-  
ստա, և աշտանակեալ յերիվարս ոս-  
կեզարդս խաղացաք գնացաք մինչեւ ա-  
ռաջի պատշտամին որ թէքէլի քէօքք  
անուանի, և մոտաք ՚ի մէջ խուռն ամ-  
բոխի ժողովելոց սպայիցն : Անդ ատե-  
նադպիրն ընթերցաւ, ասէ, նախ զդա-

տավշիու գենսպետին, ասլա ես զերդ-  
մանն զձեւ . և ասլա հրամայեաց զօրա-  
վարն միում ումեք 'ի դիւանագրացն  
իւրոց վերծանել զհրովարտակն : Իսկ  
այրն այն բնածին կամկեղծ իմն տգի-  
տութեամբ սկսաւ, ասէ, խեղաթիւրել  
և թեքել զիմատո բանիցն, մինչեւ բար-  
կանալ զօրավարին . և կորզեալ 'ի ձեւ-  
ռաց առնն զհրովարտակն ետ ՚ի ձեռս  
իմ և ասէ . « Ազէ դու ընթերցիր  
զգա » : Եւ ես մաղթեալ ինձ յօդնու-  
թիւն զոդիս ամենայն մահմէտականաց  
հանդուցելոց ընթերցայ զգեզեցիկ  
հրովարտակն զայն այնպիսի պայծառ և  
յստակ բարբառով, զի և անտի կենա-  
ցըն բնակչաց դիւրալուր էին, ասէ,  
բանք իմ : Յաւարտ ընթերցուածին  
եհարց զօրավարն զկարծիս մուաց նո-  
ցաւ և նոքա առ ժամմի գեղեալ՝ ասլա  
յանձն առին զպոյմանսմն, և էին ևս  
ոլք ասէին . « Արեւամբ մերով կնքեմք  
մեք զհրովարտակդ » : և արդարեւ այն-  
չափ եռանդն վառեցաւ 'ի նոսա 'ի  
ժամուն, զի և որք ոչն ունէին, կնիք,  
առ ոսկերիչս ընթացեալ նոյն հետայն  
հրամայէին քանդակել, և առ շտապ  
մեծի տագնապին զմիմեանս ունտկոխ  
արարին . որ և այս նոցին անհրահանդ

բարուցն են արդասիք՝ ասէ պատմա-  
գիրն : Խցէ այն որպէս և է , կնքեցին  
զհրովարտակն ոգիք երկերիւր և ութ ,  
և մի կողմն հրովարտակին լցաւ մեադե-  
ղով . և օրինականացն առեալ տարան  
զթղթեանն առ վէջիրն . խսկ նա առա-  
քեաց կամենայնն առ արքայ . որ և  
իւրուլ ինքնագիր բանիւք հաստատեաց  
՚ի վաղիւ անդր զյանձնառութիւնն զօ-  
րականացն :

Յետ այնորին մեծաւ փութուլհան-  
գերձեցան ՚ի սակաւ աւուրս զէնք և  
զգեստք բաշխելիք յէշքինձիան . և  
թիւ նոցա եր իւրու հազարաց հնդից :  
Կամէին բազումք մեծահանդէս առ-  
նել զբաշխումնն ՚ի դաշտին Տաւուտ  
փաշայի . սակայն զօրավարն ենիչերեաց  
ետ խորհուրդ խոհական՝ ըստ մասնէ  
բաշխել զզէնսն , և ՚ի միում ուրեք ՚ի  
հրապարակաց քաղաքին : Ապա յերկո-  
տասաներորդի աւուրս ամսեանն յու-  
նիաի ժողովեցան գլխաւորքն ՚ի դասս  
օրինականաց և զօրագլխաց յէթմէյտա-  
նի , ուր երթեալ էին իւր երկերիւր զօ-  
րականք նորընտիրք . կատարեցին անդ  
միաբան զաղօթս ուրբաթուն , և ապա  
բաշխեցին զզէնսն և զհանդերձ : Ան-  
դըր կոչեցան և չորք ոմանկք որ հրահան-

գիշ ունեին լինել զօրականացն • առաջին խաղահիմ աղա ոմն որ հարիւրապետ կացեալ էր նորակարդ զօրականացն Սէլիմայ • Երկրորդ՝ Տաւուտ աղա հաղարապետ Երբեմն լեալ զօրաց կուսակալին Եղիպատոսի, և այլ ևս Երկուք ոմանք : Եհարց զօրավարն ենիւ չերեաց քաղցրութեամբ ցիաղրահիմ աղա և ասէ • « Յորմը գնդէ իցես » : Խակ նա փոխանակ պատասխանի առնելց հարցմանն հանգրիձեաց զմի 'ի թեզանեացն, և ձգտեալ զմերկ բացուկ իւր առ զօրավարն՝ Եցոյց զնշանագիծն կիտուածոյս զիւրոյ գնդին, և ասէ աստ • « Աւասիկ նշանք իմոց հաւատարիմ ծառայութեանցս » : Եւ նորազյացեալ ընդ բրտութիւն առնըն՝ դարձաւ և ասէ ցմերձակայս իւր • « Ո' զի սոսպո է այրդ • և զիահրդ զայլս հրահանգեացէ » : և մերժեցաւ խաղահիմ : Խակ այլք Երեքեան ընկալան զմեծագինն հանդերձմն առաջեալս 'ի վէզիրէն : Ապա գիւանագալիր գենապետին առեալ 'ի ձեռին իւրում հրացան մի և ասէ, « Յանուն Աստուծոյ գթածին և ողորմածի » : և տայ ցզօրավարն, և նա ընդունի համբուրիւ : Զնոյն և այլ զօրագլուսաց արարեալ՝

կարդին կան ասկա 'ի միում շարի , և  
առնուն 'ի հրահանդչաց անտի զառա-  
ջին զլարժմն . իսկ զօրականիքն 'ի հան-  
դիպոյ կային 'ի զնին :

Յետ այնորիկ Կիւրձի Ահմէտ էֆէն-  
տի օրհնեաց զղինուորութիւնն և զար-  
քայ , և ամենէքեան զամէնն ասացեալ  
մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս :

Սակայն 'ի սահմանել բարձրելոյն  
զպատուհաս ամբարշտաց , ասէ իսատ  
էֆէնտի , ինքնին իւրեանց ձեռօք  
փորեն և պեղեն նոքա զգերեզմանս  
իւրեանց , որպէս և Ենիչէրիքն արա-  
րին : Քանզի ումանք 'ի սպայից և 'ի զօ-  
րագլսաց Ենիչէրեացն , թէպէտ և 'ի  
վերին Երեսս կեղծաւորէին հնազան-  
դել հրամանաց արքունի և լճուոյ օրի-  
նականաց , այլ 'ի ծածուկ խորհուրդ 'ի  
մէջ առեւալ հնարս հնարէին խափանել  
զիրացն կատարումն : Եին 'ի նոսս որ  
կամէին անդէն իսկ յառաջին հրահան-  
դըս Կթմէյտանի հրապարակին 'ի վեր  
հանել զըմբոստութիւն իւրեանց . այլ  
մի ոմն 'ի նոցանէ արդել զնոսա և ասէ .  
« Ոչ է օրէն Ենիչէրեաց Երբէք յապ-  
ստամբութիւն թեակոխէլ մինչեւ հա-  
նեալ զկատսայսն 'ի ձմերոյաց » : Այլք  
ասէին եթէ հարկ է թոյլ տալ բազմա-

նալոյ նորընտիր զօրականաց . իսկ կէպ փութային վաղ ընդ փոյթ յայտնել զհակառակութիւն իւրեանց և խափան արկանել ամենելին :

Մինչդեռ սոքա զայսպիսի չարաժողովով եկեալ վարանելին , յաւելան կասկածանկ զօրավարին ենիչերեաց . և կոչեցեալ առ ինքն զՔիւրտ Նուստութ և զայլս ոմանս ՚ի գլխաւորաց նոցա , սկսաւ ողոք բանիւք պարզել առաջի նոցա զիմաստս բանից հրովարտակին արքունի զոր ՚ի ձեռին ուներ : Նոքա իրաւունս տուեալ նախ բանից զօրավարին , ասկա ասեն . « Արքն մեր արք թանձրամիտք են և խստասիրտք . չիք նոցա ուստեք ահ երկիւղի , և այժմ մէն իսկ ՚ի տրատւնջ հատեալ բողոք հարկանեն ասելուլ . քաւ ՚ի մէնջ յանձն առնուլ զայլագենից հրահանդս » : Այս բանք և այլ սոյին նման ասացուտք և գնացք , ապստամք զօրականացն մեծապէս տադնասպէին զաւադորեարն , այլ չեւ ևս յայտ էր թէ յինչ վճարեսցին :

Ի հնդետասաններորդի աւուր ամսեանն յունիսի , որ օր հինգշաբաթի եր՝ ընդ արևուն մտանել ելին ասլուտամիքն ՚ի կաղաղոց իւրեանց , և մի մի

կամ էր կուս երկուս չոքան ժողովեցան  
յիշմէյտանին . անդք կոչեցին և զյու-  
լովս 'ի զօրագլխացն և 'ի սպայից , և  
լուս հրապարակն վաղվաղակի : Ապա  
զօրագլուիք նոցա դռնդ մի զատու-  
ցեալ արձակեցին սպանանել զօրա-  
վարն ենիչը բեաց զջէլալէտին 'ի տան  
իւրում : Ի հասանել սոցա 'ի տուն  
առնն՝ նա 'ի դուրս ելեալ էր + վասն  
որոյ չգտեալ զնա՝ յաւարի առին զկա-  
րասիս նորա և հուր հարին 'ի տունն և  
դարձան փութանակի 'ի հրապարակ  
անդք + բայց հրդեհն վաղ շիջաւ :

Խակ ընդ արշալցսս առաւօտոն հա-  
նին ապստամբքն զկատսայս 'ի ձմերո-  
ցաց անտի իւրեանց , և տարան յիշմէ-  
մէյտանին . յափշտակեցին ասլա և զղե-  
նագործացն կատսայս , և զնոսա ևս  
ձգեցին զհետ իւրեանց յաղմուկ ան-  
դըր + և համբաւեցին ստութեամբ եթէ  
ձերբակալ եղեն և սպանան վէզգենն մէծ  
և հիւսէյին փաշա և զօրավարն ենիչը-  
րեաց . որով յաւար կամենին դրդել  
զժողովուրդն . և ահա եկին ժողովե-  
ցան 'ի տեղին բիւրաւոր բեւնակիզք  
և ալրք դատարկասունք : Յայնժամ  
դռնդ մի հատուածեալ յապստամ-  
բաց անտի դիմեաց յապարանս վէզգե-

րին, և առաջնորդ նոցին էր Եմիշճի  
Մուստաֆա ուն . և այլ գումար յար-  
ձակեցաւ 'ի վերայ Տաւուտ աղայի որ  
մի էր 'ի հրահանգողաց նորընտիր  
գնդին՝ առաջնորդ ունելով զՊէքրի  
Մուստաֆա զոմն : Վէղին յայնմդի-  
շէրի գտաւ 'ի գիւղն Պէյլէլապէյլի . և  
կանանին նորա 'ի լուր յարձակման մո-  
ւեգնելոցն զարհուրեալք մախն դօղե-  
ցան 'ի ստորերկրեայ նկուզս ապարա-  
նիցն և զերծան . այլ Ենիչէրիք կողոպ-  
տեցին զամենայն ինչ զոր գտին 'ի տա-  
նըն , և իբրև վեց հաղար քսակս ար-  
ծամդոյ : Խակ որք 'ի հրասպարակի անդ  
մնացեալք էին՝ սփռեցան ընդ փողոցս  
քաղաքին , և ձայն քարձեալ գոչէին .  
« Մեռցի գենաբետն , մեռցին օրինա-  
կանք . կանայք նոցա 'ի յափշտակու-  
թին , և ուստեղք և գսաելք նոցա 'ի  
գերութիւն , և ինք նոցայաւար մատ-  
նեսցին : Թող քացցին կրպակք , և ան-  
կասկած լցցին վաճառականք . և եթէ  
բեկոր ապակւոյ գողասցի 'ի նոցանէ՝  
աղամանդ փոխանակեսցուք մէք նոցա .  
և եթէ 'ի մերայնոց ոք զրկեսցէ զնոսա  
առ ետեղ յօշատեսցուք մէք դնա » :

Ընդ այս աղմուկ շիոթի դղոդեցաւ  
քաղաքն մնէ , և ծփէր իբրև 'ի խիստ

մրրկէ : Ազդ եղեւ վէղիրին , և նա ան-  
գէն արձակեաց զեղբայրն իւր ղլխալիւ  
ովէյ առ հիւսելին փաշա և առ Մէ-  
հէմմէտ իմին փաշա , զի երթիցեն  
վաղվաղակի յաբունիս 'ի ծովագնեաց  
պատշդամն Եալըքէօչքիւ անուանեալ .  
և ինքն մտեալ ճեմպով 'ի նաւակ՝ հա-  
սանէ 'ի պատշդամ անդր , և զդանհա-  
պէտ իշխանն առայքէալ առ արբայ  
ազդ առնել զեղելոցն , և աղաջէ հրա-  
ման տալ հանել 'ի դուրս զդրօչն նուի-  
րական , և անձամբ յանդիման լինել  
զօրականացն : Յայնմ պահու շտապ  
տագնապաւ գային հասանէին 'ի տեղի  
անդր և գենալետն և օրինականիք և ա-  
ւագանին ամենայն : Զօրավարն ենիչէ-  
րեաց ոչ ևս էր 'ի միջի . իսկ վոյսանորդ-  
նորին հասան աղա բազում անդամը ըս-  
տիպէալ յապսատամբաց անտի՝ ոչ էառ  
յանձն երթալ առ նոսա . այլ արձա-  
կեալ 'ի հրապարակ անդր զատե-  
նագպիրն մեծ զբաշխտ էֆէնտի , հար-  
ցանէր թէ զինչ կամք իցեն նոցա : Եւ  
նոքա աղաղակեցին իբրև ընդ մի բե-  
րան . «Ոչ կամիմք մեք զշրահանդս  
անհաւատից . միակ հրահանդք մեք և  
կըթութիւն 'ի վաղննուց ժամանակաց  
հետէ այս է . հրայան դործեօք նալա-

տակ ունել զանօթս խեցեղէնս, և պո-  
ղովատիկ սուսերաւ հատանել կտրել  
զմաղիս ծալածոյս + հապա թող տա-  
ցին մեղ գլուխք արանցն որ այսմ հրո-  
վարտակիս կացեալ իցեն թելադիրք ։  
և ետուն զանուանս բազում աւագ որե-  
րոյ և բազմագոյն պաշտօնէից դրանն  
մեծի : Եւ հասան աղա զնա ինքն ըդ-  
բաշխ առաջքեաց առ վէղիրն մեծ, և  
բաշխ պատմեաց նմա զամենայն զբանս  
ասլստամբացն առաջի գենապետին և  
երկոյուն դատաւորացն զօրաց, և դա-  
տաւորին կոստանդնուպոլիսոյ , և հա-  
մարտիկալին և այլոց : Խակ վէղիրն սըրտ-  
մուեալ ընդ բանսն ասէ . ։ Խորհրդուլ  
իմաստութեամբ և վճռուլ օրինակա-  
նացն են սահմանեալ իրքս, և կատա-  
րումն սոցին փառք և հաստատութիւն  
է օսմանեան պետութեանս . ոչ թո-  
ղումք մեք և քար մի անդամ խլել ան-  
օրինաց ՚ի նուիրական շինուածոյ աս-  
տի . այլ տեառն օդինականութեամբ  
վանեսցուք զապստամբա , և լրւծցեն  
նոքա զվրէժ յանդգնութեան իւրէանց.  
Երթ և զայս տուր նոցա պատասխանից :

Իբրև մեկնեցաւ ատենագպիրն Շա-  
շտո , վէղիրն հանդերձ ամենայն ժո-  
ղովականքն որ հետ զհետէ բազմա-

նային՝ գնաց 'ի վիակարանն գաղանաց,  
այն է Ասլանիսանն է : Անդր եհաս և զօ-  
րագլուխն թնդանոթաձիգ զօրաց ի-  
պրահիմ աղա՝ այր քաջաբազուկ և  
հուժկու , որ մականումն գարա չէ-  
հէննէմ կոչէր , և ընդ նմա թնդանոթք  
և ռումբք , և մարտիկք ոչ սակաւ . և  
լցաւ նոքօք դաւիթ արքունեացն :

Խոկ Մահմուտ արքայ լուեալ'ի գան-  
ձասլետէ անտի զլրացն սկատահումն՝  
արձակեաց նախ զիսպուտիքիր էֆէն-  
տի զմտերիմ սենեկապեան իւր առ վէ-  
զիրն մեծ , զի առզեկագոյնս արասցէ  
զնա անցիցն անցելց . սակայն և  
ինքն ոչ հանդուրժեալ կալ մնալ ան-  
դէն 'ի Պէշիքթաշ , եմուտ 'ի նաւակ  
ընդ ատենադպրին իւրում Մուտա-  
ֆայի , և ել ընդ Դօփ դափիու յար-  
քունիս . և ոդի առեալ խրախուսե-  
ցին ժողովականիքն ամենայն : Խօսել  
կալաւ արքայ ահեղ բարբառովն և աղ-  
դողական բանիւք զըմբոստութենէ ե-  
նիչէրեաց . և ասպա հարցուածոյ պայ-  
մանաւ ինդրէր զկարծիս օրէնսդի-  
տաց . և յասել նոցա եթէ օրէնք մեր  
սկատուիրէն սուր 'ի վէր առնուլ լընդ-  
դէմ եղբարց ասկոտամբաց , աղաղա-  
կեցին ամենայն ժողովեալքն և ամեն .

“Յաղթեսցուք, կամ մեռցուք. տէր  
եղիցի մեզ օդնական, և մեք պատրաստ  
եմք դնել զանձնս մեր 'ի վերայ մեծի  
արքայիս” : Եւ Ապահւրրահման է-  
ֆէնտի ոմն առ սաստիկ նախանձուն  
յուղելց եհար զհամարիչ իւր զգետ-  
նի և գոչը. և հապա ժողովուրդ Մահ-  
մէտի, ում մնամք. հապա ընդդէմ  
թշնամեաց. հարցուք խորտակեսցուք  
զնոսա և հալածեալ վասնեսցուք” :  
Եւ 'ի խըտել ամենայն ժողովոյն ասէ  
արքայ. “Եկից և ես ինքն խառն  
ընդ հաւատացեալսդ մարտ դնել  
կուռել ընդ թշնամիս անձին իմոյ” :  
Այլիբու աղերս արկեալ արդելին զնա  
յառաջարկութենէն, չոքաւ աւագան-  
ւովն 'ի սենեակ պահեստի նույիրական  
դրօշուն, և հանեալ ետ զնոյն 'ի ձեռս  
վեզիրին, և օրհնեաց զնա. և քարող-  
քըն սփուեալ առ ժամայն ընդ ամենայն  
փողոց քաղաքացն երեցուն, Ղալա-  
թիոյ, Պէյօղուի և Խոսկիւտարայ՝  
հրաւիրէին զամենայն զջամիկս ընդ  
հովանեաւ դրօշու մարդարէին իւ-  
րեանց. և ահա եկին խռնեցան յա-  
մենայն կողմանց ժողովք բազումք յոյժ  
յոյժ: Որոց իբրև բաշխեցան սուսելոք  
և նիղակ և հրացանք 'ի զինարանաց

անտի արքունեացն, Ելին վութանակի  
ըստ դուռնն և գոչէին, «Ալլահ Ալլահ»,  
Ալլահ Էքամէր » • և գիմեալ 'ի մզկի-  
թըն սուլդան Ահմէտայ՝ անդ անկե-  
ցին զգրօշն նուիրական : Խորհուրդ ա-  
րարին անդանօր վէղիրն և աւագո-  
րեարն ամենայն, Եթէ զիարդ զդէմ-  
կալցին զապստամբելոցն : Կէսք ասէին  
արձակելառ նոսա նախ Ճարտարաբան  
զոք որ համոզկեր լինիցի նոցա 'ի հը-  
պատակութիւն • այլ յասէլ այլոց՝ Ե-  
թէ զուր ջան է այն և անօդուտ առ-  
արս խստապարանոցս, և ընդունայն  
կորուստ ժամանակի, հաստատեցին զի  
վէղիրն զտեղի կալեալդադարեսցէ առ-  
դրօշիւն • և չիւսէին վաշա և Մէհէմ-  
մէտ վաշա զգեցան զհանդերձս սոս-  
կական զինուորութեան, և գիմեցին  
խուռն բազմութեամբ 'ի վէրայ խու-  
ժանի ապստամբելոցն : Եւ դենապեան  
և այլ դասք օրինականաց մզկիթին որ 'ի  
գաւիթան Էին՝ սպազատանս յերկինս  
մատուցանէին :

Իսկ Ենիչէրիք իբրև լուան զպար-  
զիլ նուիրական զրօշուն՝ տագնապէ-  
ցան յոյժ, և գունդագունդ գիմեալ  
'ի կիցս վիոլոցայ՝ խափանել հնարեին  
զընթացս ժողովրոցն որ անհատ բազ-

մութեամբ դային հասանէին 'ի ձիար-  
ձակարանն որպէս գետք սրբնթացք 'ի  
ծովարշաւեալք : Եւ ոչ կարացեալըզ-  
գէմունել բուռն սաստկութեան նո-  
ցա , մեկնեցան խոյս ետուն 'ի բունն  
իւրեանց յիշմէշտանի . փակեցին զմեծ  
գուռն մտից հրասպարակին , և կուտե-  
ցին յետուստ կողմանէ կարկառ մեծ  
քարանց :

Հասեալ 'ի տեղին ահագին բազմու-  
թեան ժողովրդեանն և զօրականաց  
զհետ արի զօրավարացն իւրեանց՝ պա-  
տեցին պաշարեցին շուրջանակի զհրա-  
պարակն և զձմերոցս ենիշէրեաց . և  
մինչ հրձիգ եղեալ 'ի նոսա՝ բարբա-  
ռեցաւ արտաքուստ գարա զէհէննէմ  
առ որս 'ի ներքու անդ էին , և յուշ ա-  
րար նոցա 'ի ձայն բարձր զպարաս պաշ-  
տաման նոցին 'ի հնազանդելօրինաց գե-  
նին և ալբայի . խոստացեալ նոցա և  
ներումն յանցանացն 'ի գլութենէ  
թագաւորին , և բազում անդամ կըրկ-  
նեաց զբանսն , այլ 'ի զուր . զի ենի-  
շէրիք բացէ 'ի բաց մերժեցին և ծաղը  
արարին զբանս խպահիմայ : Յայնժամ  
հրամայեաց հիւսելին փաշա հուր  
հարկանել 'ի թնդանօթմն զորս բե-  
րեալ էին ընդ իւրեանս . իսկ խպա-

Հիմաղա և Կիւման աղա առ ՚ի պատը  
ըելց զազաշարեալմն՝ Խտուն պատաս-  
խանի բարձր բարբառով և ասեն .  
«Զե ևս հասեալ է վառօդն . և զիա՞րդ  
արձակել իցէ զթնդանօթս ՚ Ոմանք  
՚ի գլխաւորաց ապատամբացն խորա-  
մանկագոյն քան զընկերս իւրեանց  
երեւալ՝ ասեն ցնոսա . «Կացէք դուք  
աստանօր , և զբուշացարուք կատսայի-  
ցըն , և մեք ելցուք արդ ըստ վիրքը  
դուռն հրապարակիս , և անկեալ ՚ի  
թիկանց կուսէ ՚ի վերայ պաշարողաց՝  
առցուք զթնդանօթմն ՚ի ձեռաց նո-  
ցա . և նոքա այսպէս խուսափեցին :  
Խակ որ ՚ի ներքս անդ մնացեալք էլն՝  
մեծաւ անմատութեամբ խռնեալ կային  
յետուստ դրանն մեծի . և ահա յան-  
կարծ արձակեալ թնդանօթ մի ահա-  
գին ճայթմամբ և թնդամբ խորտա-  
կեաց զիի ՚ի վեղկից դրանն , և արս  
բազում տապալեաց յերկիր : Անդէն  
յառաջեաց Մէհէմմէտ փաշա . և մի ոմն  
՚ի թնդանօթաձիգ զօրաց Մուսդաֆա  
անուն նախագրաւ շահատակեալ անց  
ընդ խրաման , և Եթաց և զմիւս փեղ-  
կըն . որոյ վասն ընկալաւ ապա դահե-  
կանս երկու հազար և հինգհարիւր :

Ապա միսեցաւ ՚ի ներքս և Գարս

Ճէհէննէմ խպրահիմ աղա, և կոչեաց  
և զայլս զհետ իւր : Հարաւ յոտս նո-  
րա գնդակ ՚ի հրացանէ . սակայն ոչ  
ինչ թուլացեալնորա ՚ի քաջութենէն՝  
յետս յետս մեկնեցաւ սակաւիկ մի, և  
սուսեր ՚ի ձեռին խրախոյս կարդայր  
իւրոցն ձայնիւ և շարժմամբը :

Զայն տեսեալ ապստամբացն՝ դէմ՝  
փախստի արարին , և կիսոցն խոյս  
տուեալ ամբացան ՚ի տեղին թէքեէ ա-  
նուանեալ ՚ի միջավայրի անդ հրապա-  
րակին , և այլք անկան ՚ի մեծաշէն ձը-  
մերոցս իւրեանց , և ազմկեալք անհնա-  
րին մոլեվոնութեամբ՝ միմեանց մեղ-  
դնէին և զիմեանս կուփահարեալ թըշ-  
նամանէին :

Յայնմղահու երկստասան կամ հըն-  
դետասան լուցկիք բոցավառք մի զմիոյ  
ինի արձակեալք ՚ի թնդանօթաց անտի  
՚ի վերայ այլ և այլ կողմանց ձմերոցին՝  
վառեցին բորբոքեցին առ հասարակը ըդ-  
շնուռածն մեծ իրրև զհնոց սոսկալի .  
և ՚ի սակաւ ինչ վայրկեան ժամանակի  
աճիւնացաւ ամենայնն հանդերձ բազ-  
մութեամբ ապստամբաց որ անդը ա-  
պստամնեալ էին :

Անդէն վաղվաղակի աւետաւորք ըն-  
թացեալք ՚ի մզկիթն սուլդան Ահմէ-

տայ՝ լցին խնդութեամբ զմէղին և  
դորս ընդ նմայն էին . և նա արձա  
կեաց զայլս աւետել զնոյն և խնդակից  
լինելարքայի : Ասլա մինչև ցընդ երեկո  
աւուրին դադարեալ անդէն վէզիրին՝  
զամենայն զգօրագլուխս և զապայս  
ենիչերեաց որ 'ի բուռն անկեալ ա-  
ծեալ լինեին զառաջեաւ՝ կշտամբեր  
բանիւք խստութեան , և հրամայեր  
արդելուլ փակել զնոսսա առ ժամն 'ի  
վրանի ուրեք 'ի միջի ձիարձակարանին :  
Կոչեաց և զգօրակարն ենիչերեաց ըզ-  
ձելալէտտին Մէհէմմէտ աղա , որ  
յայլակերպս կայր 'ի թաքստի 'ի տան  
միումը , և զնա ևս արդել ընդ այլն առ  
'ի քննելց զնոսսա :

Ի կոտորել այսպէս մեծի մասին ե-  
նիչերեաց՝ այլք ծակամուտ փախըս-  
տեայ լինեին , և չերեկը ոք 'ի նոցանէ  
'ի միջի . սակայն առ խնամոց զգուշու-  
թեան գունդք գունդք զօրականաց  
կարգեցան: առ միով միով 'ի գրանց  
քաղաքին . և բնակչացն ևս կոստան-  
դնուազօլոյ և խւսկիւտարայ , Ղալա-  
թիոյ և Պէյօղլուի պատուեր հրամանի  
եղեւ պահ ունել խւրաքանչիւր թաղից  
և փողոցաց :

Յայնմ գիշերի յորում լուսանայր օր

ուրբաթուն՝ վեղիրն և գենալետն և  
գլսաւորք յօրինականաց անդէն ՚ի  
որահի մզկթին օթեցան, և այլք ՚ի բուն  
իսկ ՚ի ներքո մզկթին ընկողմնեալք  
ննջեցին : Իսկ հիւսէյին փաշա, Սէ-  
հէմմէտ փաշա, Խաղահիմ աղա և ՚սէ-  
ճիպ էֆէնտի զհետ յաղթութեան իւ-  
րեանց երթեալ ՚ի հին ձմերոց ենիչէ-  
րեացն որ իսկի օտալար կոչէր՝ խիւ-  
արկեալ որոնեցին յապստամբաց ան-  
տի, և չփոխին և ոչ զոք. և երթեալ դա-  
դարեցին զայն գիշեր ՚ի գաւթի Սիւ-  
լէյմանիյէ մզկթին :

Ի վաղիւ անդը վեղիրն բազմեցաւ ՚ի  
որահի մզկթին, և պաշտօնեայք դրանն  
բոլորեալ կացին շուրջ զնովաւ . հրա-  
ման ետ մուծանել առաջի իւր զմի մի  
յառաջնորդաց ապստամբութեանն և  
կշամբէր զնոսա, և հրամայէր դահ-  
ճաց համել զնոսին և խեղդամահ առ-  
նել. և կուտեցան ՚ի հրապարակի անդ  
յառուր յայնմիկ դիակունք աւելի քան  
զերկու հարիւր . թող զոր սպանանէր  
հիւսէյին փաշա յապարանս զօրավա-  
րին ենիչէրեաց :

Այս վերջին ապստամբութիւնն ենի-  
չէրեաց կարի իմն զայրացոյց զոդիս  
Օսմանեանց առ հասարակ ՚ի վերայ

իստերակն բարոյից նոցա + վասն որոյ  
յայնմաւուր յամենեցուն բերանս լը-  
սէին իղձք և տենչանկ սպառապուռ  
ջնջելոյ կարդի և անուան Ենիչերեաց +  
ապա թէ ոչ ասէին, որպէս ոչ առա-  
ջն նուագ է այս ապստամբելոյ նո-  
ցին, սոյնպէս և ոչ վերջն եղիցի :  
Եւս առաւել վառեցան բորբոքե-  
ցան 'ի սոյն խորհուրդ վէղիքն և դեն-  
պէան, և բժշկապէան Պէհճէք և այլ  
առագանին և դիտնականիք, և առ-  
անձինն ատեան կարգեալ և քաջ  
կշռեալ զամենայն՝ առաջի արարին  
զբանսն արքայի + և նա սրտի մտօք 'ի  
նոյն յօժարեալ հրամայեաց ձեռն 'ի  
գործ առնել 'ի կատարումն խորհըր-  
դոյն : Եւ նախ յերթալն արքայի ըստ  
սովորութեան 'ի մզկիթ՝ ոչ կոչեցան  
'ի հանդէս անդր հարլւրապետք և հա-  
զարապետք Ենիչերեաց + այլ վոխանակ  
նոցա զինագործք և թնդանօթաձիգք. և  
քարոզն յասել անդ զմաղթանսն վասն  
կենաց արքայի գովեաց զնա զի շիջոց  
զաղմուկ ապստամբութեանն : Յետ  
այնորիկ ժողովեցան յայնմ գիշերի 'ի  
սրահ մզկիթին սուլդան Ահմէտայ ամե-  
նայն առագանին և յոլովք 'ի գիտա-  
կան մարդկանէ, և մանր քննեալ և հաս-

տատեալ զիսորհուրդ և զեղանակ բառ  
 նալոյ գենիչը իմն՝ մեկնեցան՝ ի միմեանց,  
 յանձն արարեալ վսեմախօս օրինագի-  
 տին որ էր Փէրթէվ էֆէնտի՝ յօրինել  
 հրովարտակ առանձինն . և նա ՚ի նմին  
 գիշերի արար և կատարեաց : Վ կայե-  
 ցին ամենեքեան լաւութեան հրովար-  
 տակին , և առաքեցին ՚ի վաղիւ անդր  
 առ արքայ , և նա անդէն վաղվաղակի  
 հաստատեաց զնոյն իւրով ինքնագիր  
 յաւելուածով . և այս պատճէն էր հրո-  
 վարտակին . «Գիտակ իսկ են Տաճիկք  
 ամենեքեան , զի սկիզբն և յառաջատու-  
 թիւն Օսմանեանս պետութեան որ  
 դողացոյց զարեելս և զարեմուտս առ  
 հասարակ , նախանձ մերոյ գենիս է , և  
 առւսեր վառեալ ՚ի պատերազմն հա-  
 ւատոյ . սմին իրի յամենայն ժամանա-  
 կի կարեսոր պէտք են նմա բաղմաթիւ-  
 և քաջամարտիկ զօրաց առ ՚ի հանելոյ  
 զնոսին ընդդէմ թշնամեաց կրօնիս մե-  
 րոյ : Ենիչը որ ՚ի բարեկարգու-  
 թեան էին երբեմն՝ մեծամեծ վաստա-  
 կըս վաստակեցին ՚ի մերումն պետու-  
 թեան , և քաջալանջ և անվկանդ ա-  
 րութեամբ իւրեանց ՚ի պատերազմունս  
 անդ բազում անդամներակալան զաղթու-  
 թիւն , սակայն ՚ի վերջէ սպրդեցաւ ե-

մուտ 'ի նոսա ոդի չար, և ըմբռատու-  
թիւն փոխանակե ացընդ վաղեմի հլու-  
թեան նոցա : Ի հարիւրոց ամաց հետէ  
յամենայն 'ի պատերազմունս մեր ոչ  
դադարեցին սոքա բանս զսպարատու-  
թեան յօդել հակառակ զօրավարաց  
իւրեանց, ստունգանել հրամանաց նո-  
ցա, դէմ փախստի առնել վատաքար,  
և թուլութեամբ իւրեանց և անհրա-  
հանդ բարոյիւք մատնել զամուրս մեր  
և զգաւառս 'ի ձեռս թշնամեաց մե-  
րոց : Որոց խրախուսեալ 'ի տեսիլ այս-  
պէս ջլատելց Օսմանեանս պետու-  
թեան, քաջալերեցան և ևս յարձա-  
կել 'ի վլրայ մեր, և օր քան զօր 'ի մո-  
լեգնութիւն թևակոխեալ և փոյթ 'ի  
մտի կալեալ են, զոր մի արասցէ Աս-  
տուած, սպառսպուռ ջնջել զազդս  
Տաճկաց : Խակ մեր բուռն հարեալ 'ի  
փոյթ տաճկական կրօնիցս 'ի հնարս  
հայթայթանաց մուպք՝ որպէս զի կարո-  
վասցուք յաղթահարել զթշնամիս մեր:  
Եւ քանզի յայժմու ժամանակիս որ  
ինչ յաղթութիւնս դործել թուին այ-  
լադենք՝ ամենայնն արդասիք են կա-  
նոնաւոր զօրաց նոցին բարեկարգու-  
թեան, հարկ անհրաժեշտ համարե-  
ցաք և զինի պատերազմին 1202 ամի,

Ե յետ այնորիկ ևս էրկիցս անդամ՝ զօրս  
կանոնաւորս կազմել պատրաստել :  
Սակայն գասք ենիչը եաց , ինքեանք  
անդիտանկք առ ամենայն , հակառակ  
ընդդէմելին և այսպիսում զինուորու-  
թեան . և ոչ միայն խավանեցին զօ-  
րինուածութիւն նորին , այլ և պատ-  
ճառք եղեն տարասարտ մահուան  
թագաւորաց ոմանց որ կենդանարարք  
էին աշխարհի : Այսու ամենայնիւ հան-  
գերձ արգահատէաք մեք 'ի սոսա իբրև  
'ի հինաւուրց զօրականս , և լուէաք . և  
չարութիւն և ապստամբութիւն բնա-  
ւորեալ իմն սովորոյթ լեալ էր առ սո-  
սա , և մեք էրկայնամեւալ ժոյժ ունե-  
աք . այլ զինչ շահ . զի ահա թշնամիք  
հաւատոցս մերոց ոչ դադարեն պատ-  
ճառս առնուլ յապստամբութեանց  
անտի սոցա և աշխատել 'ի բնաբարձ  
ջնջումն մեր , յորմէ տէր պահեսցէ ::  
Յետ այսորիկ 'ի մէջ բերեալ զջանս  
պետութեանն 'ի բարեկարգել զենի-  
չէրիս , յընտրել զիշքինձի անուա-  
նեալսն և 'ի հրահանդել զնոսա , և թէ  
զիարդ ենիչը լիք յանձին կալեալ նախ  
և ապա մերժեցին զառաջարկութիւնն ,  
և զահագին աղմուկն զայն յուզեցին ,  
յարէ . « Յետ այսչափ անկարգու-

թեանցն ենիչէրեաց յայտ իսկ է , զի  
քաջ 'ի բաց 'ի նախնեացն խոտորեալ  
կտրդաց՝ արք լեալ էին նոքա անալի-  
տանիք և անկիրթք և խռովայոյդք , և  
քան զբարիմն յաճախեալ էին անալի-  
տանիք 'ի նոսա . նա զի և 'ի պատուհա-  
սեալն զայս նուագ դտան ոմանիք  
որ 'ի բաղուկս խրեանց ընդ 75 թը-  
ւանշանիս ունէին և նշան խաչի այլա-  
կրօնից . ահա այսպէս խառնուրդ իմի  
մաեալ էր 'ի նոսա յաղդաց աղդաց , և  
բազմացեալ լրտեսք օտար աշխարհաց .  
զորս յանօդուաս վաստակ էր մեր  
ցարդ մաքրել և ջնջել 'ի միջոյ նոցա :  
Յաղագս այսորիկ ահա ժողովեալ այս  
որ ամենայն աւագանւոյն 'ի մղկթի  
սուլդան Ահմէտայ առ նուիրական  
դրօշաւն , սահմանեցին հասուն և միա-  
բան խորհրդով , զի բարձյի 'ի միջոյ  
այսուհետեւ կարդ և անուն ենիչէրեաց ,  
և ընտրեացի փոխանակ նոցա այլ զի  
նուորութիւնն որ կոչեացի Մուալիմ  
ասաքի'րի մանսուրէի մուհամմէտլիէ  
(այս լնկն է Մարզիկ զօրականիք յաղ-  
թողք մահմէտականիք , կամ օգնեալք  
'ի Մահմէտէ) . սպարապետ սոցին կար-  
դեսցի չիւտէլին փաշա , և ընակեսցի  
նա 'ի տան զօրավարին ենիչէրեաց , որ

յայսմհետէ կոչեսցի Սէրասքէր վաշ-  
շա գափուսու, (այն է Դուռըն սպարա-  
պետի+) ջնջեսցին այսուհետեւ և ամե-  
նայն անուանկը և իշխանութիւնք զօ-  
րագլուացն Ենիչէրեաց + սակայն զռո-  
ճրկս իւրեանց և զթոշակս առցեն ան-  
խափան որք միանդամյառաջնմէ իսկ  
առնուին, և ոչ ինչ վնաս ումեք դոր-  
ծեսցի ։ Ապա յարին բանք յորդո-  
րականք առ ամենայն մահմէտականս,  
որպէս զի վոյթ կալցին 'ի հաստա-  
տութիւն և 'ի կատարումն հրովար-  
տակին։

Զայս հրովարտակ աղքունի ես ինք-  
նին ընթերցայ, ասէ իսատ էֆէնտի,  
նախ առաջին 'ի մզկիթի սուլդան Ահմէ-  
տայ 'ի լուր յոքնախուռան բաղմութեան  
հաւատացելոց, և ապա ըստ հրամանի  
վէզիրին մեծի ընթացեալ 'ի գիւանն  
մէծ՝ ետու ընդօրինակել զայն հարիւ-  
րաւոր գլագոլաց, և սփուեցան պատ-  
ճէնքն առ ամենայն ժողովրդապետս  
քաղաքին, և ապա առ ամենայն կու-  
սակալս և գաւառապետս։ Բայց մինչ  
չե ժամանեալ հրովարտակացս 'ի տե-  
ղուն յորս առաւելութեամբ էր թիւ-  
համարոյ ենիչէրեաց, որպէս 'ի Դա-  
մասկոս, 'ի Բերիա, յԱղբիանուսովիս,

՚ի կարին և ՚ի Պոսնիա, աճապարեաց  
վեզիլն կանխազեկոյց առնել կուսակա-  
լաց կողմանցն, զի Եթէ գիտիցեն զոք  
յիւրեանց ենիչէրիան ըմբոստս կամ  
խոռվասէրս, փոյթ կալցին կորուսա-  
նել զնոսա նախ ՚ի միջոյ, և ատա թէ  
վերծանել զհրովարտակն :

Ի նմին աւուր շաբաթու բաշխեաց  
Մահմուտ արքայ պատիւս և պարդես  
տւագանւոյն որ վճարեցին զդորձն  
զայն զմէծ, և ամենայն ենիչէրեացն  
զօրագլնաց որ ոչ միաբանեալ էին ընդ-  
խոռվիչս՝ նոյնպէս բաշխեաց դրամն  
և իշխանութիւնս, և զորոց միանգամ  
կասկած ինչ կալաւ չարութեան՝ ՚ի  
մահ գատապարտեաց. և ՚ի հասարա-  
կել աւուրն՝ գրոշն նուիրական բարձաւ  
հանգիսիւ. ՚ի մզկթէ անտի և տարեալ ե-  
դաւ յիւրում տեղւոջ : Եւ Մահմուտ  
արքայ իբրև ընկալաւ զդրօշն ՚ի նելքս՝  
ժողովեաց ՚ի մեծի սրահի անդ զամե-  
նայն աւագորեարն և զօրինականս, և  
ակնարկեալ նոցա բազմել՝ ատենաբա-  
նեաց առ նոսա. և նախ փառս ետ  
Աստուծոյ զի իւրովձեւամբ հաճեցտւ  
կատարել զիրսն, և ատա գովեաց զժո-  
ղովականս՝ զի գործակից իւր գտան  
յարդիւնս ածել ՚ի վերայ ապստամ-

բացն գնդի զլորհուրդս վերին տես-  
չութեան : Եւ 'ի վախճանի յայտ  
արարեալնոցա զկամն իւր 'ի բարեկար-  
գելև ևս զիրս պէտութեանն, պատուի-  
ըեաց նոցա զտեղի առեալ մնալ անդէն  
յարքունիս և խորհուրդ 'ի մէջ առնուլ  
զկարեորաց . և առաջին զայս կամիմ  
զի հաստատիցէք, ասէ, զի բարձցի այ-  
սուհետեւ սովորութիւնն այն՝ որով  
ինչք սոսկականաց ևս անժառանգ մե-  
ռելոց գրաւէին յարքունիս : Եւ 'ի մեկ-  
նելարքայի յատենէ անտի՝ նոքա 'ի խոր-  
հուրդ բազմեցան, և զաւուրսինչ անդէն  
յարքունիսն 'ի վրանս 'ի վրանս օթա-  
գայեալ մնացին : Սակայն չիւսէյին  
փաշա և իզզէթ Սէհէմմէտ փաշա ոչ  
դադարէին 'ի դարանայոյզ առնելոյ  
զմնացորդս ասկստամբացն և 'ի սպանա-  
նելոյ . և ազք աւելի քան զհազար մատ-  
նէին յաւուրն 'ի բերան սրոյ :

Ի վաղիւ անդր ըստ հրամանին ար-  
քունի ժողովեցան խառնաղանջ մար-  
դիկ աւելի քան զբսան հազար, որ 'ի զա-  
նազան գաւառացն Ասիոյ և Եւրոպայ  
եկեալք 'ի թագաւորական քաղաքն, և  
մինչև ցայնժամ բազում անկարգութե-  
պատճառք էին և թևարկեալք յենի-  
չերեաց . և առ հասարակ մուծեալք 'ի

նաւակս նաւակս դարձուցան յիւրաքանչիւր հայրենի յաշխարհս : Յետ այնորիկ Ճոխաբար պարգևօք պատուեաց Մահմուտ արքայ զերիս հազար աշակերտս արքունական դպրոցաց, և զայլժողովուրդս և զօրականս՝ որ կցորդը ալէին կոտորածի ենիչէրեաց : Ոչինչ հազորդ եղեալ էին և օժանդակ զինառքն պահապանք մարտկոցաց Վզսփորի ապաստամբութեան ենիչէրեաց . վասն որոյ և նոքա պարգևս և գովկստաընկան զառաջինն յարքայէ . բայց քանզի անմոռուաց էր և նոցայն ձեռներիցութիւն նոյնօրինակ խոռվութեան առ . Աէլիմաւ արքայիւր յետ աւուրց ինչքարձաւ և նոցին զինուորութիւն . որ կամեցաւ ոք 'ի նոցանէ դրեցաւ 'ի կարգ Մանսուրի զօրականաց, և այլք վոարեցան 'ի բունն իւրեանց 'ի Լազիկիս :

Յամնեանն յուլիսի խորհրդով աւագանւոյն և օրինականաց և վճռուվ գենապեաին բարձաւ և կարգն Պէկթաշիտէրվիշաց որը համարէին ձեռնտու և օդնական ենիչէրեաց յամենայնի , և դրդիչ նոցին յապատամբութիւն ընդդէմ հրամանաց արքունի . թող զայսայլար աղանդովք ապականեալք և մոլորեցուցիչք տգիտաց . երեք ոմանք

՚ի գլխաւորաց նոցա որ կոչեին դանձք  
Պապա, Ահմէտ և Սալիհ, գլխատեցան  
հրասլարակաւ . մենաստանք նոցա և  
շլրիմք քանդեալ կործանեցան, բնա-  
կիչք նոցին վտարեցան յաքսորս ՅԱսիա,  
և որք մնացինն՝ ատիպեցան վոլսել զուա-  
րաղ զգեստուցն իւրեանց :

Ըստ նմին օրինակի առանձին հրո-  
վարտակաւ արքունի ջնջեցան բարձան  
՚ի միջոյ և հեծելազօրք որ Սիփահի,  
Խւլւֆէճի և Ղուրէպա կոչեին, այս-  
ինքն են սպայք և թոշակաւորք և ե-  
կամուտ զօրականք . իբր զի և սոքա ոչ  
ինչ նուազքան զենիչը իսն սովոր էին  
յապստամբութիւնն, և յաճախագոյնս  
գործակիցք նոցին : Իսկ այլ կարգք և  
գունդք զօրականաց առ հասարակ վո-  
խեցին զանուանս և զսովորութիւնս և  
զտարաղ հանդերձից, և յանձն առին  
զօրէնս նորոյ զինուորութեանն, և  
սկսան ուսանել զհրահանդս Եւրո-  
պական կարգաց : Ի սուղ ժամանակի  
մեծապէս յառաջադէմ դտան օսմա-  
նեան զօրականքս ՚ի խստութեան կըր-  
թանսն՝ մինչև զարմանալ Եւրոպացւոց  
անդամ . և ինքն Մահմուտ արքայ ստէսլ  
ստէսլ առաջիկայ դտեալ հանդիսից  
նոցին՝ ոչ գաղարէր խրախուսել զնոսին

և զղօրավարս նոցա քաջալեր բանիւք  
և առատաբաշխ պարգեօք : Կառոյց  
նոցա նորանոր և հոյակաս զինուորա-  
նոցս , և կանգնեաց վարժոցս զինուորա-  
րութեան և բժշկութեան , և գործա-  
րանս զինուց , և այլ կարեւոր տեղիս :

Ի վախճան ամենանն օգոստոսի հըր-  
դեհ մեծ ծագեցաւ 'ի Պահճէ գափու-  
սու , և վարեալ 'ի բուռն վշմանէ հիւսի-  
սային հողմոյն՝ յերեսուն և 'ի վեց ժամս  
ծախեաց դոգցես զութերորդ մասն  
քաղաքին : Այլեցաւ և Պէզավիսթանն  
և այլապարանք և միթերանոցք բազումք  
յոյժ , մինչև հաշուել զինասն գինս ե-  
րեքարիւր միլիոն դահեւկանաց : Մահ-  
մուտ արքայ աղէկիզեալ ընդ չար պա-  
տահարն՝ եբաց զդրունս արքունեաց  
իւրոց և այլոց ապարանից՝ անդր դիմել  
ամենայն վտանգելոց 'ի հրկիզութենէ  
անտի , և ապա յիւրոց գանձուցն առա-  
տաձեռնեաց նոցա դրամն 'ի շինութիւնն  
վաճառանոցին : Այլ զի մի և խոռովա-  
սիրաց ոմանց պատճառք անկարգու-  
թեան լինիցի հրդեհն , յոտին կացոյց  
զամենայն զկանոնաւոր զօրականնմ , և  
զբազումն 'ի պաշտօնէից իւրոց սրփ-  
ուեաց ընդ քաղաքն յայլակերպ հան-  
դերձմ . որոց հասեալ 'ի ժողովատեղիս

հասարակաց՝ իբրև տեսանելին զոք մեզագիր լինելը աղաքարական կարգաց ժամանակին՝ անդէն ձերբակալարարեալ գլխատէլին. և կանալը ևս ոչ սակաւք՝ ինոյն պատճառս կարեցան ՚ի պարկս պարկս և ընկեցան ՚ի ծով. և ըսեաց քաղաքն յանօդուտ քրթմնջենէ :

Սակայն զհետ երկուց ամսոց ՚ի վեր եւդարձեալ միաբանութիւն դաւաճանից ունց ունանց, որոց առաջնորդ էր տէրվիշ ոմն Պէկթաշի՝ Լիւլէճի Ահմէտ անուանեալ : Սա չարաչար տանջանօք խոշտանդեալ՝ ելցծ զվրէժ ապստամբութեան խորհրդոյն, և բազումք ՚ի հին ենիչերեաց ընդ նովին անկան պատուհամիւր : Եւ Մահմուտ ալքայ սովորմբ ևս յաղթանակութեամբ պերճացեալ՝ համարձակագոյնս յառաջ վարեաց այնուհետեղ զհրահանգս զինուորութեան . և ինքն խակ տարազ եգիպտացի զգեցեալ և խարազան ՚ի ձեռվին՝ ստէպ ստէպ առաջիկայ գտաներ հրահանգայն և վառեր զամենեսեան ՚ի փոյթ բարեկարգութեանց իւրոց :

Իսկ ՚ի Յունաստան ոչինչ գործեցաւ նշանաւոր ՚ի ժամանակին . Իսրահիմ և Շէշիտ փաշա յոլովագոյնս յաղթեցին քան յաղթեցան . և ՚ի ձմերայնոյն սաստ-

կութենէ գաղարեցին ապա 'ի մարտըն չելցը ընդքաղաքին Աթենացւոց : Դես պանք Երեցուն պետութեանցս Եւրոպայ՝ այս ինքն են Ռուսացն և գաղղիացւոց և Անդղիացւոց՝ սկսան յորդորել զօսմանեանս 'ի հաշտութիւն խաղաղութեան ընդ Յոյնս + զի և դաշնմիաբանութեան հաստատեցաւ 'ի մէջ սոցա 'ի լոնտոնն 'ի 6 յուլիսի , որպէս զի ստիպեսցէն զարբայն Օսմանեանց զիջանել և իրաւունք չելցնացւոց առնել : Բայց արքայ զիրաւացին զիւր պատասխանի կրկնեալ առ նոսա՝ ոչ ինչ թուշանայր 'ի հանդերձանաց մարտին :

Յամսեանն սեպտեմբերի եկն եմուտ նաւատօրմն Օսմանեանց յԱզեքսանդրիոյ 'ի Կաւարին . և վոխանորդ ծովակալին Անդղիացւոց Քոտրինկթոն և Գաղղիացւոցն , և ազդ արարին առ Խարահիմփաշա զկամս պետութեանցն դաշնակցելց 'ի լոնտրա . և Խոզրահիմ խոստացաւ նոցա չհանել 'ի գուրս 'ի նաւահանդստէ անտի զնաւս իւր մինչե հասցէ նմա պատասխանի 'ի հօրէն իւրմէ և յարբայէն Մահմուտայ : Այն ինչ մեկնէլին սոքա 'ի սակս համբարոց Երթալ 'ի Միլօ և 'ի Զամնթա , և ահա երկու

առաջք նաւատորմին Օսմանեանց Ելաւ-  
նէին 'ի Կաւարինէ : Զայն իմացեալ  
ծովակալացն Անդղիացւոց և Գաղղիա-  
ցւոց՝ դարձան վութանակի յետս կոյս.  
Հասին 'ի պահուն և նաւք Ռուսաց, և  
մտին ամենեքեան 'ի նաւահանգիստն  
Կաւարինայ 'ի 20 աւուր ամսեանն  
հոկտեմբերի, նախանդղիական տորմիդն,  
ապա դաղղիականն, և 'ի վերջէ Ռու-  
սացն, ընդ ամենայն նաւք քսան և քանի  
մի . իսկ նաւատորմին Օսմանեանց վաթ-  
որնիւ չափ նաւք էին, և կային սոքա-  
լումնաձև իմն կարգեալք 'ի ծոցի անդ-  
նաւահանգստին յերիս շարս : Անդ-  
սկսան տորմիզքն հանգիպակացք հրձիգ  
'ի միմեանս լինել, և թէ ընդէր կամ  
որպէս՝ բազում ինչ ասացին, այլ զհա-  
ւաստին գիտաց ասեն և ոչ ոք : Անա-  
գին յոյժ էր նաւամարան այն յանձուկ  
սահմանի անդ, և տևեաց ժաման աւելի  
քանի զերիս, և ոչ մնացին 'ի նաւատոր-  
մէն Օսմանեանց՝ բայց միայն նաւք  
քսան մանունք դատարկացեալք 'ի մարդ-  
կանէ : Խաղոահիմ վաշա ոչ էր 'ի պա-  
հուն 'ի Կաւարին . և յաւուրն չորրորդի  
հասեալ անդը՝ թէպէտ և սուգ մեծ է-  
առ, այլ ոչ ինչ ցոյցս բարկութեան ետ  
ընդդէմ Եւրոպականացն :

իքըև աղդ եղև 'ի կոստանդնուպօլիս  
գոյժ հրկիզութեն նաւատորմին, խռովեց  
ցան աւագանին յոյժ յոյժ . և 'ի պնդել  
դարձեալ դեսպանացն Եւրոպացոց  
զի ինքնիշխան ազատութիւն չնորհեցի  
Յունաց, Մահմուտ արքայ ոչ միայն լի  
ցասմամբ արար նոցա պատասխանի ,  
այլ և գիր յայտարարութեան պատեր  
բազմի հրատարակեաց յ18 աւուր ամ  
սեանն դեկտեմբերի ընդդէմ Ռուսաց .  
յորումձայն տայրամենայն տաճկադե  
նից զէն առնուլ 'ի պաշտպանութիւն  
դենին իւրեանց և աշխարհին :

Զայսպիսի անպատեհ ժամանակ  
պատեհ կարծեալ ոմանց 'ի դլաւորաց  
չայոց, խորհուրդ առին բռնութեամբ  
բառնալ ջնջել զուղղափառ չայս յօս  
մանեան տէրութենէն : Եւ այնչափ  
յուսացեալ էին 'ի յաջողութիւն հնար  
խմացութեան գործոյն, զի որ գտաւ ոք  
'ի խորհրդի անդ խորագէտ նախատես  
անյաջող ելից և մասսակարութեան  
իրին, և խրատիչ նոցին 'ի զդուշութիւն  
յայնալիսի ձեռնարկութենէ, արհա  
մարհեալ 'ի բաց մերժեցաւ : Սկսան  
ապա քսիս ստութեան 'ի գուռն ար  
քունի մատուցանել որպէս թէ ուղ  
ղափառ չայք 'ի խորհուրդս նենդու-

թեան՝ի բնէ յԵւրոպացիսն՝մանաւանդ  
 'ի գաղղլիացիսն հակամէտք , լրաեպք ի-  
 ցեն իրաց պետութեանն և մատնիչ առ-  
 եւրոպեանս , առ որս ելումուտ առնեն  
 համարձակ ՚ի Պէյօղլու՝ ուր բնակեալ  
 են յոլովագոյնքն և յաճախեն առ գես-  
 պանս տէրութեանց վասն նոցին իրաց .  
 և թէ ցորչափ որեար այսպիսի հմուտ  
 և տեղեակ ամենայն գաղտնեաց տէ-  
 րութեանն՝ ՚ի աանէ բուսեալ կայ չար  
 'ի միջի նորա , անհնար է յաջողումն  
 գտանել խորհրդոց և գործոց նորին :  
 Ամսովք յառաջ յածէր և շնչիւն հնա-  
 րագիտութեամբ սփուեալ ՚ի բերանս իշ-  
 խանաց և ամբոխին , իբրու այն թէ  
 ուղղափառ Հայք զնմանութիւնն իմն  
 բերիցեն զաղանդոյն Պէկթաշի տէրմի-  
 շաց ՚ի մէջ քրիստոնէից : Պատուէր ետ  
 դուռն երից իշխանաց իւրոց քննելզայս  
 ամենայն ամբաստանութիւն + և ոչ  
 ինչ ելեմուտս տեսեալ սոցա դուղ-  
 ղափառաց առ գեսպանս կամ բնաւ  
 առ Եւրոպացիս , և ոչ կասկած ինչ  
 նենդի , սակայն ոչ եղել լսելի վկայու-  
 թիւնս այս առաջի ոմանց յաւագա-  
 նուոյն՝ որ որսացեալըն էին ՚ի չարափո-  
 սաց անտի : ընդ որս և չիւմնի պէջ  
 պետ փողերանոցին և ըէիս էֆէնտի

Ժամանակին Փէրթէվլ, որք այր զառն  
զինի յաջորդեալ էին զչալէթ՝ ի գաղտ-  
նի խորհրդականութիւն արքայի հան-  
գերձ այլով գործակալութեամբն՝ զոր  
ունէին : Փէրթէվլ՝ ի թելադրութենէ  
նոցա գիր ամբաստանութեան ևս մա-  
տոյց առ արքայ՝ լի ամենայն զբար-  
տութեամբ զուղըափառաց, մինչև կըն-  
քելզբանսն՝ թէ ցորչափ այս ազգյաշ-  
խարհ տէրութեան մերոյ է, անհնար-  
է մեզ գուլ առնուլ՝ ի նենդութենէ  
հատատակցութեան սոցա ընդ թշնամիս  
մեր : Ազա խորհուրդ հաստատեցաւ  
հալածելզնոսա՝ ի թագաւորեալ քա-  
ղաքէն և վարել կանամբ և որդւովք,  
եթէ ոչ գարճցին և հնազանդեսցին  
ազգապետին կամ թէ ասել պատրիար-  
քին չայց :

ԱՅԼ ուշ՝ ի կուրծս արարեալ բանս-  
արկուայն, զի թէ յառաջիկայու-  
թեան անդ եւրոպական գեսպանայն  
այս գործիցի, կարէ ծանր թուիլբանն  
յաց նոցա և զարթուցանել զնոսա՝ ի  
սպաստականութիւն ուղղափառաց քան-  
զի չեն մէկնեալ գեսպանիքն՝ ի քաղա-  
քէն, թէպէտ և խոժուեալք էին և  
կաղմէին՝ ի չու ջանահնար եղէն, զի  
գուռոն մի ինչ զիջցի նոցա՝ ի պատճառս

յունական իրացն , և ելքեն գնասցեն  
միանդամ գեսպանքն և բարձցին 'ի մի-  
ջոյ խոչ և խութ ոտից նոցա : Զի այն-  
պէս հաւանեցուցին զաւագանին , որ-  
պէս թէ առ յունական տպատամբու-  
թեամբն մեծ ևս խիթալի կասկած  
կայցէ պետութեանն յերեսաց ուղա-  
փառաց : Դեսպանքն ելն , ել և հրո-  
վարտակ հալածմանն և տուաւ 'ի ձեռս  
ազգապետին հայոց՝ կատարումն տալ  
հրամանին արքունի : Եւ առ յարմա-  
րելոյ տաճկադեն մտայ՝ յորոց աչս միա-  
պէս խոտան են ամենայն քրիստոնեայք  
որոյ և է դաւանութեան , և առ 'ի պատ-  
րուակել ևս յաշաց Եւրոպացւոց զհա-  
լածումն ուղղափառ անուանն , իրեւ  
գիւտ իմի մեծի հանձարոյ հնարեալ  
ըստ մտաց իւրեանց , զհալածումն և  
զկտարանդութեան հրամայել տուեալ  
էին 'ի հրովարտակին ընդ անուամբ  
գաղատացւոյ . որպէս թէ լքեալ զհայ-  
րենիս իւրեանց՝ եկեալ խոնեալ իցեն  
'ի թագաւորեալ . քաղաքին : Սմն իրի  
նախ աքսորեցան գաղատայի մեծա-  
մեծք և . քահանայք , ապա ո.ամիկն նոցա-  
յետ այնորիկ հրաման եղեւ այլոցն ա-  
մենեցուն ելանել 'ի Պէյողութ և յայլ  
արուարձանն անցանել : Ապա տակաւ-

հետ զհետէ զբնիկ քաղաքացինն ևս ոչ  
գաղատացին՝ ետուն աքսորել երամ՝  
երամ։ Թողին լքին այնուհետեւ բաղմա-  
թիւ ազգատոհմք զհայրենի երկիր և  
զտուն և զարարս։ յորոց էր որյամիշտա-  
կեցաւ և էր որ խոտանաւ վաճառեցաւ,  
և ցրուեցան անկան կանամբք և մատադ-  
որդւովք և դատերօք՝ ի դառն ձմերայնին  
՚ի ձիւնեղէն լերինս Ասիոյ, և բաղում  
վտանգօք հաղիւ հաղ թէ հասանէին ՚ի  
տեղիս աքսորանացն։ յորոց և ոմանիք  
զՃանապարհայն մեռանէին, և այլք ՚ի  
վատառողջ տեղիս վտարանդութէն։ Դ  
նմին ժամանակի արտասահման արարին  
յաշխարհէ տէրութեանն և զայլ ամե-  
նայն քահանայս և զեղիսկոպունս  
ուղղափառաց, զորս ընդ ծով, զորս  
ընդ ցամաք, որպէս թէ զհօան անհովիւ-  
և վայրատեալդիւրաւ որսայցեն ՚ի կամս  
խորհրդոց իւրեանց, որ ոչ յաջողեցաւ  
նոցա ՚ի մեծ զարմանս նոցին։ Զի թէ  
պէտ և անպատեհ իմն թուէր խոհա-  
կան մնաց այսպիսի հալածումն յայս-  
պիսում ժամանակի, սակայն այնպէս  
յուսային առաջնորդք դործոյն և այն  
պէս հաւանեցուցեալ էին զդուռն, որ  
պէս թէ յանառաջնորդ մնալ ուղղա-  
փառաց՝ նոյնհետայն առանց ընդ բանս

ինչ ածելոյ դարձցին առ հասարակ 'ի  
միութիւնը նոր չայս, և խաղաղացի պէ-  
տութիւնն յահէ կասկածանացն :

Բայց թէպէտ և սուստ զրագարառու-  
թէք գրգռէին հանապազօք զվիտս ամ-  
բոխին իրեւանց 'ի թշնամութիւնը ընդ-  
անպարտ հալածեալմն, սակայն էին յո-  
լովք 'ի նոցին իսկ 'ի չայոց՝ յաւադաց և 'ի  
կրսերաց՝ որ գութ և ողորմ յաղիսն ու-  
նէին, որք յարասառուս հարեալ'ի վերայ  
դուր տարապարտ չարչարելոցն և վտան-  
գելոց՝ այպահնէին զգործն ապիրատու-  
թեան օտար 'ի քրիստոնէութենէ. որոյ  
վասն և պատիժուս իսկ ընդ այնը կրեցին  
ումանիք 'ի նոցունց յազգայնոցն : Եւ ոչ  
նոքա միայն, այլև չըրեայք և այլազգիք  
անդամ զնոյն աղէտս աղիտանային  
մարդկօրին բանիւք և արդեամբք. և օ-  
րինականիք տաճկաց յայտնապէս իսկ  
քրթմնջէին և բոլոք հարկանէին զան-  
պատեհութենէ իրացն և ըստ գենին  
իսկ իւրեանց, որ ոչ ներէ և ոչ յայլազ-  
գութիւն զոք բունութեամբ ածել՝ թող  
թէ նախապատռութիւն տալ ումիք  
'ի կեշտից քրիստոնէից և 'ի միոյ 'ի միւս  
բունագագել կամ հրաւիրել անցանէլ:  
Իսկ աղքն Յունաց ոչ սակաւ շնորհա-  
կալութեան արժանի զանձն երևեցու-

յանէր՝ ի ժամանակին առ տառապեալ  
ուն՝ որ յաքսորս և որ ՚ի քաղաքին. ընդ  
որս կարեկից լեալ իբր ընդ վարսեր  
մարդիկ, թէ արդեօք և իբր ընդ խոս  
տովանուզ հաւատոց, զամենայն մար  
թելի խնամն ցուցին առ նոսա զմար  
դասիրութեան և զբրիստոննէութեան։  
Եւ թէպէտ ՚ի նմին ժամանակի հրա  
ման ՚ի դրանիշ ելանէր և առ պատրի  
արդն Յունաց՝ զնոյն անցս և ընդ իւրում  
իշխանութեան յունադաւան ուղղա  
վառսն անցուցանել, սակայն խոհա  
կանութեամբ և ատագային նախատես  
ընելով բացէ ՚ի բաց հրաժարեաց ա  
մենեին։

Հալածումնս, որոյ նմանն ոչ յիշաւ  
տակի ՚ի պատմութիւնս ազգիս, տեսաց  
զերկեամ մի մինչև յելս 1829 ամին։  
Յոյժ քստմնեցաւ Եւրոպա համօրէն՝  
տեսեալ այսպիսի հալածումն յայսպի  
սում ըուսաւորութեան և խաղաղասէր  
բարեպաշտութեան ժամանակի։ Ապա  
դարձ արարեալ և դեսպանացն եւրո  
պացւոց և միաբան բողոքով ձայն բար  
ձեալ ՚ի պաշտպանութիւնն ուղղափա  
ռացն հալածելոց, որպէս թէ ՚ի թըն  
նամանս նոյին եւրոպական ակրու  
թեանցն եղեալ իցէ գործն հակառակ

հաւասարոց նոցին և մարդկութեան ,  
յայսմամենայնէ և 'ի վերին այցելու-  
թենէն ընդուտուցեալ արքայի և ծա-  
նուցեալ զլորիակին զոր ետուն գործել ,  
դարձոյց զաքսորեալն զամենեսեան 'ի  
վարանդութենէն . զտունս և զստա-  
ցուածս նոցա դարձոյց 'ի նոսա , զա-  
տոյց զնոսայազդ առաձինն , ետ նոցա  
հաւասար այլոց՝ ազգապետ առանձինն  
և եկեղեցիս , և զամենայն անդորրաւետ  
խաղաղութիւն ընդ մեծաշուք իւրուլ  
հուլանաւորութեամբ :

Յամնեանն փետրուարի խոստացաւ  
Մահմուտ արքայ պատրիարքին Յու-  
նաց Ագաթանգեղոսի , և ընդ ձեռն  
նորա բովանդակ ազդին , անյիշաչար  
լինել անցելոց իրաց , ապահարկս առ-  
նել զնոսա , և չպահանջել զտուրս  
եօթնամեան ժամանակին . բազմա-  
սպատիկ արտօնութիւնս չնորհել նոցա ,  
և հայրագութ խնամուլք վարել առ նո-  
սա : Այլ նոցա իմացեալ 'ի նմին ժա-  
մանակի զպատրաստութիւն Ռուսաց  
'ի պատերազմ՝ ոչ ինչ անսացին յորդո-  
րանաց արքայի :

Իհրատարակել յայտարարութեանն  
Ռուսաց 'ի Կոստանդնուպօլիս՝ ոչ միայն  
Մահմուտ արքայ , այլ և ամենայն ժո-

զովուրդն անյողդողդ կամակարութեամբ ձեռն ՚ի գործ արարին պատրաստել կազմել ընդ ծով և ընդ ցամաք առ զբէմ ունելոյ թշնամեաց : Սպարապետն չիւսէյին փաշա կարգեցաւ ՚ի պաշտպանութիւնն ամրոցին Շումնայի . Եռուսուֆ փաշա և ծովականն Խղճէթ Մէհէմմէտ փաշա ՚ի պաշտպանել Վարնա քաղաքի . և Խոսրով փաշա կայսր զիշխանութիւնն տեսչութեան թագաւորեալ քաղաքին :

Վաղու ևս անցեալ էր սպարապետն Ռուսաց կոմնն Վիթկենչը էյն ընդ Փրութ գետ և յամնեանն յունիսի մեծ գուքմն Միքայէլ զինի ամսօրեայ պաշարման էառ զամուքն Խպրայիլ զօրավարն Ռութեվիչ զիսագնա, զօրավարքն Կրէյ և Մէնչչէքով զՄնափա , և այլք զայլ տեղիս, և ՚ի սկզբան յուլիս ամսոյ մտին Խաղախք ՚ի Պազարնըգ : Ի ըստ այսր ամենայնի ատեան խորհրդոյ կազմեալ արքայի ՚ի Կոստանդնուպոլիս , հրամայեաց վէգիրին՝ որ էր Մէհէմմէտ Մէլիմ փաշա՝ խաղալ գնալ ՚ի Շումնա ընդդէմ Ռուսաց . և ՚ի մեկնելնորա ՚ի Տաւուտ փաշա՝ ինքն իսկ արքայ յայտ արար զօժարութիւն կամաց իւրոց ՚ի զօրավարելքանակին իւրում . որոյ վան

և մեծահանդէս շքով գնաց ՚ի բամիզ  
շնչթլյի ՚ի 15 աւուր ամսեանն սեպէ  
տեմբէրի : Յառաջընթաց լինէին եւ<sup>1</sup>  
ըէքհաղար հեծեալք ասխացիք և ՚ի մար-  
դիկ գնդէ, և զհետ նոցա անդրուվազք  
և ուղղք որ բարձեալ տանէին զկահ և  
զգանձս արքայի՝ ՚ի ձայն պատերազմա-  
կան նուագաց, ապա զօրավարք և պետք  
և իշխանք և օրինականք . ապա այլ ևս  
գունդ գունդ զօրաց, և սպարապետն  
և տեղապահն և այլ աւագանին սպի-  
տակ արտախուրիք և ծիրանեգոյն  
մուշտակօք : Զհետ նոցա գայր գեն-  
պետն, և զնովաւ գատաւորք զօրաց և  
էմիրք՝ որ կարապետ լինէին ոսկէզօծ  
կառացն յօրում կայր գրօշն Մահմէտի,  
և շուրջ զնովաւ երկոտասան երաժիշտք  
արքունի որ երդէին զմաղթանս մար-  
գարէին իւրեանց : Զկնի նուիրական  
գրօշուն գայր Մահմուտ արքայ աշտա-  
նակեալ յերիվար ահիպարանոց , և  
զգեցեալ զգեստ պարզ ամենեին և ան-  
պաճոյՃ, և յառաջէր միայն առանձինն  
առանց սպայից և թիկնապահաց: Փոքր  
մի հեռագոյն զինի արքայի խաղային  
գային մեծամեծ պալատականք և անձ-  
նապահապետք նորա , և զհետ նոցին  
արք երկուհաղար և հինգհարիւր ՚ի

մարդկան գործ անտի ընդ հեծեալ և ընդ  
հետեակ ։ ասաւ սպարտիղապան զօրա-  
կանք, և կառք բազումք վեցաձիք, և 'ի  
վերջէ ամենեցուն բազմութիւնք հրա-  
զինուց :

Սակայն Որուսք օր ըստ օրէ յառա-  
ջադէմ լինելն մինչև 'ի Ծումնաւ և 'ի  
Վարնա, Թէպէտ և ուրեք ուրեք հա-  
րան ևս յՇամանեանց : Ի սպաշարման  
անդ Վարնայի վլրաւորեցաւ մեծ զրա-  
պետն Մէնչչիբով և կոմն Վորոնցով  
անցեալ 'ի տեղի նորա՝ պնդեաց յոյժ  
զսլաշարումն քաղաքին և խրամատեաց  
զպարիսպանն Եղուսութիւնաւոր քաղա-  
քավեան Եր՝ կամէր անձնատուր լինել  
'ի Որուսս . և իբրև ոչ կարաց 'ի սոյն  
խորհուրդ և զծովակալն խոնարհեցու-  
ցանել լինքն ևեթ Ել գնաց 'ի բանակն  
Որուսաց և մնաց անդէն . իսկ արի ծո-  
վական Խղճէթ Մէհէմմէտ փաշա երեք.  
հարիւր քաջամարտիկօք ևեթ խոյս ետ  
'ի միջնաբերդ անդք, և սպառնայր հուր  
հարկանել 'ի դոկտիւն . և սպարապե-  
տին Որուսաց անդամ պքանչացեալ ընդ  
քաջութիւն առնն՝ հրաման ետ նմա-  
ելանել գնալ իւրովքն հանդերձ յաղա-  
սութիւն : Ի դոյժ առմանն Վարնայի  
խոռվեցան Օսմանեանք 'ի Կոստան-

դնուալովիս. հրամայեաց աբբայ յարքու-  
նիս գրաւել զամենայն ինչս մատնչին  
Եռուսուֆայ, և դենպեան ինքնին նը-  
ղովիւք չափ բանագրեաց զնա: Արկաւ-  
և վէղիրն յիշսանութենէ իւրմէ՝ փոխա-  
նակ զի ոչ որպէս կարծելին եր արիա-  
ցաւ նա ՚ի պահուն, և աքսորեցաւ ՚ի  
Կէլիպօլու. և կնիքն աբբունի առա-  
քեցաւ պատուովառ քաջ ծովական  
Խղղէթ Մէհէմիշտ փաշա:

Խոկ ՚ի հասանել ՚ի վերայ տարաժամ  
սաստկութեան ձմերայնոյն հարկեցան  
Ռուսք բառնալ զպաշարմունս Շում-  
նայի և Սիլիստրէի, և անցանել անդրէն  
ըստ Դանուբ՝ թողեալ յաւար Օսմա-  
նեանց ոչ սակաւ կահս պատերազմի:  
Հասեալ կային և նաւք ինչ Ռուսաց ՚ի  
Զանագ գալէսի. բայց հակառակու-  
թիւն բազում կրեալ ՚ի միրկաց՝ ոչ ինչ  
ոչ կարացին վճարել:

Յաջողագոյնս քան զնոցա պատա-  
հէին արշաւանք զօրացն Ռուսաց յԱ-  
սիա, և զըսապէտն Փափեւիչ էառ հետ  
զհետէ զկարս, զփոթի, զԱսլցիսա,  
զՊայէզիս, զԺիատին, զԹուփիրագ գալէ-  
և զայլ տեղիս, և մեկնեցաւ ՚ի ձմերոց:  
Եւ յաւուրս անդ ձմերայնոյն ոչ դա-  
դարէին դեսպանք Եւրոպացւոց ՚ի ստի.

պելոյ զարքայ՝ զի աշխատութիւն չելլեցւոցն շնորհեսցէ :

Ի սկզբան 1829 ամին Եհաս ՚ի Կոստանդնուպոլիս գաղղիացին ժողովու, բերեալ ընդ իւր զպայմանս գաշնակից սկստութեանցն հաստատեալս ՚ի 16 նոյեմբերի ՚ի Լընարա, որովք ընդ հովանաւորութիւն իւրեանց առնուին նորքա զՊեղոսպոնէս և զկիւկլադայս, և պահանջին զի և արքայ հաւանեսցի ընդ պայմաննն, և դուշ զինուց հրամայեսցէ՝ մինչև գարձցին անդրէն ՚ի թագաւորեալ քաղաքն դեսպանիք իւրեանց, և խօսեսցին բերան ՚ի բերան յաղագս պայմանաց ազատութեանն չելլենացւոց և սահմանաց աշխարհին նոցա: Այսմամենայնի հարեանցիկ իմն արարին պատասխանի Օսմաննեանք, և պատրաստեցան հզօրագոյնս ՚ի մարան առաջիկայ . և յամենանն փետրուարի ընկեց աբքայ յիշխանութենէն զիզդէթ Սէհէմմէտ, և կարգեաց փոխանակ նորա զՄէհէմմէտ Ռէշա փաշա:

Յամնեանն մարտի լուեալ արքային և զգոյժ առմանն կեղապօլեայ ՚ի Ռուսաց՝ առաւել ևս վաւեցաւ ՚ի զօրաժողովն և ՚ի հրահանգա արար զի ամենայն այր օս-

մանցի որ կարող իցէ զէն առնուլ՝ թող-  
ցէ 'ի բաց զայնշի և դժանը հանգերձո-  
և զարտախոյր և զիակեղն , և ադա-  
նել ըստ ձևոյ և ըստ տարազու մար-  
դիկ դնդացն անձուկս և անպահոյք  
զգեատոս, որպիսիս և ինքն էր զգեցեալ:

Յայնմ ամի ընդ ծով և թ յաջողե-  
ցաւ Օսմանեանց յաղթել մի անդամ՝  
նաւատորմին Ռուսաց , և ձերբակալ  
առնել զի 'ի նաւուց նոցին 'ի մեծ  
ինդութիւն քաղաքացւոց . այլ ընդ  
յամաք խորտակեաց սպարապետն Ռու-  
սաց Տիալիչ զզօրս Շէշիտ փաշայի . Էառ-  
սաստիկ պաշարմամբ զԱլիսարէ, Էանց  
անլուր համարձակութեամբ ընդ կիրճու  
Պալդան լերանց , և կալաւ զՄիսիվի ,  
զՊուրկազ, զԱյտոս և զԳարինապատ,  
սպա և զԱլիմնէ, և եհաս մերձ յԱ-  
դրիանուպօլիս : Բգեաշիք քաղաքին  
Խալրահիմ փաշա և Խալիլ փաշա ինքնին  
յօժարեցան տալ զնա 'ի ձեռս Ռուսաց .  
և սոքա յիննետաներորդի աւուր ամ-  
սեանն օդոստոսի մտին անդր որպէս  
դաշնակից բարեկամք , քան թշնամիք  
յաղթականք : 'Սոյնօրինակ յաջողու-  
թեամբ եմուտ ընդ նոյն ժամանակս և  
սպարտապետն ֆասքեւիչ 'ի կարին և 'ի  
Բաբերդ , և ապա վանեաց զկուսակալն  
Տրապիզոնի :

Խբրեւ աղդ Եղեն իլլքս այս 'ի Կոստանդնուպուսկօլիս, ստիպեցաւ արքայ 'ի խորհրդականաց իւրոց և 'ի գեսպանացն Եւրոպացւոց զիջաննել 'ի հաշտութիւն խաղաղութեան . և արձակեաց 'ի սոյն սակս առ Տիսկիչ զհամարակալն Մէհմէմիչտ Սայիտ Էֆէնափ, և զդատաւորն ասխացի զօրաց զԱպտիւլդատըր պէլ :

